ՅԱ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ

# ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ



ԵՐԵՎԱՆ 1995

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

Կազմողներ՝
Ամալյա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ալբերտ ԽՈՅԱՆ
Կոստանդին ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

«ՀԱՅԱԳԻՏԱԿ»
ԵՐԵՎԱՆ 1995

ԳՄԴ 63
3(2 Z) y2

«Հայագիտակ» հրատարակչությունը երախտագիտություն է հայտնում «Նարեկ» ՍՊԸ նախագահ Ռաֆիկ Նիկոլայի Հարությունյանին և Սեյրան Ամբակումի Գրիգորյանին՝ գրքի տպագրությունը հովանավորելու համար:

ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ, Հանրագիտական համառոտ բառարան: Կազմ. Ա. Պետրոսյան, Ա. Իսոյան, Կ. Խուդավերդյան. - Եր., «Հայագիտակ» հրատ., 1995, 134 էջ:

Հանրագիտական բառարանը համառոտ ներկայացնում է աշխարհի բոլոր հայկական համայնքները: Առանձին բառահոդվածներ կան Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին, ինչպես նաև հավելված՝ «Օտարները Հայաստանի և հայերի մասին»: Բառարանը լույս է տեսնում հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Z 0503020913
786(01)_95

© «ՀԱՅԱԳԻՏԱԿ» հրատ., 1995

## ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

*Ընթերցողներին առաջարկվող «Հայերն աշխարհում» համառոտ հանրագիտական բառարանը մի փորձ է՝ ներկայացնելու աշխարհով մեկ սփռված հայերի տարաբնակեցման պատկերը:*

*Հայ ժողովուրդը պատմական ճակատագրի բերումով վաղ միջնադարից սկսած ստիպված է եղել լքել հայրենիքը և կյանքի տանելի պայմաններ որոնել օտար երկնքի տակ: Ազգային պետականության կորուստը, Հայաստանի նվաճումը օտարերկրյա զավթիչների կողմից և երկրում հաստատված անողոք կեղեքումը, ազգային ճնշումը և կրոնական հալածանքները. ահա այն հիմնական պատճառները, որոնք դրդում էին հայերին դիմել արտագաղթի: Բացի այդ հայ բնակչության մի մասը բռնի կերպով տեղահանվել է Հայաստանից. տակավին IV դարում պարսից Շապուհ II շահը բազմահազար հայերի գերեվարել է Իրան, իսկ IV_XIII դարերի ընթացքում Բյուզանդիայի կայսրերը հայերին պարբերաբար բռնագաղթեցրել են Բալկանյան թերակղզու տարբեր շրջաններ: Հայերի տարածման շառավիղը, աստիճանաբար մեծանալով, ընդգրկել է ոչ միայն հարևան Վրաստանը, Բյուզանդիան, Իրանը, այլև հեռավոր երկրներ՝ Բուլղարիա, Ղրիմ, Լեհաստան, Հունգարիա, Կիևյան Ռուսիա, Մոլդովա, Ուկրաինա, Հնդկաստան, Մերձավոր Արևելքի որոշ երկրներ: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (XIV դ. վերջ) մեծ թվով հայեր հաստատվել են Կիպրոսում, Իտալիայում, Ֆրանսիայում և այլուր: XIX դարի սահմանագծին հայկական գաղթավայրեր գոյություն ունեին Վրաստանում, Ռուսաստանում, Օսմանյան կայսրության արևմտյան մասում, Իրանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Բալկանյան երկրներում, Ֆրանսիայում, Իտալիայում և այլուր:*

*Օտար երկրներում հաստատված հայերը դրսևորեցին զարմանալի տոկունություն, պահպանեցին իրենց ազգային ինքնությունը, կրոնը, նպաստեցին հայ ազգային մշակույթի զարգացմանը: Գաղութահայության հասարակական-քաղաքական շրջանները ձգտել են պահպանել կապը Հայաստանի հետ, սատարել են հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին:*

*Ժամանակակից հայ Սփյուռքը ձևավորվել է XX դարի առաջին տասնամյակներին, երբ Օսմանյան կայսրության ղեկավար շրջանների կազմակերպած Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Թուրքիայի հայաբնակ վայրերի հայերի տեղահանության ու ցեղասպանության հետևանքով մոտ 800 հազար հայեր սփռվեցին աշխարհով մեկ՝ լրացնելով արդեն գոյություն ունեցող համայնքները և կազմավորելով նորերը: Ստվա-*

*բացավ հայերի թվաքանակը Ռուսաստանում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Սիրիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում և այլ վայրերում:*

*Հայերի տեղաշարժը աշխարհում շարունակվում է մինչև օրս: XX դարի երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների հետևանքով (Եգիպտոսում ազգայնական ուժերի իշխանության գլուխ գալը, երկարամյա քաղաքացիական պատերազմը Լիբանանում, իսլամական հեղափոխությունը Իրանում, իրանա-իրաքյան պատերազմը) զգալիորեն նվազեցրին հայերի թիվը նշված երկրներում, քանի որ բազմաթիվ հայեր արտագաղթեցին ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Ավստրալիա և Նոր Զելանդիա: 1980-ական թթ. վերջին _ 1990-ական թթ. սկզբին Ադրբեջանում հայ բնակչության կոտորածների հետևանքով հայ փախստականների ալիքը հորդեց ոչ միայն դեպի Հայաստան և Արցախ, այլ նաև Ռուսաստան, Միջին Ասիա, Եվրոպայի որոշ երկրներ, ԱՄՆ: 1990-ական թթ. սկզբին նկատելի չափեր ընդունեց հայերի արտագաղթը ավերիչ երկրաշարժից տուժած, շրջափակման մեջ գտնվող, տնտեսական ճգնաժամ ապրող Հայաստանից:*

*Սփյուռքահայությունը համեմատաբար արագ հարմարվեց կյանքի նոր պայմաններին, իր տեղը հաստատեց հյուրընկալող երկրների տնտեսական, հասարակական, սոցիալական կառույցներում, ստեղծեց անհրաժեշտ նախադրյալներ իր ինքնությունը պահպանելու համար: Այդ նախադրյալներից կարևորագույններն են Հայաստանյայց առաքելական եկեղեցու գործունեությունը, ազգային դպրության զարգացումը, ազգային կազմակերպությունները, հայ պարբերական մամուլի հրատարակումը են:*

*Սփյուռքահայության ազգային զարթոնքի զորեղ խթան հանդիսացավ Ղարաբաղյան շարժումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Ներկայումս ստեղծված են անհրաժեշտ պայմաններ ամբողջ հայ ազգի միասնության համար նրա երեք մասերի՝ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Սփյուռքի համախմբման միջոցով:*

*Հանրագիտական համառոտ բառարանը պարունակում է տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, ինչպես նաև աշխարհի ավելի քան 60 երկրների հայկական համայնքների մասին: Հնարավորությունների սահմաններում համառոտ լուսաբանվում են հետևյալ հիմնական հարցերը. տվյալ երկրում հայերի երևան գալու ժամանակաշրջանը և հանգամանքները, նրանց զբաղմունքը, հայերի թվաքանակը և դրա փոփոխությունները, եկեղեցու գործունեությունը, սփյուռքահայ դպրոցը, հասարակական-քաղաքական, բարեգործական, մշակութային և այլ կազմակերպությունները, հայրենակցական միությունները, պարբերական մամուլը են: Բառարանի առանձին բաժնում ներկայացված են տեղեկանքներ հայ ազգային կուսակցությունների, բարեգործական, հիմնական մշակութային, մարզական և այլ կազմակերպությունների մասին, որոնց գործունեությունն ընդգրկում է ամբողջ Սփյուռքը:*



*«Օտարները Հայաստանի և հայերի մասին» հավելվածը ասես ամբողջացնում և լրացնում է բառարանը՝ ցույց տալով օտարների վերաբերմունքը հայերի հանդեպ:*

*Առանձին երկրներում հայերի թվաքանակի վերաբերյալ ստույգ տեղեկությունների բացակայությունը հարկադրում է տալ մոտավոր տվյալներ, որոնց աղբյուրն են գիտական գրականությունը և պարբերական մամուլը: Նույն այդ տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ ժամանակակից աշխարհում հայերի ընդհանուր թվաքանակը կազմում է 8_8,5 մլն մարդ:*

*Բառարանը պատրաստելիս կազմողները օգտագործել են Հայկական սովետական հանրագիտարանի (հհ. 1_12, Երևան, 1974_1986), Հայկական համառոտ հանրագիտարանի (հ.1, Երևան, 1990), մասնագիտական գրականության նյութերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի պարբերական մամուլի տվյալները: Աշխարհի երկրների մասին ընդհանուր տեղեկություններ քաղված են եվրոպական նորագույն հրապարակումներից՝ "Encyclopédie de L'Europe. Géographie, histoire, sociéte, politique, économie" (Seuil, 1993), "World Intellectual Property Organization from 1967 to 1992" (Geneva, 1992):*

*Կազմողները շնորհակալ են պատմաբաններ Բ. Ուլուբաբյանին, Վ. Մարտիրոսյանին, Ա. Հովհաննիսյանին՝ «Ադրբեջան», «Վրաստան» և «Թուրքիա» հոդվածները կազմելուն օժանդակելու համար:*

*«Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարանը նախատեսվում է հրատարակել նաև անգլերեն և ռուսերեն, ուստի կազմողները երախտագիտաբար կընդունեն բառարանի հայերեն հրատարակության ընթերցողների դիտողությունները և ցանկությունները:*

# ՀԱՅԱՍՏԱՆ, Հայաստանի Հանրապետություն, պետություն Անդրկովկասում

Մայրաքաղաքը՝ Երևան

Տարածքը՝ 29,8 հզ. կմ$^2$

Բնակչությունը՝ 3,75 մլն (1995 թ.)

Հայկական լեռնաշխարհը հայերի բնօրրանն է. այստեղ է հազարամյակներ հայ ժողովուրդը ապրել և գոյատևել: Հ-ի աշխարհաքաղաքական դիրքը իր կնիքն է դրել նրա ամբողջ պատմության վրա: Դարերի ընթացքում Հ. ենթարկվել է Արևմուտքից Արևելք շարժվող նվաճողների, իսկ ավելի հաճախ՝ Արևելքից եկած նվաճողների (պարսիկներ, արաբներ, մոնղոլներ, թուրքեր) ասպատակություններին: Այդ հանգամանքի բերումով հայերը, սկսած հնագույն ժամանակներից, հաղորդակցվել են Արևմուտքի և Արևելքի մշակույթին, և հայկական մշակույթը յուրացրել է այդ քաղաքակրթությունների շատ տարրեր: Աշխարհաքաղաքական գործոնը չի կորցրել իր նշանակությունը և մեր ժամանակներում:

Հայ ժողովուրդը ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում, Ք.ա. II_I հազարամյակներում: Լեռնաշխարհում բնակված Հայասա ցեղային միության անունից ծագում է ժողովրդի ինքնանունը՝ հայ:

Հ-ում Արարատյան թագավորության՝ Ուրարտուի, որը Հին Արևելքի տերություններից մեկն էր, անկումից հետո, Ք.ա. VI դ. վերջին ստեղծվեց հնագույն Հայկական թագավորությունը: Ք.ա. IV դ. վերջին, երբ Առաջավոր Ասիա ներխուժեց Ալեքսանդր Մակեդոնացին, իսկ այնուհետև նրա նվաճած տարածքի վրա կազմավորվեց Սելևկյան հելլենիստական պետությունը, Հ. ներգրավվեց հելլենիզմի ոլորտի մեջ: Հելլենիզմի ժամանակաշրջանը, որը տևեց մի քանի հարյուրամյակ, զգալի ազդեցություն ունեցավ Հ-ի տնտեսական և մշակութային զարգացման վրա:

Ք.ա. II դ. ստեղծվեց միավորված Հայկական պետությունը՝ Մեծ Հայքը՝ Արտաշեսյան գահատոհմի հովանու ներքո: Այդ պետության կազմի մեջ մտավ Հայկական լեքնաշխարհի հայաբնակ հողերի մեծ մասը: Պետության տարածքը կազմեց 300 հզ. կմ$^2$: Մեծ Հայքը իր հզորության գագաթնակետին հասավ Տիգրան Բ Մեծ թագավորի (Ք.ա. 95_55) օրոք: Նրա նվաճումների հետևանքով Հ. տարածվեց իր էթնիկական սահմաններից շատ հեռու: Որոշ ժամանակ Մեծ Հայքը կարողացավ դիմակայել դեպի Արևելք ձգտող Հռոմին: Ապա Հռոմի և Պարթևական թագավորության միջև սկսված հակամարտությունը Հ-ի համար ստեղծեց նոր քաղաքական իրավիճակ, որը պահպանվեց դարեր: Հ. հարկադրված էր ամենից առաջ հոգալ իր անկախության և տարածքային ամբողջականության մասին: Հ-ի տարածքը, հաճախ դառնալով մրցակիցների մարտական գործողությունների ասպարեզ, մեծապես տուժում էր, և հսկայական վնաս էին կրում բնակչությունն ու երկրի տնտեսությունը:



Ք.ա. I դարում Արտաշեսյան գահատոհմն ընդհատվել է: Պետության ճգնաժամը հաղթահարվել է նույն դարի կեսին, երբ Հ-ում հաստատվել է Արշակունիների գահատոհմը: Այդ շրջանում տեղի են ունեցել կարևոր իրադարձություններ. երկիրն անցում է կատարել դեպի ավատատիրական հասարակարգ, որպես պետական կրոն ընդունվել է քրիստոնեությունը (301 թ.), ստեղծվել է հայ գիրը (V դ.): Սակայն հարաբերական կայունացման շրջանը շուտով ընդհատվել է: 387-ին Հ. բաժանվել է Իրանի և Հռոմի միջև (շուտով Հռոմի արևելյան տիրույթների տարածքի վրա ստեղծվել է Բյուզանդական կայսրությունը): Այդ ժամանակից ստեղծվել է մի դրություն, որը պահպանվել է հետագա բոլոր հարյուրամյակներում՝ Հ-ի բաժանումը Արևելյան և Արևմտյան մասերի:

Արևմտյան Հ-ում Արշակունիների գահատոհմի ներկայացուցիչը Հ-ի բաժանումից հետո իշխել է ևս երկու տարի, որից հետո Հ-ի այս մասը վերակազմավորվել է որպես Բյուզանդիայի պրովինցիաներից մեկը: Արևելյան Հ-ում Արշակունիների գահատոհմի ներկայացուցիչները թագավորել են ավելի երկար՝ մինչև 428 թ., որից հետո այն դարձել է Իրանի մարզպանություններից մեկը:

Հայ ժողովուրդը, չհաշտվելով պետականության կորստի հետ, պայքարել է այն վերականգնելու համար: V դ. Արևելյան Հ-ում տեղի են ունեցել ապստամբություններ պարսիկների դեմ, որոնք ստիպում էին հայերին հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել պարսկական հավատը՝ զրադաշտական կրոնը: Հայերի ինքնազոհ պայքարը հարկադրել է պարսիկներին հրաժարվել այդ մտադրությունից:

VII դ. Արևելյան Հ. նվաճել է Արաբական խալիֆայությունը, որն իրեն էր ենթարկել Առաջավոր Ասիայի զգալի մասը: Արաբների գերիշխանությունը շարունակվել է մինչև IX դ. վերջը, երբ հայերին, համառ պայքարից հետո, հաջողվել է վերականգնել ազգային պետականությունը Բագրատունիների հարստության գլխավորությամբ: Բագրատունիները միավորել են Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան նահանգները (մայրաքաղաքը՝ Անի). մնացած տարածքի վրա եղել են մի քանի մանր հայկական թագավորություններ և իշխանություններ: XI դ. կեսին Բյուզանդիայի հարվածներից Բագրատունյաց թագավորությունը կործանվել է:

Արաբների օրոք ուժեղացել է մինչ այդ սկիզբ առած հայերի արտագաղթը, որը դարձել է հայ ժողովրդի հետագա պատմության բնորոշ գիծը: Չդիմանալով սոցիալական ծանր ճնշմանը, ազգային և կրոնական հալածանքներին՝ հայերը հեռացել են հարևան և հեռու երկրներ, ուր ստեղծվել և ձևավորվել են հայկական գաղութներ: Ստվար հայ բնակչություն է հաստատվել հարևան քրիստոնյա երկրներում՝ Բյուզանդիայում և Վրաստանում: Բյուզանդիայի տարածքում հայերը նույնիսկ ստեղծել են իրենց պետությունը՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը, որը գոյատևել է երեք դար (1080_1375): Հետագա հարյուրամյակներում գաղութներ են առաջացել Ռուսաստանում, Լեհաստանում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Ղրիմում և այլուր: Մի շարք երկրնե-

րում հայկական գաղութները օժտվել են ինքնավարությամբ՝ իրենց մագիստրատներով, դատարաններով, բոլոր գաղթավայրերում, որպես կանոն, գործել են եկեղեցիներ և դպրոցներ: Հայտնվելով օտար միջավայրում՝ հայերը դրսևորել են տոկունություն և պահպանել իրենց լեզուն, ազգային մշակույթի ավանդույթները: Միջնադարի մռայլ հարյուրամյակներում հայ ժողովրդի հոգևոր կյանքը որոշակի իմաստով տեղափոխվել է գաղութները: Պատահական չէ, որ այնպիսի կարևոր մշակութային իրադարձություններ, ինչպես հայերեն առաջին տպագիր գրքի հրատարակումը (1512 թ., Վենետիկ), հայերեն առաջին պարբերականի լույս ընծայումը (1794 թ., Մադրաս), թատերական խմբերի ստեղծումը ևն, տեղի են ունեցել գաղթավայրերում:

Իրենց ապաստանող շատ երկրներում հայերը նկատելի դեր են խաղացել այդ երկրների տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում, նպաստել արհեստների և առևտրի զարգացմանը, զբաղվել են երկրագործությամբ, ձեռնարկատիրական գործունեությամբ: Հայերը ճանաչվել են որպես օգտակար տարր, մի շարք երկրների իշխանությունններ նրանց շնորհել են բավական լայն արտոնություններ: Գաղթավայրերը ձգտել են պահպանել իրենց կապը հայրենիքի հետ: Գաղութահայերը ուշի-ուշով հետևել են հայրենիքում տեղի ունեցող դեպքերի զարգացմանը, սատարել ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Պատահական չէ, որ Հ. օտարերկրյա լծից ազատագրելու ծրագրերը մշակվել են ոչ միայն բուն Հ-ում, այլև Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական համայնքներում:

XI դ. 2-րդ կեսին Հ. են ներխուժել սելջուկյան ցեղերը, այնուհետև, XIII_XIV դդ.՝ մոնղոլները, XV դ. վերջին՝ Լենկթեմուրի հրոսակախմբերը: Միմյանց փոխարինող օտարերկրյա նվաճողները գտնվում էին սոցիալ-տնտեսական և մշակութային ավելի ցածր աստիճանի վրա, քան նրանց տիրակալության տակ ընկնող հայ ժողովուրդը: Դա էլ եղավ Հ-ի աստիճանական անկման հիմնական պատճառը. ամայացան երբեմնի բարգավաճ քաղաքները, արգելակվեց ազգային մշակույթի զարգացումը: Հայ ժողովուրդը, լարելով իր բոլոր ուժերը, կարողացավ դիմակայել ճակատագրի հարվածներին և շարունակեց գոյատևել: Նա դրսևորեց ինքնապահպանման բացառիկ կամք, հավատարիմ մնաց իր հավատամքին և շարունակեց զարգացնել ազգային մշակույթը: Հ-ում ստեղծվեցին հայտնի կրթական հաստատություններ՝ Գլաձորի (XIII_XIV դդ.) և Տաթևի (XIV_XV դդ.) համալսարանները, գրվեցին բազում մատյաններ:

XV դ. 2-րդ կեսին իրադրությունը Առաջավոր Ասիայում կտրուկ փոխվեց: Դեռևս XIV դ. կեսին առաջացած օսմանյան թուրքերի պետությունը մի շարք խորտակիչ հարվածներ հասցրեց Բյուզանդիային և կործանեց կայսրությունը: 1639 թ. Հայաստանը բաժանվեց օսմանյան Թուրքիայի և Իրանի միջև. Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիային, Արևելյան Հայաստանը՝ Իրանին: Այդ դրությունն ընդհուպ մինչև XIX դ.



սկիզբը էական փոփոխություններ չկրեց:

XVII դ. 2-րդ կեսը և ամբողջ XVIII դ. նշանավորվել է հայ հասարակական-քաղաքական շրջանների՝ Հ. նվաճողներից ազատագրելու ուղիների որոնումներով: Այդ գործում առաջատար դեր է կատարել հայ եկեղեցին: Եվրոպայի պետություններից օգնություն ստանալու ապարդյուն փորձերից հետո հայերը դիմեցին Ռուսաստանին, որի դերը միջազգային ասպարեզում մեծացել էր: Հայերը հույս ունեին, որ Ռուսաստանի ռազմավարական և տնտեսական շահերը նրան կմղեն իր տիրապետությունը հաստատել Անդրկովկասում: Սակայն XVIII դ. տիրող միջազգային իրադրությունը թույլ չտվեց Ռուսաստանին իրականացնել այդ մտադրությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտավ մեկ դար հետո՝ 1826_28 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով: Ռուսաստանին միացվեցին Երևանի ու Նախիջևանի խանությունները և Օրդուբադի գավառը, ավելի վաղ՝ 1805-ին, Ռուսաստանի կազմի մեջ էր մտել Ղարաբաղի խանությունը (Արցախը): Իրանից և Արևմտյան Հ-ից Արևելյան Հ. ներգաղթեցին շուրջ 140 հզ. հայեր: Այդ գաղթի շնորհիվ Արևելյան Հ-ում փոխվեց ժողովրդագրական իրավիճակը, հայերը դարձան բնակչության գերակշռող մասը, իսկ Արևելյան Հ-ը՝ հայ ազգի համախմբման կենտրոն: Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններից ու Օրդուբադի գավառից 1828 թ. կազմվեց Հայկական մարզը, որը գոյատևեց մինչև 1840 թ.:

Արևելյան Հ-ի տնտեսությունը ապրեց որոշակի վերելք: Տնտեսության առաջատար ճյուղը մնում էր գյուղատնտեսությունը, բայց XIX դ. 2-րդ կեսից սկսած տեղաշարժեր կատարվեցին արդյունաբերության մարզում: Այդուհանդերձ Արևելյան Հ. առավելապես հումքային բազա էր Ռուսաստանի արդյունաբերության համար:

Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հ-ի հայ բնակչության վիճակը էլ ավելի վատթար էր: Գյուղացիության դաժան շահագործումը, իշխանությունների կամայականությունները, ազգային ճնշումը հարուցում էին արևմտահայերի բնական բողոքը, որը գնալով ավելի հաճախ էր ընդունում ապստամբության ազատագրական պայքարի ձև: XIX դ. վերջին քառորդին առաջացավ Հայկական հարցը, որին վիճակված էր երկար ժամանակ հանդիսանալ համաշխարհային դիվանագիտության քննարկման առարկա: Թեև մի շարք պայմանագրերի (1878 թ. Սան Ստեֆանոյի, 1878 թ. Բեռլինի) համաձայն թուրքական իշխանությունները պարտավորվում էին Արևմտյան Հ-ում իրականացնել բարեփոխումներ, ապահովել հայերի կյանքի և գույքի անձեռնմխելիությունը, օրենքի առաջ հավասարությունը ևն, սակայն դրանցից ոչ մեկը Թուրքիան չիրականացրեց: Ընդհակառակը. գնալով ուժեղանում էր Թուրքիայի կառավարող շրջանների անհանդուրժողականությունը հայերի նկատմամբ: Թուրք երիտասարդ ազգային բուրժուազիան ձգտում էր դուրս մղել երկրի տնտեսական ոլորտում առաջատար դիրքեր գրաված հայ բուրժուազիային: Թուր-

քական կառավարող շրջանները դավանում էին պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարներ, իսկ հայ ժողովուրդը դիտվում էր այդ գաղափարների իրականացման ճանապարհին հիմնական խոչընդոտ: Թուրքական իշխանությունները վստահություն չէին տածում հայերի նկատմամբ՝ նրանց ռուսական կողմնորոշման պատճառով:

Բեռլինի վեհաժողովից հետո սկսվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլ: Գերակշռող դարձավ այն համոզմունքը, որ ազգը պետք է իր սեփական ուժերով լուծի իր խնդիրները, ազատագրական պայքարին հաղորդի կազմակերպված բնույթ: Առաջացան զանազան ազատագրական կազմակերպություններ, ընկերություններ և խմբեր, ապա նաև հայ ազգային կուսակցություններ՝ Արմենական կազմակերպությունը, հայ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, հայ հեղափոխական դաշնակցությունը, որոնք իրենց հիմնական խնդիրը համարում էին Հայկական հարցի լուծումը: Արևմտյան Հ-ում ծավալվեց հայդուկային շարժումը: Չնայած ֆիդայիների հերոսությանն ու անձնուրացությանը, նրանց կռիվը չպսակվեց հաջողությամբ. հայդուկային խմբերը գործում էին տարանջատ, հաճախ տարերայնորեն, իսկ հայ ազգային կուսակցությունները միշտ չէ, որ ապահովում էին շարժման ճիշտ ղեկավարությունը:

Իսկ Թուրքիայի կառավարող շրջանները պատրաստվում էին հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ և դրանով իսկ վերջ տալ նրա ազատագրական պայքարին և Հայկական հարցին: 1894_96 թթ. թուրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում կազմակերպեցին հայերի զանգվածային կոտորածներ, որոնց զոհ դարձավ 300 հզ. մարդ: Այնուհետև, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքական կառավարությունը 1915_16 թթ. իրականացրեց Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Թուրքիայի հայաբնակ վայրերի հայերի ցեղասպանությունը: Այդ ոճիրը մշակվել էր պետական մակարդակով, մանրազնին կերպով նախապատրաստվել և իրականացվել անօրինակ դաժանությամբ: Արևմտյան Հ-ի բնակչության մեծ մասը ոչնչացվեց, մնացածները տեղահանվեցին դեպի Միջագետքի և Սիրիայի անապատները, ուր նույնպես դատապարտված էին մահվան: Զոհերի ընդհանուր թիվը կազմեց 1,5 մլն մարդ: Մոտավորապես 800 հզ. հայեր դարձան փախստական ցրվելով աշխարհի շատ երկրներում, համալրելով արդեն առկա հայ համայնքները և կազմելով նորերը: Արևմտյան Հ. զրկվեց իր բնիկ՝ հայ բնակչությունից:

Որոշ տեղերում հայերը համառ դիմադրություն ցույց տվեցին թուրքական կանոնավոր զորքերին, պատժիչ ջոկատներին և քրդական հրոսակախմբերին: Վանի, Շապին Գարահիսարի, Մուշի, Սասունի, Շատախի, Ուրֆայի ինքնապաշտպանությունները, Մուսա լեռան հերոսամարտը դարձան հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության փառավոր էջերից:



1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից, անջատ հաշտություն կնքեց Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ: 1918 թ. Խորհրդային Ռուսաստանից անջատվեց Անդրկովկասը, իսկ 1918-ի մայիսին կազմավորվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունները: Պետականության վերականգնման նախօրյակին Հ. ներխուժեցին թուրքական զորքերը: Թուրք զավթիչները հասան մինչև Երևանի մատույցները: 1918 թ. մայիսին Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ Ապարանի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում հայ ժողովուրդը կարողացավ պարտության մատնել թուրքական զորքերին և կանխել նրանց ներխուժումը Արարատյան դաշտավայր: Դա հնարավոր դարձրեց Հայաստանի Հանրապետության ստեղծումը:

Հայաստանի Հանրապետությունը գոյատևեց երկուս ու կես տարի՝ մինչև 1920-ի դեկտեմբերի սկիզբը: Այդ ընթացքում հաջողվեց ազատագրել թուրքերի կողմից զավթած տարածքի մի մասը, ստեղծել ազգային պետականության հիմնասյուներ, որոշ չափով աշխուժացնել տնտեսությունը, հարաբերություններ հաստատել մի շարք երկրների հետ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձգտում էր լուծել Հայկական հարցը՝ պատերազմում Թուրքիայի պարտությունը դիտելով որպես Հայկական հարցը կրկին բարձրացնելու հարմար հնարավորություն: 1920 թ. Թուրքիայի հետ կնքված Սևրի հաշտության պայմանագիրը բարենպաստ էր Հ-ի համար, քանի որ այն նախատեսում էր պետականության վերականգնումը Արևմտահայաստանի տարածքի մի զգալի մասի սահմաններում, ելք դեպի Սև ծով, Հ-ի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից: Թուրքիայում իշխանության գլուխ անցած նոր քեմալական կառավարությունը, պայքար ծավալելով այդ պայմանագրի դեմ, ի վերջո հասավ իր նպատակին՝ Սևրի պայմանագիրը չեղյալ ճանաչվեց: Այդ հարցում վճռական նշանակություն ունեցավ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցումը:

1920 թ. աշնանը սկսվեց հայ-թուրքական նոր պատերազմ, որի ընթացքում Հ. պարտություն կրեց. նրա տարածքի կեսից ավելին զավթեցին թուրքական զորքերը: Միաժամանակ Խորհրդային Ռուսաստանի ճնշման տակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված էր հայտարարել, որ հրաժարվում է իշխանությունից՝ հօգուտ հայ բոլշևիկների: Հայաստանի Հանրապետությունը ընկավ, Հ-ում հռչակվեց խորհրդային իշխանություն: Հ. ոչ միայն չստացավ Արևմտահայաստանը, այլև զրկվեց Կարսի մարզից, որն անցավ Թուրքիային: 1921 թ., հայ ժողովրդի ազգային շահերին հակառակ, Խորհրդային Ռուսաստանը, նպաստելով Ադրբեջանին, Նախիջևանը, ապա և Լեռնային Ղարաբաղը մտցրեց նրա կազմի մեջ:

Գրեթե յոթ տասնամյակների ընթացքում՝ 1920-ից մինչև 1991 թ., Հ. գտնվում էր ԽՍՀՄ-ի կազմում: Այդ տարիներին նա անցավ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման դժվարին

ուղի, որը նշանավորվեց նվաճումներով ու զրկանքներով, հաջողություններով ու զոհերով: Հ. դարձավ գերազանցապես արդյունաբերական երկիր: Արդյունաբերության առաջատար ճյուղերն էին մեքենաշինությունը, հաստոցաշինությունը, սարքաշինությունը, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը: Գյուղատնտեսությունը, գտնվելով կոլեկտիվ տնտեսությունների համակարգի մեջ, զրկվելով ազատ զարգացման հնարավորությունից, շարունակում էր էականորեն հետ մնալ համաշխարհային միջին մակարդակից: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը իր վրա կրում էր վարչահրամայական համակարգի ճնշող կնիքը: Այդ համակարգի միջուկն էր գերիշխանությամբ օժտված կոմունիստական կուսակցությունը: Հայաստանի խորհրդային պետականությունը հեռու էր իսկական ժողովրդավարությունից և ժողովրդապետությունից:

Արդյունաբերության զարգացումը մեծապես նպաստեց Հ-ի քաղաքային բնակչության կտրուկ աճին: 1920 թ. Հ-ի բնակչությունը կազմում էր 720 հզ. մարդ, 1926 թ. արդեն 881,3 հզ. մարդ էր, 1940 թ.՝ 1320,3 հզ., 1959-ին՝ 1763,1 հզ., 1970 թ.՝ 2491,9 հզ., 1979 թ.՝ 3030,7 հզ., 1987 թ.՝ 3411,9, 1994 թ.՝ 3,743 հզ.: Բնակչության աճը պայմանավորված էր ծնելիության բարձր մակարդակով, ինչպես նաև սփյուռքահայերի հայրենադարձությամբ (1920_40-ական թթ. Հ. ընդունեց շուրջ 200 հզ. հայրենադարձ): Արդեն 1959 թ. հավասարվեց քաղաքային և գյուղական բնակչության տոկոսային հարաբերակցությունը: Հետագա տարիներին քաղաքային բնակչության աճը անընդհատ էր: 1990-ական թթ. սկզբին Հ-ի քաղաքներում ապրում էր բնակչության շուրջ 70 %-ը:

1980-ական թթ. կեսին պարզ դարձավ, որ խորհրդային համակարգը սպառել է իր հնարավորությունները տնտեսական և ընկերային կյանքի բոլոր ոլորտներում: Երկիրն ակնհայտորեն հետ էր մնում գիտատեխնիկական առաջընթացի համաշխարհային մակարդակից, ժողովրդական տնտեսության մեջ էլ ավելի էին խորանում լճացման երևույթները: Լայն տարածում էին գտել կաշառակերությունը, պետական ունեցվածքի հափշտակությունը և այլ բացասական երևույթներ: Հ-ում, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ում, զգացվում էր արմատական վերափոխումների անհրաժեշտությունը: Հասունանում էին այն ուժերը, որոնք պատրաստ էին դիմել հասարակության վերափոխմանը: Հ-ում ժողովրդավարական շարժման յուրատեսակ խթանիչ հանդիսացավ Ղարաբաղյան շարժումը, որը սկիզբ առավ 1988 թ. փետրվարին: Հ-ում ձևավորվեց Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որը խնդիր դրեց ոչ միայն լուծել Արցախի հիմնահարցը, այլև իրականացնել լայն ժողովրդավարական վերափոխումներ կյանքի բոլոր ոլորտներում: ՀՀՇ-ն հաղթեց 1990 թ. կայացած հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններում: 1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության նորընտիր Գերագույն խորհուրդն ընդունեց Հռչակագիր Հայաստանի անկախության մասին, Հայկական ԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:



1991 թ. սեպտեմբերին հանրապետությունում անցկացված հանրաքվեի արդյունքներով Հ-ի բնակչության բացարձակ մեծամասնությունը արտահայտվեց անկախ պետություն ստեղծելու օգտին: 1991 թ. նոյեմբերին ՀՀ նախագահ ընտրվեց՝ Լ. Տեր-Պետրոսյանը:

Անկախության հռչակումից հետո Հ-ում իրագործվեցին նշանակալի վերափոխումներ՝ վերականգնվեց մասնավոր սեփականությունը և դրա հետ մեկտեղ՝ տնտեսության բազմակացութաձևությունը, իրականացվեց հողի սեփականաշնորհումը, սկսվել է արդյունաբերության, առևտրի, սպասարկման ոլորտի ձեռնարկությունների սեփականաշնորհումը: Կարևոր նշանակություն ունի ազգային բանակի ստեղծումը: Հանրապետությունում ստեղծվել է բազմակուսակցական համակարգ, մշակվում է պետության օրենսդրությունը: Հայաստանի Հանրապետությունը ճանաչվել է բազմաթիվ պետությունների կողմից. դրանցից շատերի հետ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ: Հ. դարձել է ՄԱԿ-ի, միջազգային մի շարք այլ հեղինակավոր կազմակերպությունների անդամ: Լրիվ ծավալով վերականգնված է Հայաստանյայց առաքելական եկեղեցու դերը: 1995 թ. ապրիլին, երջանկահիշատակ Վազգեն Ա-ի մահից հետո, Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին Ա-ը:

Տնտեսական լուրջ ճգնաժամի հետևանքով ստեղծված ծանր պայմաններում, որոնք հետևանք են 1988 թ. ավերիչ երկրաշարժի և Ադրբեջանի կողմից հաղորդակցության ուղիների և գազամուղի մշտական շրջափակման, Հայաստանի Հանրապետությունը լարում է իր ուժերը՝ ձգտելով հաղթահարել դժվարությունները, ապահովել ժողովրդի գոյատևումը, պահպանել երկրի ներքին կայունությունը, հասնել ղարաբաղյան հիմնախնդրի լուծմանը՝ արդարության և մարդու իրավունքների սկզբունքների համապատասխան:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ամայացման հետևանքով կազմավորվեց հայ Սփյուռքը: Գոյություն ունեցող համայնքներին ավելացան նորերը: Փոխհարաբերությունները Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև զարգանում էին բարդ ճանապարհով: 1920-ական թթ. Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը կարևոր նշանակություն էր տալիս Սփյուռքի հետ փոխհարաբերություններին, ձգտում էր իր կողմը գրավել սփյուռքահայությանը: Ստեղծվեցին Սփյուռքի հետ կապեր իրականացնող պետական և հասարակական կազմակերպություններ՝ Հայաստանի օգնության կոմիտեն ևն: Այդ տարիներին շատ երկրների հայ համայնքներ զգալի օգնություն ցույց տվեցին Հ-ին՝ նոր բնակավայրերի կառուցման, լուսավորության, առողջապահության զարգացման գործում: 1930-ական թթ. կեսից, ամբողջատիրական համակարգի գերիշխանության, կամայականության ծավալման պայմաններում հարաբերությունները Սփյուռքի հետ գրեթե ընդհատվեցին, լուծարվեցին մինչ այդ ստեղծված Սփյուռքի հետ կապեր իրականացնող կազմակերպություն-

ները: Երկրորդ համաշխարհային պատերազմի և հետպատերազմյան տարիներին այդ կապերը վերականգնվեցին, իրականացվեց սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձություն: Հայրենիքի և Սփյուռքի փոխհարաբերությունների տեսանկյունից կարևոր սահմանագիծ է հանդիսանում 1965 թ., երբ Մեծ եղեռնի 50-ամյակը լայնորեն նշվեց ոչ միայն սփյուռքահայ համայնքներում, այլև առաջին անգամ նաև խորհրդային Հայաստանում. այդ փաստն ընկալվեց որպես վկայություն այն իրողության, որ սփյուռքահայությունը այլևս Հայկական հարցի արդարացի լուծման համար պայքարող միակ ուժը չէ:

Հայրենիքի և Սփյուռքի փոխհարաբերություններում որակապես նոր փուլ սկսվեց 1980-ական թթ. վերջին՝ պայմանավորված Ղարաբաղյան շարժման ծավալմամբ և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով: Հայերի ազգային ինքնագիտակցության վերելքի հուժկու ալիքը համակեց Սփյուռքին, այդ թվում և նախկին խորհրդային հանրապետություններում գոյություն ունեցող համայնքներին, ուր խորհրդային իշխանության տարիներին հայոց ազգային կյանքը ըստ էության դադարել էր:

Զգալիորեն ընդլայնվում են կապերը Հայրենիքի և Սփյուռքի միջև: Դրան նպաստում է պետության վարած քաղաքականությունը, հանրապետությունում հայ ավանդական քաղաքական կուսակցությունների, բարեգործական, մշակութային միությունների, ընկերությունների գործունեության հաստատումն ու վերահաստատումը: Հայրենիքի և Սփյուռքի համախմբման գործում կարևոր դեր է շարունակում խաղալ Հայաստանյայց առաքելական եկեղեցին:

1950_90-ական թթ. կարևոր փոփոխություններ տեղի ունեցան սփյուռքահայերի տարաբնակեցման ասպարեզում: Քաղաքացիական պատերազմը Լիբանանում, իսլամական հեղափոխությունը Իրանում, պատերազմը Իրանի և Իրաքի միջև խախտեցին կայունությունը Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, ուր վաղուց ի վեր գոյություն ունեին հայկական համայնքներ: Նկատելիորեն կրճատվեց հայ բնակչության թվաքանակը Եգիպտոսում, Իրանում, Լիբանանում և կտրուկ աճեց ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր: Ստվարացան հայ համայնքները Սկանդինավյան երկրներում, Նոր Զելանդիայում: Վերջին տարիներին ամերիկյան և եվրոպական հայ համայնքները համալրվում են Հայաստանը լքող հայերով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Արցախ, պետություն Անդրկովկասի արևելյան և հարավ-արևելյան մասում

Մայրաքաղաքը՝ Ստեփանակերտ
Տարածքը՝ 4,4 հզ. կմ²
Բնակչությունը՝ 150 հզ. (1994 թ.)



Հայկական պետականության սկզբնավորումից ի վեր Արցախը եղել է նրա կազմում՝ հանդիսանալով Մեծ Հայքի հիմնական աշխարհներից մեկը: Հայկական թագավորության անկումից (428 թ.) հետո Լ.Ղ. մտել է Աղվանք մարզպանության կազմի մեջ: Ղարաբաղում երկար ժամանակ պահպանվել են հայկական պետականության բեկորները՝ մելիքությունների ձևով: Թուրքիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումից (XVI դ.) հետո Ղարաբաղը դարձել է հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոն: Արցախահայերի քաղաքական շրջանները կապ են հաստատել քրիստոնյա Ռուսաստանի հետ՝ ձգտելով ստանալ նրա օգնությունը Հայաստանն օտարերկրյա լծից ազատագրելու համար: 1805 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Ղարաբաղը միացվել է Ռուսաստանին. այն իր ձևակերպումը ստացել է Գյուլիստանի հաշտության պայմանագրում (1813 թ.)՝ կնքված Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Այնուհետև Լ.Ղ. վարչականորեն մտել է Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի մեջ:

Հայերը մշտապես կազմել են Լ.Ղ-ի բնակչության գերակշիռ մեծամասնությունը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828 թ.) հետո Ղարաբաղ են գաղթել բազմաթիվ պարսկահայեր: XX դ. սկզբին հայերը կազմում էին Ղարաբաղի բնակչության մոտ 95 %-ը:

Ղարաբաղը հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքի կենտրոններից մեկն էր: Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արցախի թեմն ուներ 222 եկեղեցի և վանք, իսկ թեմի անդամների թվաքանակը հասել է 206,7 հզ-ի: Լ.Ղ-ի քաղաքներում և գյուղերում գործում էին հայկական դպրոցներ: Լ.Ղ-ի վարչական կենտրոն Շուշի քաղաքում XIX դ. վերջին գործում էր 3 հայկական տպարան, ուր տպագրվում էին գրքեր ու պարբերականներ (1874_1920 թթ. Արցախում հրատարակվել է շուրջ 15 հայերեն թերթ ու ամսագիր): XIX դ. 2-րդ կեսին Շուշին Անդրկովկասի հայ մշակութային կյանքի՝ իր նշանակությամբ երկրորդ (Թիֆլիսից հետո) կենտրոնն էր:

1918 թ. մայիսին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունների ստեղծումից հետո Ադրբեջանի կառավարությունն իր հավակնությունը ներկայացրեց Լ.Ղ-ի նկատմամբ և բազմիցս փորձեց բռնի կերպով միացնել երկրամասը Ադրբեջանին: 1918_20 թթ. ընթացքում Լ.Ղ-ի հայ բնակչությունը տեղական Հայ ազգային խորհրդի գլխավորությամբ զենքով ետ է մղել ադրբեջանական զորքերի հարձակումները: Ադրբեջանին օժանդակում էին թուրք զավթիչները, իսկ առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո՝ անգլիական զորքերը: 1920 թ. մարտին ադրբեջանական զորքերը հերթական անգամ ներխուժել են Լ.Ղ., գրավել Շուշին, կրակի մատնել քաղաքի հայկական թաղերը, կոտորել շուրջ 30 հզ. հայ:

1920 թ. ապրիլին Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանություն: Քանի որ Ադրբեջանը խորհրդայնացվել էր, իսկ Հայաստանը դեռ պահպանում էր իր անկախությունը, Խորհրդային Ռուսաստանը

բացահայտ պաշտպանեց Ադրբեջանի հավակնությունը Լ.Ղ-ի նկատմամբ: 1920 թ. մայիսին Ռուսաստանը պահանջեց Հայաստանի Հանրապետությունից դուրս բերել իր զորքերը Լ.Ղ-ից: Այնուհետև Լ.Ղ. մտցվեցին խորհրդային զորքեր, և այնտեղ հաստատվեց խորհրդային իշխանություն:

Հայաստանի Հանրապետության անկումից և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը 1920 թ. նոյեմբերի 30-ին ընդունեց հատուկ հռչակագիր՝ հայտարարելով, որ Զանգեզուրը և Նախիջևանը հանդիսանում են Հայաստանի անբաժանելի մասը, իսկ Լ.Ղ-ի բնակչությանը ինքնորոշման իրավունք է վերապահվում: Սակայն երեք ամիս անց Ադրբեջանի դիրքը կտրուկ փոխվեց. Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև դավադիր գործարքի հետևանքով Ադրբեջանին հաջողվեց իրեն միացնել Նախիջևանը, իսկ այնուհետև 1921 թ. հուլիսին ստանալ Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության համաձայնությունը Լ.Ղ. Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ (ինքնավարության իրավունքով): 1923 թ. հուլիսին կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում, մարզի կենտրոն դարձավ Ստեփանակերտ քաղաքը:

Ադրբեջանի կազմում Լ.Ղ-ի սոցիալ-տնտեսական զարգացումն իրագործվում էր մարզը հանրապետության հումքի աղբյուր դարձնելու սկզբունքով: Ադրբեջանի իշխանությունները խոչընդոտում էին մարզում հայ ազգային մշակույթի զարգացմանը: Տասնամյակներ շարունակ մարզը մեկուսացված էր Հայաստանից: Առկա էին մարզի հայ բնակչության համար ժողովրդագրական զարգացման տագնապալի միտումներ. տարիների ընթացքում կրճատվում էր հայերի և աճում ադրբեջանցիների թիվը: Հայաստանում և այլ վայրերում կրթություն ստացած արցախահայերի մեծ մասը չէր վերադառնում Լ.Ղ.՝ իր մասնագիտությամբ աշխատելու հնարավորություն չունենալու պատճառով:

Լ.Ղ-ի հայ բնակչությունը բազմիցս հարց է հարուցել մարզը Ադրբեջանի մեջ մտցնելու սխալ որոշումը վերանայելու մասին, պահանջել ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզի հայ բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային ազատ զարգացման համար: Սակայն ամբողջատիրական կարգերի պայմաններում նման փորձերը դաժանորեն ճնշվում էին:

1980-ական թթ. կեսին, երբ Խորհրդային Միությունում իրագործվեցին որոշ միջոցառումներ հասարակական կյանքի ազատականացման և հրապարակայնության հաստատման ուղղությամբ, Լ.Ղ-ի հայ բնակչությունը կրկին հարց բարձրացրեց մարզը Հայաստանին միացնելու մասին: Հայ բնակչության կամքը արտահայտելով՝ ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդը 1988 թ. փետրվարին որոշում ընդունեց մարզը Հայկական ԽՍՀ-ի հետ միավորելու վերաբերյալ և համապատասխան խնդրանքով դիմեց Հայաստանի, Ադրբեջանի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին: ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը մերժեց այդ խնդրանքը: 1988 թ. փետրվարին Սումգայիթում և 1990 թ. հունվարին Բաքվում կազմակերպվեցին հայերի կոտորածներ, որոնք սկսված շարժմանը հաղորդեցին սուր ազգամիջյան բախման բնույթ: Ադրբեջանցի բնակչությունը լքեց Լ.Ղ.: Միաժամանակ Ադրբեջանը լքած հայերի մի մասը տեղափոխվեց Լ.Ղ.: Նախկին ԽՍՀՄ ղեկավարությունը, երկյուղելով, որ ղարաբաղյան խնդրի ճիշտ և արմատական լուծումը կարող է առաջ բերել խորհրդային իշխանության տարիներին ազգամիջյան հարաբերությունների ասպարեզում կուտակված այլ հիմնահարցերի բորբոքում, փորձեց կիսատ-պռատ միջոցառումներով (ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձևի հաստատում, մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման վերաբերյալ տարբեր որոշումների ընդունում) վերջ դնել Ղարաբաղյան շարժմանը: Սակայն այդ փորձերը արդյունք չտվեցին: Երբ 1990 թ. մայիսին Հայաստանում իշխանության գլուխ եկավ Հայոց համազգային շարժումը, որը նույն թվականի օգոստոսին հռչակեց Հայաստանի անկախությունը, ԽՍՀՄ ղեկավարությունը սկսեց բացահայտ ձևով օժանդակել Ադրբեջանի իշխանություններին: Այդ օժանդակության շնորհիվ Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց իրագործել Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի և Գետաշենի շրջանների բնիկ հայ բնակչության տեղահանությունը:

1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանական ԽՍՀ-ը հայտարարեց Խորհրդային Միության կազմից իր դուրս գալու մասին: Օգտվելով սահմանադրական իր իրավունքից՝ ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը, Շահումյանի շրջանի խորհրդի հետ մեկտեղ, 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) ստեղծումը: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին Լ.Ղ-ում անցկացվեց հանրաքվե (միջազգային դիտորդների մասնակցությամբ), որի արդյունքների համաձայն Լ.Ղ-ի բնակչությունը միահամուռ կերպով արտահայտվեց հօգուտ հանրապետության անկախության:

1991 թ. 2-րդ կեսին, երբ Ադրբեջանում իշխանության գլուխ անցավ Ազգային ճակատը, Ադրբեջանը ռազմական գործողություններ ծավալեց ԼՂՀ-ի դեմ, սաստկացրեց ԼՂՀ-ի և Հայաստանի շրջափակումը: ԼՂՀ բնակչությունը զենքով հերոսաբար դիմակայեց Ադրբեջանի զինված ուժերին, որոնք օգտագործում էին ռազմական տեխնիկա ու ինքնաթիռներ, զանգվածային ոչնչացման միջոցներ: Մարտերի ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը 1992 թ. մայիսին ազատագրեցին Շուշին, ապա գրավեցին Լաչինը, որը դարձավ ԼՂՀ-ն Հայաստանին կապող միջանցք: 1992 թ. օգոստոսին ադրբեջանական զորքերը կարողացան գրավել Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մի մասը: 1993 թ. ԼՂՀ պաշտպանության բանակը, ձգտելով ապահովել հանրապետության սահմանների անվտանգությունը, առաջ շարժվեց դեպի ԼՂՀ սահմանակից շրջաններ, գրավեց ադրբեջանական զորքերի

կարևոր հենակետերը՝ Քելբաջարը, Աղդամը, Ֆիզուլին:

Ադրբեջանի և ԼՂՀ-ի անկախության հռչակումից հետո բախումը այդ պետությունների միջև ստացավ միջազգային բնույթ. հիմնախնդրի կարգավորմամբ զբաղվեցին հեղինակավոր միջազգային կազմակերպություններ՝ ՄԱԿ-ը, ԵԱՀԽ-ը, տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող մի շարք երկրներ՝ Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը: 1993 և 1995 թթ. այդ կազմակերպությունները և երկրներն առաջադրեցին բախման կարգավորման իրենց նախագծերը՝ առաջնահերթ խնդիրը համարելով զինադադարի հաստատումը, իսկ այնուհետև քաղաքական բանակցություններ ԼՂՀ կարգավիճակի վերաբերյալ: Ադրբեջանական կողմը, որը երկար ժամանակ չէր ճանաչում ԼՂՀ որպես բախման կողմ, ստիպված եղավ ի վերջո բանակցությունների մեջ մտնել ԼՂՀ հետ: Ադրբեջանում առաջացած բարդ քաղաքական կացությունը, 1993_94 թթ. ադրբեջանական բանակի անհաջողությունները ստիպեցին Ադրբեջանի ղեկավարությանը խուսանավել, չընդունել ղարաբաղյան հիմնահարցի լուծման վերաբերյալ առաջարկվող նախագծերը: 1994 թ. սկզբին նկատելիորեն ակտիվացրեց իր խաղարարական ջանքերը Ռուսաստանը, որը գործում է թե՛ ՄԱԿ-ի ու ԵԱՀԽ-ի շրջանակներում և թե՛ ինքնուրույն: 1994 թ. մայիսին հաստատվել է հրադադար, որը շարունակվում է ցայսօր:

Հրադադարի պայմաններում ԼՂՀ բնակչությունը վերականգնում է ավերված տնտեսությունը, բնականոն հունի մեջ դնում հանրապետության կյանքը: 1994 թ. ընտրվել է ԼՂՀ առաջին նախագահը: Ստեփանակերտում բացվել է համալսարան, հրատարակվում են նոր թերթեր, գործում է տեղական հեռուստատեսությունը: ԼՂՀ ներկայացուցիչները մասնակցում են միջազգային կազմակերպությունների գործունեությանը, ներկայացնում և պաշտպանում ԼՂՀ շահերը բարձր ատյաններում որպես բախման կողմ:

Հայաստանը և սփյուռքահայությունը Արցախի ժողովրդին ցուցաբերում են մարդասիրական և բարոյական օգնություն:

**ԱԴՐԲԵՋԱՆ**, Ադրբեջանի Հանրապետություն, պետություն Անդրկովկասի արևելյան մասում

Մայրաքաղաքը՝ Բաքու

Տարածքը՝ 82,2 հզ. կմ$^2$

Բնակչությունը՝ 7,2 մն (1991 թ.)

Ժամանակակից Ա-ի գրեթե բոլոր շրջաններում հայերն ապրել են հնագույն ժամանակներից: Հայտնի է, որ դեռևս Ք.ա. VIII դարից Վանի կամ Ուրարտական թագավորության հյուսիսային սահմանն անցնում էր Կուր գետով, և աջափնյակի ամբողջ տարածքը ընդգրկված էր հայոց քաղաքական-տնտեսական ու մշակութային զարգացման ոլորտի մեջ: Հույն աշխարհագետ Ստրաբոնը (I դ.), Մեծ Հայքի հյուսիսային սահմանը ձգելով նույն Կուր գետով, շեշտել է նաև, որ իր ժամանակ Հայոց



երկրի ներսի ամբողջ ժողովուրդը խոսել է մեկ լեզվով՝ հայերեն: Ստրաբոնը վկայել է, որ Մեծ Հայքի մեջ են մտել նաև Անդրկուրյան երկու լեռնային նահանգներ՝ Խորձյան ու Կամբեճանը (հետագայի Շաքին, Հերեթը): Անդրկուրյան կամ բուն Աղվանքում եղել են հոծ հայ բնակչություն ունեցող ուրիշ շրջաններ ևս, որոնց զգալի մասը՝ Խաչմասի կողմերում, Շիրվանում ևն, միշտ էլ իրենց գոյությունն ու ազգային կերպարանքն էին պահպանում մինչև վերջին ժամանակները (1990-ական թթ.), իսկ Ուտիքի գավառներն ունեին անխառն հայ բնակչություն: XI_XII դդ. Գանձակում հիմնավորված արաբների, հետագայում էլ թաթարմոնղոլների, ապա և օղուզ թուրքերի գալով էր, որ ուշ միջնադարում այս շրջանների բնակչության մի զգալի մասն էին կազմում արդեն մահմեդականություն ընդունած քոչվոր թուրքերի սերունդները: Եվ, այսուհանդերձ, նախախորհրդային ժամանակաշրջանում անգամ Քարհատի (Դաշքեսան), Կասում-Իսմայլովի, Շամախու, Խանլարի, Շամքորի, Շահումյանի շրջանների, Գանձակ քաղաքի ու շրջակայքի, Ղազախի, Պարտավի բնակչության մեծ մասն էին կազմում տեղաբնիկ հայերը:

Ա-ի տարածքում, բնիկ հայկական Արցախի ու Նախիջևանի մարզերից բացի, բնակվում էր շուրջ կես միլիոն հայ, որն իր ապրած վայրերում ոչ թե հյուր էր, այլ ավանդական տեր և վիթխարի ծառայություն ուներ տնտեսության ու մշակույթի զարգացման բնագավառներում: XIX դ. վերջին ու XX դ. սկզբին Բաքվի նավթային արդյունաբերությունն ու առևտուրն իրենց համաշխարհային հռչակով պարտական էին նաև Մանթաշյան, Ղուկասյան, Արամյան, Մայիլյան, Լիանոզով, Միրզոյան, Ծուզբաշյան, Ադամյան և այլ արդյունաբերող ու առևտրական տների:

Բաքվի հայությունը դեռևս 1799 թ. (հին քաղաքում կամ բերդամիջում) կառուցել էր Ս. Աստվածածին եկեղեցին, որին կից՝ ծխական դպրոց (այդ ժամանակ Բաքուն ուներ ընդամենը 14_15 հզ. բնակչություն): XIX դ. Բաքվի կապիտալիստական բուռն զարգացման հետ մեծացել է հայ բնակչության թիվը, քաղաքը դարձել է հայ մշակույթի խոշորագույն կենտրոններից: 1864 թ. հիմնված Հայոց մարդասիրական ընկերության ծավալած բուռն գործունեության շնորհիվ բացվել են հայկական բազմաթիվ դպրոցներ, ստեղծվել համաքաղաքային գրադարան, տպարան, թատրոն, տպագրվել թերթեր ու հանդեսներ. Բաքվում հրատարակվել են 50-ից ավել հայերեն թերթ, գեղարվեստական ու հասարակական-քաղաքական հանդեսներ: Մինչև երկրորդ աշխարհամարտը գործել են շուրջ 80 միջնակարգ դպրոց, մանկավարժական տեխնիկում, պետական համալսարանի ու մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքներ՝ իրենց մի շարք ֆակուլտետներով: Երգահան Անտոն Մայիլյանը կազմակերպել և երկար տարիներ գլխավորել է հանրապետության առաջին երգչախումբը, Հովհաննես Հովհաննիսյանն է ստեղծել Ադրբեջանի ժողովրդական գործիքների առաջին անսամբլը և ղեկավարել երկար ժամանակ, Բաքվի ռուսական թատրոնի նկարիչ ու ռեժիսորն էր Ս. Սաղյանը: Երկար տարիներ Բաքվում են

գործել նշանավոր հեղափոխական Ստեփան Շահումյանը, գրողներ Ալեքսանդր Շիրվանզադեն, Հակոբ Հակոբյանը, Գարեգին Սևունցը, Թաթուլ Հուրյանը, Մարգար Դավթյանը, Համո Սահյանը և ուրիշներ:

Մեծ է հայերի ներդրումը քաղաքաշինության, Բաքվի ճարտարապետական նկարագրի կերտման գործում: Մեծ վաստակ ունեն անվանի ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանը, Ս. Սարգսյանցը, Ն. Բաևը, Ֆ. Աղալյանը և ուրիշներ, որոնց նախագծերով կառուցված հոյակերտները այսօր էլ զարդարում են Բաքուն (այժմյան ֆիլհարմոնիայի, «Մանկական աշխարհ» հանրախանութի, մանկավարժական ինստիտուտի, գրողների միության, «Ազնեֆտ» վարչության, Ադրբեջանի օպերայի ու բալետի թատրոնի շենքերը և բազմաթիվ բնակելի տներ):

Քաղաքի կենտրոնի զարդերից էր Հովհաննես Քաջազնունու՝ միջազգային մրցանակ շահած նախագծով 1910_11 թթ. կառուցված Ս. Թադևոս ու Բարդուղիմեոս հայկական եկեղեցին, որը քանդել են.

1950_70-ական թթ. փակվեցին հայկական ուսումնական հաստատությունները, մշակութային կենտրոնները:

XX դ. սկզբից ծավալված ու բորբոքված հակահայկական քաղաքականությունն իր ավարտին հասավ XX դ. վերջին տասնամյակում: Ա-ի տարածքում կես միլիոն հայերից չմնաց գրեթե ոչ մեկը: 1988 թ. փետրվար-մարտին Սումգայիթի, 1990 թ. հունվարի 13_20-ին Բաքվի և Գանձակի ջարդերից հետո շուրջ 300 հզ. հայ տեղահանվեց իր բնիկ երկրից ու դարձավ փախստական:

## ԱԼԲԱՆԻԱ, Ալբանիայի ժողովրդական Հանրապետություն, պետություն Եվրոպայի հարավում

Մայրաքաղաքը՝ Տիրանա
Տարածքը՝ 28,7 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 3,3 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 250

Հայերը Ա-ում հաստատվել են XX դ. սկզբին. համայնքը ձևավորվել է 1915 թ. եղեռնից հետո: Հայերը հիմնականում բնակվում են Տիրանայում, նաև Վլյորա ու Դուրես քաղաքներում: Զբաղվում են արհեստագործությամբ, բժիշկներ են, տնտեսագետներ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայերը մարտնչել են Ա-ի ազատագրման համար և այդ պատճառով էլ նրանք որպես ազգային փոքրամասնություն չեն հետապնդվել: Համայնքը երկար ժամանակ (1940_80-ական թթ.) զրկված էր հայրենիքի հետ կապից: 1990 թ. ապրիլին Ա-ի կառավարության թույլտվությամբ կաթոլիկ եկեղեցում պատարագ է մատուցվել ի հիշատակ հայոց Մեծ եղեռնի զոհերի: 1991 թ. Տիրանայում հիմնվել է Հայկական մշակութային ընկերություն, որը փորձում է իր շուրջը համախմբել փոքրաթիվ համայնքը, որը դեռևս չունի իր եկեղեցին ու դպրոցը:



Ալբանահայերից հայտնի են քիմիայի պրոֆեսոր Ծովասար Չախմախչյանը, բժիշկ Վահե Փոթրոլյանը, երգահան Հայկ Զաքարյանը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ալբանիայի ժողովրդական Հանրապետության միջև հաստատվել են 1993 թ.:

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ԱՄՆ) պետություն Հյուսիսային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Վաշինգտոն
Տարածքը՝ 2363,2 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 250,9 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 1 միլիոն

ԱՄՆ-ի հայ համայնքը ձևավորվել է XIX դ. 70-ական թթ. վերջին (Հյուսիսային Ամերիկա եկած առաջին հայի անունը՝ Ջոն Մարտին, հիշատակվում է 1618 թ.): Հայերը զանգվածաբար ԱՄՆ են գաղթել 1890-ական թթ. Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը (1914_18) ԱՄՆ-ում բնակվում էր 60 հզ. հայ, 1915 թ. Մեծ եղեռնից հետո (1920_24 թթ.) ԱՄՆ է գաղթել շուրջ 21 հզ. հայ, ներգաղթի նոր ալիք է եղել երկրորդ համաշխարհային պատերազմից (1939_45) հետո, ապա՝ 1950-ական թթ. և ընդմիջումներով շարունակվում է ցայսօր, հիմնականում Միջին և Մերձավոր Արևելքի (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրան ևն) երկրներից, 1988 թ-ից հետո նաև՝ Հայաստանից: 1994 թ. ԱՄՆ-ի հայերի թիվը հասել է շուրջ մեկ միլիոն մարդու: Բնակվում են հիմնականում Կալիֆոռնիա, Մասսաչուսեթս, Նյու Յորք, Նյու Ջերսի, Ռոդ Այլենդ, Միչիգան, Իլինոյս, Ֆլորիդա, Փենսիլվանիա, Օհայո, Քոնեքթիքութ, Տեխաս, Վիրջինիա, Վիսքոնսին, Ջորջիա, Լուիզիանա և այլ նահանգներում, Կոլումբիայի շրջանում: Հայերի սոցիալական կազմը խիստ խայտաբղետ է. ծառայողներ, մանր և խոշոր ձեռնարկատերեր, բանվորներ, առևտրականներ, արհեստավորներ, գիտնականներ, արվեստագետներ ևն: Հայ գործիչներ կան նաև Սպիտակ տանը, Պետական դեպարտամենտում, Կոնգրեսում, առանձին նահանգների օրենսդրական, գործադիր և դատական մարմիններում: ԱՄՆ-ի հայ համայնքը ամենախոշորներից է հայ սփյուռքում և բնութագրվում է աշխույժ ազգային գործունեությամբ (ինչին նպաստել է վերջին շրջանում հայերի ներգաղթը Միջին և Մերձավոր Արևելքից):

ԱՄՆ-ում առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Փրկիչը, հիմնադրվել է Ուստրում, 1891 թ.: 1898 թ. ամերիկահայ եկեղեցին ստացել է առաջնորդություն: 1928 թ. առանձնացվել են Արևելյան (կենտրոնը՝ Նյու Յորք) և Արևմտյան (կենտրոնը՝ Լոս Անջելես) թեմերը: 1983 թ. Արևելյան թեմն ուներ 71 եկեղեցի, Արևմտյան թեմը՝ 24, հայ ավետարանականները (շուրջ 25 հզ. հոգի)՝ 22 ժողովարան, հայ կաթոլիկները (շուրջ 6 հզ.

հոգի)՝ 6 եկեղեցի:

ԱՄՆ-ում առաջին հայկական ամենօրյա դպրոցը՝ Ֆերահյան երկրորդական վարժարանը, բացվել է 1964 թ., Լոս Անջելեսում: 1987 թ. գործում էր 23 ամենօրյա հայկական դպրոց: 1976 թ. Լավեռնում հիմնվել է Ամերիկահայ միջազգային քոլեջը՝ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը ամերիկյան մայրցամաքում: Ամերիկահայ համայնքի ձևավորումից ի վեր ազգային կյանքը կազմակերպելու, նաև հայրենակիցներին համախմբելու և օգնելու նպատակով ստեղծվել են հայրենակցական, բարեգործական, բարեսիրական միություններ:

XIX դ. վերջին - XX դ. սկզբին ստեղծված քղեցիների, արաբկիրցիների, խարբերդցիների, սեբաստացիների, մալաթիացիների, վասպուրականցիների, պոլսահայերի և այլոց հայրենակցական միություններին ավելացել են նաև իրանահայերի, լիբանանահայերի միությունները: Նյու Յորքում է գտնվում ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը (վարչության պատվավոր ցմահ նախագահ Ալեք Մանուկյան, նախագահ՝ Լուիզ Սիմոն-Մանուկյան): ՀԲԸՄ մասնաճյուղերը գործում են գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում: Կարևոր դեր է խաղում 1972 թ. Վաշինգտոնում հիմնադրված Ամերիկայի հայկական համագումարը (ղեկավար՝ Հրայր Հովնանյան), նաև Հայ դատի հանձնախումբը: Համայնքում գործում են ազգային կուսակցությունները՝ մամուլի իրենց օրգաններով, պարբերականներով, ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում մասնաճյուղեր ունեն Թեքեյան, Համազգային, Նոր սերունդ մշակութային միությունները՝ իրենց գեղարվեստական խմբերով, ակումբներով, դպրոցներով: Գործում են նաև կանանց, երիտասարդական, մշակութային, մարզական, մասնագիտական միություններ և կազմակերպություններ՝ ՀՕՄ, ՀՄԸՄ, ՀՄՄ, Ամերիկայի հայ մշակութային ընկերակցություն, Հայկական կրթական բարեսիրական միություն, Հայ կրթական հիմնարկություն, Հայ ուսանողների միություն, Ամերիկայի հայ ճարտարապետների և գիտնականների ընկերակցություն, Հայ առողջապահական կենտրոն, Հայ եմ, Հայկական շարժանկարների հիմնարկություն, Ալեք և Մարի Մանուկյան հիմնարկություն, Վարդանանց ասպետներ ևն:

ԱՄՆ-ի մի շարք համալսարաններում՝ Կալիֆոռնիայի (Լոս Անջելես, Ֆրեզնո), Հարվարդի, Միչիգանի, Կոլումբիայի, Փենսիլվանիայի ևն, գործում են հայագիտական ամբիոններ և դասընթացներ: Հայագիտական կարևոր կենտրոններից են Հայագիտական համազգային ընկերությունը (NASSR), Հայագիտական ուսումնասիրությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտը (երկուսն էլ՝ Քեմբրիջում), Միչիգանի համալսարանի Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը (Դիրբորն), Հայագիտական ընկերակցությունը (SAS) Բոստոնում ևն: ԱՄՆ-ում մեծ թիվ են կազմում համալսարաններում և քոլեջներում սովորող հայ երիտասարդները, որոնք կազմակերպում են հայ ուսանողների միություններ. 1980 թ. Վաշինգտոնում հիմնադրվել է Ամերիկայի հայ ուսանողական ակումբների ֆեդերացիան, 1986 թ.՝ Հայկական համալսարանական միությունը Լոս Անջելեսում:



Ազգային կյանքի շրջանակներում նշանակալի դեր են կատարում «Կոմիտաս», «Պրո Կոմիտաս», «Գուսան», «Երևան», «Քնար», «Անի» և այլ երգչախմբեր, «Անդրանիկ», «Վահագն», «Տարոն», «Արարատ», «Սարդարապատ» և այլ համույթներ: Նյու Յորքում գործել են «Հայկական դրամատիկական ընկերությունը» (1897_1920-ական թթ. կես), «Րաֆֆի» (հիմնադրվել է 1903 թ.), «Ադամյան» (1908 թ.), «Դուրյան» (1913 թ.), «Փարոս» (1917 թ.), 1923 թ-ից՝ «Անդրանիկ», 1950-ական թթ. «Պերճուհի», 1960-ական թթ.՝ «Սևան», «Նորք» և այլ թատերախմբեր: 1922 թ. Նյու Յորքում կազմակերպվել է Հայ արվեստի տունը, 1950-ական թթ.՝ Նյու Յորքի հայկական թատերական միությունը:

Ամերիկահայ գրականությունը սկզբնավորվել է XIX դ. վերջին - XX դ. սկզբին. այն ստեղծել են Վահե Հայկը, Բ. Նուրիկյանը, Համաստեղը, Արամ Հայկազը, Ա. Անդրեասյանը, Ձ. Գալեմքյարյանը, Հ. Արմենը, Հ. Քեքլիկյանը, Հ. Կարապենցը և շատ ուրիշներ:

ԱՄՆ-ում առաջին հայերեն պարբերականը՝ «Արեգակը», լույս է տեսել 1888 թ., Ջերսի Սիթիում. ցայսօր լույս է տեսել ավելի քան 300 անուն պարբերական: Կուսակցություններից և խոշոր կազմակերպություններից բացի, պարբերականներ են հրատարակում եկեղեցին, զանազան միություններ, առանձին անհատներ («Ասպարեզ», «Հայրենիք», «Պայքար», «Մասիս», «Հայ շարժում», «Լրաբեր», «Նոր կյանք», «Հուշարար», «Նավասարդ», «Armenian Reporter», «Armenian Review» ևն): Տարբեր քաղաքներում կան հայկական հրատարակչություններ («Ապրիլ», «Էրեբունի», «Մշակ», «Արարատ», «Աշոտ», «Ոսկեդար») և գրախանութներ: Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Բոստոնում, Փրովիդենսում, Մաութֆիլդում, Նորդվիլում գործում են հայկական ռադիո-հեռուստատեսային ծրագրեր՝ հայերեն և անգլերեն:

Հայերը կարևոր ավանդ ունեն ԱՄՆ-ի գիտության, գրականության ու արվեստի մեջ: Բնական գիտությունների բնագավառում անցյալի և ներկայի հայտնի գիտնականներից ու մասնագետներից են քիմիկոսներ Խաչատուր Սերոբյանը (XIX դ. առաջին կեսին ստացել է ամերիկյան դոլլարի հատուկ կանաչ գույնը), Վ. Պապասինյանը, Հ. Չագմագճյանը, բժշկագիտության մեջ Միհրան Գասպարյանը (1903 թ. Ֆիլադելֆիայում հիմնել է ԱՄՆ-ի ռենտգենյան առաջին փորձակայանը), Վարազդատ Գազանճյանը (պլաստիկ վիրաբուժության առաջին մասնագետներից ԱՄՆ-ում), Նյու Յորքի անզգայացման կլինիկայի ղեկավար, ԱՄՆ-ի ակադեմիայի պատվավոր անդամ Վիրգինիա Աբգարը, վիրաբույժ-գյուտարար Ջոն Նաջարյանը (1967 թ-ից կատարել է երիկամների, լյարդի, սրտի և այլ օրգանների փոխպատվաստում, հայտնագործել փոխպատվաստման դեղամիջոցներ և սարքավորումներ), Սիմոն Սիմոնյանը (փոխպատվաստման մասնագետ), հոգեբույժ Հայկազ Գրիգորյանը, մաթեմատիկոսներ Ալեքսանդր Աբյանը, Հարություն Դաղուրյանը, Կ. Դադյանը, Պոլ Կարապետյանը: Ջորջիայի համալսարանի կի-

ռառական մաթեմատիկայի կենտրոնի նախագահ Գևորգ (Ջորջ) Ադամյանի (ԱՄՆ ԳԱ, նախկին ԽՍՀՄ ԳԱ անդամ) ստեղծած տեսական մի եղանակի շնորհիվ լուծվել են տնտեսական և տիեզերագնացության հետ կապված մի շարք հարցեր: Հայտնի են ֆիզիկոսներ Նորման Բալաբանյանը, Ռիչարդ Գալստյանը, Արմեն Գաբրիելյանը, Տիգրան Կաբակչյանը, հաշվողական տեխնիկայի բնագավառում՝ Էմին Ավագյանը (բժշկության մեջ առաջին անգամ կիրառել է հաշվողական տեխնիկան), մաթեմատիկոս, ֆիզիկոս, լեզվաբան Հայկ Գաֆաֆյանը (նրա ստեղծած հաշվողական համակարգերը գործի են դրվում ձայնային ալիքների օգնությամբ), աստղագիտության և տիեզերագիտության բնագավառում Ա. Գանտոյանը (նրա պաշտոնավարած հաստատության փորձակայանում է պատրաստվել 1960 թ. արձակված «Քուրիեր 1-Բ» արբանյակը), Վահե Պետրոսյանը (1987 թ. Ռոջեր Ջինդզի հետ հայտնաբերել է երկրից 5.103 աստղային տարի հեռավորության վրա գտնվող երկու նոր աստղային մարմին), Պոլ Տեր-Կարապետյանը, Դոնալդ Մինասյանը, Ջոն Կարապետյանը, Պոլ Սլեպյանը և ուրիշներ, ամերիկյան աստղագնացների խմբում է Ջեյմս Բաղյանը, քիմիայի և կենսաքիմիայի բնագավառում՝ Մանասե Սևակը (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ), Ք. Ամիրայանը, Ջորջ Ադրունին, Օնիկ Բոզիրջյանը, էլեկտրատեխնիկայի ասպարեզում՝ Վ. Կարապետովը, Հրաչ (Չարլզ) Փափազը (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ): Շատ մեծ է վաստակավոր հայ ինժեներների և գյուտարարների թիվը: Հասարակական գիտությունների բնագավառում անցյալի և ներկայի հայտնի մասնագետներից են հասարակագետներ Լուրեն Թերզյանը, Արամ Ենգոյանը, քաղաքագետներ Հրայր Դեքմեջյանը, Ռիչարդ Բիշիկչյանը, լեզվաբաններ, գրականագետներ, պատմաբաններ Հ. Թիրյաքյանը, Հրանտ Արմենը, Հարություն Քյուրդյանը, Սիրարփի Տեր-Ներսեսյանը (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ), Նինա Գարսոյանը, Ռիչարդ (Տիգրան) Հովհաննիսյանը (ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ), Ավետիս Սանջյանը, Վարդան Գրիգորյանը (Նյու Յորքի հանրային գրադարանի պրեզիդենտ, այժմ Բոստոնի համալսարանի ռեկտոր), Տիգրան Գույումջյանը, Մարջըրի Հուսեփյանը, Լուիզ Նալբանդյանը և ուրիշներ:

Գործում են հայ գիտնականների մասնագիտական կազմակերպություններ՝ Հայ մասնագետների միությունը, Ամերիկահայ բժիշկների ընկերությունը, Ամերիկահայ սոցիոլոգների ընկերությունը, Հայ փաստաբանների միությունը ևն:

Ամերիկյան գրականությունը հարստացրել են անգլիագիր հայ գրողներ՝ աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանը, Լևոն-Զավեն Սյուրմելյանը, Ֆրեդ Լեոն (Ֆ. Այվազյան), Մայքլ Առլեն Կրտսերը, բանաստեղծներ Դայանա Տեր-Հովհաննիսյանը, Հ. Բոնդը (Բունջուկյան), Դ. Խերդյանը, Լ. Սրապյանը և ուրիշներ:

ԱՄՆ-ի կերպարվեստում նշանակալից ավանդ ունեն քանդակագործներ Հայկ Բատիկյանը, Հակոբ (Ջեկ) Փափազյանը, Նշան Թուրը (Թուրունճյան), Խորեն Տեր-Հարությանը, գեղանկարիչներ Հովսեփ Փուշմանը (Փուշմանյան), Հարություն Տիրիթը (Տիրիթյան), Արշակ Ֆեթվաճյանը: 1930_40-ական թթ. համընդհանուր ճանաչում ուներ նկարիչ Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյան), որը աբստրակցիոնիստական էքսպրեսիոնիզմի հիմնադիրներից է:



Գործում է Ամերիկահայ նկարիչների ընկերակցությունը (հիմնադիր՝ Հրաչ Թաշճյան), որի անդամներն են Վ. Սամվելյանը, Վ. Ամատունին, Լ. Ժամկոչյանը և ուրիշներ:

Միջազգային ճանաչման են արժանացել կոմպոզիտորներ Ալան Հովհաննեսը, Ռ. Յարդումյանը, Հ. Բեկլարյանը, երգիչ-երգչուհիներ Պ. Անանյանը, Ա. Քյուրքչյանը, Զ. Արամը, Ա. Թոքաթյանը, Լ. Չուգասզյանը, Լ. Ամարան, Ք. Բերբերյանը, Մ. Քրմոյանը, Ա. Թերզյանը, դիրիժորներ Ա. Ասլանովը, Հ. Փափազյանը, Հ. Յաղճյանը, Հ. Բեկյանը, երգեհոնահարներ Պ. Ժամկոչյանը, Հ. Մարտիրոսյանը, ջութակահարներ Գ. Վրույրը, Հ. Կյուտենյանը, Գ. Սինանյանը, Մ. և Վ. Գոճյանները, թավջութակահարներ Վ. Բերբերյանը, Հ. Թաթյանը, Դ. Ֆայրոյանը, Ն. Դերյանը, դաշնակահարներ Ս. Արփին, Լ. Շիրինը, Զ. Խաչատրյանը և ուրիշներ: Ջուլիարդի երաժշտական դպրոցի և Ֆիլադելֆիայի Կյորտիս ինստիտուտի ճանաչված մանկավարժ Իվան Կալամյանը եղել է հանրաճանաչ ջութակահարների ուսուցիչ և կատարող, նոր մեթոդների ճանաչված հեղինակ:

ԱՄՆ-ի կինոարվեստի հայ գործիչներից համաշխարհային ճանաչում ունեն ռեժիսորներ Ռ. Մամուլյանը, ինչպես և Մ. Քեստեքյանը, Ռ. Սարաֆյանը, Ա. Մոմճյանը: Անցյալի և ներկայի հայտնի կինոդերասաններ Ակիմ Թամիրովը (Հովակիմ Թամիրյան), Առլին Ֆրենսիսը (Գազանճյան), Մայք Քոնըրզը (Գրիգոր Օհանյան), Զ. Կարապետյանը, Ռ. Պաքալյանը, Շերը (Շերիլին Սարգսյան): Մարզաշխարհում հանրահռչակ է մեծ թենիսի վարպետ Անդրե Աղասին:

1988 թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժից տուժած հայրենիքին մեծապես սատար կանգնեց ամերիկահայությունը՝ իր անմիջական օգնությամբ, ապա և կազմակերպված երկարատև օգնության բժշկական, շինարարական, ֆինանսական և այլ ծրագրերով: Հիմնվեց Հայաստանի օգնության ֆոնդ (նախագահ՝ Հարութ Սասունյան), որի հիմնադիր անդամներից է ԱՄՆ-ում հայտնի մեծահարուստ Գըրգ Գիրգորյանը (Գրիգոր Գրիգորյան):

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև հաստատվել են 1992 թ.:

## ԱՎՍՏՐԱԼԻԱ, Ավստրալիական Միություն, պետություն Ավստրալիա մայրցամաքում

Մայրաքաղաքը՝ Կանբերա

Տարածքը՝ 7,7 մլն կմ$^2$

Բնակչությունը՝ 17 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 30 հզ.

Հայերի գաղթը Ա. սկսվել է XIX դ. կեսին՝ Հնդկաստանից, Հարավ-Արևելյան Ասիայի երկրներից և Կ.Պոլսից: Համայնքը զգալիորեն աճել և ձևավորվել է երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-45) հետո, երբ Ա. են եկել մեծ թվով հայեր Միջին և Մերձավոր Արևելքի երկրներից: 1993 թ. Ա-ի հայերի թիվը շուրջ 30 հզ. էր: Բնակվում են Սիդնեյում, Մելբուռնում, Բրիզբենում, Կանբերայում, Պերտում, Ադելաիդայում: Աշխատում են գործարաններում, պետական գրասենյակներում, զբաղվում են արհեստներով և առևտրով: Համայնքի ազգային, կրթական գործը ղեկավարում է թեմական խորհուրդը: Գործում են հայ առաքելական եկեղեցիներ. Ս. Հարությունը՝ Սիդնեյում, Ս. Աստվածածինը՝ Մելբուռնում, և մեկ կաթոլիկ եկեղեցի, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ: Սիդնեյում կա երկու ամենօրյա դպրոց: Գործում են ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՄԸՄ մասնաճյուղերը, Տիկնանց և Երիտասարդաց միությունները, Ավստրալահայ ընկերությունը, Հայ պատմական ընկերությունը, «Կոմիտաս» երգչախումբը, պարախմբեր, «Արարատ» մարզական ակումբը (իր ֆուտբոլի թիմով), Ազգային ծերանոցը, հայկական երկու ռադիոժամ Սիդնեյում և Մելբուռնում: Հրատարակվում են «Նոր սերունդ», «Լույս», «Ձայն», «Արմենիա» ևն պարբերականներ: Ավստրալահայերը իրենց օգնությունն ու աջակցությունն են ցուցաբերում 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենիքին և մարտնչող Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ավստրալիական Միության միջև հաստատվել են 1991 թ.:

**ԱՎՍՏՐԻԱ**, Ավստրիական Հանրապետություն, պետություն Կենտրոնական Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Վիեննա
Տարածքը՝ 83.350 կմ²
Բնակչությունը՝ 7,6 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 1300

Հայերն Ա-ում հիշվում են XVII դարից, երբ Վիեննայում հաստատվել են պոլսահայ վաճառականներ (հիմնականում՝ գորգավաճառներ): Սակայն Վիեննայի հայ համայնքը ըստ էության ձևավորվել է XIX դ. սկզբին, երբ այստեղ են տեղափոխվել (1811 թ., Տրիեստից) Վենետիկի Մխիթարյան միաբանությունից անջատված միաբանները: 1890-ական թթ. հայերի թիվը շուրջ 60 էր, XX դ. սկզբին՝ 125 մարդ: 1960_70-ական թթ. Ա-ի հայ համայնքը ավելացել է ի հաշիվ Ռումինիայից, Լիբանանից, Իրանից տեղափոխված հայերի. 1980-ական թթ. վերջից Ա. են սկսել գալ հայեր նաև Հայաստանից: Այժմ (1994 թ.) Ա-ում կա շուրջ 1300 հայ, դրանք մտավորականներ են, բարձրորակ մասնագետներ, ծառայողներ: Համայնքը ղեկավարում է վարչությունը: 1918 թ. համայնքը Վիեննայում



կառուցել է Ս. Փրկիչ եկեղեցին, 1968 թ.՝ Ս. Հռիփսիմեն, բացել իր ակումբը՝ Ազգային տունը: 1910 թ. հիմնվել է ՀԲԸՄ մասնաճյուղը (վերաբացվել է 1960 թ.): Գործում է Ավստրո-հայկական մշակութային կապերի ընկերությունը, որը զգալի աշխատանք է տանում Ա-ում հայկական մշակույթի նվաճումներին ծանոթացնելու ուղղությամբ:

Իր ազգօգուտ գործն է շարունակում անել Վիեննայի Մխիթարյան միաբանությունը. ունի իր եկեղեցին (կաթոլիկ), մատենադարան, տպարան: Միաբանությանը կից հոգևոր ուսումնարանում սովորում են տարբեր երկրներից եկած հայ երիտասարդներ: 1887 թ-ից՝ հրատարակում է «Հանդես Ամսօրեա» հայագիտական ամսագիրը: 1947_63 թթ. հրատարակել է «Եվրոպա» շաբաթաթերթը: Վիեննայի Մխիթարյան միաբանության գիտնականները զգալի վաստակ ունեն հայ ժողովրդի, եկեղեցու պատմության, գրականության, լեզվի հիմնահարցերի ուսումնասիրության բնագավառում:

Ա-ի հայերից երկրում հայտնի են մի շարք ճարտարագետներ, բժիշկներ, իրավաբաններ, ձեռնարկատերեր, առևտրական ֆիրմաների ղեկավարներ, մշակույթի գործիչներ (նկարիչներ հայր և դուստր Մաքսիմիլիան և Հենրիետ Ֆլորիանները, Վիեննայի օպերային թատրոնի մենակատարներ Սոնա Ղազարյանը, Ալբերտ Խաչեսարյանը): Իրենց հասարակական և բարեգործական գործունեությամբ հայտնի են Կարպիս Փափազյանը, Գևորգ Անտոնյանը, Ռազմիկ Հարությունյանը, Աստիկ Աստվածատրյանը և ուրիշներ: Պատմաբան և վավերագրական ֆիլմերի (նկարահանել է մի քանի կինոնկար Հայաստանի մասին) հեղինակ Արտեմ Օհանջանյանը հրապարակել է Հայկական հարցի վերաբերյալ Ա-ի արխիվների փաստաթղթերը:

Ա-ի հայ համայնքը զգալի նյութական օգնություն է ցույց տվել 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին, մասնակցել Գյումրիում «Ավստրիական գյուղի» կառուցմանը, բուժական հաստատությունների, դպրոցների վերականգնման համար միջոցների հանգանակմանը: Համայնքը մարդասիրական օգնություն է ցուցաբերում Արցախի հայությանը: Ի նշան հայ ժողովրդի երախտագիտության, այդ օգնության համար 1990 թ. Վիեննայի հրապարակներից մեկում տեղադրվել է Հայաստանից բերված մի խաչքար.

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ավստրիական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**, պետություն Արևմտյան Ասիայում, Արաբական թերակղզու հարավ-արևելքում

Մայրաքաղաքը՝ Աբու Դաբի
Տարածքը՝ 83,6 հզ. կմ²
Բնակչությունը՝ 1,2 մլն (1983 թ.)

Հայերի թիվը՝ 2000_2500

ԱՄԷ-ում հայերը բնակվել սկսել են 1970-ական թթ.: Նրանք հիմնականում աշխատանքի եկած մասնագետներ են (չունեն ԱՄԷ-ի քաղաքացիություն): Ապրում են Աբու Դաբիում, Շարժա և Դուբայ էմիրություններում (կան նաև մյուս էմիրություններում): Հայերն ունեն Ազգային խորհուրդ, որի գլխավոր գործը հայկական դպրոց ունենալն ու պահելն է: Համայնքի հոգևոր կրոնական կարիքները հոգում է այցելու հովիվը: Գործում են Աբու Դաբիի և Շարժա-Դուբայի մեկօրյա հայկական դպրոցները, ուր աշակերտներին դասավանդում են հայոց լեզու, գրականություն, պատմություն, երգ, կրոն:

1988 թ. կործանիչ երկրաշարժից տուժած իրենց հայրենակիցներին օգնեց իր կարելիի չափով ԱՄԷ-ի հայ համայնքը:

## ԱՐԳԵՆՏԻՆԱ, Արգենտինայի Հանրապետություն, պետություն Հարավային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Բուենոս Այրես
Տարածքը՝ 2766,9 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 32,3 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 80 հզ.

Ա-ի հայ համայնքը սկսել է ձևավորվել XX դ. սկզբին, Ադանայի ջարդերից (1909) հետո, (1914 թ. Ա-ում հաշվվում էր շուրջ 2000 հայ), այնուհետև ստվարացել է 1922_30-ական թթ. Կիլիկիայի հայաթափումից և Իզմիրի աղետից հետո. 1935-ին Բուենոս Այրեսում կար շուրջ 15000 հայ: Մեծ թվով հայեր Ա. են եկել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այժմ (1994 թ.) Ա-ում բնակվում են մոտ 80000 հայեր, որոնց 90 %-ը կենտրոնացած է Բուենոս Այրեսում, շուրջ 4000 հայեր՝ Կորդովայում, 1000 մարդ՝ Ռոսարիոյում և Մար Դել Պլատայում: Արգենտինահայերը զբաղվում են առևտրով և արդյունաբերությամբ, կան նաև բազմաթիվ մտավորականներ: Համայնքը ղեկավարում է գաղութային վարչությունը՝ «Հայ կեդրոն» անունով (1932_70 թթ. հրատարակվել է «Հայ կեդրոն» ամսագիրը): Գաղութում գործում են 7 առաքելական (6-ը Բուենոս Այրեսում. Ս. Գրիգոր Լուսավորիչ, Վարագա Ս. Խաչ, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Գևորգ, Ս. Հակոբ, Ս. Երրորդություն, 1-ը Ս. Գևորգ՝ Կորդովայում), 3 ավետարանական և 1 կաթոլիկ (Նարեկա Ս. Տիրամոր) եկեղեցիներ, 8 ամենօրյա վարժարաններ (որոնցից 5-ը՝ միջնակարգ), 7-ը Բուենոս Այրեսում (Ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատություն, ՀԲԸՄ-ի Մարի Մանուկյան կրթական հաստատություն, Մխիթարյան վարժարան, Խրիմյան կրթական հիմնարկություն, Դերձակյան վարժարան, Արծրունի և Պահլեճյան վարժարանները՝ նախակրթարանով), 1-ը՝ Սահակ-Մեսրոպյան վարժարանը և մեկ կիրակնօրյա դպրոց Կորդովայում: Գաղութի ազգային կյանքը կազմակերպում են տարբեր քաղաքական (ՀՅԴ, հնչակյան, ռամկավարական կուսակցությունների տեղական կազմակերպությունները), բարեգործական (ՀԲԸՄ, ՀՕՄ), մշակութային (Համազգային, Թեքեյան, Արգենտինահայ մշակութային միություն), հայրենակցական (Մարաշի, Հաճընի, Այնթապի), երիտասարդական (ՀԵԸ, ՀՅԴ «Արմենիա»), մարզական (ՀՄԸՄ) միությունները, սկաուտական (ՀՄԸՄ-ի «Արարատ», ՀԲԸՄ-ի «Զորավար Անդրանիկ», Մխիթարյանների «Ս.Վարդան») խմբերը, Հայագիտական ուսմանց հիմնարկը և այլ կազմակերպություններ: Գործում են Վահե Չըննոզյան հայկական ուսուցչանոցը, Դել Սալվատոր (Բուենոս Այրես) համալսարանի արևելագիտության ֆակուլտետում հայագիտական ամբիոնը, Բուենոս Այրեսի պետական համալսարանում հայագիտության ազատ (ոչ մշտական) ամբիոնը և ճարտարապետության ֆակուլտետում հայկական ճարտարապետության դասընթացներ: Գործում են նաև «Գայանե» և «Նաիրի» պարախմբերը, «Արաքս», «Կոմիտաս», «Շնորհալի» երգչախմբերը, «Ժորժ Սարգիսյան» թատերախումբը, զանազան նվագախմբեր: Հրատարակվել են «Արմենիա», «Սարդարապատ», «Սևան», «Շարժում» (1937_1991) շաբաթաթերթերը, «Արցախ» ամսաթերթը (իսպաներեն) և այլ պարբերականներ (իսպաներեն): Կա երեք ռադիոժամ: Հայտնի են արգենտինահայ գրողներ, նկարիչներ, երգիչներ. բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսյանը, քանդակագործ Ռ. Հունանյանը, պրոֆեսոր Ռոբերտո Մալխասյանը, պատմաբան Պասկուալ Օհանյանը (լույս է ընծայել Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմությունը երեք հատորով, իսպաներեն), կոմպոզիտոր Ժան Ալմուխյանը:

Արգենտինահայերը սատար են կանգնում 1988-ի երկրաշարժից տուժած հայրենիքին ու մարտնչող Արցախին: Ա-ի խորհրդարանը ճանաչել է Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը: Բուենոս Այրեսի հրապարակներից մեկը կոչվում է «Հայաստան»:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԱՖՂԱՆՍՏԱՆ, Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, պետություն Ասիայի հարավ-արևելքում

Մայրաքաղաքը՝ Քաբուլ
Տարածքը՝ 647,5 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 17, 2 մլն (1991 թ.)

Պատմական աղբյուրների վկայությամբ Ա. հայերին ծանոթ է եղել հին ժամանակներից: Սակայն հայկական գաղութի առկայությունը Ա-ում, մասնավորապես Քաբուլում, XVII դարից է: Բացի մայրաքաղաքից հայերը բնակվել են Ղանդահարում և գյուղերում: Դրանք վաճառականներ ու արհեստավորներ էին: Հայտնի է, որ Իրանի Նադիր շահն իր բնիկ երկիրը՝ Ա., ծաղկեցնելու համար 200 տուն հայեր է տեղափոխել

ու բնակեցրել Քաբուլում, ուր 1737 թ. արդեն հայերը եկեղեցի են կառուցել: 1775 թ. մեծ թվով հայ զինագործներ են բերվել Քաբուլ, աֆղանական բանակի զինման գործը կարգավորելու համար: Հայերը բարձր պաշտոններ են վարել աֆղանական կառավարության մեջ և բանակում: Սակայն հետամնաց այս երկրում հայ գաղութը զարգացում չի ունեցել և նվազել է: XIX դ. տարբեր ճանապարհորդներ, միսիոներներ, պաշտոնյաներ նշում են փոքրաթիվ հայ համայնքի գոյությունը Քաբուլում: 1896 թ. Ա-ի էմիր Աբդուլ Ռահման խանը Քաբուլ գալու հրավեր է ուղարկել կալկաթացի 10_15 զարգացած և արհեստավոր հայ ընտանիքների նշելով, որ երբեմ Ա-ում ապրող 500 հայերից միայն 21-ն են մնացել: Էմիրի հրավերին պատասխան չի հաջորդել, և կատարվել է հակառակը՝ մնացած 21 հայերն էլ վտարվել են. 1897 թ. Ա-ում այլևս հայ չկար:

**ԲԵԼԱՌՈՒՍ**, Բելառուսի Հանրապետություն, պետություն Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Մինսկ
Տարածքը՝ 207,6 հզ. կմ²
Բնակչությունը՝ 10,2 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 2_3 հզ.

Հայ-բելառուսական առնչությունները ըստ էության սկզբնավորվել են Ռուսական կայսրության ոլորտում, մասնավորապես XX դ. սկզբին Ռուսաստանում հեղափոխական շարժման ծավալման շրջանում: Բ-ում թեև հայկական համայնք չի եղել, սակայն հայեր ապրել են Մինսկում և այլ քաղաքներում ու բնակավայրերում: Բ-ում հեղափոխական պայքարի կազմակերպման գործում մեծ ավանդ ունի Ալեքսանդր Մյասնիկյանը, որը եղել է Բելառուսական Խորհրդային Հանրապետության Կենտգործկոմի նախագահ (1919 թ.), ապա ԲՍՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ և ռազմական գործերի ժողկոմ: 1920 թ. հուլիսին լեհական զորքերից Մինսկն ազատագրող կարմիր բանակի կազմում աչքի է ընկել Հայկ Բժշկյանի (Գայ) հեծյալ կորպուսը: 1939_45 թթ. 2-րդ աշխարհամարտի ժամանակ Բ-ի Բրեստի ամրոցի կայազորի կազմում հերոսաբար մարտնչել են շատ հայեր: Բ-ում ծավալված պարտիզանական շարժմանը մասնակցել են հայկական ջոկատներ («Հաղթանակ») և շատ հայեր: 1944 թ. Բ-ի ազատագրմանը մասնակցել են Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը՝ զորապետ Հովհաննես Բաղրամյանի հրամանատարությամբ: 1945 թ. ապրիլից Հ. Բաղրամյանը գլխավորել է Երրորդ Բելառուսական ռազմաճակատը:

Բ-ի և Հայաստանի միջև տնտեսական. մշակութային կապեր հաստատվել են ու զարգացել խորհրդային իշխանության օրոք: Տնտեսական կապերն իրականացվել են արտադրանքի փոխմատակարարման, ձեռնարկությունների համատեղ կառուցման, գիտատեխնիկական համագործակցության, մասնագետների փոխանակման և այլ միջոցներով:



Մշակութային կապերը ծավալվել են գրականության, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի բնագավառներում: Հայերեն են թարգմանվել բելառուս գրողներ Յա. Կուպալայի, Յա. Կոլասի, Մ. Տանկի, Պ. Բրովկայի, Հ. Շամյակինի երկերից, բելառուսերեն՝ հայ դասականների (Ա. Շիրվանզադե) և ժամանակակից գրողների (Հ. Մաթևոսյան և ուր.) ստեղծագործություններից: 1940-ական թթ-ից հայկական թատրոններում բեմադրվել են բելառուս դրամատուրգների պիեսներ: 1970_80-ական թթ. Բ-ում ելույթներ են ունեցել հայկական երաժշտական կոլեկտիվներ, մենակատարներ, մասնակցել փառատոների: Բ-ում կազմակերպված հայ համայնք չի գործել: Այժմ (1994 թ.) Բ-ում ապրում է 2_3 հզ. հայ, Մինսկում գործում է «Հայաստան» հայկական մշակութային-լուսավորչական միությունը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև հաստատվել են 1993 թ.:

**ԲԵԼԳԻԱ**, Բելգիայի Թագավորություն, պետություն Արևմտյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Բրյուսել
Տարածքը՝ 30,5 հզ. կմ²
Բնակչությունը՝ 9,9 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 4000

Բ-ում հաստատված առաջին հայերի մասին տեղեկությունները XI դ-ից են: XIV դ. միջազգային առևտրի կենտրոն Բրյուգե (Բրյուժ) քաղաքում սկսել են երևալ հայ վաճառականներ: Բրյուգեի առևտրական նշանակության նվազման հետ, նվազել է և հայերի թիվը: XIX դ. վերջին հայեր կային միայն Բրյուսելում և Անտվերպենում, որոնք զբաղվում էին ադամանդի, գորգի և ծխախոտի առևտրով, բավական թիվ էին կազմում Բ-ում սովորող հայ ուսանողները (Գենտի համալսարանն է ավարտել բանաստեղծ Դանիել Վարուժանը): Բ-ում հայերի թիվը ավելացել է Մեծ եղեռնից մազապուրծ այստեղ ապաստանած հայ գաղթականների հաշվին: Հայերի մեծ հոսք է եկել 1970-ական թթ. Սիրիայից, Լիբանանից, Թուրքիայից, Իրանից: Այժմ Բ-ում բնակվում է շուրջ 4000 հայ, որոնք հաստատված են հիմնականում Բրյուսելում, նաև Անտվերպենում ու Լիեժում: Զբաղվում են առևտրով (հայտնի է ադամանդավաճառ Արսլանյանը), մտավորականներ են, պետական ծառայողներ: Համայնքը ղեկավարում է Բելգիայի հայերի կոմիտեն (պաշտոնապես ճանաչված է բելգիական կառավարության կողմից): Ազգային կյանքը կազմակերպում են եկեղեցին (գործում է Ս. Մարիամ Մագթաղինացի առաքելական եկեղեցին, որը կառուցվել է մեծահարուստ Խաչիկովի ծախսով), բարեգործական (1910 թ-ից գործում է ՀԲԸՄ Բ-ի մասնաճյուղը, 1988 թ-ից՝ «Սոս Արմենի» կազմակերպությունը), երիտասար-

դական (Հայ երիտասարդների միությունը), մշակութային («Ամաղեուս» հաստատությունը) միությունները: Բրյուսելում գործում է (մասնաճյուղերը՝ Անտվերպենում և Լիեժում) Հասարակական կենտրոնը, որտեղ հայ երեխաները սովորում են մայրենի լեզուն: Համայնքում ազգային ավանդական կուսակցությունները չեն գործում: 1931 թ. Բրյուսելի համալսարանին կից ստեղծվել է Հայագիտական ամբիոն՝ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցի (1871_1942) ղեկավարությամբ:

Տարբեր տարիների Բրյուսելում և Անտվերպենում լույս են տեսել «Լրագիր» (1927), «Հայ աշխարհ» (1937_39), «Գիտություն և գիտելիք» (1928_31) պարբերականները:

Բ-ի հայերն իրենց օգնությունն ու աջակցությունն են բերում մայր հայրենիքին՝ վերականգնելու 1988 թ. երկրաշարժից ավերված շրջանները:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԲԻՐՄԱ, Մյանմա, պետություն Հարավ-Արևելյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Ռանգուն
Տարածքը՝ 678 հզ. կմ²
Բնակչությունը՝ 37,8 մլն (1987 թ.)

Բ-ում բավական հին ժամանակներից սկսած գոյություն է ունեցել թեև սակավաթիվ, սակայն ազդեցիկ և գործուն մի հայ գաղութ, որը գնահատված է եղել երկրի թագավորների կողմից: Գաղութը հիմնադրել են հին ջուղայեցիները XV_XVI դդ.՝ հիմնականում հաստատվելով Ավա, Պեգու, Ամարապուրա, Մանդալայ, Մոլամյայն, Սիրիամ և Ռանգուն քաղաքներում: XVIII դ. 2-րդ կեսին գաղութն աշխուժացել է Հնդկաստանից և Նոր Ջուղայից գաղթած հայերի նոր հոսքի հետևանքով (թեև հայերի թիվը չի անցել 500-ից): Զբաղվել են առևտրով, նավաշինությամբ, եղել են բարձր պետական պաշտոնյաներ ու ծառայողներ, զինվորականներ, թարգմանիչներ: Հայտնի են Խոջա Գրիգոր Այվազյանը (նրա միջնորդությամբ 1759 թ. հաշտություն է կնքվել բիրմացիների և անգլիացիների միջև, եղել է թագավորի վեզիրը և Սիրիամի կառավարիչը), Նիկողայոս Աղալարենցը (արքունի գանձապետ), իշխան Սարգիս Մանուկյանը (մեծահարուստ, նավապետ, որի հաշտարար միջնորդությամբ խաղաղություն է հաստատվել 1824_26 թթ. անգլո-բիրմական 1-ին պատերազմում), նրա որդիներ իշխան Գրիգոր Մանուկյանը (նախ արքունի տակառապետ, ապա ծովային նախարար՝ նավապետի և ասպետի տիտղոսներով), և Հովհաննես Մանուկյանը (արտաքին գործերի նախարար), նավավարներ Հայրապետ Մկրտում Շիրազեցին, Պետրոս Հովհաննիսյանը, Հարություն Ղազարը, հանքարդյունաբերող Առաքել Մարտիկյանը, Ռանգունի առևտրական գրասենյակի նախագահ Սարգար Դավիթ Աբրահամյանը, Պեգուի նահանգի կառավարիչ Մկրտիչ



Հովսեփ Մինասյանը և ուրիշներ:

Հայերը, որոնք ապրում էին բարեկեցիկ կյանքով, իրենց բնակված գրեթե բոլոր քաղաքներում կառուցել են եկեղեցիներ, ունեցել գերեզմանատներ, սակայն պատմական իրադարձությունների բերումով դրանք վերացել են, հայերը ձուլվել կամ հեռացել են: Այժմ Բ-ում հայ համայնք չկա: Մի քանի հայեր կան Ռանգունում, որոնք համախմբված են իրենց ազգային եկեղեցու (Ս. Հովհաննես Մկրտիչ, գործում է 1862 թ-ից) շուրջը:

## ԲՐԱԶԻԼԻԱ, Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն, պետություն Հարավային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Բրազիլիա
Տարածքը՝ 8512 հզ. կմ²
Բնակչությունը՝ 150,4 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 20 հզ.

Հայերը Բրազիլիայում հաստատվել են դեռևս XIX դ. վերջին: Համայնքը ստվարացել է 1920-ական թթ., երբ այստեղ են ապաստանել Կիլիկիայից բռնագաղթված հայերը (1921_22 թթ.): Բ-ում հաշվվում է շուրջ 20 հզ. հայ (1994 թ.), որոնք բնակվում են հիմնականում Սան Պաուլու, նաև Ռիո դե Ժանեյրո, Պորտա Ալեգրի քաղաքներում և Մինաս Ժերաիս, Մատու Գրոսու, Սեարա նահանգներում: Զբաղվում են առևտրով, արհեստներով, կան գործարարներ, մտավորականներ: Համայնքը ղեկավարում է Կենտրոնական վարչության խորհուրդը: Տարբեր տարիների գործել են հասարակական և մշակութային մի շարք կազմակերպություններ, «Կիլիկիա», «Նուբարյան», «Սահակ-Մեսրոպյան» վարժարանները: Այժմ գործում են Բրազիլահայ մշակութային միությունը, Բրազիլիա-Արմենիա միությունը, ՀԲԸՄ, ՀՕՄ Բ-ի մասնաճյուղերը, Մարաշի, Զեյթունի, Այնթապի, Սսի և շրջակայից հաճընցիների, ուրֆացիների, ադանացիների հայրենակցական միությունները, հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները: Համայնքում գործում է հայկական երեք եկեղեցի (Սան Պաուլուում, Ռիո դե Ժանեյրոյում, Պրեզիդենտե Ալտինոյում):

1931 թ-ից Սան Պաուլուում գործում է Դուրյան ազգային վարժարանը (ամենօրյա դպրոց): Բ-ի հայերը հրատարակել են «Հայաստան», «Վերելք», «Հայաստանի ձայն», «Նոր Անի», «Կայծ», «Տրիբունա Արմենիա» (պորտուգալերեն) պարբերականները: 1962 թ-ից Սան Պաուլուի համալսարանում գործում է հայագիտական ամբիոն, որի հիմնադիր, վարիչ պրոֆ. Եսայի Գռուզյանի ջանքերով պորտուգալերեն վեց հատորով լույս են տեսել հայերի ցեղասպանության մասին նյութեր և ուսումնասիրություններ: Սան Պաուլուի հրապարակներից մեկը կոչվում է «Արմենիա»՝ 1915 թ. եղեռնի զոհերին նվիրված հուշակոթողով: Գործում է հայկական երկու ռադիոժամ: Բ-ի համայնքը շոշափելի օգնու-

թյուն է ցուցաբերում 1988 թ. երկրաշարժից տուժած մայր հայրենիքին և հերոսական Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԲՈՒԼՂԱՐԻԱ, Բուլղարիայի Հանրապետություն, պետություն Հարավ-Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Սոֆիա
Տարածքը՝ 110,9 հզ. կմ²
Բնակչությունը՝ 9,1 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 15 հզ.

Բ-ի հայ գաղութը ձևավորվել է V դ. և պահպանվել է մինչև մեր օրերը՝ ունենալով վերելքի և անկման շրջաններ, լրացվելով հայ գաղթականների նոր հոսանքներով:

Հայկական աղբյուրների վկայությամբ պատմական Բ-ի տարածք հայերի առաջին խմբերը եկել են 451 թ. Ավարայրի ճակատամարտից հետո, երբ հայ իշխաններից ոմանք իրենց զինվորներով և սպասավորներով տեղափոխվել են Բալկաններ: VI դ. Մակեդոնիայում և Թրակիայում տեղակայված էին հայկական ջոկատներ, որոնք բյուզանդական զորքերի կազմում մասնակցել են Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև մղվող պատերազմներին: Բ. հայերի նոր գաղթ է տեղի ունեցել VIII_IX դդ., երբ Հայաստանում ծավալվել է պավլիկյանների, ապա՝ թոնդրակյանների շարժումը: Դաժանորեն հետապնդելով այդ աղանդավորներին՝ բյուզանդական կայսրերը նրանցից շատերին բռնագաղթեցրել են Թրակիա, ուր նրանք հաստատվել են հիմնականում Փիլիպպուպոլսի (այժմ՝ Պլովդիվ) շրջանում: Հայ համայնքներ գոյություն ունեին նաև Նիկիա (այժմ՝ Նիշ), Սրեդեցի (այժմ՝ Սոֆիա), Վելիկո Տիրնովո, Ադրիանուպոլիս և այլ քաղաքներում: Հայերի ընդհանուր թվաքանակը այդ շրջանում կազմել է մոտ 30 հզ. մարդ: XIII_XV դդ. Բ. են եկել հայ գաղթականներ Հայաստանից՝ սելջուկյան թուրքերի և մոնղոլների արշավանքների պատճառով: Բ. են տեղափոխվել նաև հայեր Կիլիկիայից՝ հայկական պետության անկումից (1375 թ.) հետո: Հայ նոր համայնքներ են ձևավորվել Ռուսե, Վառնա, Ստարա Զագորա, Շումեն և այլ քաղաքներում:

XV դ. Բ. նվաճել են թուրքերը: Բ-ի հայերը, ինչպես և բնիկ բուլղար բնակչությունը, ենթարկվում էին օսմանյան կառավարողների կողմից իրականացվող բիրտ ճնշմանը և հալածանքներին: Բ-ի հայերի թիվը նվազել է, թեև շարունակվում էր հայերի գաղթը Մոլդովայից, Լեհաստանից, Ղրիմից:

1877_78 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի շնորհիվ Բ. ձեռք բերեց անկախություն: Ստեղծված



բարենպաստ պայմանները խթանեցին հայերի գաղթը Բ.՝ թուրքերի տիրապետությունից ազատագրված Բալկանյան թերակղզու տարբեր վայրերից: Հայերի հոսքը Բ. ուժեղացել է Թուրքիայում 1894_96 թթ. և հատկապես 1915_16 թթ. կազմակերպված հայերի կոտորածներից հետո: XIX դ. վերջին և XX դ. առաջին երկու տասնամյակներին Արևմտյան Հայաստանից, Թուրքիայի կենտրոնական շրջաններից և այլ վայրերից Բ. են տեղափոխվել շուրջ 40 հզ. հայեր, որոնք հիմնականում հաստատվել են Բ-ի քաղաքներում: XX դ. 20-ական թթ. սկզբին հայերի թիվը Բ-ում հասել է 50 հզ.: Վրա հասած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որն ընդգրկել է նաև Բ., հարկադրել է հայերի մի մասին թողնել երկիրը և տեղափոխվել ԱՄՆ, Ֆրանսիա և այլուր: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին հայերի թիվը Բ-ում շուրջ 25_27 հզ. մարդ էր: Պատերազմի տարիներին, երբ Բ-ին են միացվել Ռումինիայի որոշ տարածքներ, տեղի է ունեցել Հունաստանի հայերի մի մասի ներգաղթը Բ., հայ համայնքը վերստին ստվարացել է՝ կազմելով 32_35 հզ. մարդ: Հետագայում, կոմունիստական վարչակարգի պայմաններում, երբ Բ-ում իրականացվում էր ազգային փոքրամասնությունների (թուրքեր, հայեր, հրեաներ ևն) ձուլման քաղաքականություն, հայերի թիվը Բ-ում կրկին նկատելիորեն նվազել է:

Բ-ի հայ համայնքը իր գոյության սկզբից ընդգրկվել է երկրի տնտեսական կյանքի ոլորտում: Միջին դարերում Բ-ի շատ քաղաքաբնակ հայեր զբաղվում էին առևտրով, արհեստներով: Կապիտալիստական արտադրության ձևավորման և զարգացման շրջանում գոյացել է հայ արդյունաբերողների և ձեռնարկատերերի խավը, որի ներկայացուցիչներից ոմանք նշանակալի տեղ են գրավել Բ-ի բուրժուազիայի կազմում: Մասնավորապես նրանց էին պատկանում ծխախոտի, տեքստիլ, կաշեգործական արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ: Հայ արդյունաբերողները առաջատար դիրքեր են գրավել գորգերի, մետաքսե գործվածքների արտադրության բնագավառում: Որոշ հայ ձեռնարկատերեր իրենց միջոցները ներդրել են քիմիական և մետաղագործական արդյունաբերության մեջ: Հայ բանվորները, որոնք միշտ կազմել են Բ-ի հայ համայնքի զգալի մասը, ձգտում էին աշխատանք ձեռք բերել իրենց հայրենակիցներին պատկանող ձեռնարկություններում: Կոմունիստական վարչակարգի պայմաններում բուլղարահայ համայնքը բաղկացած էր հիմնականում բանվորներից և մտավորականներից (արտադրության տարբեր ճյուղերի մասնագետներ, ծառայողներ, բժիշկներ, արվեստագետներ ևն): Բ-ի հայերի միայն աննշան մասն է զբաղվել հողագործությամբ:

Բ-ի հայերը ակտիվորեն մասնակցել են երկրի հասարակական-քաղաքական կյանքին ևս: Հայ զորավար Սամուելը (Սամուիլ Կոմսաձագ) եղել է Արևմտյան Բ-ի թագավոր (997_1014 թթ.): Բուլղարիայի թագավորության գոյության շրջանում (XIII դ. վերջ - XIV դ.) մի շարք հայեր բարձր պաշտոններ են ունեցել պետական կառույցներում: Հայ բնակ-

չությունը մասնակցել է բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Բ-ի ազատագրումը թուրքական լծից առաջ է բերել բուլղարահայ հասարակական շրջանների հայրենասիրական վերելք: Բ-ի մի շարք քաղաքներում ստեղծվել են հայ ազատագրական և հայրենասիրական խմբակներ, միություններ, որոնք նպատակ էին հետապնդում սատարել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: XIX դ. վերջից Բ-ում իրենց գործունեությունն են ծավալել հայ քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպությունները: Հայ սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը Բ-ում գումարել է իր համագումարները, Բ-ում երկար ժամանակ ապրել և աշխատել են հնչակյան և ՀՅԴ ղեկավար գործիչներ: Բալկանյան առաջին պատերազմի (1912_13) ժամանակ բուլղարական զորքերի կազմում թուրքերի դեմ է մարտնչել հայկական կամավորական վաշտը՝ Գարեգին Նժդեհի և Անդրանիկի հրամանատարությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Բ-ի հայ համայնքը մեծ օգնություն է ցույց տվել Բ-ում ապաստանած արևմտահայ փախստականներին: 1920-ական թթ. Բ-ում ստեղծվել են հայրենակցական մի շարք միություններ, ՀԲԸՄ Բ-ի մասնաճյուղը: Հայ կոմունիստները Բ-ի կոմունիստական կուսակցության կազմում ստեղծել են իրենց սեկցիան: Բ-ում կոմունիստական վարչակարգ հաստատվելուց հետո (1944 թ.) հայ ազգային կուսակցությունների գործունեությունը արգելվել է, նույն թվին էլ ստեղծվել է հասարակական-մշակութային «Երևան» կազմակերպությունը, որը մինչև կոմունիստական վարչակարգի վերացումը հանդիսացել է բուլղարահայերի միակ հասարակական կառույցը:

Բուլղարահայերի համախմբման, նրանց լուսավորելու գործում զգալի դեր է խաղացել հայ եկեղեցին: Ըստ աղբյուրների տվյալների, արդեն XII դ. Փիլիպպուպոլսի հայերը ունեին իրենց վանքը, հայկական եկեղեցիներ են գործել Բ-ի մի շարք քաղաքներում: Ավելի ուշ կազմավորվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Բ-ի թեմը: Եկեղեցիներին կից գործել են դպրոցներ, լուսավորության և մշակույթի օջախներ, վանքերում գրվել են հայերեն մատյաններ: XIX դ. վերջին հայկական դպրոցներ են գործել Պլովդիվում, Վառնայում, Շումենում, Բուրգասում, Ռուսեում և այլ քաղաքներում: Գործել են նաև տարբեր մշակութային ընկերություններ, թատերական խմբեր, ակումբներ, գրադարաններ, որոնք իրենց գործունեությամբ նպաստել են բուլղարահայերի ազգային ինքնատիպության պահպանմանը: Սակայն կոմունիստական վարչակարգի տարիներին հայ ազգային դպրոցի, մշակութային հաստատությունների գործունեությունը խիստ սահմանափակվել է, անկում ապրել:

Բուլղարահայ առաջին թերթը՝ «Հույսը», հրատարակվել է 1884_85 թթ.: Հետագայում Բ-ում տարբեր ժամանակ հրատարակվել է շուրջ 80 հայերեն թերթ և ամսագիր, այդ թվում հնչակյան և ՀՅԴ կուսակցությունների պաշտոնաթերթեր: Այժմ հրատարակվում է (1944 թ-ից) «Երևան» թերթը, որը համանուն մշակութային միության հրատարակությունն է: Բ-ում հայտնի են երգահան Հարութ Ամիրխանյանը, Բալթայան եղբայրների ընտանիքը, նկարչուհի Հիլդան, արձակագիր Սևդա Սևանը և ուրիշներ:

Կոմունիստական վարչակարգի անկումից (1989 թ.) հետո սկսվել է բուլղարահայ համայնքի պատմության մի նոր փուլ: 1990_94 թթ. ստեղծվել են մի շարք հասարակական-մշակութային միություններ և կազմակերպություններ, որոնց անդամները հիմնականում ազգային զարթոնք ապրող բուլղարահայ երիտասարդներն են: Բ-ի հայերը հարց են հարուցել վերաբացելու հայկական դպրոցները:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



ԳԵՐՄԱՆԻԱ, Գ ե ր մ ա ն ի ա յ ի Դ ա շ ն ա յ ի ն Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետություն Կենտրոնական Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Բեռլին
Տարածքը՝ 357 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 79,5 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 12_15 հզ.

Առաջին տեղեկությունները Գ-ում բնակվող հայերի մասին ուշ միջնադարից են: XIV_XV դդ. Գ-ի մի քանի քաղաքներում եղել են քիչ թվով հայեր: Որոշ հայ առևտրականներ վաճառատներ և գրասենյակներ են ունեցել Սաքսոնիայում, Բավարիայում, Պֆալցում ևն: Հայերի թիվը որոշ չափով աճել է XIX դ. վերջին - XX դ. սկզբին, երբ Գ-ի համալսարաններում (Մյունխենի, Վայմարի, Բեռլինի, Հայդելբերգի ևն) ուսանելու են եկել զգալի թվով հայ երիտասարդներ Հայաստանից, Ղարաբաղից ևն: Հայերի թվաքանակը Գ-ում աճելու միտում չի ունեցել, քանի որ հայերը վստահություն չէին տածում այն երկրի նկատմամբ, որը Թուրքիայի դաշնակիցն էր: Արևմտահայերին օգնություն ցուցաբերելու նպատակով 1914 թ. ստեղծվել է Գերմանա-հայկական ընկերությունը՝ դոկտոր Յո. Լեփսիուսի նախագահությամբ (գոյատևել է մինչև երկրորդ աշխարհամարտը): Ընկերությունը հրատարակել է «Մեսրոպ» հանդեսը (լույս է տեսել 1 համար): Գ-ում հայերի թիվը սկսել է աճել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում հաստատվել են հայեր Թուրքիայից, Լիբանանից և Իրանից: Հայ համայնքներ են ձևավորվել Քյոլնում, Մյունխենում, Բեռլինում, Մայնցում, Շտուտգարտում: Այժմ (1994 թ.) հայերի թիվը շուրջ 12_15 հզ. է: Հայերը (որոնք բարձրորակ մասնագետներ են) հիմնականում զբաղված են արդյունաբերության, շինարարության, առողջապահության, գիտության բնագավառներում:

Մինչև Գերմանական Դեմոկրատական Հանրապետության և Գեր-

մանիայի Դաշնային Հանրապետության միավորումը (1991 թ.) առավել կազմակերպված էր Արևմտյան Բեռլինի համայնքը, որն ունի իր ընտրովի վարչությունը, ակումբ:

Հայկական եկեղեցիներ Գ-ում չկան, բայց 1992 թ. կազմվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Գ-ի թեմը (կենտրոնը՝ Քյոլն), արարողությունների կատարման համար օգտագործվում են տեղի ավետարանական եկեղեցիները: Գործում են հայերենի դասընթացներ Բեռլինում, Շտուտգարտում, Քյոլնում, նաև՝ մանկական երգչախմբեր, պարախմբեր:

XX դ. սկզբից մինչև 1940-ական թթ. հրատարակվել է շուրջ 10 անուն հայերեն պարբերական: Իրենց ակումբներն ունեն Մայնցի («Հայ տուն»), Քյոլնի, Մյունխենի հայ համայնքները: Շտուտգարտի համայնքի ջանքերով 1987 թ. այդ քաղաքի գերեզմանատանը կանգնեցվել է 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար: 1977 թ. Մյունխենում ստեղծվել է Հայկական հարցի ինստիտուտ, որը ձեռնարկել է Հայկական հարցի փաստաթղթերի բազմահատոր հրատարակությունը (հրատարակվել են 1-ին, 2-րդ, 8-րդ հատորները): 1984 թ. Արևմտյան Բեռլինում հիմնադրվեց Հայաստանի լրատվության և փաստագրության կենտրոն (ղեկավարներ՝ դ-ր Թ. Հոֆման, դ-ր Ժ. Քոչարյան)՝ գիտահետազոտական մի հաստատություն, որը հավաքում և հրապարակում է Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող նյութեր:

1988 թ. կինոբեմադրիչ Դոն Ասկարյանը նկարահանել է «Կոմիտաս» գեղարվեստական ֆիլմը, որը մի շարք միջազգային կինոփառատոներում ստացել է մրցանակներ:

Գ-ի հայերը կազմակերպված օգնություն են ցուցաբերում 1988 թ. աղետալի երկրաշարժից տուժած հայրենակիցներին: Բեռլինի հայ համայնքի միջոցներով Գյումրիում կառուցվել է պոլիկլինիկա: Գ-ի հայ համայնքը մարդասիրական օգնություն է ցույց տալիս նաև Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԴԱՆԻԱ, Դ ա ն ի ա յ ի Թ ա գ ա վ ո ր ո ւ թ յ ո ւ ն, պետություն Հյուսիսային Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Կոպենհագեն
Տարածքը՝ 43,070 կմ²
Բնակչությունը՝ 5,16 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 300

Հայերը Դ-ում սկսել են բնակություն հաստատել 1970-ական թթ-ից: Նրանք Լիբանանից, Իրանից գաղթածներ են. կենտրոնացած են Օրհուս (Օռուս) քաղաքում, շուրջ 300 մարդ: Զբաղվում են արհեստներով



(շատ են լուսանկարիչները), սպասարկման ոլորտի աշխատողներ են, խանութպաններ: Հայկական եկեղեցի չկա, գործում է կիրակնօրյա մեկ դպրոց (դասավանդում են հայոց լեզու և պատմություն): Լույս է տեսնում «Հորիզոն» եռամսյա պարբերականը: Օրհուսի համալսարանում է աշխատում հայագիտությամբ զբաղվող դանիացի գիտնական Հ. Լեհմանը:

Դ-ի հայ համայնքը, թեև փոքրաթիվ, սակայն իր որոշակի օգնությունն է ցուցաբերում 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Դանիայի Թագավորության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԵԳԻՊՏՈՍ, Ե գ ի պ տ ո ս ի Ա ր ա բ ա կ ա ն Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետություն Մերձավոր Արևելքում

Մայրաքաղաքը՝ Կահիրե
Տարածքը՝ 1001,4 հզ. կմ²
Բնակչությունը՝ 53,2 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 8_10 հզ.

Ե-ի հայ համայնքն ունի դարերի պատմություն և համարվում է ամենահին գաղթավայրերից: VII դ. (Ե-ի արաբական նվաճումից հետո էլ) պետական և զինվորական բարձր պաշտոններ են վարել հայազգի գործիչներ, իսկ Ֆաթիմյանների խալիֆայության ժամանակ (XI_XII դդ.) եղել են հայազգի վեզիրներ: Այս շրջանում մեծ թվով հայեր են հաստատվել Ե-ում: Հայերի ներգաղթ Ե. տեղի է ունեցել XIV դ. Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո, մի նոր գաղթ է եղել XVII դ. (այդ ժամանակ Ե. արդեն գտնվում էր Օսմանյան կայսրության գերիշխանության ներքո): Հայերը բնակվում էին գլխավորապես Կահիրեում և Ալեքսանդրիայում: XVII դ. սկզբին Կահիրեում կային հայերի ավելի քան երկու հարյուր տուն, եկեղեցիներ, հայ ոսկերիչների և ջուլհակների արհեստանոցներ: Հայ արհեստավորներն ունեին իրենց համքարությունները, նրանց արտադրանքը (զենք, ոսկերչական իրեր, կոշկեղեն ևն) լայն ճանաչում ուներ: Հայ վաճառականները կարևոր դեր էին խաղում Ե-ի ներքին և միջազգային առևտրում. 1837 թ. նրանք Կահիրեում հիմնել են առաջին բանկը: 1825 թ. կազմվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Ե-ի թեմը, 1828 թ. բացվել է առաջին հայկական դպրոցը, կառուցվել են հիվանդանոց, հյուրանոցներ: Հայ վարպետները զգալի ավանդ ունեն եգիպտական ճարտարապետության զարգացման գործում:

Սուեզի ջրանցքի կառուցումից (1869 թ.) հետո Ե. դարձել է միջազգային առևտրի կենտրոններից. այդ հանգամանքը նպաստել է հայերի նոր ներգաղթին, հիմնականում Թուրքիայից և Արևմտյան Հայաստանից: 1879 թ. Ե-ում կար 8 հզ. հայ: Հայերը նպաստել են Ե-ի տնտեսական զարգացմանը, որը հատկապես ծավալվել է երկիրը Մեծ Բրիտա-

նիայի գաղութ դառնալուց հետո։ Ծխախոտի արդյունաբերության, բանկային գործի, ինչպես նաև առևտրի բնագավառներում ստեղծվել են հայկական խոշոր ընկերություններ։

XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակներին հայերի թիվը Ե-ում կտրուկ աճել է Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանության հետևանքով։ Ե-ի հայ համայնքը զգալի օգնություն է ցույց տվել փախստական հայրենակիցներին՝ ապահովելով նրանց աշխատանքով, կացարաններով ևն։ 1925 թ. հայերի թիվը Ե-ում հասել է մոտ 40 հզ-ի։ Սակայն աստիճանաբար, եգիպտական ազգային բուրժուազիայի ձևավորման և հզորացման պայմաններում, հայ արդյունաբերողների և առևտրականների վիճակը փոխվել է. նրանք սկսել են կորցնել իրենց վաղեմի իշխող դիրքը. սահմանափակվել է հայերի ընդգրկումը պետական կառույցներում։ Սկսվել է հայերի արտագաղթը Ե-ից։ 1947_48 թթ. շուրջ 4000 եգիպտահայեր հայրենադարձվել են Հայաստան։

Ե-ի տնտեսությունից և հասարակական կյանքից հայերին դուրս մղելը հատկապես ուժեղացել է Ե. անկախ հանրապետություն հռչակվելուց հետո (1952 թ.)։ Եթե 1950-ական թթ. սկզբին հայերի թիվը Ե-ում շուրջ 30 հզ. էր, ապա 1970 թ. երկրում մնացել էր 12_14 հզ. հայ։ Սկսվել է հայերի արտագաղթ Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա և այլ երկրներ։ Արտագաղթը շարունակվել է նաև հետագա տարիներին, հայ համայնքի իրավունքների, հատկապես լուսավորության բնագավառում, խիստ սահմանափակման պատճառով։ 1990-ական թթ. սկզբին Ե-ում կար 8_10 հզ. հայ։

Ե-ի հայ կրոնական համայնքը կազմավորվել է XI դ.։ Տարբեր ժամանակաշրջաններում գործել է 30-ից ավելի հայկական եկեղեցի, որոնց կից՝ դպրոցներ։ XI դ. վերջին Կահիրեում կառուցվել է Ս. Գևորգ եկեղեցին, XII դ. կեսին՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին Զուեյլայում, հայկական եկեղեցիներ կային Ալեքսանդրիայում, Իֆտիխում և այլ վայրերում։ Հայ կրոնական համայնքը գտնվում էր սկզբում Երուսաղեմի հայոց պատրիարքության, այնուհետև՝ Կ.Պոլսի հայոց պատրիարքության, իսկ արդեն թեմի իրավունքներով՝ Ս. Էջմիածնի տնօրինության ներքո։ Այժմ (1994 թ.) Կահիրեում գործում են Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մինաս, Ամենայն Սրբոց եկեղեցիները, Ալեքսանդրիայում՝ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին։ Ե-ի հայկական վանքերում XIV_XV դդ. գրվել են հայերեն մատյաններ։ XIX դ. ընթացքում ավելացել է հայկական դպրոցների և աշակերտության թիվը. դարի վերջին գործում էր 11 դպրոց, իսկ մինչ 1952 թ. հեղափոխությունը՝ 30 դպրոց։ 1993 թ. Կահիրեում կար երկու հայկական դպրոց՝ Նուբարյան ազգային վարժարանը և Գալուստյան ազգային վարժարանը, իսկ Ալեքսանդրիայում՝ Պողոսյան ազգային վարժարանը։

Ե-ի հայ գաղութում XIX դ. վերջին - XX դ. սկզբին գործել են հայ ազգային կուսակցությունների՝ հնչակյան, դաշնակցության, ռամկավար-ազատական տեղական կազմակերպությունները։ 1906 թ. Ե-ում հիմնվեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ)։ Տարբեր տարիների գործել են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, ակումբներ, ընկերություններ։ Ե-ի ակնառու պետական և ռազմական գործիչներից են հայազգի Բադր ալ Ջամալի (XI դ.), ալ Աֆդալ, ալ Ջույուշի, Բեհրամ ալ Արմանի վեզիրները (բոլորը՝ XII դ.), մամլուքների օրոք՝ զորապետներ և պետական գործիչներ Յաղուբը (Հակոբ), Օսման Չելեբին, Ալի ալ Արմանին և ուրիշներ, XIX դ. 2-րդ կեսին Ե-ի արտաքին գործերի նախարարի պաշտոնը տարբեր տարիներ զբաղեցրել են Արթին Չրաքյանը (միաժամանակ եղել է և առևտրի նախարար), Ստեփան Դեմիրճյանը, Տիգրան դ'Ապրոն, Նուբար փաշա Նուբարյանը (նա երեք անգամ գլխավորել է Ե-ի կառավարությունը)։



Հարուստ է եղել եգիպտահայ համայնքի մշակութային կյանքը։ Այստեղ տարբեր ժամանակ ապրել և աշխատել են արևմտահայ գրականության ականավոր ներկայացուցիչներ Արփիար Արփիարյանը, Վահան Թեքեյանը, Երվանդ Օտյանը, նկարիչներ Երվանդ Դեմիրճյանը, Տիգրան Կարապետյանը, Ալեքսանդր Սարուխանը, ճարտարապետներ Կարո Պալյանը, Լևոն Նաֆիլյանը և ուրիշներ։ Գործել են թատերական խմբեր, որոնց կազմում հանդես են եկել հայտնի դերասանուհիներ Սիրանույշը, Գարագաշյան քույրերը, Աստղիկը։ Համայնքում գործել են երաժշտական համույթներ, երգչախմբեր ևն։

Ե-ում առաջին հայերեն թերթը՝ «Արմավենին», լույս է տեսել 1865 թ., առ այսօր հրատարակվել է շուրջ 150 անուն հայերեն թերթ ու ամսագիր։ 1994 թ. Կահիրեում հրատարակվել են «Արև», «Հուսաբեր» և «Ջահակիր» պարբերականները, որոնք ունեն սեփական տպարաններ։

Ե-ի հայ համայնքը մարդասիրական օգնություն է ցույց տվել Սպիտակի 1988 թ. երկրաշարժից տուժածներին՝ աղետի գոտի ուղարկելով մթերք և դեղորայք։ 1989_91 թթ. ամառվա ամիսներին աղետի գոտու երեխաները իրենց հանգիստն են անցկացրել եգիպտահայ համայնքի միջավայրում։

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.։

## ԵԹՈՎՊԻԱ, պետություն Աֆրիկայի հյուսիս-արևելքում

Մայրաքաղաքը՝ Ադիս Աբեբա
Տարածքը՝ 1,2 մլն կմ $^2$
Բնակչությունը՝ 50,9 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 150

Հայ-եթովպական առնչությունների մասին վկայում է պատմահայր Մովսես Խորենացին՝ հիշատակելով, որ ասորեստանցիների Տևտամոս թագավորի՝ Պրիամոսին ուղարկած օգնական զորքի մեջ եղել է նաև

հայազգի զորավար Զարմայրը՝ եթովպական զորքով: Ե-ի հայ համայն-
քը կազմավորվել է VII դ., երբ քրիստոնյա Ե. են գաղթել բազմաթիվ
հայեր արաբական հարձակման ենթարկված Սիրիայից, Պաղեստինից,
Եգիպտոսից: Հայերի հիմնած բնակավայրը հաբեշական մատենագրու-
թյան մեջ հիշատակվում է «Հայկական կղզի» անունով: Ներկայիս Դես-
սիե քաղաքի մոտ հայերը կառուցել են եկեղեցի (Ս. Ստեփանոս): Հա-
մայնքը համալրվել է XII դ. Եգիպտոսից և XIV դ. Կիլիկիայից գաղթած
հայերով, առավել ստվարացել XIX դ. վերջին, երբ 1894_96 թթ. կոտո-
րածների հետևանքով շատ հայեր Կիլիկիայից գաղթել են Ե.: Նորա-
գաղթ հայերի մեծ մասը արհեստավորներ (ոսկերիչներ, զինագործներ
ևն) ու գյուղացիներ էին, որոնց գալով փոխվել է համայնքի սոցիալա-
կան կազմը. մինչ այդ գերակշռում էին առևտրականներն ու պետա-
կան ծառայողները. կային նաև ճարտարապետներ, դեղագործներ, մե-
քենագետներ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ե-ում գործել են 10 հայ
առևտրական տներ, որոնք կարևոր դեր են խաղացել երկրի արտաքին
առևտրի ասպարեզում: Հայերն իրենց գործունեությամբ նպաստել են
երկրի ներքին և արտաքին առևտրի զարգացմանը, աչքի ընկել հատ-
կապես արտաքին քաղաքականության մեջ: Հայտնի են Մատթեոս ա-
նունով հոգևորական դիվանագետը, որը 1513 թ. հատուկ առաքելու-
թյամբ ուղարկվել է Պորտուգալիա, խոջա Մուրադը, որի գլխավորած
առևտրա-դիվանագիտական դեսպանությունները (1664, 1678, 1690,
1693 թթ.) նպաստել են Ե-ի քաղաքական և տնտեսական մեկուսացու-
մից դուրս գալուն: Ե-ի մասին առաջին գիտական աշխարհացույցը կազ-
մել է հայ տոմարագետ, ճանապարհորդ Ավետիք Տիգրանակերտցի
Բաղդասարյանը, որը XVIII դ. եղել է Ե-ում: XVIII_XIX դդ. Ե-ի թագավո-
րի արքունի կայազորի պետը, գանձապետը, ոսկերչապետը, բժշկապե-
տը, դեղագործը եղել են հայեր: Օտար և ներքին թշնամիների դեմ ե-
թովպական ժողովրդի մղած պայքարի պատմության մեջ նշանակալի
տեղ ունի Սարգիս Թերզյանը (Ե. է եկել 1882 թ.), որը վարել է զինվորա-
կան և վարչական բարձր պաշտոններ, գլխավորել Լոնդոն, Բեռլին,
Վիեննա, Հռոմ, Բրյուսել, Վաշինգտոն ուղարկված դիվանագիտական
պատվիրակությունները, նախաձեռնել Ջիբութի-Ադիս Աբեբա երկաթու-
ղու կառուցումը: 1935 թ. ևս հայերը մասնակցել և օգնել են եթովպացի-
ներին իտալական ֆաշիզմի դեմ պայքարում: Ե-ի պետական օրհներ-
գի հեղինակն է Գ. Նալբանդյանը:

Եթովպահայերը (1920_30-ական թթ. շուրջ 1500, 1970-ական թթ.՝
1200 հոգի) կենտրոնացած են Ադիս Աբեբայում: Համայնքը 1920-ական
թթ-ից ղեկավարել է Եթովպահայ գաղութային ժողովը: Գործել են ՀԲԸՄ
Ե-ի մասնաճյուղը, Եկեղեցասեր և Բարեսեր տիկնանց միությունները,
«Արարատ» մարզական միությունը, «Արարատ» երգի-պարի խումբը,
«Մուրադյան» երգչախումբը, «Հայ բեմ» թատերախումբը: Լույս են տե-
սել «Նոր ծաղիկ» (1932) և «Փյունիկ» (1958_62) պարբերականները: Այ-
սօր (1994 թ.) Ե-ում հայերի թիվը խիստ նվազել է. բնակվում է 150 հայ



(վաճառականներ, բժիշկներ, երաժիշտներ, դեղագործներ, ճարտարա-
պետներ, կաշվի-կոշիկի փոքր ձեռնարկությունների տերեր): Գործում
են Ս. Գևորգ եկեղեցին, Ազգային Գևորգով վարժարանը, «Արարատ»
ակումբը: Եթովպահայ համայնքը օգնություն է ուղարկել 1988թ. ավե-
րիչ երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապե-
տության և Եթովպիայի միջև հաստատվել են 1993 թ.:

## ԷՍՏՈՆԻԱ, Էստոնական Հանրապետություն, պետություն Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Տալլինն

Տարածքը՝ 45,1 հզ. կմ²

Բնակչությունը՝ 1,5 մլն (1993 թ.)

Հայերի թիվը՝ 2000

Է-ի հայ համայնքը ձևավորվել է 1980-ական թթ. վերջին, թեև հայերը
Է-ում բնակվել են XIX դարից: Սկզբնական շրջանում նրանք եղել են
Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանի հայ ուսանողները. այստեղ
են ուսանել հայ մեծ գրող Խաչատուր Աբովյանը, բանասեր և հրապա-
րակախոս Ստեփանոս Նազարյանը, բանաստեղծ Ռափայել Պատկան-
յանը և ուր.: Է-ի հայերը (շուրջ 2 հզ. մարդ), կենտրոնացած են Տալլին-
նում, նաև Տարտուում, Պյառնուում, Կոխտլա-Յարվեում, հիմնականում
մտավորականներ են, ճարտարագետներ, բժիշկներ, գիտության և ար-
վեստի աշխատողներ: Նրանց մեծ մասը աշխատանքի է հրավիրվել Է.
երկրորդ աշխարհամարտից հետո՝ Ռուսաստանից, նախկին Խորհրդա-
յին Միության այլ հանրապետություններից:

Է-ի հայերի ազգային ինքնագիտակցության վերելքը սկսվել է 1980-
ական թթ. վերջին՝ պայմանավորված թե՛ Ղարաբաղյան շարժումով և
թե՛ Է-ում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացներով: 1988
թ. ստեղծվել է Տալլինի Հայ մշակույթի ընկերությունը, 1989 թ. սկզբին՝
Տարտուի Խ. Աբովյանի անվան հայ մշակույթի ընկերությունը: 1989 թ-
ից Տալլիննում գործում է հայկական կիրակնօրյա դպրոց:

1990_92 թթ. Տալլիննում հրատարակվել է Հայ մշակույթի ընկերու-
թյան «Վահագն» ամսաթերթը՝ հայերեն և ռուսերեն: Գործում է հայկա-
կան ռադիոժամ (ամեն կիրակի 30 րոպե):

Է-ի հայերը սատարեցին հանուն ազգային անկախության վերա-
կանգնման էստոնական ժողովրդի պայքարը, օժանդակեցին Է-ի ժո-
ղովրդական ճակատի և Հայոց համազգային շարժման միջև կապերի
հաստատմանը: Է-ի հայ համայնքը օգնություն ցույց տվեց 1988 թ. աղե-
տից տուժած հայրենակիցներին, մասնակցեց աղետի գոտուց երեխա-
ների ընդունման և տեղավորման գործին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետու-
թյան և Էստոնական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԹՈՒՐՔԻԱ, Թուրքական Հանրապետություն, պետություն Արևմտյան Ասիայում և Հարավ-Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Անկարա
Տարածքը 780,576 հզ. կմ$^2$ (23,8 հզ. կմ$^2$ Եվրոպայում)
Բնակչությունը՝ 55,8 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 65 հզ.

Ժամանակակից Թուրքիայի արևելյան մասը (ինչպես իրենք թուրքերն են անվանում՝ Արևելյան Անատոլիա) Արևմտյան Հայաստանն է, որը XVI դ. վերջին զավթեցին օսմանյան թուրքերը: Օսմանյան կայսրությունում հայերը ներկայացված են եղել որպես կրոնական համայնք՝ 1461 թ. Կոստանդնուպոլսում հիմնելով հայոց պատրիարքություն, որն անմիջապես ենթարկվում էր սուլթանին և մեծ վեզիրին: Հայերի հիմնական զանգվածը զբաղվում էր հողագործությամբ: Փոքրաթիվ մեծահարուստ հայերը պատկանում էին «ամիրա» դասակարգին, հայտնի էին որպես ծեռներեց առևտրականներ: Հայերը մեծ ծառայություն են մատուցել Օսմանյան կայսրությանը՝ եղել են հայտնի բանկիրներ, առևտրականներ, գիտնականներ, արվեստագետներ, երաժիշտներ, կոմպոզիտորներ ևն:

Օսմանյան առաջին թատրոնի հիմնադիրը Հակոբ Վարդովյանն էր, օպերայի և օպերետի ստեղծողը՝ Տիգրան Չուխաճյանը: Գրիգոր Սինանյանը ստեղծել է առաջին օսմանյան նվագախումբը, Երվանդ Օսկան էֆենդին առաջին քանդակագործն է եղել: Թուրքերեն լեզվի առաջին արմատական բառարան կազմողը նույնպես հայ էր՝ Պետրոս Քերեսթեջյանը: Օսմանյան արքունի ճարտարապետության գլխավոր դեմքերից երկար տարիներ եղել են Պալյան ընտանիքի ներկայացուցիչները: Ընդհանուր մաքսային հասույթը XIX դ. սկզբին հանձնված էր Տյուզյան Հովհաննես չելեբիին, ապա Ճեզայիրլյան Մկրտիչ ամիրային: Վառոդապետությունը ժառանգաբար Տատյանների ձեռքում էր: Բանակի հացի մատակարարությունը Նորատունկյաններինն էր: Արքունի բժշկական համալսարանը կառավարվում էր մեծ մասամբ հայերի ձեռքով: Գլխավոր դասախոսները եղել են՝ Սերվիչեն, Նիկողայոս Ռուսինյան, Խնդամյան, Անդրանիկ բեյ Կռճիկյան, Ստեփան փաշա Ասլանյան: Հանրապետական շրջանում ևս հայերը զգալի դեր են խաղացել Թուրքիայի մշակութային կյանքում: Լատինատառ այբուբենի հիմնողը եղել է Մազլումյան ուստան: Լեզվաբանության մեջ մեծ դեր է խաղացել Հակոբ Դիլաչարը (Մարթայան): Թուրք լեզվաբանության, մշակույթի պատմության բնագավառում մեծ ներդրում ունի Պարս (Բարսեղ) Թուղլաճյանը:

Վահրամ Մյուհենդիսյանը ստեղծել է թուրքական տպագրական տառերը: Կ.Պոլիսը եղել է հայ մշակույթի և գրականության նշանավոր կենտրոն. այստեղ են ապրել և ստեղծագործել հայ նշանավոր գրողներ, դերասաններ, երգահաններ, հրապարակախոսներ, տպագրիչներ, ճարտարապետներ. գրողներ Մկրտիչ Պեշիկթաշլյան, Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Հակոբ Պարոնյան, Ծերենց, Երվանդ Օտյան, Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Արփիար Արփիարյան, Հակոբ Մնձուրի, հրապարակախոսներ՝ Հարություն Սվաճյան, Գրիգոր Օտյան, «Ամենուն տարեցույց»-ի հրատարակիչ՝ Թեոդիկ: Տարիներ շարունակ Պոլսում է գործել մեծն Կոմիտասը: Հայտնի են եղել Հ.Վարդովյանի, Մ.Մնակյանի, Ս. Պենլյանի հիմնած թատրոնները:

Հայկական առաջին տպարանը հիմնվել է 1565 թ., ընդհանուր առմամբ գործել է ավելի քան 30 տպարան: Առաջին պարբերականը լույս է տեսել 1832 թ. («Լրո գիր»): Ցայսօր Պոլսում լույս է տեսել 450 պարբերական:

Դարեր շարունակ, սակայն, հայերը կոտորածների են ենթարկվել Թուրքիայում: 1894_1896 թթ. Աբդուլ Համիդ II-ի ժամանակաշրջանում շուրջ 300 հզ. հայ է կոտորվել: 1915 թ. Մեծ եղեռնի ընթացքում զոհվել է 1,5 մլն հայ: Այսպիսով, Արևմտյան Հայաստանը դատարկվեց հայերից: Հայերի հանդեպ ահաբեկումները Թուրքիայում պարբերաբար շարունակվել են նաև հանրապետական շրջանում (օրինակ՝ 1955 թ., 1977 թ., 1979 թ. և նույնիսկ վերջին ժամանակներս):

Ներկայումս Թուրքիայում բնակվում է շուրջ 65 հզ. հայ, որից 55 հզ-ը Ստամբուլում, ուր և կենտրոնացած է հայ կյանքը: Մնացածները տեղաբաշխված են Անկարայում՝ 300 ընտանիք, Մալաթիայում՝ 120, Դիարբեքիրում (Տիգրանակերտ)՝ 110, Սվազում (Սեբաստիա)՝ 72, Թոքատում (Եվդոկիա)՝ 29, Կայսերիում (Կեսարիա)՝ 28, Ամասիայում՝ 36, Արաբկիրում՝ 12, Քեմալիեում (Ակն)՝ 6, Իսկենդերունում (Ալեքսանդրեթ) և Սասունի գյուղերում՝ 69 և այլուր (Սամսուն, Տրապիզոն, Քյոթահիա ևն): Հայերի թվաքանակին պետք է ավելացնել նաև շուրջ 20 հզ. համշենցիներին, որոնք բնակվում են Տրապիզոնից մինչև Էրզրում ընկած տարածքում: Որոշ տեղեկությունների համաձայն Թուրքիայում բնակվում են նաև մոտ 5000 կաթոլիկ և 500 բողոքական հայեր, իսկ Հաքյարիի վիլայեթում՝ 250 քրդախոս հայեր: Գավառներում հայերը զբաղվում են գյուղատնտեսությամբ, քաղաքներում՝ արհեստներով և առևտրով, կան մտավորականներ:

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը՝ պատրիարքի գլխավորությամբ ճանաչվում է կառավարության կողմից որպես հայ համայնքի ղեկավար մարմին: Հայ քաղաքական կազմակերպություններ ու կուսակցություններ չկան:

Ստամբուլում գործում են 16 հայկական մանկապարտեզներ և 20 դպրոցներ: Գործում են համայնքային հաստատություններ՝ Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցը (1832 թ-ից), Գալֆայան (1866 թ-ից) և Գարակյոզյան (1912 թ-ից) որբանոցները, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (1886 թ-ից), Ս. Խաչ դպրեվանքը (1953 թ-ից) և կազմակերպություն-

ներ՝ Թրքահայ մարզական միությունը (1940 թ-ից), Շիշլիի մարմնակրթական միությունը (1946 թ-ից), «Մարաշ» երգի-պարի անսամբլը (1980 թ-ից) ևն, Սանուց միություններ (11), դպրաց դաս երգչախմբեր (18): Դպրոցները միայն Ստամբուլում են: Բարձրագույն վարժարաններն են՝ Կեդրոնական (1886 թ-ից), Էսայան (1895 թ-ից), Սահակյան-Նունյան (1812 թ-ից), Ս. Խաչ դպրեվանք (1953 թ-ից), միջնակարգ վարժարաններ՝ Պեզճյան մայր վարժարան (1828 թ-ից), Տատյան (1844 թ-ից), Արամյան-Ունճյան (1858 թ-ից), Մերամեքճյան (1912 թ-ից): Կան նախակրթարաններ՝ Լևոնյան-Վարդանյան (1820 թ-ից), Սեմերճյան (1838 թ-ից), Ներսեսյան-Երմոնյան (1872 թ-ից), Թարգմանչաց (1884 թ-ից) ևն: Հայ կաթոլիկ դպրոցներն են՝ Վիեննական Մխիթարյան վարժարանը (1825 թ-ից), Անարատ հղության հայ քույրերի միաբանության վարժարանը (1868 թ-ից), Վենետիկյան Մխիթարյան վարժարանը (1908 թ-ից) ևն: Գործում է 45 եկեղեցի, որոնցից 38-ը՝ Ստամբուլում: Անատոլիայի գավառներում գոյություն ունեցող այն հայ համայնքները, որոնք զրկված են իրենց ուրույն եկեղեցիներից, կապված են գավառում դեռ գործող եկեղեցիներից մեկին. Կեսարիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն են կապված Անկարայի, Ամասիայի, Յոզղատի, Սվազի, Թոքատի և Կենտրոնական Անատոլիայի բոլոր համայնքները, Դիարբեքիրի Ս. Կիրակոս եկեղեցուն՝ Մալաթիայի, Բիթլիսի, Սասունի և հարավ-արևելյան Անատոլիայի մյուս հայ համայնքները, Իսկենդերունի Ս. Քառասուն մանկունք եկեղեցուն՝ Ադըյամանի, Մերսինի և հարավ-արևմտյան Անատոլիայի մնացած հայ համայնքները:

Ստամբուլում լույս են տեսնում «Ժամանակ» (1908 թ-ից), «Մարմարա» (1940 թ-ից) օրաթերթերը, «Քուլիս» (1946 թ-ից) գրական-գեղարվեստական հանդեսը, «Սուրբ Փրկիչ ամսաթերթ հայոց հիվանդանոցի» (1900 թ-ից) պարբերականը:

Ստամբուլում են ապրում գրողներ Զ.Խրախունին, Զահրատը, Ի.Սարըասլանը և ուր.:

Թուրքական հանրապետությունը պաշտոնական հարաբերություններ Հայաստանի հետ ունեցել է առաջին հանրապետության ժամանակաշրջանում (1918_1920 թթ.): Ներկայումս ևս կան պաշտոնական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության հետ, սակայն դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև հաստատված չեն:

**ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ,** Թուրքմենստանի Հանրապետություն, պետություն Միջին Ասիայում

Մայրաքաղաքը՝ Աշգաբադ
Տարածքը՝ 448,1 հզ. կմ²
Բնակչությունը՝ 37 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 55_60 հզ.

Թ-ի, ինչպես և ամբողջ Միջին Ասիայի տարածաշրջանի հայկական



համայնքները ծնավորվել են XIX դ. 2-րդ կեսին, երբ Ռուսաստանն ավարտել է անդրկասպյան հողերի (Թուրքեստանի) նվաճումը: 1870-ական թթ. վերջից Աստրախանից, Ղարաբաղից և Նախիջևանից գաղթած հայերը հաստատվել են Թուրքեստանում ռուսական բանակի հիմնական հենակետեր հանդիսացող Կրասնովոդսկ քաղաքում և Ալեքսանդրովսկի բերդում: 1880-ական թթ. սկզբից հայերի ներգաղթը ուժեղացել է, հայեր են եկել նույնիսկ հարևան Պարսկաստանից: Ռուսական իշխանությունները խթանում էին հայերի ներգաղթը, որը նպաստում էր երկրամասի տնտեսական յուրացմանը, այստեղ ծավալվող երկաթուղային շինարարությանը, նոր բնակավայրերի կառուցմանը: Հայ գաղթականները (հիմնականում բանվորներ, արհեստավորներ) բնակություն են հաստատել Կրասնովոդսկ, Պոլտորացկ (այժմ Աշգաբադ), Մերվ (Մարի) քաղաքներում, ուր XX դ. սկզբին արդեն գործել են հայկական եկեղեցիներ: Հայերը կառուցել են նաև տներ, խանութներ, իջևանատներ: Հայ վաճառականները իշխող դիրք են գրավել Թուրքեստանի ներքին շուկայում, ինչպես նաև Ռուսաստանի, Պարսկաստանի, Աֆղանստանի հետ երկրամասի առևտրում: Նրանց են պատկանել զգալի դրամական միջոցներ և մի շարք խոշոր առևտրական ընկերություններ: XIX դ. վերջից հայ վաճառականները սկսել են միջոցներ ներդնել նավթի, աղի հանույթի, տեղական գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման մեջ: Բացի առևտրական և ձեռնարկատիրական գործունեությունից հայերը զբաղվել են նաև արհեստագործությամբ:

Ռուսական կայսրության իշխանությունները, հաշվի առնելով հայերի օգտակար դերը երկրամասի տնտեսական զարգացման գործում, չեն խոչընդոտել նրանց գործունեությանը, ավելին՝ նրանց թույլատրել են ստեղծել այսպես կոչված «հայ ազգային ընկերություններ», որոնք, զբաղվելով լուսավորության, առողջապահության, բնակավայրերի բարեկարգման հարցերով, բարեգործությամբ, ներհամայնքային հարաբերությունների կարգավորմամբ, ըստ էության, հանդիսանում էին ինքնավարության մի յուրատեսակ ձև: Սակայն 1905_07 թթ. ռուսական հեղափոխությունից հետո ցարական իշխանությունը լուծարել է այդ ընկերությունները:

Թ-ի հայ համայնքի համախմբմանը և ազգային լուսավորության զարգացմանը նպաստել է հայ առաքելական եկեղեցու գործունեությունը: Սկզբնական շրջանում Թ-ի հայ համայնքը գտնվում էր Ս. Էջմիածնի Շամախու թեմի տնօրինության ներքո, 1894 թ. այն հանձնվել է Աստրախանի թեմին: 1894 թ. եկեղեցի է կառուցվել Աշգաբադում, 1905 թ. Կրասնովոդսկում, ապա Մերվ ու Չարջոու քաղաքներում (այս բոլոր եկեղեցիները փակվել են 1920_30-ական թթ. երկրամասի խորհրդայնացումից հետո. այժմ Թ-ում հայկական եկեղեցիներ չկան): Եկեղեցիներին կից գործել են ծխական դպրոցներ և վարժարաններ: Թ-ի հայոց ազգային կյանքը կազմակերպել են տարբեր բարեգործական, կանանց,

մշակութային ընկերությունները, ինչպես նաև հայ քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, հայ ժողովրդական կուսակցություն) տեղական կազմակերպությունները, սոցիալ-դեմոկրատական խմբերի գործունեությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թ-ի հայերը միջոցներ են տրամադրել հայկական կամավորական ջոկատներ կազմակերպելու համար, իսկ ապա և արևմտահայ փախստականներին օգնություն ցուցաբերելու համար։ 1920-ական թթ. 2-րդ կեսին Թ-ում գործել են ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտեի) տեղական կազմակերպությունները։ 1919_20 թթ. Աշգաբադում հրատարակվել են «Ժողովրդական թերթ», «Շեփոր», «Կոչնակ» հայերեն թերթերը։

1930-ական թթ. կեսից Թ-ում, խորհրդային իշխանությունները փակել են հայկական դպրոցները, դադարեցրել հայ հասարակական կազմակերպությունների գործունեությունը։ Հայ բնակչության մի զգալի մասը, մասնավորապես երիտասարդ սերունդը, անհաղորդակից է մնացել մայրենի լեզվին և մշակույթին։ Դրա հետ մեկտեղ Թ-ի լուսավորության, առողջապահության, գիտության բնագավառներում, պետական կառույցներում աշխատել են բազմաթիվ տեղացի հայեր։

1980-ական թթ. վերջին Թ-ի հայոց ազգային կյանքը որոշ չափով աշխուժացել է։ Աշգաբադում ստեղծվել է Հայկական մշակութային ընկերություն, հարց է հարուցվել հայ կրոնական համայնքի գրանցման վերաբերյալ։ Որոշ չափով ավելացել է Թ-ի հայերի թվաքանակը՝ ի հաշիվ Ադրբեջանից փախած հայերի։

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.։

**ԻՆԴՈՆԵԶԻԱ,** Ի ն դ ո ն ե զ ի ա յ ի Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետություն Հարավ-Արևելյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Ջակարտա
Տարածքը՝ 1904,6 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 179,3 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 200

Ի-ում կազմավորված հայ համայնքի մասին տեղեկությունը XVII դ-ից է. Ճավա կղզում բնակվել է 2000 հայ։ Հոլանդական արևելա-հնդկական ընկերության 1656 թ. արձանագրություններից մեկում հիշվում է Մակասարի բնակիչ Խոջա Սոլիմա հայ վաճառականը, իսկ 1747 թ. մարտի 21-ի հրովարտակով հոլանդացիները Ի-ի հայերին շնորհել են եվրոպացիներին հավասար «ազատ քաղաքացու» իրավունք։ Հայերը Ի. են գաղթել հիմնականում Նոր Ջուղայից (Իրան) և Հնդկաստանից։ Բնակություն են հաստատել Ջակարտայում (այն ժամանակ՝ Բատավիա), Սեմարանգում, Սուրաբայայում, Չերիբոնում, Թեգալում, Բանդունգում, Սուրակարտայում, Մակասարում։ Գլխավորապես զբաղվել են վաճառականությամբ, նաև արհեստներով։ 1831 թ. կառուցվել է հայկական մատուռ, 1852 թ.՝ Ս. Հովհաննես եկեղեցին։ 1855 թ. Բատավիայում բացվել է «Մանուկ և Հարություն» երկսեռ դպրոցը (գիշերօթիկ բաժնով, փակվել է 1872 թ.), հիմնվել են կարիքավոր հայրենակիցներին օգնելու, հայ մշակույթը սատարելու կազմակերպություններ։ Ի-ի հայերի ներքին կյանքը (եկեղեցի, դպրոց, միություններ) կարգավորելու համար կազմվել է կանոնադրություն, որը «Սահմանադրություն և կարգավորություն ժողովրդյան հայոց ի Ճավա» վերտառությամբ հաստատել է Ի-ի կառավարությունը 1880 թ. հունվարի 6-ին։



Ինդոնեզահայ համայնքը հայտնի է իր հայրենասիրական գործունեությամբ. հայերն իրենց ծառայություններն ու աջակցությունն են առաջարկել պարսկական լծից ազատագրված արևելահայերին (1828 թ.), սատար են կանգնել արևմտահայերի ազատագրական պայքարին (1891 թ. կազմակերպել են «Հայոց խրախուսական միությունը»)։ 1894 թ. գումար են հանգանակել Սասունի աղետյալների, 1905_06 թթ.՝ Կովկասի հայ սովյալների համար։ 1915_17 թթ. օգնել են եղեռնից փրկված հայրենակիցներին։ 1917 թ. հիմնվել է ՀԲԸՄ Ի-ի մասնաճյուղը, 1923 թ. վերաբացվել է «Մանուկ և Հարություն» դպրոցը, 1922 թ. գործել է Հայկական մարզական ակումբը։ 1927 թ. Սուրաբայայում գործում էր Ս. Գևորգ եկեղեցին։ Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939_45 թթ.) ժամանակ Ի-ի հայերը դիտվել են որպես ֆաշիզմի թշնամիներ, և ճապոնացիները նրանց, ընտանիքներով, արգելափակել են համակենտրոնացման ճամբարներում, որտեղ նրանց մի մասը սովի ու համաճարակի զոհ է դարձել։ Պատերազմից հետո հայերը տեղափոխվել են ԱՄՆ, Ավստրալիա և այլ երկրներ։ 1976 թ. Ի-ում կար 300 հայ. հիմնականում վաճառականական ընկերությունների տերեր կամ փայատերեր։

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ինդոնեզիայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.։

**ԻՍՊԱՆԻԱ,** Ի ս պ ա ն ա կ ա ն Պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետություն Եվրոպայի հարավ-արևմուտքում

Մայրաքաղաքը՝ Մադրիդ
Տարածքը՝ 504,782 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 40,3 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 200

Հայ-իսպանական առնչությունները ենթադրվում են հնագույն ժամանակներից։ Սակայն դրանք գործուն են դարձել միայն միջին դարերում, խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ բազմաթիվ իսպանացի խաչակիրներ եկել են Կիլիկյան Հայաստան, շփվել հայերի հետ, օգտվել նրանց աջակցությունից։ XIII դարից սկսած իսպանական նավերը խարիսխ են գցել Կիլիկիայի նավահանգիստներում։ 1239 թ. Արա-

գոնի թագավորը դիմել է Կիլիկիայի հայոց թագավորին՝ խնդրելով իսպանացիներին Կիլիկիայում տալ այն արտոնությունները, ինչ վայելում էին ջենովացիները և վենետիկցիները: Կիլիկիայի թագավոր Օշինի օրոք փորձեր են արվել քաղաքական հարաբերություններ հաստատել Ի-ի հետ: Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Ձ Լուսինյանին եգիպտացիների գերությունից ազատելու գործում մեծ ջանքեր են թափել Կաստիլիայի և Բարսելոնի ղեկավարները: 1383 թ. Կաստիլիայի թագավորը հրովարտակով Մադրիդը (Վիլյարեալ և Անդուխար քաղաքների հետ) պարգևել է Լևոն Ձ Լուսինյանին մինչև նրա մահը: XV_XVI դդ. հայտնի են հայ դիվանագետների առաքելությունները Ի.: XVII_XVIII դդ. հաճախացել են հայ վաճառականների այցելությունները Ի-ի առևտրական կենտրոններ (Կադիս, Սևիլիա, Բարսելոն, Մադրիդ): Տարբեր ժամանակներ հայ ճանապարհորդներ են այցելել Ի. և տեղեկություններ թողել այդ երկրի մասին: Իսպանական դեսպանատներում թարգմանչի պաշտոններ են վարել իսպաներենին և արևելյան լեզուներին տիրապետող հայեր:

Սակայն Ի-ում հավաքական հայ համայնք չի կազմակերպվել: Ենթադրվում է, որ XVIII դ. փոքրաթիվ հայ համայնք եղած լինի Կադիսում, ուր այցելել են հայ հոգևորականներ, հավանաբար, համայնքը հովվելու նպատակով: Հայկական փոքրաթիվ գաղութ է հիմնվել Մադրիդում առաջին աշխարհամարտի տարիներին: Այժմ (1994 թ.) Ի-ում բնակվում են հայեր, որոնք կազմակերպված համայնք չունեն:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Իսպանական պետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ԻՍՐԱՅԵԼ**, Իսրայելի Պետություն, պետություն Մերձավոր Արևելքում

Մայրաքաղաքը՝ Երուսաղեմ (1950-ից)
Տարածքը՝ 20,7 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 4,8 մլն (1991)
Հայերի թիվը՝ 2000_3000

Ի-ի պետության տարածքում (որը Պաղեստինի տարածքի մի մասն է) հայերը հիշատակվում են IV դ. սկզբից: Երուսաղեմ ուխտի եկած շատ հայ հոգևորականներ հաստատվել են սուրբ քաղաքում և նրա մերձակայքում: Արդեն IV դ. վերջին Երուսաղեմում գործում էին հայկական եկեղեցիներ: Երուսաղեմում հայտնաբերված խճանկարների հայերեն արձանագրությունները թվագրվում են V դ.: Ենթադրվում է, որ V_VI դդ. այստեղ ապրել և աշխատել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտների մի խումբ, որը հայերեն է թարգմանել աստվածաբանական գրականություն: V դ. ձևավորվել է հայ վանական միաբանություն, VII դ.՝ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը (որոշ աղբյուրների տվյալներով՝ այդ ժամանակ Երուսաղեմում արդեն գործում էին մի քանի տասնյակ հայ



եկեղեցիներ և մատուռներ): Երուսաղեմում բնակվում էին նաև հայ աշխարհիկ բնակիչներ՝ հիմնականում առևտրականներ և արհեստավորներ. հայտնի է նաև, որ քաղաքի փողոցներից մեկը կոչվում էր Հայկական:

Երուսաղեմի հայ բնակչությունը ավելացել է XI դ. վերջին - XII դ. սկզբին, երբ քաղաքը նվաճել են խաչակիրները, որոնց բանակում կային հայեր Կիլիկիայից ու Սիրիայից: Եվրոպական աղբյուրներում կան հիշատակություններ, որ հայերը բնակվում էին ոչ միայն Երուսաղեմում, այլև Պաղեստինի այլ քաղաքներում ևս: Հայ հոգևորականների թիվը հասնում էր 500 հոգու, իսկ աշխարհիկ հայերը կազմում էին շուրջ հազար ընտանիք:

Արաբական, ապա թուրքական նվաճումներից հետո Երուսաղեմում հայ համայնքը պահպանվել է, սակայն հայերի թիվը՝ նվազել: Առաջին համաշխարհային պատերազմից հետո շատ հայ փախստականներ Կիլիկիայից և Թուրքիայից ապաստան են գտել այստեղ: Հայերի թիվը Երուսաղեմում և այլ քաղաքներում կազմել է մոտ 20 հզ. մարդ: Երբ 1948 թ. Պաղեստինի տարածքը բաժանվել է նորաստեղծ Ի-ի պետության և Հորդանանի միջև, իսկ հետո էլ սկսվել են արաբա-իսրայելական պատերազմները, հայերի մի զգալի մասը լքել է երկիրը: Այժմ Ի-ում բնակվում է շուրջ 3 հզ. հայ, հիմնականում Երուսաղեմում, նաև Թել Ավիվում, Հայֆայում և այլուր:

Ի-ի հայ համայնքի կենտրոնը Ս. Հակոբ վանքն է՝ մատենադարանով (ուր պահվում է մոտ 4 հզ. հիմնականում հայերեն ձեռագիր), թանգարանով: 1843-ից գործում է Ժառանգավորաց վարժարանը, որը հոգևոր ուսումնական հաստատություն է, Թարգմանչաց ուսումնարանը, 1883 թ. հիմնվել է Երուսաղեմի առաջին հայկական տպարանը: 1883 թ-ից ընդմիջումներով հրատարակվում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնական օրգան «Սիոն» կրոնական-գրական ռանդեսը, տարբեր տարիների Երուսաղեմում հրատարակվել են 12 անուն հայերեն թերթ և ամսաթերթ: Համայնքում գործում են Հայ երիտասարդական միությունը (հիմնվել է 1923 թ.), ՀՄԸՄ-ը (1935 թ.)՝ իրենց ակումբներով:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Իսրայելի Պետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ԻՏԱԼԻԱ**, Իտալական Հանրապետություն, պետություն Եվրոպայի հարավում

Մայրաքաղաքը՝ Հռոմ
Տարածքը՝ 301,225 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 57,7 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 3000

Ի-ի տարածքում հայերի ներկայության մասին հավաստի տեղեկություն-

ները VI_VII դդ-ից են: Գերմանական ցեղերի դեմ պատերազմող բյուզանդական բանակի կազմում եղել են հայեր, իսկ Ի-ի փոխարքայի պաշտոնը բազմիցս վստահվել է հայազգի զորահրամանատարների (Նարսես Պատրիկ, Իսահակ Հայկազն): Փոխարքաների նստավայր Ռավեննա քաղաքի կայազորի զբաղեցրած շրջանը կոչվել է «Արմենիա»: Ուշագրավ է նաև, որ X_XI դդ. իտալացիների կողմից «սուրբ» հռչակված հոգևորականների թվում նշվում են և հայեր՝ Դավինո Արմենո, Սիմեոն Հայ: Ի-ում համեմատաբար կայուն հայ համայնքներ կազմավորվել են XII դ., երբ 9 քաղաքներում գործել են տասից ավելի հայկական եկեղեցիներ: XIII դ. սկզբին Կիլիկիայի հայոց թագավոր Լևոնի և Ջենովայի, Վենետիկի, Պիզայի և այլ քաղաքների միջև կնքված առևտրական պայմանագրերով Կիլիկիայից (ինչպես նաև Ի-ի հետ սերտորեն առնչվող Ղրիմից) Ի. են տեղափոխվել հայ առևտրականներ ու նավաստիներ: XIII_XIV դդ. շուրջ 40 հայկական եկեղեցի ու մենաստան են հիշատակվում Ի-ի քաղաքներում:

XVII դ., պայմանավորված Հայաստանի տարածքում մղվող թուրքպարսկական պատերազմներով ու դրանց հետևած արտագաղթով և, մյուս կողմից, Արևելքի՝ Եվրոպայի հետ առևտրի մեջ հայ վաճառականների դերի մեծացմամբ, Ի-ի հայ համայնքները վերստին աշխուժացել են: 1582_1610 թթ. Իրանից Ի. ուղարկված վեց պատվիրակությունների ղեկավարներն էլ եղել են հայ խոջաներ: Տոսկանայի մեծ դուքս Ֆերդինանդ I-ը 1591 թ. մի հրովարտակով հայերին հրավիրել է Լիվոռնո՝ առևտրական գործերով: Համաձայն վավերագրերի, XVI_XVIII դդ. Վենետիկում առևտրական պաշտոնական գործարքներին մասնակցել են ավելի քան երկու հազար հայ առևտրականներ: Ի-ում հայերն աչքի են ընկել նաև որպես նավաստիներ, նավաշինարարներ, նավապետներ (Անտոն Սուրյանը պատրաստել է ծովի հատակից խորտակված նավեր բարձրացնող սարքավորում): Հայ մշակույթի նշանավոր երևույթներից մեկը տեղի է ունեցել Վենետիկում. 1512 թ. տպագրիչ Հակոբ Մեղապարտը տպագրել է հայերեն առաջին գիրքը: Այնուհետև գրքեր են տպագրվել Ֆերրարայում, Հռոմում, Միլանում, Լիվոռնոյում, Պավիայում, Պադուայում:

1717 թ-ից Վենետիկի Ս. Ղազար կղզում հաստատվել է Մխիթարյան միաբանությունը, որն առ այսօր ծավալում է գիտական, գրական ու կրթական լայն գործունեություն: Միաբանությունում են գործել նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացին, Միքայել Չամչյանը, Ղևոնդ Ալիշանը: 1836 թ-ից Վենետիկում գործում է Մուրադ-Ռափայելյան վարժարանը, 1883 թ-ից՝ Հռոմի Լևոնյան հայ վարժարանը (կաթոլիկ):

Առաջին հայերեն պարբերականը Ի-ում լույս է տեսել 1799 թ., 1843 թ-ից անընդմեջ հրատարակվում է «Բազմավեպ» ամսագիրը:

1915 թ. եղեռնից հետո Ի-ի հայ գաղութը չի ստվարացել. 1920_30-ական թթ. հայերը կենտրոնացել են Հռոմ, Բարի (ուր 1913 թ. հիմնվել է «Նոր Արաքս» թաղամասը), Թուրին, Միլան, Վենետիկ, Բոլոնիա քաղաքներում: Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939_45) նախօրեին իտալահայ համայնքը (առևտրականներ, գործարանատերեր, բժիշկներ, մտավորականներ) դարձել է ավելի կազմակերպված, տնտեսապես և մշակութապես ավելի բարեկեցիկ, ստեղծվել է Իտալիայի հայոց միությունը, որի կանոնադրությունը պաշտոնապես վավերացրել է Ի-ի կառավարությունը 1955 թ.: Միության հավաքատեղին՝ «Հայ տունը», Միլանում է: 1958 թ-ից Միլանում գործում է Ս. Քառասնից մանկանց հայկական առաքելական եկեղեցին: Գործում են նաև հայ առաքելական եկեղեցու հոգաբարձությունը, Իտալիայի հայ մշակութային միությունը, ՀԲԸՄ և ՀՄԸՄ Ի-ի մասնաճյուղերը, Եվրոպայի հայ ուսանողների միությունը (ԵՀՈՒՄ), «Պո-Արաքս» մշակութային ընկերակցությունը, Հայ դատի հանձնախումբը, Հայ մշակույթի ուսումնասիրման և վավերագրման կենտրոնը (նախագահ՝ Ա. Ալպագո Նովելլո), 1992 թ. Վենետիկում հիմնադրվել է «Իտալիա-Արմենիա» ընկերակցությունը (նախագահն է պրոֆ. Մարիո Նորդիոն): 1968 թ. Արմեն և Հակոբիկ Մանուկյան եղբայրները հիմնել են «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարը: Բոլոնիայի և Վենետիկի համալսարաններում կան հայագիտական ամբիոններ (վարիչներ՝ համապատասխանաբար՝ Գաբրիելա Ուլուհոճյան և Լևոն Զեքիյան), Միլանի պետական համալսարանում հայերեն լեզվի դասընթաց (ղեկավար՝ Պայքար Սվազլյան): Ի-ի հայ գիտնականների, մտավորականների ջանքերով Ի-ում կազմակերպվել են գիտաժողովներ՝ նվիրված հայ մշակույթին, ճարտարապետությանը, հայ շարժանկարների փառատոներ, նկարիչների ցուցահանդեսներ ևն: Ի-ի հայ համայնքը (1994 թ. շուրջ 3000 մարդ) իր մեծ օգնությունն է ցույց տալիս նորանկախ Հայաստանին և մարտնչող Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Իտալական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



## ԻՐԱՆ, Իրանի Իսլամական Հանրապետություն, պետություն Արևմտյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Թեհրան
Տարածքը՝ 1648 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 55 մլն (1991)
Հայերի թիվը՝ 180 հզ.

Հազարամյակների ընթացքում երկու հարևան երկրներ՝ Ի. և Հայաստանը ունեցել են մշտական քաղաքական, տնտեսական և մշակութային շփումներ: Հայտնի է նաև, որ, որպես բնիկներ, հայերը հնագույն ժամանակներից ապրել են Ատրպատականում և Պարսկահայքում. այդ տարածքները հայկական պետականության անկումից հետո մտել են Ի-ի կազմի մեջ: Տարբեր դարերում տեղի է ունեցել նաև հայերի զանգվածային բռնագաղթ Ի.: 1604_05 թթ. Ի-ի շահ Աբբաս I-ը շուրջ 300 հզ. հայերի Արևմտյան և Արևելյան Հայաստանից բռնագաղթեցրել է Ի.:

Նրանցից Ի-ի ներքին նահանգներ են հասել շուրջ 60 հզ., բնակեցվել են Ի-ի մայրաքաղաք Սպահանում, Էնզելի, Շիրազ, Կաղզվին, Համադան քաղաքներում: Սպահանի մերձակայքում հայերը հիմնեցին Նոր Ջուղա քաղաքը, որի բնակիչների թիվը շուտով հասել է 30_35 հզ. մարդու: Հենց XVII դ. էլ Ի-ում ձևավորվել է հայկական խոշոր գաղութ, որը զգալի դեր խաղաց երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

Սակայն հայերի վիճակը Ի-ում կայուն չի եղել: Իրանա-թուրքական հաճախակի պատերազմները, ներքին երկպառակությունները աղետաբեր ազդեցություն են գործել հայերի դրության վրա: XVIII դ. իրանահայ բնակչության մի մասը ստիպված է եղել լքել երկիրը (գաղթել են Հնդկաստան, Արևելքի այլ երկրներ), անկում է ապրել երբեմնի բարգավաճող առևտրական կենտրոն Նոր Ջուղան:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց (1828 թ.) հետո իրանահայերը իրավունք են ստացել տեղափոխվել Արևելյան Հայաստան (Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների տարածքը). շուրջ 45 հզ. իրանահայեր, հիմնականում Ի-ի հյուսիս-արևմտյան նահանգներից, արտագաղթեցին Ի-ից: XIX դ. կեսին արդեն նկատելիորեն նվազեց հայ բնակչության թվաքանակը. այն կազմում էր 30_35 հզ. մարդ: Սակայն հետագայում հայերի թիվը վերստին աճեց և հասավ 80 հզ. մարդու, որոնց մեծ մասն ապրում էր գյուղական վայրերում (Սալմաստ, Ղարադաղ և այլ գավառներ), մնացածները՝ քաղաքներում (Թավրիզ, Սպահան, Թեհրան, Համադան ևն):

Ի-ի հայ համայնքի թվաքանակի և կառուցվածքի զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել XX դ.: Մինչև երկրորդ աշխարհամարտը իրանահայերի թիվը դանդաղ աճել է, հասել 110 հզ-ի: Պատերազմից հետո 20 հզ. իրանահայեր հայրենադարձվել են Խորհրդային Հայաստան: Իրանահայերի թիվը կտրուկ աճել է ի հաշիվ Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած հայերի: 1978_79 թթ. հեղափոխության նախօրյակին Ի-ի հայ գաղութն ուներ 200 հզ. բնակիչ: Սակայն երկրում հեղափոխությունից հետո և հատկապես Իրանի և Իրաքի միջև պատերազմի հետևանքով ստեղծված ծանր տնտեսական և քաղաքական կացության պատճառով հազարավոր հայեր լքել են Ի., տեղափոխվել հիմնականում ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Շվեդիա և այլ երկրներ: Այժմ Ի-ի հայերը (շուրջ 180 հզ.) բնակվում են գլխավորապես քաղաքներում:

Մինչև XVII դ. Ի-ի հայերը գերազանցապես զբաղվել են երկրագործությամբ, քաղաքաբնակ հայերը՝ առևտրով և արհեստներով: Հայերի գործունեությունը առևտրի բնագավառում հատկապես նշանակալից դարձավ, երբ Նոր Ջուղայի հայ առևտրական ընկերությունները, XVII դ. սկսած, առաջատար դիրքեր գրավեցին Ի-ի տարանցիկ առևտրում, մուտք գործեցին Արևմտյան Եվրոպայի և Ասիայի շուկաներ:

Հայ ոսկերիչների, գորգագործների, կոշկակարների, մուշտակագործների և այլ արհեստավորների արտադրանքը սպառվում էր ոչ միայն Ի-ի ներքին, այլև արտաքին շուկայում:



Ի-ում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում հայերը ներքաշվեցին արդյունաբերական արտադրության ոլորտը: Երկրի արդյունաբերության մի շարք ճյուղերում, հատկապես նավթային արդյունաբերության մեջ, աշխատում են բազմաթիվ հայեր՝ որակյալ բանվորներ, ճարտարագետներ, տեխնիկներ: Մեծ է իրանահայ մտավորականության թիվը՝ բժիշկներ, իրավաբաններ, լուսավորության, գիտության և արվեստի աշխատողներ, որոնց զգալի մասը կրթություն է ստացել Եվրոպայում, ԱՄՆ-ում, նաև Հայաստանում:

Հայ եկեղեցին Ի-ում ունի երեք թեմ՝ Ատրպատականի, Թեհրանի և Սպահանի. գործում են շուրջ 50 եկեղեցի և վանք, որոնցից առավել հայտնի են Ս. Թադևոս առաքյալի վանքը Ատրպատականում և Ս. Ամենափրկիչ վանքը Նոր Ջուղայում:

Միջնադարում Ի-ի բազմաթիվ հայկական եկեղեցիներին ու վանքերին կից գործել են դպրոցներ: Աշխարհիկ դպրոցները բացվել են XIX դ. կեսին Նոր Ջուղայում (1838 թ.), Թավրիզում (1835 թ.), Թեհրանում (1870 թ.): Այժմ Ի-ում գործում է 43 հայկական դպրոց (33-ը՝ Թեհրանում):

Իրանահայ առաջին պարբերականը՝ «Շավիղ» թերթը, լույս է տեսել Թեհրանում, 1894 թ.: Առ այսօր Ի-ում լույս են տեսել շուրջ 80 անուն հայերեն թերթեր ու ամսագրեր. այժմ հրատարակվում են «Ալիք», «Առաքս» թերթերը, «Գրական հանդիպում» հանդեսը ևն:

Իրանահայ գաղութն աչքի է ընկել հասարակական-քաղաքական աշխույժ կյանքով: XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրանահայերը բազմապիսի օժանդակություն են ցույց տվել արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարին: Ի-ում ստեղծվել են հայկական քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպություններ, որոնցից պաշտոնապես իշխանությունների կողմից ընդունված էր ՀՀԴ կուսակցությունը: 1936 թ. Թեհրանում կազմակերպվել է ՀԲԸՄ Ի-ի մասնաճյուղը:

Եկեղեցու և դպրոցի հետ մեկտեղ իրանահայերի ինքնատիպության պահպանմանը նպաստում է բազմաթիվ մշակութային, մարզական ընկերությունների, միությունների, ակումբների գործունեությունը: Հայկական թատրոնը Ի-ում ստեղծվել է XIX դ. վերջին և ներկայացված է մի քանի սիրողական և պրոֆեսիոնալ խմբերով: Գործում են նաև երգչախմբեր, արվեստի գործիչների միություններ, նկարիչների ընկերություններ:

Իրանահայերից նշանավոր են դիվանագետ, հրապարակախոս Հովհաննես Մասեհյանը (1864_1931), որը հայտնի է նաև որպես Շեքսպիրի երկերի թարգմանիչ, պետական գործիչ, դիվանագետ Հովսեփ Մելքումյանը (1833_1906), հայ ազգային-ազատագրական շարժման և 1905_11 թթ. իրանական հեղափոխության գործիչ Եփրեմ խանը (Եփրեմ Դավթյանը) և այլք: Մշակույթի գործիչներից առավել հայտնի են նկարիչ Բոգդան Սալթանովը (XVII դ.), երգահաններ Նիկոլ Գալանտերյանը և Լևոն

Գրիգորյանը, երգիչ Աշոտ Պատմագրյանը և ուրիշներ:

Իրանահայ գաղութը զգալի օգնություն ցուցաբերեց 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին. աղետի գոտի ուղարկեց փրկիչների ջոկատ, մթերք, դեղորայք, իր մոտ ընդունեց Հայաստանի որբ երեխաներին: Ի-ի հայ համայնքը ամեն կերպ օժանդակում է Ի-ի և Հայաստանի միջև բազմաբնույթ կապերի ընդլայնմանը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԻՐԱՔ, Իրաքյան Հանրապետություն, պետություն Առաջավոր Ասիայում

Մայրաքաղաքը՝ Բաղդադ
Տարածքը՝ 434,9 հզ. կմ²
Բնակչությունը՝ 14,6 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 20_22 հզ.

Հայերն Ի-ում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներում: Սակայն հայ համայնքը Ի-ում հիմնականում ձևավորվել է Աբբասյան խալիֆայության շրջանում (VIII_XIII դդ.), սկսել է ստվարանալ XVII դ. սկզբին, երբ Ի. են եկել Իրանի շահ Աբբաս I-ի բռնագաղթով տեղահանված և Թուրքիայից հալածված բազմաթիվ հայեր: 1920-ական թթ. Ի-ում ապաստան է գտել շուրջ 90 հզ. հայ: Հետագա արտագաղթերի, հայրենադարձության և իրանա-իրաքյան պատերազմի պատճառով հայերի թիվը նվազել է և այժմ (1994 թ.) շուրջ 20_22 հզ. է: Իրաքահայերը բնակվում են հիմնականում Բաղդադում, Բասրայում, նաև Մոսուլում, Կիրկուկում, Խանաքինում, Հաբբանիայում: Զբաղվում են առևտրով և արհեստներով, կան նաև բժիշկներ, ճարտարապետներ, ինժեներներ, պետական ծառայողներ: Համայնքը ղեկավարում են Առաջնորդարանը և Ազգային կենտրոնական վարչությունը, որին կից գործում են կրթական, ազգային կալվածքները վերահսկող, եկեղեցական հանձնաժողովները: Գործում են 2 եկեղեցի (Բաղդադում՝ Ս.Գրիգոր Լուսավորիչ, և Բասրայում), դպրոցներ Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Կիրկուկում, ՀԲԸՄ և ՀՄԸՄ Ի-ի մասնաճյուղերը, Հայ երկսեռ երիտասարդաց միությունը, «Կոմիտաս» երգչախումբը: Տարբեր տարիներ Բաղդադում լույս են տեսել «Փունջ» (1890_92), «Տիգրիս» (1922_23), «Գոյամարտ» (1948_59) պարբերականները: Այժմ լույս է տեսնում միայն «Մաշտոց» տարեգիրքը:

## ԼԱՏՎԻԱ, Լատվիայի Հանրապետություն, պետություն Արևելյան Եվրոպայի հյուսիս-արևելքում

Մայրաքաղաքը՝ Ռիգա



Տարածքը՝ 64,5 հզ. կմ²
Բնակչությունը՝ 2,6 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 1500

Հայ-լատվիական առնչությունները սկզբնավորվել են Ռուսական կայսրության ոլորտում: XIX դ. վերջին Լ-ում հետաքրքրություն է առաջացել հայերի և հայ գրականության նկատմամբ: Լատիշերեն են թարգմանվել Րաֆֆու, Վրթանես Փափազյանի, Արշակ Չոպանյանի ստեղծագործություններից: 1901 թ. բանաստեղծ Յան Ռայնիսը հոդված է գրել Հայաստանի պատմության, գրականության ու մշակույթի մասին: Հայ-լատվիական գրական, մշակութային, տնտեսական կապերը առավել սերտացել և զարգացել են Խորհրդային Միության կազմում:

1941_45 թթ. պատերազմի ժամանակ զորապետ Հովհաննես Բաղրամյանը որպես Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, իրականացրել է Ռիգայի, Լիեպայայի, Ելգավայի, Տուկումսի ազատագրման գործողությունները:

Հայերը մտավորականներ են, արհեստավորներ, առևտրականներ, հիմնականում բնակվում են Ռիգայում: 1988 թ. հիմնվել է Լատվիա-Հայաստան ընկերությունը: Ռիգայում գործում է կիրակնօրյա հայկական դպրոց:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Լատվիայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԼԵՀԱՍՏԱՆ, Լեհական Հանրապետություն, պետություն Կենտրոնական Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Վարշավա
Տարածքը՝ 312,6 հզ. կմ²
Բնակչությունը՝ 38,9 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 12 հզ.

Լ-ում հայկական առաջին գաղթավայրերը ձևավորվել են XIV դ., երբ Լ-ին են միացվել Գալիցիայի (կենտրոնը՝ Լվով) հողերը, ուր XI դ. գոյություն ունեին հայկական գաղթավայրեր: Ապա Լ-ին է միացվել Պոդոլիան (կենտրոնը՝ Կամենեց-Պոդոլսկ), ուր նույնպես արդեն կային հայկական համայնքներ: XV դ. վերջին, երբ թուրքերը գրավել են Ղրիմը, Լ. են տեղափոխվել շատ ղրիմահայեր: Հայերի հոսքը Լ. շարունակվել է XV_XVII դդ., երբ Հայաստանը դարձել էր կռվախնձոր Թուրքիայի և Պարսկաստանի միջև: XVIII դ. ընթացքում լեհահայ գաղութը շարունակել է ստվարանալ: Հայերի հոսքը Լ. պայմանավորված էր Լ-ի կենտրոնական իշխանության և առանձին մագնատների բարի վերաբերմունքով, որոնք բարձր էին գնահատում հայ առևտրականներին ու արհեստավորներին համարելով նրանց պետության համար օգտակար տարր, և շնորհում էին հայերին զանազան արտոնություններ: Ոչ մի երկրում, ուր գոյություն են ունեցել հայկական գաղութներ, հայերը չեն ունեցել

այդպիսի լայն ինքնավարություն, ինչպես Լ-ում:

XVI դ. հայ համայնքներ են ձևավորվել Բար, Զոլոչև, Զամոստյե, Տիսմենիցա, Պոդգայցի, XVII դ.՝ Բրոդի, Բերեժանի, Ուման, Սնյատին, Ստանիսլավ (այժմ՝ Իվանո-Ֆրանկովսկ), XVIII դ.՝ Մոգիլև-Պոդոլսկ, Բալտա, Սատոնով (այժմ բոլորը՝ Ուկրաինայի կազմում), Ռաշկով (այժմ՝ Մոլդովայի կազմում) քաղաքներում: Հայերը բնակվում էին նաև խոշոր քաղաքներում՝ Կրակով, Լյուբլին, Վարշավա, Պոզնան, բայց այստեղ ինքնավարություն չեն ունեցել: Ամենահոծ համայնքները Լվովում և Կամենեց-Պոդոլսկում էին: Լեհահայոց թվաքանակը տատանվել է՝ պայմանավորված երկրի տնտեսական ու քաղաքական կացությամբ. ամենամեծ թիվը XVII դ. վերջին էր՝ շուրջ 20 հզ. մարդ:

Հայ համայնքների ինքնավարության ընտրովի մարմիններ էին հանդիսանում որոշ քաղաքներում մագիստրատները (Զամոստյե, Կամենեց-Պոդոլսկ), այլ քաղաքներում՝ դատարանները (Լվով, Բրոդի, Զոլոչև ևն): Բացի դրանից հայերն ընտրում էին ինքնավարության ղեկավարությունը՝ վոյտին և ավագների խորհուրդ:

Լեհահայերի հիմնական զբաղմունքը առևտուրն էր և արհեստագործությունը. երկու բնագավառներում էլ նրանք զգալի հաջողության են հասել և կարևոր դիրք գրավել Լ-ի առևտրի և արտադրության ընդհանուր ծավալում: Հայերն աշխատում էին նաև Լ-ի պետական կառուցվածքներում (դիվանագետներ, թարգմանիչներ), ինչպես նաև լուսավորության ու մշակույթի բնագավառում:

Լեհահայերն ունեին իրենց եպիսկոպոսությունը, որի կենտրոնը գտնվում էր Լվովում. եպիսկոպոսները ենթարկվում էին Ս. Էջմիածնին: XV_XVII դդ. ընթացքում հայերը Լ-ում կառուցել են շուրջ 20 եկեղեցի, որոնցից առավել նշանավոր են Լվովի Մայր տաճարը, Կամենեց-Պոդոլսկի, Ստանիսլավի, Մոգիլև-Պոդոլսկի եկեղեցիները:

Լայն ինքնավարությունը հնարավորություն էր ընձեռում Լ-ի հայերին զարգացնել կրթությունն ու ազգային մշակույթը: Հայկական գաղութներում գործում էին դպրոցներ, հիմնականում՝ ծխական: Լվովում կար հոգևոր ճեմարան (կաթոլիկական): Լվովում, Յազլովեցում, Զամոստյեում ևն կային գրչության կենտրոններ: 1616_18 թթ. Լվովում գործել է հայկական տպարան: Լեհահայերը տվել են մշակույթի երևելի գործիչներ՝ պատմագիր Ստեփանոս Ռոշկա (XVII_XVIII դդ.), պատմաբան Սադոկ Բարոնչ (XIX դ.), բանաստեղծներ Հակոբ և Մինաս Թոքատեցիներ, նկարիչներ՝ հայր և որդի Պավել և Շիմոն Բոգուշներ, մանրանկարիչ Ղազար Բաբերդցի և շատ ուրիշներ:

XVIII դ. վերջին Լ-ի անկախության կորուստով (Լ. բաժանվեց Ռուսաստանի, Ավստրիայի ու Պրուսիայի միջև), ինչպես նաև հայերին պարտադրված կաթոլիկ եկեղեցու հետ ունիայի (միության) հետևանքով, հայերի համար անխուսափելի դարձավ ձուլման, ուծացման ընթացքը: Աստիճանաբար լեհահայերը կորցրին ոչ միայն իրենց լուսավորչական դավանանքը, այլև լեզուն: Հայ համայնքները գրեթե դադարել էին գո-



յություն ունենալ: Հայերի ազգային ինքնագիտակցության որոշ վերելք նկատվեց Թուրքիայում հայերի ցեղասպանությունից (1915_16 թթ.) հետո: Լվովում ստեղծվեց Հայ-լեհական ընկերություն, որը ձգտում էր վերակենդանացնել հայ-լեհական հարաբերությունները, լեհական հասարակայնության շրջանում առաջացնել հետաքրքրություն Հայաստանի, հայ մշակույթի և լեհահայոց պատմության նկատմամբ:

Այժմ (1994 թ.) Լ-ում ապրող շուրջ 12 հզ. հայեր իրենց անվանում են հայկական ծագում ունեցող լեհեր: 1990-ական թթ. սկզբին հիմնականում Հայաստանից և նախկին Միության այլ հանրապետություններից մի քանի հարյուր հայ ընտանիքներ ապաստան են գտել Լ-ում: 1980 թ. Կրակովում ստեղծվել է «Հայ մշակույթի միություն», որի մասնաճյուղերը գործում են Վարշավայում և Գդանսկում: Այդ ընկերությունները ձգտում են արթնացնել լեհահայերի ազգային ինքնագիտակցությունը, նպաստել հայ-լեհական կապերի հարուստ ավանդույթների վերականգնմանը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԼԻԲԱՆԱՆ, Լիբանանի Հանրապետություն, պետություն Հարավ-Արևմտյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Բեյրութ
Տարածքը՝ 10,4 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 2,1 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 120 հզ.

Լ-ի տարածքում հայերը բնակվել են Հայոց արքա Տիգրան Բ Մեծի ժամանակից, երբ այն գտնվել է հայկական պետության կազմում: XII_XIII դդ. հայ համայնքներ են հիշվում Տրիպոլիում, Սայդայում: Հետագայում Լ-ի հայ համայնքը ստվարացել է XVII_XIX դդ. թուրքական հալածանքներից փախած հայերի հաշվին: Լ-ի ժամանակակից հայ համայնքը ձևավորվել է առաջին աշխարհամարտի և հետագա տարիներին (1920_30-ական թթ.): 1970-ական թթ. Լ-ում բնակվում էր շուրջ 250 հզ. հայ: Սակայն Լ-ում ծավալված քաղաքացիական պատերազմի և իսրայելական ագրեսիայի հետևանքով սկսվեց հայերի արտագաղթ, և գաղութի թիվը խիստ նվազեց: Այժմ (1994 թ.) Լ-ում բնակվում է շուրջ 120 հզ. հայ, որոնց մեծ մասը կենտրոնացած է Բեյրութում, կան նաև Անթիլիասում, Տրիպոլիում, Զահլեում, Այնճարում: Հայերը զբաղվում են արհեստներով, առևտրով, գյուղատնտեսությամբ, արդյունաբերողներ են, պետական ծառայողներ և պաշտոնյաներ, մտավորականներ (բժիշկներ, ինժեներներ, իրավաբաններ, ուսուցիչներ, արվեստագետներ): Հայ առաքելական համայնքը Լ-ի յոթ գլխավոր համայնքներից է և ունի իրեն հատուկ համայնքային իրավունքներ: Այն իր ներքին գործերը ղե-

կավարում է Ազգային սահմանադրության (1863) հիմունքներով:

Լ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նստավայրն է (Անթիլիաս): Կաթողիկոսարանի հովանավորությամբ գործում են դպրեվանքը, հրատարակչատունը՝ տպարանով, հայ ուսուցիչների պատրաստման և վերաորակավորման հիմնարկը, Ազունիեի Ազգային բուժարանը և «Թռչնոց բույն» որբանոցը: Կաթողիկոսությունը եկեղեցիների միջինարևելյան խորհրդի անդամ է: Բեյրութում են գտնվում հայ կաթոլիկների կաթողիկոսությունը և հայ ավետարանականների Միջին Արևելքի կենտրոնը, որոնց հովանու ներքո գործում են զանազան մշակութային ու բարեգործական միություններ և վարժարաններ: Լ-ի հայ համայնքը ունի 25 գործող եկեղեցի, որոնցից 15-ը՝ առաքելական, 5-ը՝ կաթոլիկ, 5-ը՝ ավետարանական: Գործում են 40 դպրոց, Հայկազյան քոլեջը, Հայագիտական բարձրագույն հիմնարկը, Սիմոնյան և Միսակ Վարժապետյան առևտրական ուսումնարանները:

Լ-ում գործում են բազմաթիվ հասարակական, բարեգործական, մշակութային, մարզական, երիտասարդական, հայրենակցական միություններ, ինչպես հայ ազգային կուսակցությունները (ՀՅԴ, ՌԱԿ, հնչակյան), ՀԲԸՄ, ԼՕԽ (Լիբանանահայ օգնության խաչ), ՀԿԲՄ (Հայ կրթական և բարեգործական միությունը), Ճինիշյան բարեգործական հաստատությունը և Գարակյոզյան հաստատությունը, Համազգային, Թեքեյան և Նոր սերունդ մշակութային միությունները՝ իրենց թատերախմբերով, պարախմբերով ու երգչախմբերով, ՀՄԸՄ և ՀՄՄ՝ իրենց ակումբներով: Լիբանանի երիտասարդական միությունը (ԼԵՄ), Հայ երիտասարդաց ընկերակցությունը (ՀԵԸ) և երեք հարանվանությունների (առաքելական, կաթոլիկ, ավետարանական) երիտասարդական միությունները: Բեյրութում են գտնվում հաճընցիների, մուսալեռցիների, մարաշցիների, ուրֆացիների, յոզղատցիների, ադանացիների, քիլիսցիների (և այլոց, թվով շուրջ 45) հայրենակցական միությունների կենտրոններն ու մասնաճյուղերը: Կան նաև անհատների նախաձեռնությամբ հիմնված թատերախմբեր, երգչախմբեր, պարախմբեր, հրատարակչատներ ու տպարաններ:

Լույս են տեսնում կուսակցությունների գլխավոր օրգաններ՝ ՀՅԴ «Ազդակ», ՌԱԿ «Զարթոնք», հնչակյան «Արարատ» օրաթերթերը, ինչպես նաև 10 անուն այլ՝ գրական, մշակութային, երիտասարդական, մարզական, հոգևոր-կրոնական պարբերաթերթեր: Գործում են ռադիոկայաններ (Բեյրութում): Լիբանանահայերը ստեղծել են ինքնատիպ և առաջադիմական արվեստ, հատկապես ուշագրավ են երաժշտության, նկարչության և քանդակագործության ասպարեզները:

Չնայած պատերազմի ընթացքում կրած դժվարություններին, լիբանանահայությունը շարունակում է մնալ Սփյուռքի ամենահուսալի գաղութներից և կենտրոններից մեկը, սատար կանգնում հայրենիքին և Արցախին՝ հոգեպես և նյութապես:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



ԼԻՏՎԱ, Լիտվայի Հանրապետություն, պետություն Արևելյան Եվրոպայի հյուսիս-արևելքում

Մայրաքաղաքը՝ Վիլնյուս
Տարածքը՝ 65,2 հզ. կմ $^{2}$
Բնակչությունը՝ 3,7 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 2000

Հայ-լիտվական առնչությունները սկսվել են միջնադարից, երբ բազմաթիվ հայեր բնակություն են հաստատել միացյալ լեհ-լիտվական պետության մեջ: 1410 թ. Գրյունվալդի ճակատամարտի ժամանակ լեհ-լիտվական դաշնակից զորքերի կազմում կռվել է նաև հայկական ջոկատ: XIX դ. վերջին Լ-ում արձագանքել են Օսմանյան կայսրությունում թուրքերի իրագործած հայկական կոտորածներին՝ լիտվական մամուլում տպագրելով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված հոդվածներ, ընդգծել լիտվացի և հայ ժողովուրդների պատմական ճակատագրերի նմանությունը, թարգմանել են հայ գրողների (Խ. Աբովյան, Րաֆֆի) ստեղծագործություններից:

Հայտնվելով Խորհրդային Միության կազմում՝ Լ-ի և Հայաստանի միջև հաստատվել են տնտեսական, մշակութային կապեր: Լիտվերեն են թարգմանվել ու հրատարակվել հայ գրողների ու բանաստեղծների, ինչպես նաև հայերեն՝ լիտվացի գրողների ստեղծագործությունները. սերտ են եղել հայ-լիտվական երաժշտական հարաբերությունները: 1941_45 թթ. պատերազմի ժամանակ զորապետ Հովհաննես Բաղրամյանը որպես Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար իրականացրել է Մեմելի, Շյաուլյայի օպերացիաները, պատերազմից հետո եղել Մերձբալթյան ռազմական օկրուգի հրամանատարը:

1988 թ. ավերիչ երկրաշարժից տուժած Հայաստանին օգնության են փութացել շատ լիտվացիներ ու հայեր Լ-ից: 1989 թ. Վիլնյուսում հիմնվել է հայ-լիտվական «Գարուն» մշակութային ընկերությունը, գործում է կիրակնօրյա հայկական դպրոց: 1993 թ-ին Լ-ում բնակվում էր մոտ 2000 հայ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև հաստատվել են 1991 թ.:

ԿԱՆԱԴԱ, պետություն Հյուսիսային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Օտտավա
Տարածքը՝ 9976,1 կմ $^{2}$
Բնակչությունը՝ 26,2 մլն (1991 թ.)

Հայերի թիվը՝ 65 հզ.

Հայերը Կ-ում բնակություն են հաստատել դեռևս XIX դ. վերջին: Սակայն Կ-ի հայ համայնքը ձևավորվել և ստվարացել է 1950-ական թթ., երբ Միջին Արևելքում ստեղծված քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով Սիրիայից, Լիբանանից, Թուրքիայից, Հունաստանից, Եգիպտոսից ու այլ երկրներից մեծաքանակ հայեր տեղափոխվել են Կ.: Առաջին աշխարհամարտի տարիներին Կ-ում ապրում էր մի քանի հարյուր հայ, իսկ 1949-ին՝ 1300, 1961-ին՝ 3500, 1979-ին հայերի թիվը հասել է 30000: Այժմ (1994 թ.) Կ-ում հայերի թիվը 65000 է: Հայերը հիմնականում բնակվում են Մոնրեալում և Տորոնտոյում, ինչպես նաև Սեն Քաթրինզ, Համիլտոն, Քվեբեկ, Օտտավա, Վինձոր, Վանկուվեր և այլ քաղաքներում: Նրանք արհեստավորներ են, առևտրականներ, աշխատում են նաև արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, կան մտավորականներ, գիտնականներ, ճարտարագետներ, բժիշկներ, ճարտարապետներ, արվեստի, գրականության և մամուլի բնագավառի աշխատողներ:

1985 թ. ստեղծվել է հայ առաքելական եկեղեցու Կ-ի թեմը, որին ենթակա եկեղեցիները գործում են Մոնրեալում (Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Հակոբ), Տորոնտոյում (Ս. Երրորդություն, Ս. Խաչ, Ս. Մարիամ Աստվածածին), Սեն Քաթրինզում (Ս. Գրիգոր Լուսավորիչ), Վանկուվերում (Ս. Վարդան), ինչպես նաև Համիլտոնում և Օտտավայում, կան նաև հայ կաթոլիկ 2 և ավետարանական 4 եկեղեցիներ: Մոնրեալում և Տորոնտոյում գործում է 7 հայկական ամենօրյա դպրոց, բոլոր հայաբնակ քաղաքներում կան նաև կիրակնօրյա դպրոցներ: Համայնքում գործում են հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ, ՀՕՄ, Թեքեյան, Համազգային, «Նոր սերունդ» մշակութային միությունների մասնաճյուղերը, Կանադահայ միությունը, «Հայ տունը», Պոլսահայերի միությունը, Կանադայի հայ ուսանողների միությունը, երիտասարդական, մարզական, հայրենակցական բազմաթիվ միություններ: 1976 թ. ստեղծվել է «Արմենիա» թատերախումբը: 1975 թ-ից լույս է տեսնում «Ապագա» շաբաթաթերթը (ֆրանսերեն և անգլերեն էջերով):

Կանադահայերից հատկապես աչքի են ընկել բժշկապետ Ջոն Բասմաճյանը, տնտեսագետ Ալեքս Սաֆարյանը, աստղաֆիզիկոս Արշավիր Գյոնջյանը, արդյունաբերող Ջավեն Մեսրոպյանը, պատմաբան Գևորգ Բաղջյանը, լուսանկարիչներ Յուսուֆ Քարշը, Արթին Գավուքը և բազմաթիվ այլ մտավորականներ ու արվեստագետներ:

Կ-ի հայերը մեծ օգնություն են ցույց տվել հայրենիքին. դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կամավորներ են ուղարկել ռազմաճակատ, երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հանգանակություն կազմակերպել հօգուտ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան: 1988-ի աղետալի երկրաշարժից տուժած հայրենակիցներին կանադահայերը ցուցաբերում են մեծ օգնություն, սատար են կանգնում Արցախին:



Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Կանադայի միջև հաստատվել են 1992 թ.:

ԿԻՊՐՈՍ, Կ ի պ ր ո ս ի  Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետություն Արևմտյան Ասիայում, Կիպրոս կղզում

Մայրաքաղաքը՝ Նիկոզիա

Տարածքը՝ 9251 կմ$^2$

Բնակչությունը՝ 700000 (1993 թ.)

Հայերի թիվը՝ 3000

Առաջին հայեր Կ-ում հաստատվել են դեռևս IV_V դդ.: Գաղութը ձևավորվել է VI դ. վերջին, երբ Բյուզանդիայի Մորիկ կայսրը ապստամբ հայերին 578 թ. աքսորել է կղզի: 868_874 թթ. կղզու կառավարիչն էր Ալեքսոս հայ զորավարը, սակայն հայ գաղութը այդ կարճ ժամանակում առաջընթաց չի ունեցել: Հայ գաղութը կրկին աշխուժացել է X դ. վերջին, երբ կղզին վերստին վերագրավել է Բյուզանդիան: 958 թ. կղզու կառավարիչ է նշանակվել Բյուզանդիայի հայ զորավար Վասիլ Հայկազը, 965 թ.՝ Վահրամը: Հայ գաղութը բարգավաճել սկսել է XII դ-ից, երբ Կ-ի Լուսինյանների և Կիլիկյան Հայաստանի թագավորների միջև ստեղծվել են խնամիական կապեր: Կ-ի Լուսինյաններից ոմանք եղել են Կիլիկյան Հայաստանի թագավոր: XII_XIX դդ. Կ-ում հայերը հիմնական բնակիչներից էին. նրանք հիմնել են գյուղեր (հայտնի է Արմենոխորը), Նիկոզիայի «Արմենիա» թաղը, «Հայոց դռները», բազմաթիվ եկեղեցիներ (հայտնի է դեռևս 560 թ. կառուցված Ս. Մակար կամ Կարմիր վանքը): Կ-ում եղել է հայ գրչության օջախ: Ստեղծվել է առաջնորդական թեմ՝ երկու եպիսկոպոսներով (Նիկոզիա, Ֆամագուստա): Հայ գաղութը համալրվել է Կիլիկյան Հայաստանի անկումից (XIV դ.) հետո, սակայն հետագա դարերում նախ մամլուքների, ապա օսմանյան թուրքերի ներխուժումից հետո կղզին հայաթափվել է: XX դ. սկզբին Կ-ում կար մի քանի հարյուր հայ:

Գաղութը ստվարացել է Մեծ եղեռնից և Կիլիկիայի կոտորածներից փրկված շուրջ 7 հզ. հայերի հաշվին: Համայնքը նոսրացել է XX դ. 60-ական թթ., երբ հայերը սկսել են գաղթել Անգլիա, Կանադա, շուրջ 600 հայեր հաստատվել են Հայաստանում: Ինչպես Կ-ի, այնպես էլ հայ համայնքի դրությունը ծանրացել է 1974 թ., երբ թուրքական զորքերը գրավել են կղզու շուրջ 40 %-ը, որը մինչև օրս էլ գտնվում է նրանց տիրապետության տակ: Այժմ հայերի թիվը Կ-ում կազմում է շուրջ 3 հզ., որոնք ապրում են հիմնականում Նիկոզիայում, Լառնակայում, Լիմասոլում, Ֆամագուստայում: Հայերը արհեստավորներ են, մանր և խոշոր առևտրականներ, մտավորականներ (բժիշկներ, ուսուցիչներ), պետական ծառայողներ: Կ-ի հայոց թեմը ենթակա է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը. գործում են երեք առաքելական եկեղեցի՝

Ս.Աստվածածինը (Նիկոզիայում), Ս.Ստեփանոսը (Լառնակայում), Ս.Գևորգը (Լիմասոլում), որոնց կից՝ «Նարեկ» անունով նախակրթական դպրոցներ, 1924 թ-ից գործում է Մելգոնյան կրթական հաստատությունը (հիմնվել է Գրիգոր և Կարապետ Մելգոնյանների կտակած գումարով), Հայ աղքատախնամ մարմինը (1900 թ-ից), ՀԲԸՄ (1912 թ-ից) և ՀՕՄ մասնաճյուղերը (1912 թ-ից), Հայ երիտասարդաց միությունը (1934). գործում են Հայ բարեխնամ ընկերությունը (1960), Համազգային, Թեքեյան մշակութային միությունները: Մելգոնյան վարժարանը 1937_79 թթ. լույս է ընծայել «Այգ» տարեգիրքը, այժմ՝ «Ցոլք» պարբերականը, ունի երգչախումբ: Վարժարանում դասավանդել են Յակոբ Օշականը, Վահան Թեքեյանը, Բարսեղ Կանաչյանը: Նիկոզիայում և Լառնակայում տարբեր տարիների լույս է տեսել 16 անուն պարբերական. այժմ Կ-ում լույս են տեսնում «Կիպրահայ տեղեկատու», «Հայդուկ» և «Տեղեկատու» պարբերականները: Կ-ում գործել են հայկական մի շարք տպարաններ (հայտնի են Ս.Մոստիճյանի, Ս.Կեպենլյանի, Մ.Մաքսուտյան և ընկ., «Սևան»):

Կ-ի հայ համայնքը մշտապես նեցուկ է Հայաստանին և Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Կիպրոսի Հանրապետության միջև հաստատվել են 1922 թ.:

**ԿՈՒԲԱ**, Կուբայի Հանրապետություն, պետություն Վեստ Ինդիայում (Ամերիկա)

Մայրաքաղաքը՝ Հավանա
Տարածքը՝ 110992 կմ²
Բնակչությունը՝ 10,6 մլն (1991 թ.)

Կ-ում հայերը հաստատվել են առաջին համաշխարհային պատերազմից (1914_18) հետո: Դրանք Արևմտյան Հայաստանի գավառներից և Կ.Պոլսից եկած գաղթականներ էին, որոնք ուզում էին անցնել ԱՄՆ: Սակայն ԱՄՆ-ի իշխանությունների հարուցած դժվարությունների պատճառով հայ գաղթականները հարկադրված Կ-ում ապրել են մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի (1939_45) վերջը, երբ նրանց տրվել է ներգաղթի իրավունք: 1920_40-ական թթ. Կ-ում կար շուրջ 500 հայ, որոնք կենտրոնացած էին Հավանայում: Համայնքը ղեկավարում էր Գաղութային միությունը: Գործում էին Մալաթիայի, Տիգրանակերտի, Պաղինի հայրենակցական միությունները, Հայուհյաց միությունը, ՀՕԿ-ի մասնաճյուղը. Հայ առաջադիմական միությունը (որը հիմնվել էր պատերազմի ժամանակ), միջոցներ է հանգանակել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ու կարմիր բանակի օգնության ֆոնդի համար: Գործել է հայկական դպրոց: Այժմ (1994 թ.) Կ-ում հայ համայնք չկա:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Կուբայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



**ՀԱՐԱՎ-ԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**, պետություն Աֆրիկայի հարավում

Մայրաքաղաքը՝ Պրետորիա
Տարածքը՝ 1,2 մլն կմ²
Բնակչությունը՝ 23,4 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 200

ՀԱՀ-ում հայերը բնակություն հաստատել են XX դ. կեսին: Կենտրոնացած են Յոհաննեսբուրգ քաղաքում, կան նաև Քեյփթաունում, Պրետորիայի շրջանում: Նրանց թիվը շուրջ 200 է, մասնագետներ են և առևտրականներ: Համայնքը ղեկավարում է վարչությունը: Գործում է կիրակնօրյա դպրոց, ուր դասավանդում են հայոց լեզու ու պատմություն, երգեցողություն: Համայնքը հովվում է այցելու հովիվը: Գործում է նաև ՀԲԸՄ մասնաճյուղը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Հարավ-Աֆրիկյան Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ**, պետություն Եվրոպայի հարավում (1990 թ-ից Հարավսլավիա են կազմում Սերբիան և Չեռնոգորիան)

Մայրաքաղաքը՝ Բելգրադ
Տարածքը՝ 97170 կմ²
Բնակչությունը՝ 10,5 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 300

Հ-ում հայերի բնակության մասին առաջին հիշատակումները X_XIII դդ-ից են: Մակեդոնիա (այժմ՝ անկախ Հ-ից) են վերաբնակեցվել մեծ թվով պավլիկյաններ, ապա նաև հայ լուսավորչականներ ու քաղկեդոնականներ: Կան տեղեկություններ Բիթոլի և Օխրիդի փոքրաթիվ հայ համայնքների վերաբերյալ. հիշվում է նաև Արմենոֆոր գյուղը: Վիտովնիցա վանքային համալիրի Ս.Հակոբ եկեղեցու (կառուցվել է 1218 թ.) պատի վրա կան սերբերեն և հայերեն շինարարական մակագրություններ: Հայտնի է, որ սերբ արքեպիսկոպոս Սվետի Սավան Արևելքում ճանապարհորդելիս եղել է Հայաստանում և շինարար-վարպետներ է հրավիրել սերբական եկեղեցիներ կառուցելու համար: Ըստ սերբական մի ավանդության, հայերը, որոնք թուրքական զորքի կազմում մասնակցում էին 1389 թ. Կոսովոյի ճակատամարտին, չկամենալով կռվել քրիստոնյաների դեմ, թաքնվել են Սոկոբանյա քաղաքին մոտ Օզրեն լեռան վրա, որտեղ կառուցել են Յերմենչիչ վանքը (1392 թ., պահպանվել է ցայսօր): XIII_XIV դդ. Դուբրովնիկում կար կիլիկեցի հայ վաճառականների փոքրաթիվ գաղութ: Սերբիայի՝ օսմանյան տիրապետության տակ անցնելուց հետո, աճել է հայերի թիվը առևտրական ճանապարհների վրա գտնվող

Նիշ, Պիրոտ, Բելգրադ քաղաքներում: XVI դ. վերջին - XVII դ. սկզբին կազմավորվել է Բելգրադի հայ համայնքը, որն ավստրիական տիրապետության տարիներին ստացել է որոշ արտոնություններ և կառուցել է սեփական եկեղեցի: 1739 թ. ավստրիացիների հեռանալուց հետո, Բելգրադի հայերը տեղափոխվել են Նովի Սադ (Նայսաց), որտեղ կար հայ կաթոլիկական փոքրաթիվ համայնք՝ իր եկեղեցիով, դպրոցով: Նովի Սադի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1746 թ. (1848 թ. հրդեհից հետո, 1872 թ. վերանորոգվել է, սակայն 1965 թ. քաղաքի իշխանությունների որոշմամբ քանդվել է): Հայերը աչքի ընկնող տեղ են գրավել քաղաքի հասարակական-մշակութային կյանքում, ընտրվել քաղաքային խորհրդի մեջ, ստացել ազնվականական տիտղոսներ: 1848 թ. իրադարձություններից (բուրժուական հեղափոխությունները Եվրոպայում) հետո Նովի Սադի հայ համայնքի հոգաբարձությունը Վենետիկի Մխիթարյաններից փոխանցվել է Վիեննայի Մխիթարյաններին. երկար տարիներ համայնքի հոգևոր հովիվն էր ականավոր գիտնական Գաբրիել Մենևիշյանը:

Մեծ եղեռնի տարիներին և հատկապես 1922 թ. Իզմիրի ջարդերից հետո Հ-ում ապաստանել են պոլսեցի և կիլիկեցի հայեր, բնակություն հաստատել Մակեդոնիայում, Սերբիայի քաղաքներում (Բելգրադում, Վրնյաչկա Բանյայում, Նիշում, Կրուշևայում, Զայեչարում, Նեգոտինում, Կնյաժևայում ևն): 1930_40 թթ. Բելգրադում գործել է Հայ մշակույթի տունը: Երկրորդ աշխարհամարտից հետո շատ հայեր արտագաղթել են Հ-ից և, ըստ էության, համայնքային կյանքը գրեթե մարել է:

1988 թթ. աղետալի երկրաշարժից տուժած Հայաստանին օգնության հասավ Հ. և այդ թվում՝ Հ-ի հայերը: 1990 թ. փետրվարին, կոմպոզիտոր, Բելգրադի հեռուստատեսության և ռադիոյի երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագիր, Սերբիայի երաժշտության ակադեմիայի պրոֆեսոր Վարդգես Բարոնյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Սերբահայկական ընկերությունը:

Այժմ (1994 թ.) Հ-ում բնակվում է շուրջ 300 հայ (Բելգրադ, Սկոպյե, Վրնյաչկա, Վալեվո և այլ քաղաքներում):

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Հարավսլավիայի միջև հաստատվել են 1994 թ.:

## ՀՆԴԿԱՍՏԱՆ, Հնդկաստանի Հանրապետություն, պետություն Հարավային Ասիայում

Մայրաքաղաքը՝ Դելի
Տարածքը՝ 33 մլն. կմ²
Բնակչությունը՝ 844 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 300

Հայ-հնդկական առնչությունների մասին տեղեկություններ կան Ք.ա. V_IV դդ-ից: Սակայն Հ-ում առաջին հայ համայնքները կազմավորվել



են XVI դ. և ստվարացել XVII_XVIII դդ. (շուրջ 20_25 հզ. մարդ), երբ բազմաթիվ պարսկահայեր բնակություն են հաստատել Հ-ում: Բնակվում էին Հ-ի շուրջ 20 քաղաքներում և առևտրաավաններում (Ագրա, Կալկաթա, Չինսուրահ, Սեհդաբադ, Սուրաթ, Բոմբեյ, Մադրաս, Մալաբար, Հայդարաբադ, Գվալիոր, Դաքոս, Լահոր, Դելի, Կոչին ևն): Հնդկահայերը վաճառականներ էին, արհեստավորներ, մանր գործավորներ, կային նաև պետական պաշտոնյաներ և մտավորականներ: Համայնքը կազմակերպչորեն ազգային-եկեղեցական էր և ենթարկվում էր Ամենայն հայոց կաթողիկոսությանը: Առաջինը մադրասահայերն են կազմել (1783 թ.) համայնքային կանոնադրություն՝ «Տետրակ, որ կոչի Նշավակ...»: Հ-ի կյանքում առավել նշանակալից դեր են ունեցել խոշոր վաճառականները, որոնք իրականացնում էին Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի, Վենետիկի հետ կատարվող առևտուրը: Հ. թափանցած հոլանդական, անգլիական, ֆրանսիական առևտրական ընկերությունները առավելագույնս օգտվել են հայ վաճառականների ծառայություններից: 1686 թ. Արևելա-հնդկական ընկերության հետ կնքած պայմանագրով հայ վաճառականները անգլիական ազդեցության ոլորտում գտնվող բոլոր երկրներում ստացել են ազատ առևտուր անելու, սեփականություն ձեռք բերելու, պաշտոններ վարելու իրավունք (սակայն հետագայում հայերը դուրս են մղվել ավելի ուժեղ՝ անգլիացի մրցակիցների կողմից):

Հնդկահայերը մասնակցել են Հ-ի ազատագրական պայքարին: 1662 թ. Մալաբարի հայերը հնդիկների կողքին կռվել են պորտուգալական նվաճողների դեմ: 1760_64 թթ. Բենգալիայում անգլիացիների դեմ կռվող հնդկական զորքի հրամանատարն էր Գորգին խանը (Հարությունյան Գրիգոր): XIX դ. առաջին կեսին ծագած հակաբրիտանական գրեթե բոլոր ապստամբություններին հայերը մասնակցել են, և շատերի անուններն են դրվատանքով հիշվում հնդկական տարեգրության մեջ:

Հնդկահայեր Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը, Հարություն Շմավոնյանը մեծ դեր են կատարել հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: 1772 թ. Մադրասում լույս է տեսել Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը, որը կոչում էր հայ երիտասարդությանը սթափվել և զենքի դիմել Հայաստանն օտար լծից ազատագրելու համար, 1773 թ.՝ «Որոգայթ փառաց», որը ապագա հանրապետական Հայաստանի պետական կազմակերպության մի ծրագիր էր: 1806 թ. Մադրասի Ազգային ժողովը հարց է հարուցել Հայաստանի ազատագրության համար դիմել Ռուսաստանի օգնությանը:

Հնդկահայ գործիչները հայ ազատագրական պայքարի հաջողության նախադրյալ էին համարում ազգային մշակույթի զարգացումը: Խոջա Չաքիքենցի ծախքով 1771 թ. Էջմիածնում հիմնվել է առաջին տպարանը, Էդվարդ Ռափայելի և Սամվել Մուրատի միջոցներով՝ Եվրոպայում, Խոջա Յոհանջյան Գերաքյանի միջոցներով Նոր Նախիջևանում հիմ-

նադրվել են դպրոցներ, իր ունեցվածքից տոկոսներ է կտակել դպրոցին Մասեհ Բաբաջանը: XVIII դ. վերջին - XIX դ. դպրոցներ կային հնդկահայ գրեթե բոլոր համայնքներում: 1821 թ. բացվել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը (գործում է ցայսօր), 1846 թ.՝ Ս.Սանդխտյան դպրոցը (հիմնադիր՝ Մեսրոպ Թաղիադյան): 1794 թ. Մադրասում լույս է տեսել հայ մամուլի առաջնեկը՝ «Ազդարարը» (խմբագիր՝ Հարություն Շմավոնյան), և այնուհետև շուրջ 10 պարբերական (հայերեն և անգլերեն) Կալկաթայում: Գործել են մշակութային, բարեգործական ընկերություններ:

XX դ. սկզբին Հ-ում կար շուրջ 2 հզ. հայ, 1980 թ.՝ 450, 1994 թ.՝ 300՝ կենտրոնացած հիմնականում Կալկաթայում և Բոմբեյում: Զբաղվում են առևտրով ու արհեստներով: Գործում են հայկական եկեղեցիներ՝ Ս.Նազարեթ (կառուցվել է 1707 թ.) և Ս. Գրիգոր Լուսավորիչ (Կալկաթայում), Ս.Պետրոս (Բոմբեյում), Ս.Աստվածածին (Մադրասում): Գործում են Հայկական գեղարվեստասիրաց միությունը, Հայկական ընկերությունը, մարզական միության ակումբ, ծերանոց: Վերջին պարբերաթերթը՝ «Նոր ազդարարը», լույս է տեսել Կալկաթայում, 1950_80 թթ. (խմբագիր՝ Զեբեդիա Յունանյան):

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՀՈՐԴԱՆԱՆ, Հորդանանի Հաշիմյան Թագավորություն, պետություն Մերձավոր Արևելքում

Մայրաքաղաքը՝ Ամման
Տարածքը՝ 95,4 հզ. կմ²
Բնակչությունը՝ 4,15 մլն (1994 թ.)
Հայերի թիվը՝ 2000

Հայերը Հ-ում բնակություն են հաստատել վաղ ժամանակներից, դեռևս խաչակիրների օրոք: Սակայն Հ-ի հայ համայնքը ձևավորվել և ստվարացել է 1915 թ. Մեծ եղեռնի ժամանակ, երբ բազմաթիվ գաղթականներ ապաստանել են Հ-ում: 1948 թ. Հ-ում հայերի թիվը շուրջ 8 հզ. էր, 1988 թ.՝ 3 հզ., 1994 թ.՝ 2000: Հայերը հիմնականում բնակվում են Ամմանում, նաև Ակաբա, Զարքա, Իրպիտ, Մատարա և Ռուսեյֆա քաղաքներում: Նրանք արհեստավորներ են (հայտնի են հայ լուսանկարիչները. Ամմանի լուսանկարիչների 3/4-ը հայեր են), առևտրականներ (ոսկերիչ-գոհարավաճառներ), կան մտավորականներ, բժիշկներ, ինժեներներ: Համայնքը համախմբված է եկեղեցու շուրջը, որի հոգևոր պետին նշանակում է Երուսաղեմի հայոց պատրիարքը: Ամմանի Հայկական թաղամասում (Հայ էլ Էրմեն) գործում է Ս.Թադևոս եկեղեցին: Գործում են ՀԲԸՄ, ՀՕՄ, ՀՄԸՄ, ՀՄՄ Հ-ի մասնաճյուղերը, Ազգային մարզական միությունը (Տիկնանց հանձնախմբով), մարզական (բասկետբոլի)



խմբեր, «Մասիս» նվագախումբը: Դպրոցը՝ Ազգային Յուզպաշյան վարժարանն է, գրեթե մարել է հայ կաթոլիկների Սահակ-Մեսրոպ վարժարանը: 1993 թ. սկսել է լույս տեսնել «Անդրադարձ» ամսաթերթը:

Հ-ի հայերը հետևում են Հայաստանում և Արցախում կատարվող իրադարձություններին:

## ՅՈՒՆԱՍՏԱՆ, Հունական Հանրապետություն, պետություն Եվրոպայի հարավ-արևելքում

Մայրաքաղաքը՝ Աթենք
Տարածքը՝ 131,9 հզ. կմ²
Բնակչությունը՝ 10,3 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 15 հզ.

Հայ-հունական առնչությունները գալիս են վաղնջական ժամանակներից: Հույն պատմագիրներից շատերի (Հերոդոտոս, Քսենոփոն և ուրիշներ) երկերում արժեքավոր տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին: Սակայն հունահայ համայնքի առաջացման թվականը դեռևս ճշտված չէ: Հայերը Հ-ում զանգվածային բնակություն սկսել են հաստատել V_VI դդ.: Հայկական պետականության անկման և պարսկա-բյուզանդական պատերազմների պատճառով շատ հայեր ապաստանել են Հ-ում: Բյուզանդական կայսրության (որի մասն էր կազմում Հ.) կայսրերը պետության սահմանները ապահովելու նպատակով VI_VII դդ. բազմաթիվ հայերի (շուրջ 30 հզ.) գաղթեցրել և բնակեցրել են Թրակիայում և Մակեդոնիայում: VIII_IX դդ. Թրակիա են քշվել բազմահազար պավլիկյաններ, որոնք պավլիկյան ուսմունքի տարածողները եղան Հ-ում և, ընդհանրապես, Բալկաններում: Բյուզանդական կայսրության ժամանակաշրջանում (IV_XV դ. 1-ին կես) պետության գերակշռող տարրից՝ հույներից հետո, մեծ կշիռ ունեին հայերը: Նրանք կարևոր դեր են խաղացել Բյուզանդիայի հասարակական,ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում: Բազմաթիվ հայեր եղել են VII դ. ստեղծված բյուզանդական ռազմական շրջանների բանակաթեմերի զորավարներ: 867 թ. կայսր դարձած Վասիլ I հիմնել է Մակեդոնական (Հայկական) արքայատոհմը, որի ժամանակաշրջանը բնութագրվում է որպես Բյուզանդիայի պատմության ամենափայլուն շրջանը: Վաղ միջնադարում բազմաթիվ հայեր կրթվել են Բյուզանդիայի մշակութային կենտրոններում (Աթենք, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Տրապիզոն): Հունարենից հայերեն թարգմանվել են եկեղեցական, փիլիսոփայական, պատմական երկեր, Հայաստանում ծավալվել է հունաբան դպրոցը: Հայ մտավորականներից շատերը նպաստել են Բյուզանդիայի հոգևոր կյանքի զարգացմանը. 858_867 թթ. և 877_886 թթ. Կոստանդնուպոլսի պատրիարքությունը վարել է նշանավոր գիտնական հայազգի Փոտը, որի աշակերտներ Կիրիլոսը և Մեթոդիոսը կեսար Վարդաս Մամիկոնյանի հանձնարարու-

թյամբ լուսավորչական գործունեություն են ծավալել սլավոնական երկրներում:

Կիլիկիայում հայկական պետականության ստեղծումից հետո, XI_XII դդ. բազմաթիվ հունահայեր գաղթել են Կիլիկիա, որի հետևանքով հունահայ համայնքը նվազել է: 1453 թ., երբ օսմանյան թուրքերը գրավել են Կ.Պոլիսը, հայկական փոքր համայնքներ՝ էին պահպանվել միայն Կ. Պոլսում և Թրակիայում:

Հունահայ գաղութը կրկին բազմամարդ է դարձել XVII_XVIII դդ.՝ թուրքական բռնատիրությունից խուսափած հայերի հաշվին: 1737 թ. հիշատակվում են Թրակիայի և Մակեդոնիայի շուրջ 30 բնակավայրեր (Սալոնիկ, Սերե, Քսանթի, Կավալլա, Դիդիմոտիկոն ևն), ուր կային հայկական համայնքներ: Մխիթար Սեբաստացին, մինչև Վենետիկի Ս.Ղազար կղզի տեղափոխվելը, 1701_15 թթ. իր աշակերտներով հաստատված էր Հ-ի Մորեա թերակղզու Մեթոն բերդաքաղաքում: Հունահայ գաղութի համար մեծ էր Հ-ի անկախություն ստանալու (1829 թ.) նշանակությունը, որից հետո հայերի նոր հոսք է սկսվել Հ.: Զանգվածային գաղթ է սկսվել XIX դ. վերջից և շարունակվել Մեծ եղեռնի և հատկապես 1919_22 թթ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ: 1923 թ. Հ-ում հայ գաղթականների թիվը հասել է 80 հզ-ի (որից շուրջ 10 հզ. որբեր): Հետագա տարիներին արտագաղթի և հայրենադարձության հետևանքով հունահայերի թիվը նվազել է: 1994 թ. Հ-ում բնակվում էր շուրջ 15 հզ. հայ, կենտրոնացած են Աթենքի և Պիրեայի շրջաններում, նաև Մակեդոնիայում՝ հատկապես Սալոնիկում, Թրակիայում, Կրետե կղզում (այստեղ X դարից գործում է Եվրոպայում ամենահին հայկական եկեղեցին) ևն: Զբաղված են արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, արհեստավորներ են, առևտրականներ, մտավորականներ: Համայնքը ղեկավարում է Ազգային վարչությունը (որին ենթակա են Տնտեսական և Ուսումնական խորհուրդները): Ամեն շրջան ունի իր եկեղեցին՝ առանձին հովիվներով և թաղային խորհուրդներով: Գործում են ութ եկեղեցիներ (70-ամյա պատմություն ունի Աթենքի արվարձան Ֆիքսի Ս.Կարապետ եկեղեցին)՝ 4 առաքելական, 2 կաթոլիկ և 2 ավետարանական, 3 դպրոց (այդ թվում՝ Սոֆի Հակոբյան երկրորդական վարժարանը), հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ, ՀՄԸՄ, Հայ Կարմիր խաչը՝ իրենց մասնաճյուղերով, երիտասարդական և պատանեկան միություններ, Համազգային մշակութային միությունը, Հայ դատի հանձնախումբը, Հայ գթության խաչը, Հաճընի հայրենակցական միությունը, «Արաքս» միությունը: Հրատարակվում են «Նոր աշխարհ», «Ազատ օր», «Դրոշակ» պարբերականները:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Հունական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



ՀՈՒՆԳԱՐԻԱ, պետություն Կենտրոնական Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Բուդապեշտ
Տարածքը՝ 93 հզ. կմ$^{2}$
Բնակչությունը՝ 10,3 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 8000

Հունգարական սկզբնաղբյուրների համաձայն, հայերը Հ-ում սկսել են բնակություն հաստատել X_XI դդ.: XIII դ. Հ-ի մայրաքաղաք Էստերգոմում եղել է հայկական թաղամաս: Ուշագրավ է, որ XIII դ. Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ-ի և Հ-ի թագավոր Անդրաշ II-ի միջև կնքվել է բարեկամության պայմանագիր: XV_XVI դդ. շուրջ 3000 հայ ընտանիք ներգաղթել է Տրանսիլվանիա (մտնում էր Հ-ի կազմի մեջ): Հայերը հիմնել են Գեռլա, Եղիսաբեթուպոլիս (այժմ՝ Դումբըրվեն) հայաքաղաքները, ունեցել են ներքին ինքնավարություն (քաղաքային վարչություն և դատարան, հայ քաղաքապետ), կառուցել են եկեղեցիներ, հիմնել դպրոցներ: Հայերը, որոնց հիմնական զբաղմունքը արհեստներն ու առևտուրն էր, իշխաններից ու թագավորներից ստացել են զանազան արտոնություններ: Լեոպոլդ I-ը հայկական բնակավայրերը հայտարարել է քաղաքներ, Կարլոս VI-ը Գեռլային (1726 թ.) և Եղիսաբեթուպոլսին (1733 թ.) շնորհել է թագավորական ազատ քաղաքի իրավունքներ: 1791 թ. Հ-ի պետական ժողովը, որին մասնակցում էին հայ պատգամավորները 1725 թ-ից, հայերին պաշտոնապես հայտարարել է երկրի լիիրավ քաղաքացիներ: Դարեր շարունակ ապրելով Հ-ում՝ հայերը մասնակցել են Հ-ի պետական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին: Կռվել են երկիրը թուրքական լծից ազատագրողների շարքերում, մասնակցել 1848_49 թթ. հեղափոխությանը (զորավարներ Էռնե Կիշը, Վիլմոշ Լազարը, Յանոշ Ցեցը), որի ճնշումից հետո Ավստրո-Հունգարիայում հայերին սպառնում էր ձուլման վտանգը: Սակայն մի խումբ հայ մտավորականների ջանքերով գաղութն ապրել է մտավոր և հոգևոր զարթոնք, և ձուլման ընթացքը դանդաղել է (1887_1907 թթ. լույս է տեսել «Արմենիա» ամսագիրը՝ հունգարերեն): Հունգարահայ համայնքները որոշ աշխուժացում են ապրել 1915 թ. Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների գալով: 1919 թ. հիմնվել է «Մասիս» ընկերությունը (հրատարակել է «Նոր դար» պարբերաթերթը), 1920 թ.՝ Հունգարիո հայ միությունը: 1945 թ. Բուդապեշտում կառուցվել է հայկական մատուռ: 1987 թ. Բուդապեշտում մի խումբ հայ մտավորականներ հիմնել են «Արմենիա» ընկերությունը: 1994 թ. Հ-ում կար 8 հզ. հայ (որոնցից շատերը հայերեն չգիտեն), նրանք աշխատավորներ են, բժիշկներ, գիտնականներ, իրավաբաններ, ճարտարապետներ, նկարիչներ, դերասաններ, արվեստագետներ ևն: Գործում են Ս.Գրիգոր հայկական եկեղեցին, ակումբ:

Հ-ի հայերն իրենց կարելի աջակցությունը ցուցաբերեցին հայրենիքին 1988 թ. աղետալի երկրաշարժի ժամանակ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Հունգարիայի միջև հաստատվել են 1992 թ.:

## ՂԱԶԱԽՍՏԱՆ, Ղազախստանի Հանրապետություն, պետություն Կենտրոնական Ասիայում

Մայրաքաղաքը՝ Ալմա Աթա
Տարածքը՝ 2717,3 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 16,7 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 20 հզ.

Հայերը Ղ-ի տարածքում թեև բնակություն են հաստատել վաղ ժամանակներից, սակայն նրանց թիվը ստվարացել և համայնքը ձևավորվել է XIX դ. 2-րդ կեսին: Հայերը այստեղ են եկել Ղարաբաղից, Նախիջևանից, Զանգեզուրից: Հաստատվել են Ալմա Աթայում, Կուստանայում, Չիմքենդում: Հայերի թիվը Ղ-ում ավելացել է նաև ի հաշիվ 1937_49 թթ. Հայաստանից և Խորհրդային Միության այլ վայրերից աքսորված, բռնադատված հայերի: Ղ-ում ապրող հայերը արհեստավորներ, բանվորներ, առևտրականներ, մտավորականներ և շինարարներ են: Չնայած իրենց փոքրաթվությանը՝ հայերը նշանակալի դեր են խաղացել Ղ-ի պետական, տնտեսական և մշակութային զարգացման գործում:

Խորհրդային Միությունում ազգամիջյան հարաբերությունների սրման հետևանքով սկսվել է հայերի արտագաղթ Ղ-ից: Այժմ (1994 թ.) ապրում է շուրջ 20 հզ. հայ: Ղ-ում գործում է Հայ մշակութային կենտրոն, Կուստանայում՝ «Էրեբունի» ընկերությունը: Նախատեսվում է հայկական եկեղեցի կառուցել Ալմա Աթայում, որի համար տեղական իշխանությունները հողակտոր են հատկացրել: Եկեղեցուն կից կառուցվելու է նաև հովվատուն, որն ունենալու է սենյակներ կիրակնօրյա վարժարանի համար: 1980_90-ական թթ. շուկայական տնտեսության պայմաններում հայերը հնարավորություն են ունեցել հաջողությունների հասնել առևտրի ասպարեզում. ստեղծել են իրենց պատկանող մի շարք մեծ և փոքր առևտրական ընկերություններ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՂՐՂԸՍՏԱՆ, Ղրղըստանի Հանրապետություն, պետություն Միջին Ասիայում

Մայրաքաղաքը՝ Բիշկեք
Տարածքը՝ 198,5 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 4,2 մլն (1987 թ.)
Հայերի թիվը՝ 4_5 հզ.



Հայերը Ղ-ում հաստատվել են վաղ ժամանակներից, սակայն զանգվածաբար բնակվել են XIX դ. 2-րդ կեսին: Հայերը Ղ. են եկել Արցախից, Զանգեզուրից, Նախիջևանից, Պարսկաստանից: Նրանք հիմնականում արհեստավորներ, առևտրականներ, բժիշկներ, լուսավորության բնագավառի աշխատողներ են, ապրում են Բիշկեքում և կուրորտային քաղաքներում: Հայերը որոշակի նպաստ են ունեցել Ղ-ի տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում: Խորհրդային տարիներին Ղ-ի հայկ. համայնքը մարել է: Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Ղ. դարձավ ինքնիշխան հանրապետություն, և երկրում ստեղծվեց ոչ այնքան կայուն վիճակ, հայերի մի մասը տեղափոխվեց Ռուսաստանի տարբեր բնակավայրեր: Այժմ (1994 թ.) Ղ-ում ապրում է 4_5 հզ. հայ: Համայնքը որոշակի քայլեր է անում՝ սերտացնելու կապը հայրենիքի հետ և ստեղծելու համայնքային կազմակերպություններ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ղրղըստանի Հանրապետության միջև հաստատվել են 1993 թ.:

## ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, պետություն Եվրոպայի հյուսիս-արևմուտքում

Մայրաքաղաքը՝ Լոնդոն
Տարածքը՝ 244,1 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 57,2 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 15 հզ.

Մ.Բ-ում առաջին հայ համայնքները հիմնել են պոլսահայ վաճառականները XIX դ. 30-ական թթ.: XIX դ. կեսին Մանչեստրում, ապա Լոնդոնում հիմնել են առևտրական գրասենյակներ ու գործակալություններ, որոնց թիվը XIX դ. վերջին հասել է 50-ի: Հայերի հոսքը Մ.Բ. ավելացել է առաջին աշխարհամարտից հետո, երբ այստեղ են հաստատվել Թուրքիայից, Իրանից, Կովկասից, Հնդկաստանից գաղթած հայեր: Հայերի ներգաղթը Մ.Բ., հատկապես Լոնդոն, ուժեղացել է XX դ. 2-րդ կեսին, ինչը պայմանավորված էր Եգիպտոսում, Իրանում, Լիբանանում և այլ երկրներում ստեղծված անկայուն քաղաքական կացությամբ: Այժմ (1994 թ.) Մ.Բ-ում ապրում է շուրջ 15 հզ. հայ, որից միայն 350-ը՝ Մանչեստրում: Հայերը հիմնականում մտավորականներ են. բարձրորակ մասնագետներ, գիտահետազոտական ինստիտուտների աշխատողներ, բժիշկներ, իրավագետներ, դասախոսներ, կան նաև ձեռնարկատերեր, բանկի աշխատողներ ևն: Մ.Բ-ի հայ կրոնական համայնքը գլխավորում է հոգևոր առաջնորդը՝ Ս.Էջմիածնի ներկայացուցիչը (պատվիրակ): Հայկական առաջին եկեղեցին՝ Ս.Երրորդությունը, կառուցվել է Մանչեստրում 1870 թ., երկրորդը՝ Ս.Սարգիսը, 1922 թ., Լոնդոնում: Լոնդոնի հա-

յերը վարձակալում են նաև Ս.Պետրոս եկեղեցին:

Գործում են Թաիքայան ամենօրյա վարժարանը և մեկօրյա դպրոցներ:

Մ.Բ-ի համեմատաբար ոչ մեծ հայկական համայնքը միշտ աչքի է ընկել իր հասարակական-քաղաքական կյանքի ակտիվությամբ: XIX դ. վերջից Լոնդոնում գործել է հնչակյան կուսակցության տեղական կազմակերպությունը, 1965 թ. հիմնվել է ռամկավար ազատական կուսակցության կազմակերպությունը: Հայ հեղափոխական դաշնակցությունը ներկայացված է իրեն հարող կազմակերպություններով՝ ՀՕՄ, ՀԱԸՄ և այլն: Գործում են ՀԲԸՄ մասնաճյուղը (1907 թ-ից), Թեքեյան մշակութային միությունը, բարեգործական, երիտասարդական, մարզական միություններ և կազմակերպություններ:

Համայնքի մշակութային կյանքի կենտրոններն են Լոնդոնի Հայ տունը (1962 թ-ից) և Հայ կեդրոնը (1988 թ-ից):

Մ.Բ-ում հայերեն առաջին թերթը՝ «Երկրագունդը», լույս է տեսել 1863_64 թթ. Մանչեստրում (հետագայում հրատարակվել է 20 անուն հայերեն թերթ ու հանդես): Ներկայումս լույս են տեսնում «Էրեբունի» և «Կայծեր» թերթերը, «Տարեգիրքը»:

1988 թ. ավերիչ երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով 1988 թ. հիմնվել է Հայաստանի օգնություն (Aid Armenia) կազմակերպությունը, որի միջոցներով Վանաձորում կառուցվել է մանկական հիվանդանոց Ս.Նարեկ անունով: 1989 թ. Օդեթ Բագիլի ջանքերով ստեղծվել է Հայ-անգլիական ընկերությունը, որի նպատակն է օտար շրջանակներին ներկայացնել հայ մշակույթը, պատմությունը, Հայ դատը: 1992 թ. ստեղծվել է Բրիտանա-հայկական խորհրդարանական խումբ: Համայնքը մարդասիրական օգնություն է ցույց տալիս Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի միջև հաստատվել են 1992 թ.:

## ՄԵՔՍԻԿԱ, Մեքսիկայի Միացյալ Նահանգներ, պետություն Հյուսիսային Ամերիկայի հարավում

Մայրաքաղաքը՝ Մեխիկո
Տարածքը՝ 1958,2 հզ. կմ²
Բնակչությունը՝ 86,2 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 150

Մ-ի հայ գաղութի մասին տեղեկությունները խիստ սուղ են: 1994 թ. Մ-ում բնակվում էր շուրջ 40 հայ ընտանիք՝ կենտրոնացած հիմնականում Մեխիկոյում: Եկել են Միջին Արևելքի երկրներից: Հայերը չունեն հավաքատեղի կամ ազգային որևէ կազմակերպություն: Մ-ում ապրել և մահացել է ծնունդով պոլսահայ բանաստեղծ, թատերագիր և նկարիչ Մկրտիչ Հաճյանը (1915_1985), որը քիմիա է դասավանդել Մեխիկոյի



պետական համալսարանում: Հայտնի են աստղագետ Պարիս Փիշմիշը, քիմիկոս Սիլվա Բյուլբյուլյանը և ուրիշներ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Մեքսիկայի Միացյալ Նահանգների միջև հաստատվել են 1991 թ.:

## ՄՈԼԴՈՎԱ, Մոլդովայի Հանրապետություն, պետություն Հարավ-Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Քիշնև
Տարածքը՝ 33,7 հզ. կմ²
Բնակչությունը՝ 4,3 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 2500

Մ-ի տարածքում հայերը հաստատվել են միջնադարում: Այդ մասին առաջին հիշատակումները XIII դարից են: Հայերը Մ. եկել են Ղրիմից: Հետագայում ևս շարունակվել է հայերի հոսքը Մ. Հայաստանից, Կիլիկիայից, Ղրիմից, Թուրքիայից: XIX դ. 2-րդ կեսին հայերի թիվը Մ-ում հասել է 7 հզ. մարդու:

Հայերը բնակվել են Սուչավա, ուր 1401 թ. հիմնվել է հայկական եպիսկոպոսություն, Յաշ (Յասսի), նաև Բելցի, Բենդերի, Ղովշա (Կաուշան) քաղաքներում: 1792 թ. հայերը հիմնել են Գրիգորիոպոլ քաղաքը:

Մոլդովահայերը զբաղվում էին առևտրով, արհեստներով և երկրագործությամբ: Հայ վաճառականների ձեռքին էր կենտրոնացած Մ-ի արտաքին առևտրի հիմնական ծավալը. ունեին վաճառատներ, կրպակներ և առևտրական ընկերություններ: Հայ արհեստավորների (կոշկակարներ, մուշտակագործներ, դարբիններ, դերձակներ, ժամագործներ) արտադրանքը մեծ պահանջարկ ուներ: XVIII_XIX դդ. ծավալվել է մոլդովահայերի ձեռնարկչական գործունեությունը. նրանց էին պատկանում կաշեգործարաններ, գինու գործարաններ, հացի փռեր: Հայ գյուղացիները ունեին հող, այգիներ, մշակում էին ցորեն, մրգեր, բանջարեղեն:

Սուչավայում և Գրիգորիոպոլում հայերն ունեին ինքնավարության մարմիններ՝ մագիստրատ և դատարան, որոնք պահպանվել են մինչև Բեսարաբիայի Ռուսաստանին միանալը (1812 թ.): Մ-ի հայ համայնքների կառավարման որոշ իրավասություններով էր օժտված Մ-ի հայոց հոգևոր առաջնորդարանը: 1812 թ-ից հետո կազմվել է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը (գործել է մինչև 1918 թ.): Հայկական եկեղեցիներ էին գործում Գրիգորիոպոլում, Քիշնևում, Հնչեշտում և այլ վայրերում, նրանց կից կային ծխական դպրոցներ, Սուչավայից ոչ հեռու Զամկի վանքում կար հայկական հոգևոր դպրոց:

Մ-ի հայերից նշանավոր էին Մ-ի իշխան Իոն Արմենաուլը, որն իշխել է 1572_74 թթ. և զոհվել թուրքերի դեմ մարտում, հասարակական

գործիչ, խոշոր հողատեր Մանուկ բեյ Միրզայանը (1769_1817), որը հայտնի էր իր շինարարական լայն գործունեությամբ. կառուցել է Հնչեշտ (այժմ՝ Կոտովսկ) ավանը, և նրա որդին՝ Օհանես բեյը:

Մ-ի անդամահատման (առաջին համաշխարհային պատերազմից հետո Բեսարաբիան անցավ Ռումինիային) և ապա որոշ մասի խորհրդայնացման (Դնեստրի ձախափնյա տարածքում կազմավորվեց Մոլդավական Ինքնավար Հանրապետությունը՝ Խորհրդային Ուկրաինայի կազմում, 1940 թ. Բեսարաբիան միացվեց Խորհրդային Միությանը, նրա տարածքի մի մասում կազմավորվեց Մոլդավական ԽՍՀ) հետևանքով Մ-ի հայերի ազգային կյանքը փաստորեն կանգ առավ, հայ համայնքները դադարեցին գոյություն ունենալ:

Խորհրդային Միության փլուզումից հետո, 1990-ական թթ. սկզբից սկսվել է Քիշնևի, մասամբ՝ նաև Գրիգորիոպոլի հայ համայնքների վերածնունդը: Քիշնևում ստեղծվել է հայկական մշակույթի «Անի» ընկերությունը (1992 թ.), որի նպատակն է վերականգնել Մ-ի հայության ավանդույթները, հոգ տանել պահպանված հայկական պատմական և ճարտարապետական հուշարձանների մասին: 1993 թ. Քիշնևում վերականգնվել և վերաբացվել է Ս. Աստվածածին եկեղեցին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ, Նիդերլանդների Թագավորություն, ոչ պաշտոնական անվանումը՝ Հոլանդիա, պետություն Արևմտյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Ամստերդամ
Տարածքը՝ 40844 հզ. կմ²
Բնակչությունը՝ 15 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 3000

Հայերը մշտական բնակություն Ն-ում հաստատել են XVII դ. սկզբին մայրաքաղաք Ամստերդամում: XVII դ. կեսին այստեղ բնակվել է 70 հայ ընտանիք (հիմնականում թանկարժեք քարերի և մետաքսի վաճառականներ), որոնք ունեին իրենց շուկան (հայտնի էր «Արևելյան շուկա» անունով): 1660 թ. Մատթեոս Ծարեցին Ամստերդամում հիմնել է հայկական տպարան, 1664 թ-ից այն ղեկավարել է Ոսկան Երևանցին: 1685 թ. Մատթեոս Հովհաննիսյանը հիմնել է նոր տպարան, որտեղ առաջին անգամ տպագրվել է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը (1695 թ.), հայերեն առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացույցը» (1695 թ.), գերմանացի լեզվաբան Յ.Շրյոդերի «Գանձ արամյան լեզուին» աշխատությունը (1711 թ.): 1714 թ. կառուցվել է հայկական եկեղեցի՝ Ս. Հոգի (վերաօծվել է 1989 թ.): XVII դ. վերջին - XIX դ. սկզբին (Նապոլեոնյան արշավանքների ժամանակ) Ն-ի հայ գաղութը անկում է ապրել: Գաղութը վերստին կյանքի է կոչվել նոր ժամանակներում, երբ



1950_80-ական թթ. այստեղ են հաստատվել Ինդոնեզիայից, Թուրքիայից, Իրանից, Հունաստանից տեղափոխված հայեր: 1994 թ. Ն-ում բնակվում էր 3000 հայ, որոնք կենտրոնացած են Ամստերդամում, նաև Ալմելոյում, Լեյդենում, Ռոտերդամում, Հաագայում, Դորդրեխտում, Ամերսֆորտում: Հիմնականում զբաղվում են արհեստներով, առևտրով, մեծ թիվ են կազմում տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատողները, կան ձեռնարկատերեր: Գործում է երկու հայկական առաքելական եկեղեցի՝ Ամստերդամում և Ալմելոյում: Հայ երեխաները սովորում են հոլանդական դպրոցներում, ուր նրանց մայրենի լեզու են ուսուցանում (պետական որոշմամբ) հրավիրված ուսուցիչները: Գործում են «Արարատ» (Ամստերդամում), «Երևան» և «Սևակ» (Ալմելոյում), «Աբովյան» (Լեյդենում, Հաագայում, Ռոտերդամում) մշակութային ընկերությունները, «Անի» հայկական մշակութային տունը (Դորդրեխտում), Հոլանդա-հայկական միությունը (Ամստերդամում):

Ն-ի հայերը իրենց օգնությունն են բերել 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Նիդերլանդների Թագավորության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, պետություն Խաղաղ օվկիանոսի հարավարևմտյան մասում

Մայրաքաղաքը՝ Վելինգտոն
Տարածքը՝ 268,7 հզ. կմ²
Բնակչությունը՝ 3,4 մլն (1991 թ.)

Ն.Զ. հայաբնակ է դարձել երկրորդ համաշխարհային պատերազմից (1939_45) հետո: Սակայն հայտնի է, որ 1880-ական թթ. այնտեղ հաստատվել է մի հայ բժիշկ՝ Սեթ Սամ, որը մեծ ժողովրդականություն է վայելել և նույնիսկ ընտրվել է երկրի Ինքնավար փարչության ներկայացուցիչների ժողովի անդամ: Հայերը մեծ մասամբ մասնագետներ են՝ բժիշկներ, ճարտարագետներ, թարգմանիչներ, սակայն կազմակերպված համայնք չունեն: Հավատացյալները մտնում են Ավստրալիայի հայոց թեմի մեջ, ունեն այցելու հովիվ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Նոր Զելանդիայի միջև հաստատվել են 1992 թ.:

## ՇՎԵԴԻԱ, Շվեդիայի Թագավորություն, պետություն Հյուսիսային Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Ստոկհոլմ
Տարածքը՝ 450,0 հզ. կմ²
Բնակչությունը՝ 8,6 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 4000

Շ-ում հայեր հաստատվել են դեռևս XIX դ. 2-րդ կեսին: Հայտնի է, որ 1887_88 թթ. հայագետ Նորայր Բյուզանդացին Ստոկհոլմում հրատարակել է «Քննասեր» հանդեսը: Սակայն հայ համայնքը Շ-ում կազմավորվել է 1970-ական թթ. սկզբին, ուր հաշվում էր շուրջ 100 հայ (Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից և Թուրքիայից գաղթածներ): Լիբանանյան պատերազմի շրջանում 1976 թ. վերջին, հայերի թիվը հասել է 300-ի, 1979 թ. վերջին՝ 500-ի (Իրանի դեպքերից հետո գաղութն սկսել է արագ համալրվել պարսկահայ տարագիրներով): Հետագա տարիներին ևս հայերի հոսքը Շ. շարունակվել է: Այժմ (1994 թ.) շվեդահայության թիվը 4000 է, որից 2000-ը բնակվում է Ստոկհոլմում և Ուփսալայում, մնացածը՝ Սանդվիքեն, Օքելբու, Վեսթերոս, Սոդերթելե, Վաքսհոլմ, Գոթլանդ և Մալմյո քաղաքներում: Հայերի մեծ մասը աշխատում է գործարաններում, պետական կամ մասնավոր հաստատություններում, կան առևտրականներ:

Գաղութի ազգային կյանքը կազմակերպելու նպատակով 1974 թ. ստեղծվել է Ստոկհոլմի հայ մշակութային միությունը (շվեդահայ անդրանիկ կազմակերպությունը) իր ակումբով, գրադարանով, 1975 թ. նաև Ստոկհոլմի հայկական ֆուտբոլի թիմը, 1980 թ. Ուփսալայում հիմնվել է Նոր Հայկական մշակութային միությունը: Այս միությունները կազմակերպել են հայերենի դասընթացներ, հայկական երգերի ու պարերի ուսուցումներ: 1989 թ. կազմվել են Սանդվիքենում Վանա հայ մշակութային միությունը, Ստոնհոլմում «Արարատ» մշակութային միությունը (հայ մշակութային միություններ են ստեղծվել մի շարք այլ քաղաքներում ևս), 1988 թ. վերջին՝ Ստոկհոլմի հայ կանանց միությունը, գործում են նաև Հայ-շվեդական մշակութային երկու միություններ՝ Ստոկհոլմում և Սոդերթելեում:

Շվեդահայ գաղութի կրոնական կյանքը աշխուժացել է 1976 թ-ից, երբ հայ հոգևորականները տարեկան 1_2 անգամ այցելել են և պատարագ, կնունք կատարել: Ուփսալայում գործում է Ս.Հովհաննես հայկական առաքելական եկեղեցին, 1991 թ-ից՝ Ս. Մաշտոց վարժարանը:

Լույս են տեսնում «Արագիլ» , «Կռունկ», «Մեր կռունկ» (ապա «Բալենի») պարբերականները: 1980 թ-ից Ստոկհոլմում գործում է հայկական ռադիոժամ:

Շվեդահայ գաղութը զգալի օգնություն է ցույց տալիս Հայաստանին ու Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Շվեդիայի Թագավորության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՇՎԵՅՑԱՐԻԱ, Շվեյցարական Համադաշնություն,

պետություն Կենտրոնական Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Բեռն

Տարածքը՝ 41,288 հզ. կմ$^2$



Բնակչությունը՝ 6,7 մլն (1993 թ.)

Հայերի թիվը՝ 5000

Շ. եկած առաջին հայերը (XVII_XVIII դդ.) եղել են առևտրականներ: XIX դ. կեսից Շ. են եկել հայ երիտասարդներ Հայաստանից, Վրաստանից, Ղարաբաղից՝ սովորելու Շ-ի համալսարաններում (Ժնև, Բազել, Լոզան): XIX դ. վերջին - XX դ. սկզբին Շ-ում ապաստան են գտել հայ քաղաքական վտարանդիները: Այստեղ լայն գործունեություն են ծավալել հայ ազգային կուսակցությունների (հնչակյան, հայ հեղափոխական դաշնակցություն) գործիչները, հայ սոցիալ-դեմոկրատները, հրատարակել են մամուլ և քաղաքական գրականություն: 1907 թ. Լոզանի համալսարանի հայ ուսանողները ստեղծել են «Հայաստան» միությունը, իսկ 1914 թ. «Տեղեկատու բյուրո» կազմակերպությունը, որոնք հասարակական-քաղաքական աշխատանք են կատարել հայ երիտասարդության շրջանում, զբաղվել նրա սոցիալական խնդիրներով: 1904 թ. Լոզանում, բարերար Մ.Նալբանդյանի նախաձեռնությամբ, բացվել է գիշերօթիկ դպրոց, որը նախապատրաստում էր հայ երիտասարդներին Շ-ի բուհեր ընդունվելու: 1920-ական թթ. Շ-ի հայ համայնքն ավելացել է ի հաշիվ Թուրքիայից փախած հայերի, 1960_70-ական թթ. այստեղ են տեղափոխվել հայեր Լիբանանից, Իրանից: Այժմ (1994 թ.) Շ-ում բնակվում է շուրջ 5 հզ. հայ (հիմնականում Ժնևում, Ցյուրիխում, Բազելում, Լոզանում, Բադենում ևն), որոնք աշխատում են արդյունաբերության, առևտրի, բանկային գործի, գիտության բնագավառներում. կան ձեռնարկատերեր, բարձրորակ մասնագետներ ևն:

Շվեյցարահայերի ազգային կյանքի կենտրոնը Ժնևն է: Այստեղ է գտնվում Շվեյցարիայի հայոց միության վարչությունը, Շ-ի հայոց թեմի (մինչև 1992 թ.՝ հովվություն) կենտրոնը, Ս.Հակոբ եկեղեցին, որին կից գործում են կիրակնօրյա դպրոց, Հայ կանանց միությունը, Երիտասարդության ակումբը: Գործում է նաև ՀԲԸՄ Շ-ի մասնաճյուղը, Ցյուրիխում կա Հայ մշակույթի կենտրոն: 1975 թ-ից հրատարակվում է «Ցոլք» պարբերականը (հայերեն և ֆրանսերեն), XIX դ. վերջից սկսած ցայսօր Շ-ում հրատարակվել են 10 անուն հայերեն պարբերականներ: Ժնևի համալսարանում գործում է հայագիտության ամբիոն (1920-ական թթ. հայ ժողովրդի և հայոց եկեղեցու պատմություն է դասավանդվել Ֆրիբուրի համալսարանում): Մշակույթի ճանաչված գործիչներ են հայագետ Ռոբերտ Գոդելը, գրող-հրապարակախոս Վահե Գոդելը, դաշնակահար Հայ Վարդանը:

Շ-ի հայ համայնքը զգալի օգնություն ցույց տվեց 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին. նրա միջոցներով Վանաձորում կառուցվել է «Արալեզ» բուժական կենտրոնը՝ հաշմանդամ երեխաների համար: Համայնքը կազմակերպում է Արցախին զորակցելու միջոցառումներ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապե-

տության և Շվեյցարական Համադաշնության միջև հաստատվել են 1992 թ.:

**ՉԻԼԻ,** Չիլիի Հանրապետություն, պետություն Հարավային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Սանտյագո
Տարածքը՝ 757 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 13,1 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 1300

Հայերը Չ. եկել են 1910_20-ական թթ., մասնավորապես 1915 թ. Մեծ եղեռնից փրկվածները: Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939_45) հետո այստեղ հայեր են գաղթել Հունաստանից, Թուրքիայից, Պաղեստինից (արաբախոս հայեր, որոնք միայն կրոնով են կապված հայության հետ), ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից: 1994 թ.Չ-ում հաշվվում էր շուրջ 1300 հայ, որոնք հիմնականում բնակվում են Սանտյագոյում: Մեծ մասամբ արդյունաբերողներ են ու առևտրականներ: Ազգային կյանքը գլխավորում է Հայ Գաղութային վարչությունը, որին կից գործում է Տիկնանց միությունը: Հայերի հավաքատեղին «Հայոց տունն» է, որտեղ գործում է մեկօրյա դպրոց: «Հայոց տան» սենյակներից մեկը վերածված է մատուռի, որտեղ կատարվում են եկեղեցական արարողություններ: Գործում են գրադարան և երգչախումբ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Չիլիի Հանրապետության միջև հաստատվել են 1993 թ.:

**ՉԻՆԱՍՏԱՆ,** Չինաստանի ժողովրդական Հանրապետություն, պետություն Կենտրոնական և Արևելյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Պեկին
Տարածքը՝ 9,6 մլն կմ$^2$
Բնակչությունը՝ 1,2 մլրդ (1991 թ.)

Պատմական աղբյուրների համաձայն Չ-ում հայերը հիշատակվում են II դարից: Դրանք մետաքս և այլ ապրանքներ արտահանող վաճառականներ էին: Հայկական փոքր գաղութներ հիմնվել են մոնղոլական առաջին արշավանքներից (XIII դ. սկիզբ) հետո, երբ Հայաստանից գերեվարած հայերի մի մասը բնակեցվել է Չ-ի հյուսիսային շրջաններում: Այնուհետև հայերը թափանցել են երկրի խորքը, բնակվել ծովափնյա քաղաքներում, հատկապես Կանտոնում, որտեղ մինչև 1307թ. կառուցել են եկեղեցի: XVIII դ. ոչ մեծ հայկական առևտրական տներ են եղել Շանհայում: XIX դ. սկզբին հայերի հոսք է եղել Չ. Հնդկաստանից ու հարևան երկրներից: Նրանք հիմնականում բնակություն են հաստատել Չ-ի արևելքում՝ Խարբին, Մուկդեն, Չանչուն, Դայրեն քաղաքներում: Ամենահայաշատը Խարբինն էր, որի համայնքն ուներ եկեղեցի, ներքին կանոնադրություն, որով առաջնորդվում էին հյուսիս-արևելքում բնակվող հայերը: 1930 թ. Խարբինում ստեղծվել է «Արծիվ» միությունը, Հայ երիտասարդական ակումբը, Հայ տիկնանց միությունը, որոնք կազմակերպել են հավաքներ, հայերենի դասավանդում, ընթերցանություն ևն: 1937 թ. Շանհայում կար 200 հայ, որոնք ունեին հավաքատեղի՝ Հայոց տուն, առանձին դրամատուն: Հայերի սոցիալական կազմը տարբեր էր: Չ-ի հարավում բնակվող հայերը հիմնականում առևտրականներ էին, արևելքում՝ մտավորականներ (բժիշկներ, փաստաբաններ, ինժեներներ), արհեստավորներ: Նշանակալի էր հայ առևտրականների դերը Չ-ի առևտրում (XVII_XVIII դդ.): Նրանք ունեին անգլիացիներին հավասար իրավունքներ, իրենց նավերը, գործարանները (Կանտոնում): Մեծ հեղինակություն են վայելել հայ բժիշկները. Խարբինի առողջապահության գործը ղեկավարել է Ստեփանոս Մուղդեսյանը: Կանտոնաբնակ չինարենի ուսուցիչ Հովհաննես Ղազարյանը անգլերենից չինարեն է թարգմանել «Աստվածաշունչը» (համարվում է չինարեն առաջին և լավագույն թարգմանությունը): Չ-ի հայերը չեն կորցրել կապը հայրենիքի հետ. XVIII դ. չինահայեր Մնացական Ղասաբյանը, Հովհաննես Մաթևոսյանը և այլք գումարներ են կտակել Հայաստանին:

Չ-ի հայ գաղութը զգալիորեն տուժել է ճապոնական հարձակումների ժամանակ: 1950-ական թթ. չինահայերի մեծ մասը գաղթել է. 1980-ական թթ. Չ-ում կային աննշան թվով հայեր, որոնք չունեին կազմակերպված ազգային կյանք:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



**ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ,** Պորտուգալական Հանրապետություն, պետություն Եվրոպայի ծայր հարավ-արևմուտքում

Մայրաքաղաքը՝ Լիսաբոն
Տարածքը՝ 92 հզ. կմ$^2$
Բնակչությունը՝ 10,7 մլն (1992 թ.)

Հայ մատենագրության մեջ պորտուգալացիների մասին հիշատակությունը XII դարից է: Հայերը պորտուգալացիների հետ ծանոթացել են խաչակրաց արշավանքների ժամանակ, երբ Կիլիկյան Հայաստան եկած խաչակիրների մեջ եղել են պորտուգալացիներ և ընդունելության են արժանացել հայերի կողմից, նրանց միջև հաստատվել են առևտրական հարաբերություններ: Տարբեր ժամանակներ պորտուգալացիներ են եկել Հայաստան (XIII դ.) և հայերն են այցելել Պ.: Հայտնի է, որ

1513 թ. Եթովպիայի արքունիքի ներկայացուցիչը՝ Մատթեոս անունով մի հայ դիվանագետ, եկել է Լիսաբոն՝ բանակցելու Պ-ի թագավորի հետ և նրանից զինական օգնություն խնդրելու: Վերադառնալիս Մատթեոսն իր հետ տեղացիներից վերցրել է երկու հայի, ինչը ենթադրել է տալիս, որ XVI դ. Լիսաբոնում ապրել են հայեր: XVI դ. հաստատվելով Հնդկաստանում՝ պորտուգալացիները վերստին հանդիպել են տեղի հայ առևտրականներին և գործուն հարաբերություններ հաստատել: Պ. դարձել է հայ վաճառականների համար առևտրական կարևոր շուկաներից մեկը: XVII դ. հայերեն ձեռագիր մի աշխարհագրության մեջ բավական խոսվում է Պ-ի, նրա ժողովրդի բարեկեցության, երկրի կառույցների, նավահանգիստների և մասին:

Պ-ի մայրաքաղաք Լիսաբոնում է գտնվում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը, որի հիմնադիր մեծահարուստ Գալուստ Կյուլպենկյանը (1869_1955) հաստատվել է Լիսաբոնում և այստեղ էլ կնքել իր մահկանացուն: Գ.Կյուլպենկյանը արվեստի հարուստ թանգարան (շուրջ 3000 նմուշ) է նվիրել Պ-ի մայրաքաղաքին: Պ-ում ապրում են հայեր, որոնք, սակայն, կազմակերպված համայնք չունեն:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Պորտուգալական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՌՈՒՄԻՆԻԱ, պետություն Եվրոպայի հարավում

Մայրաքաղաքը՝ Բուխարեստ
Տարածքը՝ 237,5 հզ. կմ²
Բնակչությունը՝ 23,8 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 6000

Բյուզանդական կայսրության կազմակերպած բռնագաղթերի հետևանքով արդեն V_XII դդ. հայերի հոծ զանգվածներ են բնակեցվել Ռ-ի տարածքում: Ռ-ում հայերի վաղեմի և ստվար բնակության վկայությունն են հայկական բազմաթիվ տեղանունները, երբեմնի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում հայկական թաղամասերի ու փողոցների առկայությունը: Մոտավոր հաշվարկներով հայերի թիվը միջնադարյան Ռ-ում հասել է շուրջ 30 հազարի: Ռ-ի հայերը 1350 թ. Բոտոշանում, 1355 թ. Ռոմանում, 1395 թ. Յաշում (Յասսի) կառուցել են քարաշեն եկեղեցիներ, ունեցել իրենց հոգևոր թեմը, որը 1365 թ. ենթարկվել է Լվովի հայկական եպիսկոպոսությանը: Դարեր շարունակ հայերը Ռ-ի լիիրավ քաղաքացիներ են եղել, մասնակցել քաղաքների շենացմանը, առևտրի, արհեստների զարգացմանը, վայելել առանձնաշնորհումներ, ունեցել իրենց քաղաքապետարանները, դատարանները, վաճառականական, հոգևոր և կտրիճվորաց (պատանիների) եղբայրություններ, առաջնորդվել հայկական օրենքներով: XV_XVII դդ. երկրի ներքին և արտաքին առևտուրը հիմնականում կենտրոնացած էր հայերի ձեռքում, հայկա-



կան կարավանները կոչում էին «կարելե արմենեշտի» (հայկական կառքեր կամ սայլեր): Ռ-ում հայերը խթանել են նաև արհեստների՝ դերձակության, կոշկակարության, արծաթագործության, ժանյակագործության, հրուշակագործության զարգացումը: 1845 թ. Բուխարեստում Գրիգոր Անուշ-օղլուն հիմնել է շոգեաղաց: Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց ասպարեզ են եկել մեծահարուստ հայ վաճառական-արդյունաբերողներ, խոշոր ձեռնարկատերեր (արտադրել են մետաքս, կերպասեղեն, կոշկեղեն, շաքար ևն):

Ռ-ի հայերը հայկական բոլոր կենտրոններում կառուցել են եկեղեցիներ, վանքեր, մատուռներ [Սուչավայում (տեղի հայկական Ս. Օգսենտի կամ Զամկայի վանքը 1401_1686 թթ. եղել է թեմի հոգևոր առաջնորդի աթոռանիստը), Բոտոշանում, Ֆոկշանում, Յաշում, Բուխարեստում, Գալացում, Ռոմանում, Բրիլայում, Սիլիստրայում, Պիտեշտում և այլուր], որոնց կից գործել են դպրոցներ: Առանձին դպրոցներ են գործել Յաշում, Ֆոկշանում, Ռոմանում, Բուխարեստում, Գալացում, Կոստանցայում, Բազարջիկում ևն: 1841 թ. Հակոբ Պըլըգյանի ջանքերով հաստատվել է հայկական գաղութի միասնական կանոնադրությունը, և Ռ-ի իշխան Միհայ Ստուրզայի հրովարտակով հայկական դպրոցներն անցել են պետական հովանավորության տակ, իսկ շրջանավարտներն իրավունք են ստացել ուսումը շարունակել ռումինական բուհերում կամ արտասահմանում:

Ռ-ի Յաշ, Գալաց, Բրիլա, Տուլչա, Բուխարեստ քաղաքներում գործել են տպարաններ, որոնցում տպագրվել են հայերեն գրքեր, շուրջ 50 անուն պարբերականներ (առաջինը՝ «Հայկական տարեցույցները», Գալացում, 1895_99 թթ.):

1922 թ., երբ Ռ-ում բնակվում էր շուրջ 25 հզ. հայ, թեմական պատգամավորական ժողովն ընդունել է համայնքի կանոնադրությունը, որը վավերացրել է ռումինական կառավարությունը 1931 թ.: 1948_55 թթ. Ռ-ի հայոց թեմակալ առաջնորդն էր Վազգեն Պալճյանը (1955_94 թթ.՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա):

Ռ-ի հայերը եռանդուն մասնակցել են երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին, ռումին ժողովրդի օտար նվաճողների դեմ պայքարին: Թուրք հրոսակների դեմ կռվող Շտեֆան Մեծի զորքում եղել են բազմաթիվ հայ զինվորներ: XVI դ. երկրում իշխանությունն անցել է Սերպեգա հայազգի գերդաստանին, որի աչքի ընկնող ներկայացուցիչներն են Յոն Քաջը, Յոն Պոտկովան, Ալեքսանդր Սերպեգան: Իշխան Միհայ Վիտեազուլի (XVI դ.) խորհրդական, հայազգի Արմին Պետերը եղել է նշանավոր դիվանագետ, զորավար, պատմագիր, նկարիչ: Դիվանագետ էր նաև Սուչավայի զորքերի հրամանատար Պետրե Վարդիկը: Նշանավոր դիվանագետ էր Մանուկ Բեյ Միրզայանը, որի իջևանատանը («Հանուլ Մանուկ») կնքվել է 1812 թ. Բուխարեստի պայմանագիրը ևն: Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939_45) ժամանակ Ռ-ի շատ հայեր մասնակցել են հակաֆաշիստական դիմադ-

րության շարժմանը: Խոշոր լուսավորիչ էր Ասաքի Գեորգեն, նշանավոր գիտնականներ Կոնդան, Սպիրու Հարեթը, Պետրե Միսիրը, բժիշկներ Քրիստեա Պուիկլիուն, Յակոբ Յակոբովիչը, ծերաբան Աննա Ասլանը, հոգեբույժ Լեոն Միրախորյանը: Հայտնի են գրողներ Հակոբ Սիրունին, Յոն Բարբուն, Ալեքսանդրու Շահիկյանը, Վարդան Առաքելյանը, Դան Դեշլիուն, Անայիս Ներսիսյանը, դերասան Յոն Պետրեսկուն, երաժշտագետ Էմանուիլ Չոմակը, կոմպոզիտորներ Միհայիլ Ժորան և Մաթեյ Սոկորը, արվեստաբան Գրիգոր Ջամպագճյանը, նկարիչներ Չիկ Տամատյանը, Հրանտ Ավագյանը, երգիչներ Կարպիս Զոբյանը, Դավիթ Հովհաննիսյանը, Էդուարդ Դումաճանյանը, Արաքս Սվաճյանը և ուրիշներ:

1946_48 թթ. շուրջ 3000 ռումինահայ է ներգաղթել Հայաստան: Համայնավարական Ռ-ում ստեղծված անբարենպաստ պայմանների պատճառով շատ հայեր էլ արտագաղթել են ԱՄՆ, Կանադա և այլուր: Այժմ (1994 թ.) Ռ-ում բնակվում է շուրջ 6000 հայ, հիմնականում մտավորականներ են՝ գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, կան և ձեռնարկատերեր: Ռ-ի խորհրդարանում կա 1 հայ պատգամավոր (Վարուժան Ոսկանյան): Հայերը կենտրոնացած են Բուխարեստում, նաև Կոնստանցայում, Պիտեշտում ևն: Գործում են Բուխարեստի Սրբոց Հրեշտակապետաց, Կոնստանցայի Ս. Աստվածածին, Պիտեշտի Ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցիները: Կան կիրակնօրյա մանկապարտեզ և հայերենի դասընթացներ: Գործում են Ռումինահայ միությունը (որը կազմակերպում է համայնքի ազգային կյանքը), Առաջնորդարանին կից գրադարանն ու թանգարանը: Լույս են տեսնում «Նոր կյանք» (հայերեն, խմբագիր՝ Սարգիս Սելյան) և «Արարատ» (ռումիներեն, խմբագիր՝ Վարուժան Ոսկանյան) ամսաթերթերը: Գործում է հայերեն ռադիո և հեռուստաժամ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի միջև հաստատվել են 1991 թ.:

**ՌՈՒՍԱՍՏԱՆ**, Ռուսաստանի Դաշնություն, պետություն Արևելյան Եվրոպայում և Ասիայում

Մայրաքաղաքը՝ Մոսկվա
Տարածքը՝ 17,075 մլն կմ²
Բնակչությունը՝ 147,3 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 1,8 մլն

Արևելյան սլավոնների տարածքում հայերը երևացել են X_XI դդ.: Հայ վաճառականներն առևտուր են արել վոլգյան բուլղարների հետ, նրանցից ոմանք էլ հաստատվել են պետության մայրաքաղաք Մեծ Բուլղարում: Հայկական համայնքն աստիճանաբար ստվարացել է և գոյատևել մինչև XV դ. կեսը, երբ Մեծ Բուլղարը միացվել է Ռ-ին: Աղբյուրների վկայության համաձայն, XI դ. Կիևյան Ռուսիայի մայրաքաղաք Կիևում



գոյություն է ունեցել հայկական համայնք:

Հայերի հոսքը Ռ. ուժեղացել է XIII_XIV դդ., երբ Հայաստանը նվաճել են մոնղոլները: Հայկական գաղութներ են հիմնվել Մոսկվայում (XIV դ.), Նովգորոդում, Կազանում, XVIII դ. Աստրախանում, Հյուսիսային Կովկասում, Ռ-ի նոր մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում: 1778 թ. Ղրիմի խանության գրավումից հետո, տեղի հայ բնակչությունը վերաբնակեցվել է Դոնի գետաբերանի տարածք, ուր նրանք հիմնել են Նոր Նախիջևան քաղաքը (այժմ՝ Դոնի Ռոստովի մաս): Մինչև XVIII դ. սկիզբը հայերը Ռ-ում չունեին ձևավորված համայնքներ կամ ինքնավարության կառույցներ, իսկ հայ-ռուսական հարաբերությունները հիմնականում կրում էին առևտրական և մշակութային բնույթ: Իր տնտեսական շահերից ելնելով՝ Ռ. հովանավորում էր հայ բնակչությանը, դիտելով նրան որպես օգտակար տարր, որի դերը նշանակալից էր կայսրության տնտեսական կյանքում: Դեռևս 1667 թ. արքունիքը Նոր Ջուղայի (Սպահան) հայ վաճառականների ընկերությանը շնորհել է էական արտոնություններ: Արտոնություններ հայկական գաղութներին շնորհել են Պետրոս I, Եկատերինա II, Պավել I թագավորները:

Ռ-ում հայ գաղութների կազմավորումը շարունակվել է նաև XIX դ. ընթացքում. դարի առաջին կեսին հիմնադրվել է Արմավիր քաղաքը Հյուսիսային Կովկասում, հայերը հաստատվել են Ստավրոպոլում, Եկատերինոդարում, Գրոզնիում, Վլադիկավկազում, իսկ XIX դ. 2-րդ կեսին Թուրքիայում արևմտահայերի վիճակի կտրուկ վատթարացման, 1894_96 թթ. հայերի կոտորածների հետևանքով Ռ. են տեղափոխվել բազմաթիվ արևմտահայ փախստականներ: Նրանք հիմնականում հաստատվել են Սև ծովի կովկասյան ափի քաղաքներում՝ Նովոռոսիյսկում, Անապայում, Սոչիում, հիմնել նոր գյուղեր: Արևմտահայ փախստականների մի նոր ալիք է հասել Ռ. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Թուրքիայի կառավարող շրջանները իրագործեցին հայ բնակչության ցեղասպանություն: Կոտորածներից մազապուրծ արևմտահայերի մի մասն ապաստան է գտել Ռ-ի հարավում:

Ռ. հայերի մեծ հոսք է սկսվել 1980-ական թթ. վերջից և հատկապես 1990_94 թթ.: Հարկադրված այս արտագաղթի պատճառները Սումգայիթում (1988 թ. փետրվար) և Բաքվում (1990 թ. հունվար) խորհրդային իշխանությունների կազմակերպած հայերի կոտորածն էր, Ադրբեջանի հայաբնակ վայրերից հայերի բռնագաղթը՝ ղարաբաղյան հիմնախնդրի զարգացման ընթացքում, ինչպես նաև վրաց-աբխազական զինված ընդհարումը և Հայաստանի Հանրապետությունում 1988 թ. աղետալի երկրաշարժի ու շրջափակման հետևանքով ստեղծված տնտեսական ծանր կացությունը: Ադրբեջանից արտագաղթող հայերի հիմնական մասը հանգրվանել է Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Աբխազիայից՝ Կրասնոդարի երկրամասում և Ռոստովի մարզում, Հայաստանից՝ Կրասնոդարում և Ստավրոպոլում, Մոսկվայում, ինչպես նաև Ուրալի և Սիբիրի արդյունաբերական կենտրոններում: Միայն Կրաս-

նոդարի երկրամաս Հայաստանից (1988 թ. երկրաշարժից հետո) և Ադրբեջանից արտագաղթած հայերի թիվը 1992 թ. կեսին կազմել է շուրջ 14,7 հզ. մարդ. 1992 թ. օգոստոս-սեպտեմբերին Աբխազիայից գաղթել է շուրջ 30 հզ. հայ: 1989 թ. մարդահամարի տվյալներով, Կրասնոդարի երկրամասում հայերը բնակչության ընդհանուր կազմում երրորդ տեղում էին (3,73 %)՝ ռուսներից և ուկրաինացիներից հետո: Ստավրոպոլի երկրամասում հայերը կազմել են բնակչության 2,6 %-ը, նույնպես երրորդ տեղում (ռուսներից և կարաչայներից հետո): 1990_93 թթ. ընթացքում հայերի տեսակարար կշիռը այդ երկրամասերում նկատելիորեն աճել է: Նույն 1989 թ. մարդահամարի տվյալներով, հայերի ընդհանուր թիվը Ռ-ում կազմել է 532,4 հզ. մարդ: 1994 թ. արդեն հասել է 1,8 մլն (որոշ տվյալներով՝ շուրջ 2 մլն): Շարունակվող չկառավարվող արտագաղթն առաջացնում է լուրջ խնդիրներ սոցիալ-տնտեսական և ազգամիջյան հարաբերությունների բնագավառներում:

Հաստատվելով Ռ-ի տարբեր տարածքաշրջաններում՝ հայերը բավական արագ են հարմարվել նոր պայմաններին, գործունորեն ներգրավվել երկրի տնտեսական կյանքի մեջ: Ռ-ի հայերի հիմնական զբաղմունքը հնուց ի վեր առևտուրն էր: Նրանք առաջատար դիրք ունեին Ռ-ի հարավում կատարվող առևտրի, ինչպես նաև ռուս-իրանական և Ռ-ի միջոցով Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտրի ասպարեզում: Նույն ժամանակաշրջանում (XVIII դ.) հայ վաճառականները սկսել են իրենց միջոցները ներդնել արտադրության մեջ, կազմակերպել ջուլհակային մանուֆակտուրաներ, արդյունահանության տարբեր ձեռնարկություններ: Հայ արդյունաբերողներ Սաֆարովը, Խաստատովը, Իսպխանովները, Լազարյանները և ուրիշներ տարբեր տեսակի մանուֆակտուրաներ հիմնեցին Ռ-ի կենտրոնական և հարավային շրջաններում, Ուրալում՝ դրանով իսկ նպաստելով նախիտալիստական արտադրության զարգացմանը Ռ-ում:

Ռ-ի հայ համայնքներին իշխանությունները շնորհել են ոչ միայն տնտեսական, այլև իրավական արտոնություններ: XVIII դարից սկսած մի շարք համայնքներ (Աստրախան, Ղզլար, Մոզդոկ) ստացել են ինքնավարություն, որն իրագործվում էր հայկական դատարանի կամ մագիստրատի (Նոր Նախիջևանում) միջոցով: Ինքնավարության այդ մարմինները պահպանվել են մինչև 1840-ական թթ., երբ Ռ-ի կառավարությունը վերացրեց դրանք. վերջինը լուծարվել է Նոր Նախիջևանի մագիստրատը (1870 թ.): Ռուսահայ շատ գաղութների ներքին կյանքը կարգավորվում էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», հայկական սովորութային իրավունքի և ռուսաստանյան օրենսդրության հիման վրա 1765 թ. ստեղծված Աստրախանի հայոց դատաստանագրքով:

Ռուսահայերի կյանքում կարևոր դեր ուներ հայկական եկեղեցին: Իրենց հավատը դիտելով որպես ինքնության պահպանման կարևոր գործոն՝ հայ գաղթականները մշտապես հոգ էին տանում եկեղեցիների կառուցման և կրոնական հաստատությունների գործունեության մասին: Որպես կանոն հայկական եկեղեցիներ գոյություն ունեին բոլոր այն վայրերում, ուր բնակվում էին հայերը: 1717 թ. կազմավորվեց Ռ-ի բոլոր հայերին միավորող Հայաստանյայց առաքելական եկեղեցու Աստրախանի թեմը: 1830 թ. ստեղծվեց Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը, որի տնօրինությանն անցան Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի հայ համայնքները: Այդ երկու թեմերը գոյատևեցին մինչև 1920 թ.: Այժմ Ռ-ի հայկական կրոնական համայնքը ենթակա է Հայաստանյայց առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Մոսկվայի թեմին, որի առաջնորդանիստը գտնվում է Մոսկվայում:



Ռուսահայերի ինքնության պահպանման գործում կարևոր դեր ունեին ազգային մշակույթը և կրթական գործը: XVIII դ. վերջից Ռ-ի հայկական գաղութներում ստեղծվել են դպրոցներ, որոնցից առավել հայտնի էին Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի դպրոցը՝ առաջին հայկական դպրոցը Ռ-ում, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որտեղ աշխատել են նշանավոր հայագետներ Գրիգոր Խալաթյանը, Ստեփանոս Նազարյանը, Մկրտիչ էմինը, Ալեքսեյ Ջիվելեգովը և ուրիշներ (այժմ այդ շենքում է տեղավորված ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը): Հայկական դպրոցներ են գործել նաև Եկատերինոդարում, Ստավրոպոլում, Արմավիրում, Մոզդոկում, Ղզլարում, Կիսլովոդսկում, Գրոզնիում և այլուր:

Ազգային մշակույթի պահպանման և զարգացման գործին նպաստել է հայ պարբերական մամուլը: Ռ-ում առաջին հայերեն պարբերականը («Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը) լույս է տեսել Աստրախանում, 1816 թ.: Տարբեր տարիների հայերեն թերթեր և ամսագրեր են հրատարակվել Մոսկվայում (ավելի քան 20 անուն), որոնցից ամենանշանավորը եղել է «Հյուսիսափայլը» (1858_64 թթ.), Նոր Նախիջևանում (20 անուն), Սանկտ Պետերբուրգում (5 անուն), Պյատիգորսկում (6 անուն), ինչպես նաև Արմավիրում, Եկատերինոդարում, Սարատովում են:

Առաջին հայկական տպարանը Ռ-ում հիմնադրվել է 1780-ական թթ. սկզբին, Սանկտ Պետերբուրգում (հետագայում այն տեղափոխվել է Նոր Նախիջևան, ապա՝ Աստրախան): Հայտնի էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանը: Ռ-ում XVIII դ. վերջից մինչև XX դ. 20-ական թթ. գործել է 24 հայկական տպարան:

Ռուսահայ համայնքում որոշակի զարգացում է ստացել թատերական արվեստը: Առաջին թատերական խումբը կազմավորվել է 1858 թ. Մոսկվայի համալսարանի և Լազարյան ճեմարանի հայ ուսանողների ուժերով: Հայ թատերական խմբեր գործել են նաև Սանկտ Պետերբուրգում, Ղզլարում, Նոր Նախիջևանում: 1918_25 թթ. Մոսկվայում գործել է հայ դրամատիկական ստուդիա, որը զգալի դեր է խաղացել հայ ազգային թատրոնի զարգացման գործում:

Մոսկվայում, Աստրախանում ևն գործել են գրական խմբակներ և ընկերություններ:

1920-ական թթ. 2-րդ կեսից՝ ԽՍՀՄ-ում ամբողջատիրական համակարգի ամրապնդման, ժողովրդավարության բացակայության պայմաններում Ռ-ի հայ գաղութների մշակութային կյանքը աստիճանաբար մարեց: Փակվեցին հայկական դպրոցները, դադարեցին լույս տեսնել պարբերականները, արգելակվեց հայ եկեղեցու գործունեությունը:

Ռ-ի հայերի հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնում գտնվել է հիմնական մի խնդիր՝ աջակցել Ռ-ի օգնությամբ Հայաստանը օտարերկրյա լծից ազատագրելու գործին: Ռ-ի հայերն ակտիվորեն օժանդակում էին այդ ուղղությամբ կայսրության կողմից ձեռնարկվող դիվանագիտական և ռազմական քայլերին: Ռ-ի հայ քաղաքական-հասարակական շրջանները XVIII դ. և XIX դ. սկզբին բանակցություններ էին վարում ցարական արքունիքի հետ, նրան ներկայացնում Հայաստանի ազատագրման իրենց մշակած նախագծերը: Հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի դեմքերից (Իսրայել Օրի, Մովսես Սաֆարով, Հովսեփ Էմին, Հովսեփ Արղության, Լազարյան ընտանիքի ներկայացուցիչները, Ներսես Աշտարակեցի և ուրիշներ) շատերը հանդիսացել են Ռ-ի հայ համայնքներում ձևավորված գործիչներ: Իրանի և Թուրքիայի դեմ Ռ-ի մղած պատերազմների ժամանակ ռուսահայերը ամեն կերպ օգնում էին ռուսական բանակին՝ միջոցներ հանգանակում, մատակարարում, կամավորական ջոկատներ կազմակերպում: 1914_18 թթ. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսահայ գաղութներում (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նոր Նախիջևան) ստեղծվեցին տարբեր բարեգործական ընկերություններ, օգնության կոմիտեներ, որոնք զգալի նյութական օգնություն ցույց տվեցին Ռ-ում ապաստանած հայ փախստականներին:

Դրա հետ մեկտեղ Ռ-ի հայերն ակտիվորեն մասնակցել են կայսրության քաղաքական կյանքին: Ռ-ի հայ գաղթավայրերից սերված շատ հայեր եղել են նարոդնիկների, պետրաշևականների կազմակերպությունների, ավելի ուշ՝ էսէռների, սոցիալ-դեմոկրատների կուսակցությունների անդամ: Ռ-ի հայ գաղութներից մի քանիսում գործել են հայ ազատագրական խմբակներ, հայ հեղափոխական դաշնակցություն և հնչակյան կուսակցությունների կազմակերպություններ:

Ռ-ի շատ հայեր բարձր դիրք են գրավել կայսրության պետական և ռազմական կառույցներում: Ռուսական բանակում տարբեր ժամանակ ծառայել են հայ զորապետներ Դ. Աշխարումովը, Լ. Սերեբրյակովը (Արծաթագործյան), Դ. Դելյանովը, Ի. Լազարևը, Ա. Տեր-Ղուկասովը: XIX դ. 2-րդ կեսի Ռ-ի խոշոր պետական գործիչներն էին Մ. Լոռիս-Մելիքովը (ներքին գործերի նախարար), Ի.Դելյանովը (լուսավորության նախարար) և ուրիշներ: Նշանակալից է հայ գիտնականների, արվեստագետների, գրողների ներդրումը ռուսական գիտության, արվեստի ու գրականության մեջ:

Ռ-ում հայտնի անուններ են գրող Մարիետա Շահինյանը (1886_1982), երգահան Արամ Խաչատրյանը (1903_1978), թատերական գործիչներ



Եվգենի Վախթանգովը (1883_1922), Ռուբեն Սիմոնովը (1899_1968), դի-
րիժոր Ալեքսանդր Մելիք-Փաշայանը (1905_1964), գիտնականներ. լեզ-
վաբաններ Ստեփան Բարխուդարովը (1894_1983) և Ռուբեն Ավանե-
սովը (1902_1982), ֆիզիկոս Աբրահամ Ալիխանովը (1904_1970), ֆիզիո-
լոգ Լևոն Օրբելին (1882_1958), պատմաբան Հովսեփ Օրբելին
(1887_1961), քիմիկոսներ Իվան Կնունյանցը (1906_1980) և Նիկողոս
Ենիկոլոպյանը (1924_1993), տնտեսագետներ Աբել Աղանբեկյանը, Ստե-
փան Սիտարյանը, բուսաբան Արմեն Թախտաջյանը, երգիչներ Զառա
Դոլուխանովան և Պավել Լիսիցյանը, քանդակագործներ Սերգեյ Մեր-
կուրովը (1881_1952) և Նիկողայոս Նիկողոսյանը, ավիակոնստրուկտոր
Արտեմ Միկոյանը (1905_1970), զորապետներ, մարշալներ Հովհաննես
Բաղրամյանը (1897_1982), Համազասպ Բաբաջանյանը (1906_1977) և
Սերգեյ Խուդյակովը (Խանփերյանց) (1901_1950), ծովակալ Իվան Ի-
սակովը (1894_1967), պետական գործիչներ Վառլամ Ավանեսովը
(1883_1930), Անաստաս Միկոյանը (1895_1978), Ալեքսանդր Մյասնիկ-
յանը (1886_1925), Պողոս Պողոսյանը (1883_1918), Իվան Թևոսյանը
(1902_1958), շախմատի աշխարհի չեմպիոններ Տիգրան Պետրոսյանը
(1929_1984) և Գարրի Կասպարովը, դերասան Արմեն Ջիգարխանյանը,
երգահան Միքայել Թարիվերդիևը և ուրիշներ:

1980-ական թթ. վերջից սկսվեց Ռ-ի հայ համայնքների հասարակա-
կան և մշակութային կյանքի վերելք, ինչը պայմանավորված էր երկ-
րում տեղի ունեցող ժողովրդավարական վերափոխումներով, Ղարա-
բաղյան շարժման ծավալմամբ, Հայաստանի Հանրապետության ան-
կախության հռչակումով, ինչպես նաև դեպի Ռ. հայ գաղթականների
հզոր հոսքով: Ռ-ի հայերն ազգային վերածնունդ են ապրում, ձգտում
են վերականգնել իրենց ազգային ավանդույթները, ինքնահաստատ-
վել՝ որպես ամբողջ հայ ազգի անբաժան մի մասը: Հայոց եկեղեցու
Նոր Նախիջևանի և Մոսկվայի թեմին վերադարձվել են Սանկտ Պե-
տերբուրգի, Մոսկվայի հայ եկեղեցիները, համայնքներում գործում են
30-ից ավելի եկեղեցի, աղոթատուն մատուռ, կառուցվում են նորերը:
Մի շարք համայնքներում վերաբացվել են հայկական դպրոցները,
ստեղծվել են հայերենի ուսուցման խմբակներ: Հրատարակվում են հա-
յերեն կամ երկլեզու (հայերեն և ռուսերեն) թերթեր, հիմնվել են հայ մշա-
կույթի կենտրոններ և ընկերություններ (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ,
Դոնի Ռոստով, Կրասնոդար, Ստավրոպոլ, Արմավիր, Սոչի, Անապա,
Եկատերինոդար, Կրասնոյարսկ, Իրկուտսկ ևն):

Աշխույժ ձեռնարկատիրական գործունեությունը բնորոշ է նաև նոր
սերնդի (1980-ական թթ. վերջ - 1990-ական թթ. սկիզբ) հայ գաղթա-
կանների համար: Առևտրի, սպասարկման, արդյունաբերության ոլորտ-
ներում սեփականաշնորհման իրագործումը ձեռնարկատիրական գոր-
ծունեության լայն հնարավորություններ է ստեղծել Ռ. տեղափոխված
հայերի համար: Նրանք հիմնել են բազմաթիվ առևտրական ձեռնար-
կություններ, տարբեր միջնորդական ֆիրմաներ, բանկային հաստա-

տություններ: Գյուղական վայրերում (Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասեր, Հյուսիսային Կովկաս) հայ գաղթականները հիմնել են ֆերմերային տնտեսություններ, շինարարական կազմակերպություններ: Հայ գաղթականների մի մասը, ունենալով բարձր մասնագիտական որակավորում, ձգտում է աշխատանք ձեռք բերել ըստ մասնագիտության, սակայն հենց այդ խմբի ոչ քիչ ներկայացուցիչներ գերադասում են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

1995 թ. ապրիլին ՌԴ Պետական դուման միաձայն դատապարտեց հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ.:

**ՍԻՆԳԱՊՈՒՐ**, Սինգապուրի Հանրապետություն, պետություն Հարավ-Արևելյան Ասիայում

Մայրաքաղաքը՝ Սինգապուր
Տարածքը՝ 619 կմ²
Բնակչությունը՝ 3 մլն (1991 թ.)

Հայերը Ս-ում հաստատվել են XVIII դ. վերջին: Եկել են հիմնականում Հնդկաստանի քաղաքներից և Մալակկայից: XIX դ. 30_40-ական թթ. հայերը Ս-ի կենտրոնական թաղամասում կառուցել են շենքեր, խանութներ ու հիմնարկներ, 1834 թ.՝ հայկական եկեղեցի (գործում է ցայսօր): Հայերով (գլխավորապես առևտրականներ) բնակեցված փողոցները կոչվել են «Հայկական», «Սարգսյան», «Մարտիրոսյան»: Համայնքի ներքին կյանքը կարգավորել է Ազգային ժողովը: XIX դ. կեսին հիմնվել է 2 տպարան, լույս է տեսել «Ուսումնասեր» կիսամյա պարբերականը: 1911 թ. Ս-ում կար 60 հայ, 1917 թ. հիմնվել է ՀԲԸՄ Ս-ի մասնաճյուղը: 1994 թ. համայնքը մարած էր:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ՍԻՐԻԱ**, Սիրիայի Արաբական Հանրապետություն, պետություն Արևմտյան Ասիայում, Միջերկրական ծովի ափին

Մայրաքաղաքը՝ Դամասկոս
Տարածքը՝ 185,2 հզ. կմ²
Բնակչությունը՝ 12 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 120_130 հզ.

Ժամանակակից Ս-ի տարածքում հայերի բնակվելը ունի հազարամյակների պատմություն: Հայոց թագավոր Տիգրան Բ Մեծի օրոք այդ տարածքը՝ Ասորիքը, ընդգրկվել է հայկական պետության կազմի մեջ: Հայերի թիվը Ս-ում մեծացել է IX_XIV դդ.՝ բյուզանդական կայսրերի կող-



մից Հյուսիսային Սիրիա զգալի թվով հայեր գաղթեցնելու, Բագրատու-
նիների թագավորության անկման, սելջուկյան թուրքերի ասպատակու-
թյունների, Կիլիկիայի հայկական պետության անկման հետևանքով: X
դ. Ս-ում հիմնվել է հայոց թեմ: XVI դ. վերջից հայերը տեղական իշխա-
նություններին կից ունեցել են իրենց ներկայացուցիչը՝ վեքիլը, որի հիմ-
նական պարտականությունն էր հայկական համայնքից պետական հար-
կերի գանձումը: Ս-ի հայ առևտրականները լայն կապերի մեջ էին եվ-
րոպայի առևտրական կենտրոնների հետ: Մեծ պահանջարկ ուներ հայ
ոսկերիչների, ներկարարների, սադափագործների, դերձակների, մե-
տաքսագործների, մուշտակագործների և այլ արհեստավորների ար-
տադրանքը: Նշանակալից էր հայ խոջաների դերը Ս-ի միջազգային
առևտրի և ապրանքափոխանակության մեջ:

Ս-ում թուրքական տիրապետության հաստատման (XVI դ.) հետևան-
քով հայ համայնքների համար ստեղծվել են անբարենպաստ պայման-
ներ: XIX դ. 2-րդ կեսից թուրքական լծի դեմ սիրիացիների պայքարին
մեծապես մասնակցել են և սիրիահայերը (աչքի են ընկել Ադիբ Իսակո-
վը, Ռըզգալլա Հասունյանը և ուրիշներ):

Ժամանակակից սիրիահայ համայնքը ձևավորվել է 1920-ական թթ.
սկզբին, երբ 1915 թ. Մեծ եղեռնից հետո այստեղ մեծ թվով գաղթական
հայեր են հաստատվել: Ս-ում ապրում է շուրջ 120_130 հզ. հայ (1994
թ.), որոնք կենտրոնացած են հիմնականում Հալեպում (շուրջ 70 հզ.),
նաև Դամասկոսում, Քեսաբում, Լաթաքիայում, Հոմսում, Կամըշլիում,
Համայում, Թարթուսում: Ճնշող մասն զբաղված է արդյունաբերության
մեջ, մեծ է արհեստավորների ու առևտրականների, սպասարկման ո-
լորտում, գյուղատնտեսության մեջ աշխատողների թիվը: Զգալի թիվ
են կազմում մտավորականները (ուսուցիչներ, բժիշկներ, երաժիշտներ,
ճարտարապետներ), կան նաև գործարանատերեր, պետական պաշ-
տոնյաներ: Ս-ի ժողովրդական խորհրդի՝ պառլամենտի կազմում հայ
համայնքից ընտրվում է մեկ պատգամավոր: Համայնքի ազգային կյան-
քը կազմակերպում են զանազան կազմակերպություններ: Գործում են
հայ առաքելական, կաթոլիկ, ավետարանական եկեղեցիներ, հայկա-
կան դպրոցներ՝ Հալեպում (15 միջնակարգ և տարրական), Դամասկո-
սում, Քեսաբում, Կամըշլիում, Լաթաքիայում, Ջեզիրեում: Կարևոր դեր
են կատարում ՀԲԸՄ, ՀՄՄ, ՀՄԸՄ, ՀՕՄ, Թեքեյան, Համազգային, Նոր
Սերունդ մշակութային միությունների մասնաճյուղերը, հայրենակցա-
կան միությունները (Այնթապի, Մարաշի, Ուրֆայի, Մուսա լեռան, Ա-
րաբկիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Տիգրանակերտի, Վասպուրակա-
նի ևն)՝ իրենց մշակութային և այլ հանձնախմբերով, ազգային կուսակ-
ցությունների տեղական կազմակերպությունները, Հայ երիտասարդաց
ընկերությունը, Հայ համալսարանականների միությունը:

Մշակութային կենտրոններից են Մարտիրոս Սարյան ակադեմիան,
«Պետրոս Ադամյան» թատերախումբը, «Հայ քնար» և «Զվարթնոց» երգ-
չախմբային ընկերությունները:

Հալեպում և Դամասկոսում գործում են հայկական տպարաններ, հրատարակվում է «Գեղարդ» տարեգիրքը, 1993 թ-ից՝ «Գանձասար» շաբաթաթերթը: XIX դ. 2-րդ կեսից լույս է տեսել շուրջ 80 անուն հայերեն պարբերական:

Ս-ում համբավ են վայելում հայերի հիմնած հիվանդանոցները, հատկապես՝ Ռ.Ճեպեճյան ակնաբուժարանը և Ալթունյանի անվան հիվանդանոցը:

Ս-ի հայ համայնքը օգնում ու աջակցում է 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ՍՈՒԴԱՆ, Սուդանի Դեմոկրատական Հանրապետություն, պետություն Աֆրիկայի հյուսիս-արևելքում

Մայրաքաղաքը՝ Խարտում
Տարածքը՝ 2505,8 հզ. կմ²
Բնակչությունը՝ 20,6 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 1000

Ս-ի հայ համայնքը ձևավորվել է XIX դ. 2-րդ կեսին, չնայած դեռևս XVII_XVIII դդ. հայեր այնտեղ եղել են: Ս-ում հայերի կենտրոնանալուն նպաստել են նաև անգլիացիները, որոնք տարբեր մասնագիտությունների հայերի հրավիրել են Ս.՝ աշխատելու: 1915 թ. Մեծ եղեռնից հետո շատ գաղթական հայեր ապաստանել են Ս-ում: Հայերը բնակություն են հաստատել Խարտումում, Օմդուրմանում, Գեդարեֆում: Զբաղվել են առևտրով, արհեստներով, հողագործությամբ: 1917 թ. սուդանահայերն ընտրել են գաղութային վարչություն, կազմել կանոնադրություն (որը հաստատել են սուդանական իշխանությունները), համաձայն որի հայկական վարչական ժողովի նախագահը հայերի ներկայացուցիչն էր տեղական իշխանությունների մոտ և իրավասու էր կարգավորել կրոնական ու ազգային բոլոր խնդիրները: 1911 թ. Խարտումում հիմնվել է ՀԲԸՄ մասնաճյուղ: Առաջին հայկական դպրոցը բացվել է 1930 թ. Գեդարեֆում, 1956 թ. բացվել է Խարտումի Հայ ազգային վարժարանը (փակվել է 1977 թ. Ս-ի իշխանությունների որոշմամբ): 1994 թ. Ս-ում կար շուրջ 1000 հայ. արհեստավորներ, առևտրականներ, նաև ձեռնարկատերեր, բժիշկներ, ճարտարագետներ: Խարտումում գործում են Ս.Լուսավորիչ հայկական եկեղեցին, Հայկական ակումբը, որն ունի գրադարան, մարզական համալիր (ջրավազանով, ֆուտբոլի դաշտով):

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Սուդանի Դեմոկրատական Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



## ՎԵՆԵՍՈՒԵԼԱ, Վենեսուելայի Հանրապետություն, պետություն Հարավային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Կարակաս
Տարածքը՝ 916,4 հզ. կմ²
Բնակչությունը՝ 18 մլն (1991 թ.)
Հայերի թիվը՝ 3500

Հայերը Վ-ում հաստատվել են XX դ. սկզբին, համայնքը սկսել է ձևավորվել 1950-ական թթ.: Հայերը Վ. են տեղափոխվել Մերձավոր Արևելքի և Եվրոպայի երկրներից: Այժմ (1994 թ.) Վ-ում բնակվում են շուրջ 3500 հայեր, որոնք հիմնականում հաստատված են Կարակասում: Զբաղվում են առևտրով, գործարարներ են, կան և մտավորականներ: Համայնքի ազգային կյանքը կազմակերպում է Գործադիր կենտրոնական վարչությունը: Գործում են նաև ազգային «Արարատ» տունը, Տիկնանց և Երիտասարդաց միությունները, երգի-պարի համույթը:

1974_75 թթ. Կարակասում լույս է տեսել գաղութի «Արարատի ձայն» պաշտոնաթերթը՝ հայերեն և իսպաներեն լեզուներով:

Համայնքը օգնության ձեռք է մեկնել 1988 թ. երկրաշարժից տուժած հայրենակիցներին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Վենեսուելայի Հանրապետության միջև հաստատվել են 1993 թ.:

## ՎՐԱՍՏԱՆ, Վրաստանի Հանրապետություն, պետություն Անդրկովկասում

Մայրաքաղաքը՝ Թբիլիսի
Տարածքը՝ 69,7 հզ. կմ²
Բնակչությունը՝ 5,4 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 430 հզ.

Պատմական աղբյուրների հավաստի տվյալներով ժամանակակից Վ-ի տարածքում դեռևս հնագույն ժամանակներից եղել են հայաբնակ գավառներ: Վ-ում հաստատված հայերի թիվն ավելացել է V դ. առաջին կեսին, երբ Մեծ Հայքից անջատվել ու Վրացական մարզպանությանն են միացվել հայաբնակ մի քանի գավառներ: 451 թ. Վարդանանց պատերազմից հետո Աշուշա բդեշխի ջանքերով Գուգարաց բդեշխության կենտրոն Ցուրտավում են ապաստանել Մամիկոնյան գերդաստանի փրկված ներկայացուցիչները: Հայկական համայնքի մեծաթիվ լինելու պատճառով տեղիս ժամասացությունը, դպրոցները երկլեզվյա էին: Սկսած VII դարից վիրահայության պատմությունն իր արտացոլումն է գտել նաև վիմագիր արձանագրություններում:

IX դ. Տփղիսի (Թիֆլիս, այժմ՝ Թբիլիսի) հայերի թիվն ավելացել է արաբների դեմ ապստամբած Սասունից այստեղ ապաստանած գաղ-

թականներով: Արաբ պատմիչ Թաբարիի հաղորդման համաձայն, 853
թ. արաբ Բուղայի դեմ Տփղիսի պաշտպանների շարքերում եղել են նաև
խութեցի հայեր: X դ. սկզբին հայաբնակ Կամբեճանում ստեղծվել է Կամ-
բեճան-Հերեթի թագավորությունը: Վ-ի տարածքում հայերի թիվն էլ ա-
վելի է մեծացել, երբ Կյուրիկյան թագավորության տարածքը Սամշվիլ-
դե (Շամշուլդե) մայրաքաղաքով միացվել է վրացական պետությանը
(XII դ. սկիզբ): Դավիթ Շինարարի (1089_1112) օրոք կազմակերպվել է
հայերի վերաբնակեցումը Վ., մասնավորապես, արքունապատկան քա-
ղաքներ Տփղիս և Գորի:

Վրաց պետականության շրջանակներում պահպանվել և ձևավոր-
վել են հայոց իշխանական նոր գերդաստաններ՝ Զաքարյաններ (ի-
րենց Վահրամյան և Թմուկյան ճյուղերով), Մահկանաբերդի Արծրունի-
ները, Լոռիի Մամիկոնյանները, Ումեկյանները, Վաչուտյանները, Խաղ-
բակյան-Պռոշյանները: XII դ. վերջում Վ-ում հիմնվել է հայ առաքելա-
կան եկեղեցու թեմ. թեմական առաջնորդի նստավայրն էր Տփղիսը:

Հայերի գաղթը Վ. անընդմեջ շարունակվել է XIII_XVIII դդ.: XVIII դ.
80-ական թթ. սկսած հայերի գաղթն ավելի զանգվածային է դարձել:
Միայն Գանձակից Տփղիս է վերաբնակեցվել 3000 հայ շինական, մեկ-
երկու տասնամյակ անց՝ Մուխրանում և շրջակայքի գյուղերում է հաս-
տատվել ասպատակիչների հալածանքից տեղահան եղած Լոռիի հայ
բնակչությունը:

XVIII դ. վերջին Հերակլ II արքայի՝ Երևանի խանի դեմ ձեռնարկած
արշավանքից հետո, Վ. բռնագաղթվեցին (Տփղիս ու շրջակա գյուղեր)
Արարատյան դաշտավայրի շատ գյուղերի բնակիչներ: Նույն՝ XVIII դ.
60-ական, այնուհետև 80_90-ական թթ. Վ. (Կախեթ և Քարթլի) են գաղ-
թել Արցախի Գյուլիստան, Խաչեն գավառներից շատ հայեր ու հաս-
տատվել Բոլնիս, Շուլավեր, Մեծ Դաղեթ և այլ բնակավայրերում: XIX
դ. 20-ական թթ. վերջին Բարձր Հայքից՝ Կարինից կազմակերպվել է
հայերի մեծ ներգաղթ Ջավախք, Ախալցխա և այլուր: Նոր զանգվածա-
յին գաղթ տեղի ունեցավ XIX դ. 90-ական թթ. և հատկապես 1915_20
թթ.: 1917 թ. մարդահամարի տվյալներով, Վ-ում կար 279,975 հայ:

Խորհրդային իշխանության տարիներին այդ թիվը գրեթե կրկնա-
պատկվել է. թեև մեծ էր վիրահայության արտահոսքը հատկապես Հա-
յաստան և Ռուսաստան: Այժմ (1994 թ.) Վ-ում հայերի թիվը 430 հզ. է
(մեծ թվով հայեր հանգամանքների բերումով կրում են վրացական ազ-
գանուն, մի մասն էլ ձուլվել է): Գործում են 218 հայկական դպրոց և մի
շարք եկեղեցիներ, լույս են տեսնում պարբերականներ. տարբեր ժա-
մանակներ լույս է տեսել 263 անուն հայերեն պարբերական:

Վ-ում հնագույն հայկական գաղթավայրը Թ ի ֆ լ ի ս ն է. IV դ., երբ
դարձել է Վ-ի մայրաքաղաք, այնտեղ են հաստատվել շատ հայեր: VII_VIII
դդ. նրանք ունեին եկեղեցի: Հայ Բագրատունիների թագավորության
անկումից հետո (XI դ.) հայերի թիվը Թիֆլիսում զգալիորեն աճել է:



Իտալացի ճանապարհորդ Մարկո Պոլոն (XIII դ.) որպես քաղաքի հիմ-
նական բնակիչներ հիշատակում է նաև հայերին: XII_XIII դդ. ամիրայի
(քաղաքապետի) պաշտոնը Արծրունի իշխանական տան ժառանգա-
կան արտոնությունն էր: Քաղաքի հայ անվանի անձանցից էին «փա-
ռավոր այր» Շնորհավորը, «երևելի մեծատուն» Ումեկը (XIII դ.) և ու-
րիշներ: Հայերը, հատկապես ունևոր առևտրականներն ու արհեստա-
վորական խավերը, օգտվում էին որոշակի արտոնություններից, XVIII
դ. սկզբին քաղաք այցելած ֆրանսիացի բուսաբան Թուրնըֆորը նշել
է, որ 20 հզ. բնակչից 14500-ը եղել են հայեր: Այդ փաստը հաստատել են
վրացի պատմաբան և աշխարհագրագետ Վախուշտին (XVIII դ.) և այլ
աղբյուրներ: Քաղաքի տնտեսական կյանքում իր որոշակի կշիռն ունե-
ցող հայ համայնքի ազնվականական վերնախավը զբաղեցնում էր պե-
տական և արքունի պաշտոններ: Թումանյան իշխանական տան ներ-
կայացուցիչները ժառանգաբար դիվանբեգեր (արքունի դպրապետեր)
էին, Բեհբությանները՝ քաղաքի մելիք-մամասախլիսին (տանուտեր),
արքունի բարձր պաշտոններ էին զբաղեցնում նաև Բեկթաբեկյաննե-
րը: XVIII դ. վրաց արքունիքում ծայառել են բազմաթիվ հայ բժիշկներ,
ուսուցիչներ, քարտուղարներ, գուսաններ, նկարիչներ:

Հայ առևտրականներն ու արհեստավորները միավորված էին համ-
քարություններում: Առևտրի և արհեստագործության շնորհիվ նրանց
ձեռքում էին կուտակվում դրամական խոշոր միջոցներ, աճում էր երկ-
րի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կյանքում նշանակալից
դեր խաղացող հայ մոքալաքների թիվը: XVIII դ. 2-րդ կեսին մեծահա-
րուստ հայերն էին կապալառուները իրենց իսկ հիմնադրած, սակայն
արքունի սեփականություն հանդիսացող, համեմատաբար խոշոր ձեռ-
նարկությունների (ներկատների, վառոդի, թնդանոթի, օճառի, ապա-
կու, փողերանոցի) տերերը: XIX դ. ընթացքում կազմավորվեց և ուժե-
ղացավ հայ բուրժուազիան, որին պատկանում էր քաղաքի առևտրա-
կան և արդյունաբերական ձեռնարկությունների 62 %-ը: Արտաքին
առևտրական խոշոր գործարքների մեջ իր որոշիչ տեղն ուներ Առևտ-
րական դասի հայկական ընկերությունը, որը առևտրական կապեր էր
պահպանում հարևան և Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: 1840 թ.
«Թիֆլիսի քաղաքային հասարակական կառավարման կանոնադրու-
թյան» ստեղծումից հետո Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը զբաղեց-
րել են հայ բուրժուազիայի ներկայացուցիչները:

XIX դ. սկզբից Թիֆլիսը դարձել է հայ ազատագրական շարժման
կենտրոն: 1827 թ. Ներսես Աշտարակեցու, Հարություն Ալամդարյանի
գլխավորությամբ ստեղծված հայկական կամավորական ջոկատները
գործուն մասնակցություն են ունեցել Արևելյան Հայաստանի ազատա-
գրմանը: 1862 թ. կազմակերպվել է Զեյթունի ապստամբությանն աջակ-
ցող կոմիտե: 1890 թ. այստեղ է հիմնադրվել հայ հեղափոխական դաշ-
նակցություն կուսակցությունը: Թիֆլիսահայերը մեծապես մասնակցել
են Արևմտյան Հայաստանը ազատագրելու խնդրին նվիրված գաղա-

փարախոսական և գործնական պայքարին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին քաղաքում ստեղծված խնամատար մարմինները մեծապես օգնել են եղեռնից փրկվածներին և տասնյակ հազարավոր որբերի:

Թիֆլիսն արևելահայ լուսավորական շարժման խոշորագույն կենտրոններից էր: Հայ համայնքը պահպանում էր մայրենի լեզուն (XVIII դ. արդեն ձևավորվել էր Թիֆլիսի բարբառը), կրոնն ու ազգային ավանդույթները: 1823 թ. գործել է հայկական տպարան: 1824 թ. հիմնադրվել է Ներսիսյան դպրոցը, 1861 թ.՝ Գայանյան իգական դպրոցը (1875 թ-ից դարձել է միջնակարգ դպրոց), 1877 թ.՝ Մարիամյան-Հովնանյան դպրոցը (մանկավարժական թեքումով):

Լուսավորական շարժմանը նպաստել են Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը (1880 թ.), Հայուհյաց բարեգործական ընկերությունը (1881 թ.), Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (1881 թ.): 1846 թ. լույս է տեսել առաջին պարբերականը՝ «Կովկասը», որի հրատարակությունից մինչև XX դ. սկիզբը Թիֆլիսում լույս է տեսել 200 անուն քաղաքական, գրական-գեղարվեստական, մանկավարժական և այլ հայերեն օրաթերթեր, շաբաթաթերթեր և ամսագրեր:

XVIII դ. Վ-ի թագավոր Վախթանգ VI-ի օրոք Վ-ի մշակութային վերելքին մեծապես նպաստել են հայազգի փիլիսոփա և աստվածաբան Զաքարիա Մանդենանցը, թարգմանիչ Զուրաբ Շահշոյանը (Շահշովանին), լեզվաբան և փիլիսոփա Փիլիպոս Ղայթմազյանը: Թիֆլիսում են ստեղծագործել XVIII_XIX դդ. բանաստեղծ-գուսաններ Նաղաշ Հովնաթանը, Սայաթ-Նովան, Շամչի-Մելքոն, Քյուչուկ Նովան, Բուդաղ Օղլանը, Ստեփան Փեղանգիշվիլին (հայազգի), Ղվտիս-Ծղալոբա Բեհբությանը, Հովնան Պենտելենցը, հայ դասականներ Գ. Սունդուկյանը, Ղ.Աղայանը, Պ. Պռոշյանը, Հ. Թումանյանը, Նար-Դոսը, Րաֆֆին, Լեոն և ուրիշներ: Թիֆլիսի հայկական թատրոնի նախաքայլերն են արվել 1820-ական թթ. Ներսիսյան դպրոցի սաների ուժերով՝ Հ.Ալամդարյանի ղեկավարությամբ: 1840-ական թթ. Շերմազանյանն իր հիմնադրած «Դարբասում» բեմ է հանել «Կարապետ եպիսկոպոսի որոշ գործերի նկարագրությունը» պիեսը: 1851 թ. սկսել է գործել Թամամշյանի թատրոնը: 1863 թ. Պ. Պռոշյանի և Գ. Չմշկյանի, ապա Գ. Սունդուկյանի ջանքերով հիմք է դրվել պրոֆեսիոնալ թատրոնի: Տարբեր ժամանակներում գործել են նաև ժողովրդական թատրոններ՝ Ավճալայի (1901 թ.), Մուրաշկո (1902 թ.), Հավլաբարում՝ Արաքսյանի (1903 թ.): Կերպարվեստի բնագավառում ակնառու դեր են խաղացել Մկրտում, Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները, Ստեփան Ներսիսյանը, Հ. Քաթանյանը, Վանո Խոջաբեկյանը, Գևորգ Բաշինջաղյանը և ուրիշներ: 1912_1921 թթ. գործել է հայ գրողների Կովկասյան ընկերությունը՝ Հ. Թումանյանի գլխավորությամբ:

Ըստ 1917 թ. մարդահամարի, քաղաքի 246910 բնակիչների 33 %-ը հայեր էին, 25 %-ը վրացիներ:



1920-ական թվականներից հետո Թիֆլիսում հայկական մշակույթը շարունակել է գոյատևել դպրոցներով, մամուլով, գրական-գեղարվեստական կազմակերպություններով, թատրոնով: Ցայսօր գործում են Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը, մի քանի հայկական դպրոցներ, Վրաստանի գրողների հայկական բաժանմունքը (հրատարակում էր «Կամուրջ» գրական տարեգիրքը), Վրաստանի հայ մշակութային բարեգործական ընկերությունը: Լույս է տեսնում «Վրաստան» թերթը:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո (XI դ.) մայրաքաղաք Անիից շատ հայեր գաղթել են Վ.: Վրաց թագավոր Դավիթ II (1089_1125) թույլ է տվել նրանց կառուցել Գ ո ր ի անունով քաղաքը: Գորիի հայերը զբաղվել են մանածագործությամբ՝ բամբակե և մետաքսե ոսկեթել ասեղնագործ կերպասեղենի արտադրությամբ, արծաթագործությամբ, ոսկերչությամբ, զինագործությամբ, դարբնությամբ, պղնձագործությամբ, տնաշինությամբ, ձկնորսությամբ, նկարչությամբ: Գորիում XVIII դ. ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայությամբ քարվանսարա է եղել: Բնակիչներից շատերը ունենոր վաճառականներ էին: Նրանք առևտրական կապեր ունեին Թուրքիայի, Պարսկաստանի, Ռուսաստանի, Հյուսիսային Կովկասի հետ: Գորիի հայերն ունեին երկսեռ վարժարաններ, Մարիամյան ուսումնարան (1870 թ.), կար 5 հայկական եկեղեցի: XX դ. սկզբին 10457 բնակչից 3500-ը հայեր էին, իսկ գավառի հայ գյուղերի բնակիչների հետ միասին 15147 մարդ (2860 ընտանիք): Գորիի հայերից էին սերում անվանի դիվանագետներ Բուդաղ և Փարադան Ջուտառաքելենց Ղանդրալի որդիները, հեղափոխական Արշակ Տեր-Պետրոսյանը (Կամո):

Թ ե լ ա վ ը եղել է վրաց Բագրատունիների երբեմնի մայրաքաղաքը: XVI դ. վերջին և XVII դ. սկզբին հայերի մեծ հոսք է եկել Թելավ: Քաղաքապետի հետ հանդես է եկել հայ համայնքի պետը՝ մելիքը, որին ենթարկվել են քաղաքի առևտրականները և արհեստավորները, որոնք գերազանցապես հայեր էին: XVII դ. 30-ական թվականներից հետո Թելավը դարձել է Վ-ի հայաշատ վայրերից: Հայերն այստեղ ունեին եկեղեցիներ, դպրոցներ և սերտ կապերի մեջ էին Թիֆլիսի համայնքի, նաև Էջմիածնի Մայր աթոռի (կաթողիկոսության) հետ:

XVII դ. աճել է Արևելյան Հայաստանի գավառներից, հատկապես Արցախից (Խաչենից) Թելավում հաստատվող հայերի թիվը: 1886 թ. մարդահամարի տվյալներով Թելավի բնակչության շուրջ 82 %-ը (11,2 հզ-ից 9,2 հզ-ը) հայեր էին:

XVIII դ. 60-ական թվականներից Ս ղ ն ա խ են գաղթել Արցախից մեծ թվով հայեր, 1802 թ. Սղնախն ունեցել է 1000 բնակիչ (հիմնականում հայեր), որոնք զբաղվել են այգեգործությամբ, արհեստներով և առևտրով: XVIII դ. վերջին քաղաքի տանուտերը (մամասախլիսը) հայազգի Թեյմուրազ Թեյմուրազյանն էր: XIX դ. վերջին -XX դ. սկզբին

Սղնախում կային հայկական երեք եկեղեցի, երկու դպրոց, մեկ տպա-
րան: Այժմ կանգուն է հայկական Ս.Գևորգ եկեղեցին:

Ըստ 1859 թ. մարդահամարի, Դուշեթն ունեցել է 375 ծուխ, որից
230-ը հայեր էին: Առևտուրը և արհեստագործությունը հայերի ձեռքին
էր: Հայերն առևտուր են արել Հյուսիսային Կովկասի, Ռուսաստանի
(Մոսկվա, Նիժնի Նովգորոդ) հետ· Ունեին աղյուսի, կղմինդրի, խեցե-
ղենի ձեռնարկություններ, ներկատուն, ջրաղաց. զբաղվել են նաև այ-
գեգործությամբ, շերամապահությամբ:

Հայերն Ախալցխայում ապրել են հնագույն ժամանակներից:
Դեռևս Ք.ա. VI_III դ. Ախալցխան (Սամցխե) եղել է Երվանդունիների
հայկական պետության կազմում, իսկ Ք.ա. մոտ 185 թ. Արտաշես Ա-ի
օրոք Ախալցխան մտել է Մեծ Հայքի մեջ: Տարբեր դարերում Ախալ-
ցխայի հայերի թիվը տատանվել է՝ կախված քաղաքական իրադրու-
թյունից: Ախալցխայի հայ բնակչությունը հատկապես ստվարացել է
XI_XIII դդ. Հայաստանից եկածների հաշվին: XIX դ. սկզբին հայաբնակ
էր գավառի մեծ մասը: Սակայն հայ կյանքը Ախալցխայում մեծ վերելք
է ապրել, երբ տեղաբնակ հայությանն ավելացել է Կարինից 1830 թ.
գաղթած 2536 հայ ընտանիք: 1893 թ. քաղաքի 15 հզ. բնակչից 12495
հայեր էին, իսկ 1900 թ. 16160-ից 13000-ը: Հայերն զբաղվում էին ոսկեր-
չությամբ և այլ արհեստներով. արհեստավորները միավորված էին համ-
քարությունների մեջ: Քաղաքում գործել են գավառային դպրոցը (1831
թ-ից), Կարապետյան (1831 թ-ից), Գայֆեճյան (1864 թ-ից), Վարդան-
յանց արական (1866 թ-ից), Եղիսաբեթյան օրիորդաց, Նոր Արշալույս
Սաղաթելյան (1869 թ.), Գազազյանց (1871 թ.) վարժարանները: Գործել
է Կովկասի հայոց բարեգործական ընկերության մասնաճյուղը: 1885 թ.
լույս է տեսել «Մանկավարժանոց» ամսագիրը, 1917_18 թթ. «Շարժում»
թերթը: Խորհրդային տարիներին լույս են տեսել մի շարք շրջանային
թերթեր: 1926_40 թթ. Ախալցխայում գործել է հայկական պետական թատ-
րոն, որտեղ հյուրախաղերով հանդես են եկել հայ բեմի մեծերը՝ Սիրա-
նույշը, Ադամյանը, Աբելյանը, Փափազյանը: Մինչև օրս կանգուն են Սա-
ֆարայի (XIII դ.) վանական համալիրը, մի շարք հայկական եկեղեցիներ:
1980_90-ական թթ. կտրուկ ծանրացել է Ախալցխայի հայության վի-
ճակը. պատերազմական իրադրությունը Վ-ում, ազգայնամոլ որոշ վրա-
ցի գործիչների քաղաքականությունը նպաստում են հայության արտա-
հոսքին, չնայած տեղի հայկական կազմակերպություններն ամեն ինչ
անում են կասեցնելու այն:

Ախալցխայում են ծնվել հայ նշանավոր գիտնականներ և արվես-
տագետներ Հակոբ Մանանդյանը, Ստեփան Մալխասյանցը, Գալուստ
Տեր-Մկրտչյանը, Հակոբ Կոջոյանը, Վահան Գայֆեճյանը, Վարդգես Սու-
րենյանցը, Սուքիաս էփրիկյանը, Արամ Ղանալանյանը, Արամ Ինճիկ-
յանը, Կարո Ղաֆադարյանը, կաթոլիկ եկեղեցու նշանավոր գործիչ,
կարդինալ Գրիգոր-Պետրոս Աղաջանյանը և ուրիշներ:



Ախալքալաքի այժմյան շրջանի տարածքը Մեծ Հայքի Գուգա-
րաց աշխարհի Ջավախք գավառի մի մասն է: Հնում գավառի կենտրո-
նը եղել է Ծունդան (Քաջատուն), իսկ XI դարից՝ Ախալքալաքը: Քաղա-
քը XII_XIV դ. եղել է Զաքարյանների կալվածքը: Ախալքալաքի շրջա-
նում պահպանվել են Աբուլի (X դ.), Բարալեթի (XI դ.), էխտիլայի (XI_XII
դդ.), Գումբուրդոյի (XII_XIII դդ.) եկեղեցիները, Ձրեսկի անապատը, իսկ
քաղաքում՝ կիսականգուն բերդի աշտարակները (XI դ.), Ս.Խաչ եկեղե-
ցին (XIX դ.): 1830 թ. Կարինից գաղթած հազարավոր հայեր բնակու-
թյուն են հաստատել Ախալքալաքում, հիմնել են շուրջ հիսուն նոր գյուղ:
Հիմնականում զբաղվել են անասնապահությամբ, հողագործությամբ,
իսկ քաղաքում՝ զանազան արհեստներով: 1879 թ. գավառի 44719 բնակ-
չից 38698-ը հայ էր: Ախալքալաքի հայությունը զգալի կորուստներ է
կրել 1918 թ. թուրքական ներխուժման ժամանակ:

Ախալքալաքում գործել են Մեսրոպյան արական (1836 թ.), Սանդըխտ-
յան օրիորդաց (1870 թ.) դպրոցները: 1913_16 թթ. լույս է տեսել «Ջա-
վախք» շաբաթաթերթը: Ախալքալաքի շրջանն ունի (1994 թ.) 64 գյուղ,
գործում է 78 դպրոց, 40 ակումբ, 87 գրադարան, մշակույթի 8 տուն, 26
կինոթատրոն, գավառագիտական թանգարան, մի շարք եկեղեցիներ:

Ջավախքից են գուսան Ջիվանին, բանաստեղծ Վահան Տերյանը,
գրող Դերենիկ Դեմիրճյանը, հասարակական-քաղաքական գործիչներ
Հովհաննես Քաջազնունին, Համո Օհանջանյանը, Ռուբենը (Տեր-Մի-
նասյան), Ռուբեն Դարբինյանը, գիտության, մշակույթի և ռազմական
բազմաթիվ գործիչներ:

1989 թ. ստեղծվել է«Ջավախք» ժողովրդական շարժումը. Ջավախ-
քի հայությունը, որ կազմում է շրջանի բնակչության 95 %-ը, մշտապես
Հայաստանի և Արցախի կողքին է:

Նինոծմինդա (նախկինում՝ Բոգդանովկա) շրջանը Ախալքալա-
քի գավառի արևելյան մասն է, որը 1930 թ. առանձնացվել է և դարձել
առանձին վարչատարածքային միավոր: Հայերն այստեղ են գաղթել
1830-ական թթ.: 35 բնակավայրերից 28-ում ապրում են միայն հայեր,
մյուս 7-ում՝ հայերի հետ ապրում են նաև ռուսներ (դուխոբորներ), վրա-
ցիներ: Բնակչության 97 %-ը հայեր են: Հիմնականում զբաղվում են ա-
նասնապահությամբ: Շրջանի գրեթե բոլոր բնակավայրերում գործում
են հայկական դպրոցներ, իսկ Գանձայում (երկու) և շրջկենտրոնում՝
նաև գիշերօթիկ և երաժշտական դպրոցներ: 1957 թ. Գանձայում բաց-
վել է բանաստեղծ Վահան Տերյանի տուն-թանգարանը: Շրջանում գոր-
ծում են մի շարք եկեղեցիներ: Լույս է տեսնում շրջանային «Արշա-
լույս» թերթը: Վերջին հինգ տարիներին մեծացել է բնակչության ար-
տագաղթը Ռուսաստան:

Ծալկան պատմական Թռեղքն է: Շրջանի 13 գյուղեր հայաբնակ
են, հիմնականում կարնոհայեր: Գործում է 14 հայկական դպրոց: Շրջա-
նի Այազմա գյուղում է ծնվել գուսան Հավասին:

Բոլնիսում գործում է գրող Ղազարոս Աղայանի տուն-թանգարանը:

Հայերն ապրել են նաև Ախալցոխիում, Ցխինվալում, ինչպես և Արևելյան և Արևմտյան Վրաստանի այլ բնակավայրերում: Վ-ի Գեորգի XII թագավորի 1796 թ. մայիսի 16-ի հրամանից երևում է, որ Ախալցոխիի տանուտերը հայազգի Հակոբն է, հիշատակվում են նաև ոմն Սարգսի որդիները որպես արքունապատկան ծորտեր: Մի այլ վավերագրից (XVIII դ. վերջ) երևում է, որ Ցխինվալի տանուտերը (մամասախլիսը) մշտապես եղել է հայազգի:

XVII դ. 2-րդ կեսից հայեր են բնակվել Քութայիսում, Խոնիում, Սուրամում, Վախանում: 1770 թ. հոկտեմբերի 21-ին Սողոմոն թագավորը Խոնիից հայերին վերաբնակեցրել է Քութայիսում: Արևմտյան Վրաստանում XVIII դ. 2-րդ կեսին հայերի շրջանում սկսել է տարածվել հռոմեադավանությունը (կաթոլիկությունը), որի դեմ պայքարել են հայ եկեղեցականները վրաց թագավոր Սողոմոն I-ի հովանավորությամբ:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

## ԱԲԽԱԶԻԱ, ինքնավար հանրապետություն Վրաստանի կազմում

Մայրաքաղաքը՝ Սուխում

Տարածքը՝ 8,6 հզ. կմ²

Հայերն Ա-ում հաստատվել են վաղ միջնադարից: Գաղութը կազմավորվել է XIX դ. վերջին, երբ Ա. են գաղթել Թուրքիայում հայկական կոտորածներից փախածները և մասնավորապես շատ համշենահայեր՝ Տրապիզոնից, Օրդուից և Սամսունից: Հետագայում հայերի թիվը ավելացել է 1915 թ. եղեռնից փրկվածների գալով: Այնուհետև աբխազահայերի թիվը համալրվել է Ջավախքից և այլ վայրերից տեղափոխված հայերով: 1969 թ. Ա-ում բնակվում էր 100000 հայ. հիմնականում Սուխում, Օչամչիրի, Գագրա, Գուդաութա և այլ ծովափնյա քաղաքներում, ինչպես նաև հայերի իսկ հիմնադրած բազմաթիվ գյուղերում ու ավաններում: Հայերը զբաղվում են գյուղատնտեսությամբ, մշակում մերձարևադարձային պտուղներ և ծխախոտ, կան մտավորականներ: Ա. գաղթած համշենահայերը դեռևս XIX դ. վերջին կառուցել են եկեղեցիներ, բացել դպրոցներ: 1969 թ. Ա-ում գործում էր 105 հայկական դպրոց, սակայն հետագա տարիներին դրանց թիվը նվազել է: Ուսուցիչ (ապա գիտնական) Խաչատուր Ափգալբեգյանի ջանքերով հիմնվել է տպարան, բացվել գրախանութ: 1912_13 թ. հրատարակվել է «Լույս» գրական շաբաթաթերթը, 1918 թ. «Նոր կյանք», 1919 թ. «Փարոս», 1920-ին՝ «Կարմիր աստղ» թերթերը: 1928_38 թթ. Սուխումում գործել է հայկական թատրոն: Կար հայկական մանկավարժական ուսումնարան: 1954 թ. հիմնադրվեց հայ գրողների միավորումը: Ստեղծվեցին հայկական տպարան, ժողովրդական թատրոն, երգի-պարի համույթ:



Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Ա. իրեն հռչակեց Վրաստանից անկախ պետություն, սրվեցին ազգամիջյան հարաբերությունները, սկսվեց վրաց-աբխազական պատերազմը, որի ժամանակ մեծապես տուժեց հայկական գաղութը. ավերվեցին հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր, զոհվեցին հարյուրավոր հայեր, կողոպտվեցին հայերի տները, ունեցվածքը: Հազարավոր հայ ընտանիքներ գաղթեցին Ռուսաստան, հատկապես նրա հարավային շրջանները, մասամբ նաև Հայաստան և այլ երկրներ: Միայն 1992 թ. օգոստոս-սեպտեմբերին Ա-ից գաղթել է ավելի քան 30000 հայ: Վրացա-աբխազական հակամարտությունը, որի ժամանակ հայերը հիմնականում պահպանում են չեզոքություն, դեռևս չի ավարտվել:

Ա-ում այժմ գործում են «Կռունկ» հայկական մշակութային բարեգործական ընկերությունը (Սուխում), «Մաշտոց» հայկական միությունը (Գագրա), «Համշեն» բարեգործական միությունը (Գուդաութայի շրջանի Պրորսկի գյուղ), Համշենահայերի գրական շրջանակը (Գանթիադի):

## ԱՋԱՐԻԱ, ինքնավար հանրապետություն Վրաստանի կազմում

Մայրաքաղաքը՝ Բաթում

Տարածքը՝ 3 հզ. կմ²

Հայերն Ա-ում բնակություն են հաստատել վաղ միջնադարում, երբեմն էլ բնակիչների մեջ կազմել մեծամասնություն: Հետագա դարերում հայերի թիվը նվազել է: Նրանց թիվը Ա-ում կրկին մեծացել է XVIII դ. սկզբին՝ հիմնականում համշենահայերի հաշվին: Հայերի հոսքը Սև ծովի կովկասյան ափ և հատկապես Ա. մեծացել է XIX դ. վերջին և XX դ. սկզբին Թուրքիայում հայկական կոտորածներից ու Մեծ եղեռնից հետո: Հայերի զանգվածային տեղափոխությանը նպաստեց նաև այն, որ երկրամասը նվաճել էր Ռուսաստանը: Խորհրդային տարիներին Ա-ի հայերի թիվը համալրվել է Ջավախքից և այլ վայրերից տեղափոխված հայ ընտանիքներով: Հայերը հիմնականում բնակվում են Բաթում, Չաքվա, Քոբուլեթ, Մախարաձե քաղաքներում. բանվորներ, արհեստավորներ, բժիշկներ, ճարտարագետներ, պետական ծառայողներ են և գյուղատնտեսության մեջ աշխատողներ:

Ա-ի հայերի կյանքում նշանակալից դեր է խաղացել Կովկասի հայոց բարեգործական ընկերության Բաթումի մասնաճյուղը, գործել է Հայ կանանց միությունը: 1885 թ. Բաթումում Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի ջանքերով կառուցվել է Ս.Աստվածածին հայկական եկեղեցին: Հայտնի էր Մեսրոպյան երկսեռ վարժարանը: 1886 թ-ից գործել է Բաթումի հայկական թատրոնը, Ա-ի խորհրդայնացումից հետո, դարձել է պետական թատրոն և գոյատևել մինչև 1939 թ.: Հետագա

տարիներին Բաթումում գործել է թատերական շրջիկ խումբ, 1964 թ-ից՝ ժողթատրոն: Բաթումի հայկական թատրոնի բեմում հանդես են եկել հայ բեմի մեծերը՝ Պ. Ադամյանը, Սիրանույշը, Հ. Աբելյանը, Վ. Փափազյանը, Հ. Ներսիսյանը: Բաթումում երգչախմբեր են ստեղծել մեծ երաժիշտներ Ք. Կարա-Մուրզան (1898 թ.), Կոմիտասը (1910 թ.):

Բաթումում լույս են տեսել «Կոմունիստ» (1921) և «Բաթումի բանվոր» (1922) թերթերը: 1923 թ. հիմնադրվել է Հայարտունը, որը ղեկավարում էր համայնքի մշակութային գործունեությունը: Այժմ (1994 թ.) Բաթումում գործում է հայկական միջնակարգ դպրոց:

1988 թ. աղետալի երկրաշարժից հետո Բաթումի նավահանգստից մեծաքանակ օգնություն է տեղափոխվում Հայաստան: Հայաստանի Հանրապետության ամբողջական շրջափակման պայմաններում Բաթումը, չնայած մեծ խոչընդոտներին, ընդունում և Հայաստան է ուղարկում մեծ քանակությամբ բեռներ, մարդասիրական օգնություն. այդ գործին իր նպաստն է բերում տեղի հայությունը:

**ՏԱՋԻԿՍՏԱՆ,** Տաջիկստանի Հանրապետություն, պետություն Միջին Ասիայում

Մայրաքաղաքը՝ Դուշանբե
Տարածքը՝ 143,1 հզ. կմ²
Բնակչությունը՝ 5,5 մլն (1993 թ.)
Հայերի թիվը՝ 6000

Հայերը Տ-ում հաստատվել են վաղ ժամանակներից, դեռևս VI դարում, երբ Սասանյաններն ամրապնդել էին իրենց ազդեցությունը Միջին Ասիայում, պարսից արքա Խոսրով II Ափարվեզը հայ զորավար Սմբատ Բագրատունուն նշանակել է Միջին Ասիայում պարսկական զորքերի հրամանատար, ապա՝ մարզպան: Նրա օրոք Միջին Ասիա բռնագաղթված հայերը ստեղծել են իրենց հոգևոր թեմը: Սակայն հայ համայնքը Տ-ում ձևավորվել է XIX դ. 2-րդ կեսին, երբ հայերը եկել են Ղարաբաղից, Նախիջևանից, Զանգեզուրից, Պարսկաստանից: Հայերը հիմնականում արհեստավորներ (ատաղձագործներ, դարբիններ, կոշկակարներ, ոսկերիչներ), բանվորներ, առևտրականներ էին, նաև բժիշկներ, արվեստագետներ են: Հիմնականում հաստատվել են Դուշանբեում, նաև Աֆղանստանի հետ սահմանամերձ քաղաքներում: Իրենց աշխատասիրության, ձեռներեցության, լեզուների իմացության շնորհիվ XIX դ. վերջին հայերին էր պատկանում առևտրի մենաշնորհը: Հայ գործարարներն ու արդյունաբերողները իրենց ձեռքում էին պահում նաև բամբակի, նավթի, էլեկտրականության արտադրման ու արդյունահանման մի զգալի մասը:

XX դ. սկզբին Տ-ում կազմակերպվել են հայկական հասարակական կազմակերպություններ, աշխուժացել է հայերի մշակութային կյանքը: Այդ ժամանակաշրջանը եղել է Տ-ի, ինչպես նաև միջինասիական մյուս



պետությունների, հայ համայնքների համար կենսունակության և վերածննդի շրջան, որն ընդհատվել է խորհրդային տարիներին:

1990 թ. Խորհրդային Միությունում ազգամիջյան հարաբերությունների սրման հետևանքով սկսվել է հայերի արտագաղթ Տ-ից: Այժմ (1994 թ.) Տ-ում ապրում է շուրջ 6 հզ. հայ: Դուշանբեում գործում է «Մեսրոպ Մաշտոց» հայկական ընկերությունը:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ՈՒԶԲԵԿՍՏԱՆ,** Ուզբեկստանի Հանրապետություն, պետություն Միջին Ասիայում

Մայրաքաղաքը՝ Տաշքենդ
Տարածքը՝ 447,4 հզ. կմ²
Բնակչությունը՝ 20,7 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 50_60 հզ.

Հայերն Ու-ում հաստատվել են վաղ ժամանակներից, սակայն զանգ-
վածաբար սկսել են բնակվել XIX դ. 2-րդ կեսին: Հայերն Ու. են եկել
Նախիջևանից, Ղարաբաղից, Զանգեզուրից, Աստրախանից, Պարսկաս-
տանից: Հայ գաղթականները՝ հիմնականում արհեստավորներ, բան-
վորներ, առևտրականներ, նաև գիտնականներ, արվեստագետներ,
բժիշկներ ու այլ մասնագետներ, հաստատվել են Տաշքենդ, Սամար-
ղանդ, Կոկանդ, Անդիժան, Բուխարա քաղաքներում: Հայերն իրենց ա-
ռաջին գործն են համարել կառուցել եկեղեցիներ, բացել դպրոցներ:
1901_12 թթ. գործող եկեղեցիներ կային բոլոր հայաբնակ քաղաքնե-
րում:

Հայերը մեծ դեր ու նպաստ են ունեցել Ու-ի տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում: Հայ գործարարներն ու արդյունաբերողներն իրենց ձեռքում էին պահում բամբակի, նավթի, էլեկտրականության արտադրման ու արդյունահանման մի զգալի մասը:

XX դ. սկզբին Ու-ի հայ համայնքում աշխուժացել է մշակութային կյանքը. կազմակերպվել են թատերական և երաժշտական խմբեր, Տաշքենդում և Սամարղանդում բեմադրվել են ներկայացումներ: Հյուրախաղերով հանդես են եկել նշանավոր հայ դերասաններ Սիրանույշը, Հովհաննես Աբելյանը, Արմեն Արմենյանը և ուրիշներ: 1915 թ. Սամարղանդում բեմադրվել է Րաֆֆու «Խենթը» հայրենասիրական պատմավեպը:

Տաշքենդում 1923_24 թթ. հրատարակվել է «Կարմիր շող» հայերեն շաբաթաթերթը: Խորհրդային տարիներին (թեև հայերի թիվը ավելացել է ի հաշիվ Ղարաբաղից, Զանգեզուրից և այլ շրջաններից գաղթածների) փակվել են բոլոր հայկական եկեղեցիներն ու դպրոցները, անկում է ապրել հայ հոգևոր, մշակութային կյանքը:

1990 թ. Խորհրդային Միությունում ազգամիջյան հարաբերություն-

ների սրման հետևանքով սկսվել է արտագաղթ ինչպես Ու-ից, այնպես էլ Միջին Ասիայի մյուս հանրապետություններից: Այժմ (1994 թ.) Ու-ում ապրում է շուրջ 55_60 հզ. հայ: Տաշքենդում և Սամարղանդում գրանցվել են հայկական մշակութային կազմակերպություններ: Սամարղանդում գործում է հայկական մշակութային «Լույս» ընկերությունը, Տաշքենդում՝ Հայ մշակույթի կենտրոնը, որին կից կիրակնօրյա դպրոցը: Հայկական համայնքին է վերադարձվել 1903 թ. Սամարղանդում կառուցված Ս. Աստվածածին հայկական առաջին եկեղեցին, որը պետական ճանաչում ստացած միակ եկեղեցական կազմակերպությունն է Միջին Ասիայում: Տաշքենդում հայ համայնքի ուժերով կառուցվել է նոր եկեղեցի:

## ՈՒԿՐԱԻՆԱ, Ուկրաինական Հանրապետություն, պետություն Արևելյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Կիև
Տարածքը՝ 603,7 հզ. կմ²
Բնակչությունը՝ 52 մլն (1992թ.)
Հայերի թիվը՝ 50 հզ.

ժամանակակից Ու-ի տարածքում հայերը բնակություն են հաստատել դեռևս Կիևյան Ռուսիայի կազմավորման ժամանակ. աղբյուրները վկայում են, որ X_XI դդ. պետության մայրաքաղաք Կիևում արդեն բնակվում էին հայեր: Կիևի ճարտարապետական հուշարձանների որոշ մանրամասներ թույլ են տալիս եզրակացնել, որ XI_XII դդ. այստեղ ապրել և աշխատել են հմուտ հայ արհեստավորներ: Հայերի գաղթը Կիևյան Ռուսիա ուժեղացել է XII դ. 2-րդ կեսից, ինչը պայմանավորված էր սելջուկյան թուրքերի գերիշխանության տակ հայտնված Հայաստանի ծանր վիճակով: Հայկական գաղթավայրեր են առաջ եկել Գալիցա-Վոլինյան իշխանության մի քանի քաղաքներում՝ Կամենեց Պոդոլսկում (XIII դ. այստեղ գործում էր հայկական եկեղեցի), Յազլովեցում (այստեղ նույնպես XIII դ. կար հայկական եկեղեցի), Լուցկում, Վլադիմիրում (XIV դ. 2-րդ կեսին այդ երկու քաղաքներում հայոց կաթողիկոսների կոնդակների համաձայն ստեղծվել են հայ կրոնական համայնքներ): Հայերի ամենախոշոր գաղութը Լվովն էր: XII դ. վերջին այստեղ կար հայկական եկեղեցի, XIV դ. վերջին կազմավորվել է եպիսկոպոսություն. գործում էին Ս. Հակոբ և Ս. Խաչ եկեղեցիները: XIV դ. 1-ին կեսին Գալիցա-Վոլինյան իշխանության մեծ մասը նվաճել է Լեհաստանը. Լեհաստանի գերիշխանության ներքո ևս շարունակվել է հայ գաղթավայրերի զարգացումը (տես *Լեհաստան* հոդվածը):

Զարգացում է ապրել նաև Կիևի հայ գաղութը: XIV դ. 2-րդ կեսից մինչև XVII դ. կեսը Կիևը ուկրաինական այլ հողերի հետ պատկանում էր Լեհաստանին: Այդ ժամանակաշրջանում քաղաքի հայ համայնքը ստվարացել է ի հաշիվ Կիլիկիայի հայկական պետության անկումից



հետո այստեղ ապաստանած հայերի: 1384 թ. Կիևում կազմավորվել է հայկական կրոնական համայնք: 1410 թ. Կիևի հայերը մասնակցել են գերմանական նվաճողների դեմ Գրյունվալդի պատմական ճակատամարտին՝ մարտնչելով լիտվական զորքի շարքերում: XV դ. Կիևի հայ համայնքը շուրջ 3 հզ. մարդ էր, ուներ իր ինքնավարության մարմինները, օժտված էր որոշ արտոնություններով: Հայերը հիմնականում արհեստավորներ էին և առևտրականներ, նաև պաշտոնյաներ՝ լեհական վարչական ատյաններում: XVI դ. հայերը հետզհետե զրկվել են իրենց արտոնություններից: Լեհ կաթոլիկ եկեղեցին փորձել է ստիպել հայերին ընդունել կաթոլիկություն՝ հարկադրելով նրանց լքել Կիևը. XVII դ. 1-ին կեսին հայ համայնքը գրեթե մարել է, թեև որոշ չափով հայեր մնացել են:

Սևծովյան նավահանգիստներում (Օդեսա, Նիկոլաև, Խերսոն) հայերը հաստատվել են հիմնականում XIX դ. և ստեղծել այստեղ իրենց համայնքները: Նույն ժամանակ Կիևի, Խարկովի, Օդեսայի համալսարաններում ուսումնառության են եկել շատ հայեր, որոնք Վրաստանից էին, Ղարաբաղից, Հայաստանից: Հայ ուսանողները ստեղծել են հայրենակցական, հասարակական-քաղաքական, ուսանողական կազմակերպություններ, կապ պահպանել հայրենիքի հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի թիվը Ու-ում աճել է ի հաշիվ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ վայրերից այստեղ ապաստանած հայ փախստականների: Պատերազմի վերջում հայերի ընդհանուր թիվը Ու-ում կազմել է շուրջ 100 հզ.: Ու-ի մի քանի քաղաքներում ստեղծվել են Հայկական գործերի կոմիսարիատի տեղական բաժանմունքներ, որոնք օգնություն էին ցույց տալիս հայ փախստականներին: Ու-ում քաղաքացիական պատերազմի ավարտից հետո Խարկովում և Օդեսայում բացվել են հայկական դպրոցներ, Կիևում, Խարկովում և Օդեսայում հրատարակվել են հայերեն թերթեր: Կիևում գործել են մշակութային ընկերություններ, սակայն հետագա խորհրդային տասնամյակներին հայ ազգային կյանքը Ու-ում դադարել է:

Որոշակի աշխուժություն տեղի ունեցավ 1980-ական թթ. վերջից՝ հայ սփյուռքը ընդգրկած ընդհանուր ազգային վերելքի պայմաններում: Խարկովում ստեղծվեց հայ մշակույթի Մաշտոցի անվան ընկերություն, Կիևում՝ «Ղևոնդ Ալիշան» մշակութային-լուսավորական ընկերության մասնաճյուղ, Հայ մշակույթի ընկերություն կազմավորվեց Օդեսայում: Բացվեցին կիրակնօրյա հայկական դպրոցներ, հայոց լեզվի ուսումնասիրության խմբակներ: Ու-ի հայերը ձգտում են վերականգնել իրենց եկեղեցիները:

1990-ական թթ. սկզբից որոշ չափով ավելացել է հայերի գաղթը Ու-ի քաղաքներ՝ Կիև, Զապորոժյե, Դոնեցկ, Դնեպրոպետրովսկ ևն:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ուկրաինական Հանրապետության միջև հաստատվել են 1991 թ.:

ՂՐԻՄ, Ղ ր ի մ ի Հ ա ն ր ա պ ե տ ո ւ թ յ ո ւ ն, պետական կազմավորում Ղրիմի թերակղզում, 1954-ից՝ Ուկրաինայի կազմում

Մայրաքաղաքը՝ Սիմֆերոպոլ
Տարածքը՝ 27 հզ. կմ²
Բնակչությունը՝ 2,3 մլն (1987 թ.)

Ղ-ում հայերը սկսել են բնակվել XI դարից, երբ Հայաստանի մեծ մասը նվաճեց Բյուզանդիան: Հայերի գաղթը Ղ. ուժեղացել է XIII դ. 1-ին կեսին, Հայաստան թաթար-մոնղոլական ասպատակությունների ժամանակ:

Հայերը բնակվում էին Կաֆա (Թեոդոսիա), Սուրոժ (Սուդակ), Սուրխաթ (Ստարի Կրիմ), Ակմեչիթ (Սիմֆերոպոլ), Կեոզլև (Եվպատորիա) քաղաքներում, մի շարք գյուղերում, ինչպես նաև իրենց հիմնադրած Օրաբազար (Արմյանսկ) և Կազարաթ քաղաքներում: XIV_XVIII դդ. հայերը Ղ-ի բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ գրավում էին երկրորդ տեղը՝ զիջելով միայն թաթարներին:

Ղրիմահայերը հիմնականում զբաղվում էին առևտրով ու արհեստներով: Համեմատաբար կարճ ժամանակում հայ վաճառականները առաջատար դիրք գրավեցին Ղ-ի առևտրական հարաբերություններում, աշխույժ առևտուր էին անում Ռուսաստանի, Թուրքիայի, Լեհաստանի, Ջենովայի և Վենետիկի (իտալացիները Ղ. անվանում էին «Ծովային Հայաստան») հետ, ստեղծում իրենց վաճառատներն ու բանկերը: Հայ դարբինները, ոսկերիչները, բրուտները, ջուլհակները համախմբված էին համքարություններում: XIX դ. 2-րդ կեսին Թեոդոսիայի, Սուրխաթի հայ ձեռնարկատերերն ունեին կաշվի և կոշկեղենի, պահածոների գործարաններ, աղյուսի արտադրամասեր են:

Գյուղում բնակվող հայերը զբաղվում էին երկրագործությամբ: Ղ-ի կլիմայական բարենպաստ պայմանները, հայերի հարուստ փորձը և ունակությունները խթանեցին խաղողագործության, այգեգործության, բանջարաբուծության, անասնապահության զարգացումը:

Ամենախոշոր գաղութը Կաֆան էր: XV դ. վերջին այստեղ բնակվում էր շուրջ 45_47 հզ. հայ կազմելով քաղաքի բնակչության երկու երրորդը: Կաֆայում հայերն ունեին վաճառատներ, բանկեր, արհեստագործների համքարություններ, դպրոց, շուրջ 30 եկեղեցի: Սուրխաթի հայ գաղութը երկրորդն էր իր մեծությամբ, քաղաքում գործում էր 10 հայկական եկեղեցի և Ս. Խաչ վանքը: Կազարաթում տեղակայված էր հայկական մի զորամաս՝ Կաֆան թուրքերի և թաթարների հարձակումներից պաշտպանելու համար: Օրաբազարն ուներ առևտրական կարևոր կենտրոնի նշանակություն:

Ղ-ի միջնադարյան հայ գաղութը դադարեց գոյություն ունենալ XVIII դ. վերջին քառորդին, երբ Ռուսաստանի կառավարությունը, իր տնտեսական շահերից ելնելով, իրականացրեց ղրիմահայերի (12,6 հզ. մարդ) վերաբնակեցումը Դոնի գետաբերան, ուր հայերը հիմնեցին (1778 թ.)



Նոր Նախիջևան քաղաքը: Սակայն, երբ Ղ. 1783 թ. միացվեց Ռուսաստանին, այստեղ նորից սկսեցին գալ հայեր՝ հիմնականում Թուրքիայից, մասամբ՝ Ռուսաստանից: XIX դ. կեսին Ղ-ում հայերի թիվը շուրջ 7 հզ. էր, դարի վերջին՝ 9 հզ., 1914 թ. մինչև 15 հզ. մարդ: XVIII դ. վերջից Սուրխաթի և Ղարասուբազարի (Բելոգորսկ) հայ համայնքներն ունեին ինքնավարության մարմիններ:

Ղ-ի հայերի կյանքում զգալի դեր էր խաղում հայ եկեղեցին, որն այստեղ ուներ երկու առաջնորդություն: Հայերի կառուցած մի քանի տասնյակ եկեղեցիներից առավել նշանավոր էին Ս. Խաչ վանքը (Սուրխաթ, 1358 թ.), Ս. Սարգիսը (Կաֆա, XII_XIII դդ.), Հովհաննես Մկրտիչը (Կաֆա, 1348 թ.), Ս. Գևորգը (Կաֆա, XIV_XV դդ.):

Ղրիմահայ գաղութում զարգացում ապրեց հայ ազգային մշակույթը: Դեռևս միջին դարերում հայկական եկեղեցիներին և վանքերին կից գործում էին դպրոցներ, Ղ. Ռուսաստանին միացնելուց հետո ծխական դպրոցներ կային գրեթե բոլոր համայնքներում: Նրանք պահպանվեցին մինչև Ղ-ում խորհրդային իշխանության հաստատումը: 1858_71 թթ. Կաֆայում գործել է Խալիբյան հայկական ուսումնարանը:

Ղ. հայ գրչության խոշոր կենտրոններից էր. այստեղ ստեղծվել են հարյուրավոր հայերեն ձեռագիր մատյաններ: Հայտնի է հայ մանրանկարչության Ղ-ի դպրոցը:

XIX դ. 2-րդ կեսից Ղ-ում լույս է տեսել հայ պարբերական մամուլ: 1859_65 թթ. հրատարակվել է «Մասյաց աղավնի», 1873_74 թթ.՝ «Դաստիարակ» հանդեսը: Ղ-ի հետ է կապված բանաստեղծ Մարտիրոս Ղրիմեցու, նկարիչներ Հովհաննես Այվազովսկու, Վարդգես Սուրենյանցի, երգահաններ Ալեքսանդր Սպենդիարյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի և հայ մշակույթի այլ գործիչների կյանքն ու ստեղծագործությունը:

Խորհրդային ժամանակաշրջանում, 1920_30-ական թթ. Ղ-ի հայոց մշակութային կյանքը սկսել է մարել: 1944 թ. Ղ-ի հայ բնակչությունը, ինչպես և թաթարները, հույները են, Խորհրդային Միության կառավարության որոշմամբ բռնագաղթվեց Միջին Ասիայի և Ուրալի շրջանները: 1991 թ. նոյեմբերին Ղրիմի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց բռնագաղթվածներին, այդ թվում և հայերին Ղ. վերադարձնելու մասին: Այժմ Ղ-ում ապրում է շուրջ 20 հզ. հայ:

1980-ական թթ. վերջից սկսվել է Ղ-ի հայերի ազգային կյանքի վերածնունդը: Սիմֆերոպոլում, Թեոդոսիայում, Եվպատորիայում բացվել են կիրակնօրյա հայկական դպրոցներ: Հրատարակվում է «Մասյաց աղավնի» հայերեն թերթը, տեղական ռադիոն և հեռուստատեսությունը հաղորդումներ են տալիս հայերի համար, աշխատանք է սկսվել պահպանված հայ եկեղեցիների վերանորոգման ուղղությամբ: Տեղական իշխանության հետ համայնքը մշակել է Ղ-ում հայերին վերաբնակեցնելու և տեղավորելու ծրագիր:

1994 թ. հոկտեմբերի 22_23-ը Յալթա քաղաքում կայացավ հայ համայնքների ներկայացուցիչների համաժողովը: Համաժողովում ստեղծ-

վեց հայ համայնքների համադաշնություն, որի ժամանակավոր կենտրոն ընտրվեց Սիմֆերոպոլ քաղաքը: Համադաշնության ղեկավար մարմին ընտրվեց բարձրագույն համակարգիչ խորհուրդը, որի ատենապետ ընտրվեց Ղ-ի Հանրապետության Գերագույն խորհրդի ազգային քաղաքականության և բռնագաղթվածների հարցերի հանձնաժողովի նախագահ, Ղ-ի հայ համայնքի նախագահ Անուշավան Դանիելյանը:

Ղ-ի հայկական համայնքը մարդասիրական օգնություն է ցույց տալիս աղետալի երկրաշարժից տուժած հայրենակիցներին և մարտնչող Արցախին:

**ՈՒՐՈՒԳՎԱՅ,** Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն, պետություն Հարավային Ամերիկայում

Մայրաքաղաքը՝ Մոնտեվիդեո

Տարածքը՝ 187,0 հզ. կմ²

Բնակչությունը՝ 3,5 մլն (1991 թ.)

Հայերի թիվը՝ 15 հզ.

Հայերն Ու-ում հաստատվել են XX դ. սկզբին, գաղութը ձևավորվել է 1920-ական թթ.: Հայերը Ու. են եկել առավելապես Կիլիկիայից, ապա Մերձավոր Արևելքի երկրներից: Բնակվում են հիմնականում Մոնտեվիդեոյում: Զբաղվում են առևտրով, արհեստներով, շատ են ծառայողները, որոնց թվում կան հասարակական գործիչներ, արվեստի ու գիտության ներկայացուցիչներ: Գաղութում գործում են Ս. Ներսես Շնորհալի հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիները, Նուբարյան-Ալեք Մանուկյան և Ներսիսյան ամենօրյա վարժարանները: Համայնքի ազգային կյանքը կազմակերպելու ասպարեզում կարևոր գործ են կատարում տարբեր հասարակական-քաղաքական, բարեգործական, մշակութային միություններ, մարաշցիների, այնթապցիների հայրենակցական միությունները, հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները իրենց ակումբներով՝ «Վռամյան» (ՀՅԴ), «Կասա Արմենիա» (հնչակյան) և երիտասարդական միություններով, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի մասնաճյուղերը, «Հայ կեդրոնը»՝ «Երևան» ակումբով, Թեքեյան և Համազգային մշակութային միությունները, Հայ տիկնանց միությունը (իր ծերանոցով), Հայ համալսարանականների խումբը, «Արամ Խաչատրյան» նվագախումբը, պարախմբեր, ֆուտբոլի թիմեր:

Գործում են նաև «Ռադիո Արմենիա» և «Կոմիտաս» ամենօրյա ռադիոժամերը և «Թեքեյան» ռադիոժամը՝ կիրակի օրը: Հրատարակվում են «Ապրիլ», «Հայ ընտանիք» հայերեն-իսպաներեն պարբերականները: Ու. առաջին երկրներից էր, որ ճանաչեց հայերի ցեղասպանությունը: Մոնտեվիդեոյի հրապարակներից մեկը կոչվում է «Պլասա Արմենիա», մի պողոտա՝ «Ռամբըլա Արմենիա»:

Համայնքը 1988 թ. երկրաշարժի ժամանակ մեծ օգնություն ցույց տվեց մայր հայրենիքին, գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը ի նպաստ Հայաստանի և Արցախի:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ուրուգվայի Արևելյան Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



**ՔԵՆԻԱ,** Քենիայի Հանրապետություն, պետություն Արևելյան Աֆրիկայում

Մայրաքաղաքը՝ Նայրոբի

Տարածքը՝ 582,6 հզ. կմ²

Բնակչությունը՝ 5 մլն (1991 թ.)

Առաջին հայը (Մովսես Մայքլ), որ հաստատվել է Նայրոբիում մոտավորապես 1910_20 թթ., եղել է պանդոկապան: 1960-ական թթ. Ք-ում կար մոտ 10 հայ ընտանիք, հիմնականում՝ պաշտոնյաներ և առևտրականներ: Գաղութի մեծահարուստներից են՝ Երվանդ Մասքճյան, Հակոբ Թովմասյան, Տրդատ Թըզըրյան (որի հայրը՝ Հովսեփ Թըզըրյանը, վաստակավոր ուսուցիչ էր, գրող, թարգմանիչ), Հովհաննես Տոկոտֆ:

1967 թ. շուրջ 75 հոգիանոց հայ գաղութը չուներ ոչ դպրոց և ոչ եկեղեցի, մկրտություն և պսակ հայերը կատարել են անգլիկան եկեղեցում:

**ՔՈՒՎԵՅԹ,** պետություն Մերձավոր Արևելքում, Արաբական թերակղզու հյուսիս-արևելքում

Մայրաքաղաքը՝ Էլ Քուվեյթ

Տարածքը՝ 17,8 հզ. կմ²

Բնակչությունը՝ 1,7 մլն (1984 թ.)

Հայերի թիվը՝ 5000

Հայերը Ք-ում հաստատվել են 1950-ական թթ-ց ի վեր. հիմնականում Լիբանանից, Սիրիայից, նաև Հորդանանից, Իրաքից, Իրանից եկած մասնագետներ են, առևտրականներ (զբաղվում են ավտոմեքենաների և ավտոպահեստամասերի վաճառքով), արհեստավորներ, բժիշկներ, պետական ծառայողներ: Մինչև իրաքյան պատերազմը (1991 թ.) Ք-ում բնակվում էր շուրջ 10 հզ. հայ, որոնք կենտրոնացած էին մայրաքաղաք Էլ Քուվեյթում: Այժմ (1994 թ.) գաղութում կա 4,5_5 հզ. հայ: Գաղութը ղեկավարում է Քուվեյթի հայ ազգային վարչությունը՝ եկեղեցու գլխավորությամբ (այն անմիջականորեն կապված է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի հետ): Գործում են Ս.Վարդանանց հայկական եկեղեցին, հայ ազգային վարժարանը, «Արարատ» երիտասարդական սրահը:

Ք-ի հայերը իրենց նպաստն ու օգնությունն են բերում 1988 թ. ավերիչ երկրաշարժից տուժած հայրենակիցներին և Արցախին:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Քուվեյթի միջև հաստատվել են 1993 թ.:

**ՖԻԼԻՊԻՆՆԵՐ, Ֆիլիպինների Հանրապետություն,** պետություն Հարավ-Արևելյան Ասիայում, Ֆիլիպինյան արշիպելագում

Մայրաքաղաքը՝ Մանիլա
Տարածքը՝ 300 հզ. կմ²
Բնակչությունը՝ 61,5 մլն (1991 թ.)

Պատմական աղբյուրների համաձայն XVII դարից սկսած հայ վաճառականներ են երևացել Ֆ-ում: Հայերի հոսքը Ֆ. ուժեղացել է իսպանական տիրապետության օրոք: Հայ առևտրականների մուտքը կղզիներ, ի տարբերություն այլ օտարազգիների, ազատ էր և հովանավորվում էր տեղական իշխանությունների կողմից: Ֆ. եկող հայերը հիմնականում Ջուղայից էին՝ կենտրոնացած Մանիլա քաղաքում: XVIII դ. արդեն Մանիլան հիշվում է էջմիածնի գրագրություններում որպես Նոր Ջուղայի հայոց թեմի մեջ մտնող համայնք: Մանիլայում բնակվող հայերը մեծ մասամբ Հնդկաստանի հայ խոշոր առևտրական տների ու ընկերությունների ներկայացուցիչներն էին, որոնցից շատերը մշտական բնակիչներ չէին: XIX դ. 2-րդ կեսին Հնդկաստանում, Թուրքիայում, Եվրոպայում լույս տեսնող հայերեն պարբերականների բաժանորդների թվում էին նաև մանիլաբնակ հայեր: XX դ. հատուկենտ հայեր են հանդիպում Ֆ-ում:

Դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ֆիլիպինների Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:

**ՖՐԱՆՍԻԱ, Ֆրանսիական Հանրապետություն,** պետություն Արևմտյան Եվրոպայում

Մայրաքաղաքը՝ Փարիզ
Տարածքը՝ 549,1 հզ. կմ²
Բնակչությունը՝ 56,3 մլն (1992 թ.)
Հայերի թիվը՝ 400 հզ.

Պատմական տեղեկությունների համաձայն անհատ հայեր Ֆ. են եկել դեռ վաղ միջնադարում (VI դ.): Հայերի և ֆրանսիացիների միջև սերտ կապեր հաստատվել են Խաչակրաց արշավանքների և Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակաշրջանում (հայտնի է, որ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Զ ապաստան է գտել Ֆ-ում և այնտեղ էլ մահացել 1399 թ.): XV_XVI դդ. հայկական փոքրաթիվ գաղութներ են հիմնվել Մարսելում, Փարիզում, Բուրժում: 1654 թ. Պասկալ (Հարություն) անունով մի հայ Մարսելում, իսկ 1672 թ.՝ Փարիզում, բացել է Ֆ-ում առաջին սրճարանները: Իր առևտրական գործունեությամբ աչքի է ընկել Ժան Ալթընը (Հովհաննես Ալթունյան), որը, 1758 թ. հաստատվելով Ավինյոնում, ձեռնարկել է տորոնի մշակումը՝ նպաստելով ամբողջ նահանգի բարգավաճմանը (որի համար երախտապարտ համաքաղաքացիները նրա արձանն են կանգնեցրել): 1633 թ. Փարիզում տպագրվել է «Բառգիրք հայոց» հայերեն-լատիներեն բառարանը, 1672 թ. Մարսելում Ոսկան Երևանցին հիմնել է տպարան: 1734 թ. հայագետ Գիյոմ դը Վիլֆրան կազմել է Փարիզի արքայական մատենադարանի 138 հայերեն ձեռագրերի ցուցակը: 1798 թ. Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցում բացվել են հայերենի դասընթացներ, 1846 թ.՝ Սամուել-Մուրադ վարժարանը (գործում է ցայսօր), նույն թվականին էլ հիմնադրվել է Արամյան տպարանը: 1888 թ. Մարսելում հիմնվել է Հայոց հայրենասիրական միություն ազատագրական կազմակերպությունը:



XIX դ. վերջին - XX դ. սկզբին Թուրքիայում հայերի դեմ համիդյան բռնությունների հետևանքով զգալի թվով հայեր փախել են և ապաստանել Ֆ-ում: Համայնքը ստվարացել է առաջին աշխարհամարտից հետո, երբ հազարավոր հայ գաղթականներ հաստատվել են Ֆ-ում: 1920-ական թթ. սկզբին ֆրանսահայերի թիվը շուրջ 50_60 հզ. էր: Հայերի նոր հոսք Ֆ. սկսվել է 1970-ական թթ. Մերձավոր Արևելքի երկրներից: 1994 թ. Ֆ-ում բնակվում էր շուրջ 400 հզ. հայ: Կենտրոնացած են Փարիզում (Ալֆորվիլ, Իսսի լը Մուլինո, Կլամար, Շավիլ, Առնովիլ, Բանյո, Վերսալ), Մարսելում, Լիոնում, Վալանսում, Սենտ Էտիենում, Գրենոբլում, Վիենում, Նիսում (Նիցցա), Կաննում, Սան Ռաֆայելում, Լա Սիոտայում ևն: Գաղութի կազմը բազմատարր է. բանվորներ, արհեստավորներ, մանր առևտրականներ, խոշոր արդյունաբերողներ ու առևտրականներ, մեծ թիվ են կազմում մտավորականները:

Առաջին հայկական եկեղեցին՝ Ս. Հովհաննես, կառուցվել է Փարիզում, 1902 թ.: Հայաշատ քաղաքներում գործում են հայ առաքելական, կաթոլիկ, ավետարանական եկեղեցիներ, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ: Բացի նշված Սամուել-Մուրադ (Սևրում) ամենօրյա վարժարանից, գործում են Դպրոցասեր տիկնանց վարժարանը (Ռենսիում), Համազգային լիցեյը (Մարսելում), Մարգարյան-Փափազյան (Լիոնում), Պարսամյան (Նիսում) և Ս. Մեսրոպ (Ալֆորվիլում) վարժարանները, նաև Անարատ հղության քույրերի վարժարանը Մարսելում:

Համայնքի ձևավորումից ի վեր ստեղծվել են հասարակական, բարեգործական, հայրենակցական, մշակութային, երիտասարդական ևն կազմակերպություններ, որոնց հիմնական խնդիրն է ազգային դիմագծի պահպանումը: Գործում են հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ, «Կարմիր խաչը», «Կապույտ խաչ», Հայ աղքատախնամ ընկերությունը, Նոր սերունդ, Թեքեյան, Համազգային մշակութային միությունները, Ֆրանսահայ մշակութային միությունը, Հայ նախկին ռազմիկների միությունը, Ֆրանսահայ երիտասարդական միությունը, Ֆրանսահայ գրողների ընկերակցությունը, Ֆրանսահայ բժիշկների միությունը, Ֆրանսահայ երիտասարդ առևտրականների միությունը, Ֆրանսահայ միջմասնագիտական խմբավորումը, «Արամ Խաչատրյան» երաժշտական հիմնարկությունը ևն: Գործում են նաև հայագիտական հիմնարկություններ՝ Նուպարյան մատենադարանը, Հայ սփյուռքի ուսումնասիրման կենտրոնը, Հայկական վավերագրերի կենտրոնը. «Արարատ» միջազգային ակադեմիան, Սորբո-

նի համալսարանում կա հայագիտական ամբիոն:

Տարբեր քաղաքներում կազմակերպվել են թատերական-գեղարվեստական խմբեր՝ «Դիմակ» թատերախումբը, «Սիփան-Կոմիտաս», «Սահակ-Մեսրոպ» երգչախմբերը, «Նավասարդ», «Ախթամար», «Արաքս» պարախմբերը ևն:

Առաջին հայերեն պարբերականները՝ «Արևելք» և «Մասյաց Աղավնի», Ֆ-ում լույս են տեսել 1850-ական թթ.: Ցայսօր լույս է տեսել ավելի քան 200 անուն պարբերական: Այժմ լույս են տեսնում «Կամք», «Յառաջ» օրաթերթերը, «Յայաստան» շաբաթաթերթը, «Ֆրանս Արմենի», «Նուվել դ'Արմենի» ֆրանսերեն ամսաթերթերը, «Ռեվյու դեզ էտյուդ Արմենիեն» գիտական հանդեսը: Գործում են հայկական ռադիոծրագրեր:

Ֆրանսահայ մշակույթի ու գիտության զարգացմանը իրենց նպաստն են բերել գիտնականներ Յ. Սվաճյանը, Զ. Խանզադյանը, Ն. Ադոնցը, Շ. Տետեյանը, գրողներ Թեոդիկը, Շ. Շահնուրը, Վ. Շուշանյանը, Զ. Եսայանը, Լ. Բաշալյանը, Յ. Զարդարյանը, Բ. Թոփալյանը, Ա. Չոպանյանը, նկարիչներ Շ. Ադամյանը, Յ. Ալխազյանը, Վ. Մախոխյանը, Է. Շահինը, քանդակագործ Յ. Գյուրջյանը, երգիչ Ա. Շահմուրադյանը, դերասաններ Ա. Շահխաթունին, Մ. Մաքսուտյանը, Լ. Թյությունջյանը:

Ֆրանսիական գրականության, արվեստի և գիտության մեջ իրենց ներդրումն ունեն գրող, ֆրանսիական ակադեմիայի անդամ Անրի Թրուայան, բանաստեղծ Ռուբեն Մելիքը, փիլիսոփաներ Զարեհ Որբունին, Վահե Քաչան (Խաչատրյան), թատերագիր Արթյուր Ադամովը, Գաբրիել Արուքը, ժան ժակ Վարուժանը, նկարիչներ՝ Ֆրանսիական գեղարվեստից ակադեմիայի անդամ Գառզուն (Գառնիկ Զուլումյան), ժանսեմը (Յովհաննես Սեմերճյան), Շարքը (Սուրեն Արթինյան), Ասատուրը, ժան Կազանջյանը, կինոբեմադրիչներ Անրի Վեռնոյը (Աշոտ Մալաքյան), Ալեն Թերզյանը (Ֆրանսիայի ֆիլմարտադրիչների միության նախագահ), դերասաններ Ռոզի Վարդը, Ալիս Սափրիչը, Գրեգուար Ասլանը, Արտաշես Գմբեթյանը, օպերային երգիչներ Լին Դուրյանը, ժերար Սերգոյանը, բանաստեղծ, երգիչ, երգահան ու կինոդերասան Շառլ Ազնավուրը, երգահաններ Ավետիս Մեսումենցը, Գուրգեն Ալեմշահը, ժորժ Կառվարենցը, Արա Պարթևյանը, երաժիշտ կատարողներ Ռաֆֆի Պետրոսյանը, Սետրակը (Սեդրակ Յավուրյան) և շատ ուրիշներ: Ֆ-ում հայտնի անուններ են արհեստական ադամանդի (ֆիանիտ) ստեղծող Յրանտ Ճեվահիրճյանը, Պաստյորի ինստիտուտի գիտնական, սպիդի դեմ դեղամիջոցի հայտնագործող Արա Յովհաննիսյանը:

1988 թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով ֆրանսահայ համայնքում անհապաղ ստեղծվեցին «Ազնավուրը՝ Յայաստանին», «SOS» Արմենի», «Երկիր և մշակույթ» կազմակերպությունները, որոնք մշակել և իրագործում են նաև երկարատև օգնության ծրագրեր:

Դիվանագիտական հարաբերություններ Յայաստանի Յանրապետության և Ֆրանսիական Յանրապետության միջև հաստատվել են 1992 թ.:



# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, բարեգործական հաս-
տատություն: Հիմնադրվել է հայ մեծահարուստ Գալուստ Կյուլպենկյա-
նի կտակի համաձայն, 1956 թ., Լիսաբոնում (Պորտուգալիա): Նպատակն
է նպաստել բարեգործության, առողջապահության, արվեստների,
կրթության և գիտության զարգացմանը:

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, հիմնվել է Բեյրութում, 1947
թ.: Հիմնադիրներն են ազգային գործիչներ Հ. Սեդրակյանը, Բ. Թովմաս-
յանը, Գ. Աhարոնյանը, Հ. Պերպերյանը, Ժ. Յոզղաթլյանը, Հ. Դավիթյանը:
Կենտրոնը գտնվում է Բեյրութում, մասնաճյուղեր ունի շուրջ 40 երկրնե-
րում: ԹՄՄ նպատակն է պահպանել հայ ժողովրդի մշակութային ժա-
ռանգությունը: 1990 թ-ից Միությունը մասնաճյուղ ունի նաև Հայաստա-
նում:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
Համազգային մշակութային միություն, հիմնադրվել է 1928
թ. Կաhիրեում: Հիմնադիրներն են ազգային գործիչներ Հ. Օհանջանյա-
նը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Գ. Իփեկյանը, Ս. Եսայանը, Մ. Խաչատրյա-
նը, Ս. Մալխասյանը, Հ. և Ս. Պալգճյանները: Մասնաճյուղեր ունի Սփյուռ-
քի գրեթե բոլոր գաղութներում: 1992 թ-ից «Համազգայինը» մասնա-
ճյուղ ունի նաև Հայաստանում:

ՀԱՅ ԴԱՏ, Հայ դատի հանձնախումբ, հայ հեղափոխական
դաշնակցության հասարակական աշխատանքների և կառավարական
հարաբերությունների ազգային հանձնախումբ: Պաշտպանում է հայ ժո-
ղովրդի արդարացի պահանջներն ու ազգային ձգտումները: Հայ դա-
տի ճյուղային հանձնախմբեր գործում են ԱՄՆ-ի հայաշատ քաղաքնե-
րում ու համայնքներում: Հայ դատին կից գործում է հետազոտական
կենտրոն, որն ուսումնասիրում է և վերլուծում իրադրությունը Հայաս-
տանում, Թուրքիայում:

Հայ դատի տեղական հանձնախմբեր են գործում Եվրոպայի, Մեր-
ձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում:

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԴ), դաշնակցու-
թյուն, հայ ազգային կուսակցություն: Ստեղծվել է 1890 թ., Թիֆլի-
սում: Հիմնադիրներն ու առաջին ղեկավարներն էին Ք. Միքայելյանը,
Ս. Զավարյանը, Ս. Զորյանը (Ռոստոմ): Կուսակցության նպատակն էր
համախմբել հայ ժողովրդի ուժերը, ձեռք բերել քաղաքական և տնտե-
սական ազատություն Արևմտյան Հայաստանի համար: ՀՀԴ հովանա-
վորում է բարեգործական, մշակութային, մարզական, ուսանողական,
երիտասարդական միություններ, ինչպես նաև դպրոցներ և ակումբ-
ներ: ՀՀԴ կուսակցության տեղական կազմակերպություններ գործում
են գրեթե բոլոր համայնքներում:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՄԸՄ), մարզա-
կան և սկաուտական կազմակերպություն: Հիմնադրվել է 1918 թ. Կ.Պոլ-
սում: Նպատակն էր հայ պատանիների և աղջիկների ֆիզիկական ա-
ռողջ դաստիարակությունը, ազգասիրություն, հայրենասիրություն,
պատվախնդրություն զարգացնելը, որբերի համախմբումը: Միության
ստեղծման ջատագովը և գաղափարի հեղինակը Շավարշ Քրիսյանն
էր: ՀՄԸՄ մասնաճյուղեր գործում են 64 երկրում, 1989 թ-ից՝ նաև Հա-
յաստանում:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՄՄ), մարզական, սկաուտա-
կան միություն: Հիմնադրել են Մեծ եղեռնից մազապուրծ կիլիկեցի, մաս-
նավորապես այնթապցի հայ երիտասարդները Հալեպում, 1921 թ.: ՀՄՄ
հովանավորում է հնչակյան կուսակցությունը: ՀՄՄ մասնաճյուղեր են
գործում 12 երկրում, նաև Հայաստանում:

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀՕՄ), հայ կանանց բարեգործական
կազմակերպություն: Հիմնադրվել է 1910 թ. Բոստոնում (ԱՄՆ): Նպա-
տակն էր ԱՄՆ-ի հայ կանանց շրջանում պահպանել ազգային բար-
քերն ու սովորույթները, իսկ 1915 թ-ից հետո օգնել եղեռնից փրկված
հայրենակիցներին ու որբերին: ՀՕՄ ունի 136 մասնաճյուղ (1994 թ.),
այդ թվում և Հայաստանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ (ՀՕԿ), հասարակական կազմա-
կերպություն: Հիմնադրվել է 1921 թ., Երևանում: ՀՕԿ-ի խնդիրն էր օգ-
նել Հայաստանի սովյալ բնակչությանը, օժանդակել երկրի շինարա-
րությանը, սերտ կապ հաստատել սփյուռքահայության հետ: Գործում
էր ՀՕԿ-ի 200 մասնաճյուղ, որոնց օգնությամբ Հայաստան են ներգաղ-
թել հազարավոր հայեր: ՀՕԿ լուծարվել է 1937 թ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԲԸՄ), հիմ-
նադրվել է 1906 թ., Կահիրեում, մեծահարուստ ազգային բարերար Պո-
ղոս Նուբարի նախաձեռնությամբ: Նպատակն էր՝ նյութապես օգնել պե-
տականությունից զուրկ հայ ժողովրդի կարիքավոր հատվածներին,
նպաստել հայերի կրթության ու դաստիարակության գործին, հետա-
գայում նաև հայրենիքի մշակութային, տնտեսական վերելքին: Միու-
թյան պատվավոր նախագահն է Ալեք Մանուկյանը, նախագահը՝ Լուիզ
Սիմոն Մանուկյանը: Միության վարչական կենտրոնը 1942 թ. տեղա-
փոխվել է Նյու Յորք: 1968 թ. ստեղծվել է «Ալեք Մանուկյան մշակութա-
յին հիմնադրամը»: ՀԲԸՄ աշխարհի 20 հայաշատ երկրներում ունի
22000 անդամ: ՀԲԸՄ հովանավորությամբ գործում են դպրոցներ (27),
համալսարան, թատերախումբ, նվագախումբ: 1990 թ. ՀԲԸՄ Երևանում
հաստատել է իր մշտական գրասենյակը:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ, Սփյուռքում համերկրացի հայե-
րին միավորող կազմակերպություններ: Առաջացել են XIX դ. 80-ական
թթ., ԱՄՆ-ում: Նպատակն էր՝ սատարել միմյանց օտարության մեջ,



օգնել հայրենիքում մնացած հայրենակիցներին և նպաստել կրթական
գործին: Հայրենակցական միությունների առաջնահերթ խնդիրն էր նաև
ոչ միայն օգնել եղեռնից փրկված իրենց համերկրացիներին, այլև կազ-
մակերպել նրանց հայրենադարձությունը Հայաստան, սատար կանգ-
նել հայրենի երկրի բոլոր ձեռնարկումներին: Գործում են շուրջ 100 միու-
թյուններ, ինչպես օրինակ՝ արաբկիրցիների, սեբաստացիների, հաճըն-
ցիների, մուսալեռցիների, խարբերդցիների, մարաշցիների, երզնկացի-
ների, վասպուրականցիների, տարոնցիների, զեյթունցիների միություն-
ները, որոնք իրենց մասնաճյուղերն ունեն աշխարհի հայաշատ վայրե-
րում: Հայրենակցական միություններ գործում են նաև Հայաստանում:

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, սոցիալ դեմոկրատական
հնչակյան կուսակցություն, հայ ազգային կուսակցություն:
Հիմնադրվել է 1887 թ., Ժնևում: Հիմնադիր ղեկավարներն էին Ա. Նա-
զարբեկը, Մ. Նազարբեկը, Գ. Կաֆյանը, Ռ. Խանազատը և ուրիշներ:
Կենտրոնական օրգան «Հնչակ»-ի անունով կոչվել է հնչակյան: Հնչակ-
յան կուսակցության հովանավորությամբ գործում են մշակութային,
մարզական, կրթական, երիտասարդական միություններ: 1991 թ-ից Հա-
յաստանում սկսել է գործել Հայաստանի հնչակյան կուսակցությունը:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՌԱԿ), հայ ազգային կու-
սակցություն: Հիմնվել է 1921 թ., Կ. Պոլսում: ՌԱԿ-ի ծրագրում շարա-
դրված է նրա նպատակը՝ հասնել անկախ հայկական պետականու-
թյան ստեղծման՝ հիմնված ազատ տնտեսության, մասնավոր սեփա-
կանության, անձնական ձեռներեցության, քաղաքացիական իրավունք-
ների ազատության և օրենքի առաջ բոլոր քաղաքացիների հավասա-
րության վրա: ՌԱԿ-ի գլխավոր խնդիրն է նաև Սփյուռքում հայապահ-
պանումը, պայքարը ուծացման դեմ, սփյուռքահայ համայնքների և Հա-
յաստանի մշակութային կապերի ամրապնդումը: ՌԱԿ-ի նախաձեռնու-
թյամբ Սփյուռքում ստեղծվել և գործում են մշակութային, բարեգոր-
ծական, մարզական, կրթական միություններ: ՌԱԿ-ն իր կազմակեր-
պություններն ունի հայաշատ համայնքներում: 1990 թ. Երևանում հիմ-
նադրվել է Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵ, հա-
սարակական կազմակերպություն. ստեղծվել է 1964 թ. Հայաստանի
մտավորականության և աշխատավորության նախաձեռնությամբ: Կո-
միտեն ջանում է կապեր հաստատել և պահպանել Սփյուռքի մշակու-
թային, բարեսիրական, հայրենակցական, երիտասարդական կազմա-
կերպությունների, նշանավոր մտավորականների ու հասարակական
գործիչների հետ և նպաստում հայ մշակույթի տարածմանը, հայապահ-
պանությանը և հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդմանը:

*Հավելված**

# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Արմենիան մեծ է ու բարեկեցիկ:

*ՔՍԵՆՈՖՈՆ (մոտ 430_355 Ք.ա.)*
*հույն պատմիչ*

Շատերը փորձել են բարձրանալ այս լեռը, բայց ոչ ոք հաջողած չէ: Այս եպիսկոպոսն ինձ ասաց, թե մի վանական կար, որ չափազանց շատ էր փափագում (բարձրանալ), բայց մի հրեշտակ երևաց նրան՝ բերելով տապանի փայտերից մի կտոր, և նրան ասաց, որ այլևս փորձ չանի: Նրանք ինձ ասացին, թե այս փայտի կտորը պահում են իրենց եկեղեցում: Այս լեռը ինձ այնքան բարձր չէր թվում, որ մարդիկ չկարողանային բարձրանալ: Մի ծերունի մի շատ բանական պատճառաբանություն տվավ, թե ինչու պետք չէ փորձել բարձրանալ այս լեռը: Նրանք անվանում են այս լեռը Մասիս: «Ոչ ոք», նա ասաց, «պետք չէ բարձրանա Մասիսը. նա աշխարհի մայրն է»:

*ՈՒԻԼՅԱՄ ՌՈՒԲՐՈՒՔ (1220_1293)*
*ֆրանսիացի ճանապարհորդ*

Թուրքմենիայի (Թուրքիայի) մեջ ժողովրդի երեք դասակարգեր կան: Առաջին՝ թուրքմեններ, սրանք Մուհամեդի հավատացյալներն են, կոպիտ մի ժողովուրդ, իր սեփական անտաշ լեզվով: Նրանք բնակվում են լեռներում և սարահարթերում, ուր որ գտնում են լավ արոտավայրեր, որովհետև նրանց զբաղումը խաշնարածությունն է: Հիանալի ձիեր, որոնք ծանոթ են որպես թուրքական, բուծվում են նրանց երկրում և, նույնպես շատ արժեքավոր ջորիներ: Մյուս երկու դասակարգերն են հայերն ու հույները, որոնք առաջինների հետ խառն ապրում են քաղաքներում և գյուղերում՝ զբաղվելով առևտրով և արհեստով: Նրանք հյուսում են աշխարհի ամենանուրբ և ամենագեղեցիկ գորգերը, և նույնպես՝ մեծ քանակությամբ մետաքս, որդան կարմիր և ուրիշ գույներով, և առատությամբ՝ ուրիշ կտորեղեններ:

Մեծ Հայաստանի նկարագրությունը. այս մի մեծ երկիր է: Սկսվում է մի քաղաքից, որը կոչվում է Արզինգա (Երզնկա), ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները: Նա ունի որևէ տեղ գոյություն ունեցող բնական աղբյուրներից լավագույն բաղնիքները: Երկրի ժողովուրդը հայերն են, որոնք հպատակվում են Թաթարին: Բազմաթիվ քաղաքներ և գյուղեր կան երկրի մեջ:

*ՄԱՐԿՈ ՊՈԼՈ (1254_1324)*
*իտալացի ճանապարհորդ*

* *Կազմել են Ալբերտ և Վահագն Խոյանները*



Հայ ազգի եկեղեցու և քրիստոնեական հանրապետության նկատմամբ
ունեցած մեր արժանիքների մեջ կա նաև մեկ ուրիշ հոյակապ արժա-
նիք, որ մասնավորաբար պետք է հիշատակվի, այն է՝ երբ ժամանա-
կին քրիստոնյա իշխաններն ու բանակները գնում էին Սուրբ երկիրը
վերագրավելու, ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ այնչափ շուտափույթ ե-
ռանդով օգնության հասան մարդով, սնունդով, ձիերով, խորհուրդնե-
րով, որչափ հայերը. նրանք, իրենց բոլոր ուժերով ամենամեծ քաջա-
գործությամբ և հավատարմությամբ օգնել են քրիստոնյաներին՝ այդ
սուրբ պատերազմի մեջ:

*ԳՐԻԳՈՐ Գ, XIV դ.*
*Հռոմի պապ*

Հայաստանի այս մասում ես ամենից առաջ գնացի Քալինդրա քաղա-
քը՝ սիրով ու ջանասիրությամբ իրագործելու այն առաջադրանքը, որի
համար Դուք ինձ ուղարկեցիք Հայաստան, քանի որ այս քաղաքը լա-
վագույնս կարող էր ծառայել մեր նպատակին, և որը մոտ է մեր սահ-
մանին: Այս քաղաքը տեղադրված է Տավրոսի լեռների ստորոտում, այն-
տեղ, ուր բաժանվում է Եփրատ գետից և արևմուտքից նայում մեծ Տավ-
րոս լեռան (Արնոս և Արտոս) գագաթներին: Այս գագաթները այնչափ
բարձր են, որ թվում է դիպչում են երկնքին, և ողջ աշխարհում երկրի ոչ
մի հատված այս լեռան գագաթի բարձրությանը չի հասնում, և արևի
ճառագայթները առավոտները միշտ ընկնում են նրա արևելյան կողմի
վրա չորս ժամ շարունակ և, կազմված լինելով ճերմակագույն քարից,
շողշողում է իր ողջ ճոխությամբ, և այստեղի հայերի համար նույն դերն
ունի, ինչ պայծառ լուսնաշողը հավատի մեջ, և իր իսկայական բարձ-
րությամբ այն ուղիղ գծով չորս մղոն երկարությամբ հասնում է ամպի
ծայրին *(հատված «Հայկական նամակներ»-ից)*:

*ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ (1452_1519)*
*իտալացի նկարիչ, գիտնական*

Հայերն աշխարհի լավագույն մարդիկ են:

*ՓԻԹՈՆ ԴԸ ԹՈՒՐՆԸՖՈՐ (1656_1708)*
*ֆրանսիացի բուսաբան-ճանապարհորդ*

Օսմանյան կայսրության մեջ հայերն են ամենամեծ առուտուր ունեցող-
ները և միևնույն ժամանակ այդ գործը ամենից ավելի հմտությամբ ա-
ռաջ տանողները: Նրանք համբերող են, խնայող ու անխոնջ, նրանք
ճանապարհորդում են Ասիայում և Հնդկաստանում, նրանք խանութ-
ներ և մարդիկ ունեն ամեն տեղ: Հայոց մեծ մասը մեքենական արհեստ-
ներով են պարապում: Նրանք սեղանավորներ են, կապալառու և փա-
շաներ ու ուրիշ մեծամեծ անձերի գործակալներ: Նրանց մեղադրում
են՝ իբրև թե ոչ մի միջոց չեն խնայում հարստանալու համար և թե՝ երբ
կարողանում են՝ խաբում են ապրանքների մեջ: Սակայն պետք է խոս-
տովանել, որ, ձգտելով ձեռքից եկածի չափ շատ փող աշխատել, հայե-

րը շատ սակավ է պատահում, որ ճիշտ չկատարեն իրենց պարտավորությունները, և ճիշտ են կատարում իրենց խոստումները:

Հայերը խիստ են իրենց վարքուբարքի մեջ, ճշտությամբ պահպանում են իրենց հավատի պատվիրանները, անգետ են և նախապաշարված, նրանց պակասում է միայն կրթությունը և մի տերություն, որ այնքան ճնշող չլիներ, որքան տաճկականը, ավելի արդար լիներ, որպեսզի հայերը վերին աստիճանի հարգելի ազգ դառնային:

*ՕԼԻՎԻԵ, XVIII դ.*
*ֆրանսիացի ճանապարհորդ*

Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործեց վաղ և հրաշալի լեզվին նվիրաբերեց յուրահատուկ այբուբեն, նրա հետ՝ Աստվածաշնչի թարգմանությունը և հայոց պատմությունը:

*ՅՈՀԱՆ ՀԵՐԴԵՐ (1744_1803)*
*գերմանացի փիլիսոփա*

Քրիստոնյա մյուս ժողովրդի՝ հայերի մոտ գերիշխում է յուրահատուկ առևտրական ոգի. իսկ ստույգ՝ նրանք զբաղվում են ապրանքափոխանակությամբ՝ ոտքով կտրելով Չինաստանի սահմանից մինչև Գվինեայի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ աշխատասեր և խելոք ժողովրդի հատուկ ծագման մասին, որը հյուսիսից արևելք, հարավից արևմուտք գրեթե ամբողջ Հին Աշխարհը անցնում է և գտնում ջերմ ընդունելություն բոլոր ժողովուրդների մոտ: Դա ապացուցում է նրանց գերազանց բնավորությունը, որի նախնական ձևավորման մասին մենք ի զորու չենք խոսել...

*ԻՄՄԱՆՈՒԻԼ ԿԱՆՏ (1724_1804)*
*գերմանացի փիլիսոփա*

Արևելքի հետ ունեցած հաճախակի հարաբերություններս ինձ ներշնչել են խորին հարգանք հայ ազգի հանդեպ, մանավանդ հարգանք դեպի կրոնը, առաքինությունը և բանաստեղծությունը այն ազգի, որը մեզանից ավելի մոտ է նախնական աշխարհի օրորոցին և լուսավորությանը:

Հայերն Արևելքի շվեյցարացիներն են, նրանց պես աշխատասեր, հանդարտ, կանոնավոր, բայց և նրանց պես էլ հաշվող ու անհագ:

*ԱԼՖՈՆՍ ԴԸ ԼԱՄԱՐԹԻՆ (1790_1869)*
*ֆրանսիացի բանաստեղծ*

Ասում են, որ հայերը Արևելքում նույնն են, ինչ որ շվեյցարացիք Արևմուտքում, ավելի արդար կլիներ նրանց համեմատել հոլանդացիների հետ. նրանց մեջ նկատվում է նույն հարատև, բայց հանգիստ գործունեությունը, հարստություն ձեռք բերելու նույն ձգտումը, նույն արհամարհանքը դեպի արտաքին փայլը: Բայց նրանց առաջադիմությունները, որ կատարվում են անդորրության մեջ, անհայտ են Եվրոպային, ուր



չեն հասնում նրանց գրքերը և պարբերական հրատարակությունները:

*ԷԴՈՒԱՐԴ ԴՅՈՒԼՈՐԻԵ (1807_1881)*
*ֆրանսիացի հայագետ*

Ահա երկու առարկա, որոնք արժանի են ավելի մեծ ուշադրության և
ավելի մանրամասն հետազոտության. Նախ այն նմանությունը և ըստ
երևույթին նաև աջակցությունը, որ երևում է օսերի սովորությունների
ու կենցաղավարության և հին գերմանացիների միջև և ապա՝ այն ծան-
րակշիռ դիրքը, որ ներկայումս բռնում է հայոց ազգը: Բոլոր նշաննե-
րից երևում է, որ հենց այս ազգը աստվածային տեսչությամբ ընտրված
է իբրև միջնորդ քրիստոնեությունը և քաղաքակրթությունը տարածե-
լու Արևելքում: Տարակույս չկա, որ մեծ պատմական, համաշխարհային
նշանակություն ունի այն հանգամանքը, որ այս քրիստոնյա ժողովուր-
դը ցրվում է մեծ տարածության վրա, Մարոկկոյից սկսած մինչև Չի-
նաստան և միևնույն ժամանակ նրա բոլոր անդամները կապված են
միմյանց հետ հասարակական, քաղաքական ու կրոնական կապերով
և մի ազգային միություն են կազմում:

*ԱՈՒԳՈՒՍՏՈՒՍ ՀԱՔՍՏՀԱՈՒԶԵՆ (1792_1866)*
*պրուսացի պաշտոնյա, ազգագրագետ*

Եթե հայկական հյուրասիրության պատկերի վրա ավելացնենք պարզ ճաշակ, խիստ խնայողություն, զարմանալի կանոնավորության ոգի, մեծ ընդունակություն առևտրական գործերում, մենք նկարագրած կլինենք հայերի լավ կողմերը:

*ԳՈՒՄԲԱ, XIX դ.*
*ֆրանսիացի հյուպատոս Թիֆլիսում 1820 թ.*

Այս մարդիկ մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավորներ
են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝
առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտու-
թյան: Այս ժողովուրդը հարստացել է առանց բանսարկության: Բայց
նրա տեղը, այնուամենայնիվ, երկար ժամանակ եղել է «գերության տան»
մեջ, որը վերջերս բազմապատկել է իր անթիվ օթևանները:

Թերևս դժվար է գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ
լինի արատավոր ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինություն-
ները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատ-
ման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լիներ նրանց ճակատագիրը, ո-
րը դառն է եղել, ինչպիսին էլ լինի ապագայում, նրանց երկիրը հավետ
պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և թերևս
նրանց լեզուն միայն ավելի խոր ուսումնասիրության պահանջ է դնում
ավելի գրավիչ դառնալու համար: Եթե վստահենք Ս.Գրքին, դրախ-
տը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առն-
չակցության պատճառով Ադամի սերունդների պես թանկ վճարեց
մի մարդու երջանկության դիմաց, որն իր փոշուց էր ստեղծված:

Հայաստանում էր, որ ջրհեղեղը սկսեց տեղի տալ, և իջավ աղավնին: Բայց դրախտը դեռ չէր հասցրել անհետանալ, երբ ծայր առավ այդ երկրի տարաբախտությունը, քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ չեղավ, և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով:

*ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ (1788_1824)*
*անգլիացի բանաստեղծ*

Հայը մարմնի կառուցվածքով նույնն է, ինչ պարսիկը, բայց հայն արագ գիրանում է, մի բան, որ երբեք չի պատահում պարսիկի հետ: Հայի դիմագծերը պարսիկինի նման զարմանալի համաչափ են. աչքերը շատ գեղեցիկ են, հայացքը, որ բնորոշ է միայն նրան, պարունակում է միաժամանակ խելամտություն, վեհանձնություն, թախիծ կամ հնազանդություն, երբեմն թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Հայը պահպանել է նահապետական բարքերը: Նրա համար Աբրահամը իր մահկանացուն է կնքել երեկ, իսկ Հակոբը դեռ ողջ է: Հայրը ընտանիքի անվիճելի ղեկավարն է, նրանից հետո իշխանությունը պատկանում է ավագ որդուն, կրտսեր եղբայրները նրա սպասավորներն են... Բոլորն անվերապահորեն ենթարկվում են հոր անվիճելի և անողոք կամքին: Նրանք հազվադեպ են նստում հոր ներկայությամբ. դրա համար անհրաժեշտ է ոչ թե հոր հրավերը, այլ հրամանը:

Եթե այցելում է մեկի կողմից երաշխավորված կամ հարգանքի արժանի հյուր (հայի համար միևնույն է), հայի օջախում սկսվում է տոնախմբություն. մորթում են ոչ թե հորթ, հիմա Հայաստանում հազվագյուտ է պատահում այդ կենդանին, այլ գառնուկ, վառում են բաղնիքը և բոլոր բարեկամներին հրավիրում են խնջույքի...

Այդպիսին է հայկական կենցաղի արտաքին կողմը՝ ընդգծված տնտեսվարության հետ զարմանալի հակում դեպի կարգուկանոնը և մեծ խելահասություն առևտրական գործերում:

Իսկ մյուս կողմը, որ մնացել է ստվերում ու պահանջում է ակներև ուսումնասիրում, հայ ազգին մերձեցնում է հրեաների հետ, որոնց հետ, ըստ ավանդույթի, նա կապված է պատմական հիշողություններով, որ սկիզբ են առնում աշխարհի ստեղծումից:

Ինչպես ենթադրում են, Հայաստանում գտնվում էր երկրային դրախտը: Հայաստանում իրենց սկիզբն էին առնում Երկիրը ոռոգող չորս նախապատմական գետերը: Հայաստանի բարձրագույն լեռան վրա հանգրվանեց տապանը: Հայաստանում սկսվեց ավերված աշխարհի վերակենդանացումը: Վերջապես, Հայաստանում Նոյը տնկեց խաղողի այգի և առաջին անգամ փորձեց գինու զորությունը:

Հրեաների նման հայերը ցրված են, բայց ոչ թե ողջ աշխարհով մեկ, այլ միայն ամբողջ Ասիայում: Այնտեղ նրանք գտնվում են զանազան տիրապետությունների տակ, բայց մշտապես բռնապետական, միշտ այլադավան և բարբարոսական, միշտ ղեկավարվող քմահաճույքով՝ կարգուկանոնի փոխարեն, կամայականությամբ՝ օրենքի փոխարեն:



Տեսնելով, որ հարստահարիչները միշտ ձգտում էին խլել իրենց հարստությունը, հայերը սկսեցին այն թաքցնել:

Համոզվելով, որ անկեղծ խոսքը ոչնչի չի բերում կործանումից բացի, նրանք դարձան ինքնամփոփ:

Նրանք կյանքը վտանգի պիտի ենթարկեին, եթե շարունակեին երախտագիտություն հանդես բերել երեկվա հովանավորի հանդեպ, որն այսօր եղել է շնորհազուրկ:

Հայի խոսքը համարյա միշտ ճիշտ է, նրա գործարքային ստորագրությունը գրեթե սուրբ է:

Հայերը իրենց հնազանդ և հեզաբարո բնավորությամբ հանդերձ, պատահում է, որ գող լինեն, երբեմն էլ՝ խարդախ, բայց գրեթե երբեք՝ մարդասպան:

*ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄԱ (ՀԱՅՐ) (1802_1870)*
*ֆրանսիացի գրող*

Աշխարհի երեսին հայերի թիվը կարելի է երեք միլիոն համարել: Կեսից ավելին բնակվում են Տաճկաստանում: Շատերը ապրում են Ռուսաստանում, մանավանդ Վրաստանի նահանգներում, շատ հայեր կան նույնպես և Պարսկաստանում... Բոլոր տեղերում, ուր գտնվում են նրանք, համարվում են ճարպիկ և բանիմաց. բոլորն էլ համաձայն են և խոստովանում են, որ նրանք հասարակ խելքի տեր մարդիկ չեն:

Տաճկաստանում նրանք ավելի բարձր են հանդիսացել (քան շրջակա ազգությունները) իրենց առևտրական գործունեությամբ և այն ընդունակություններով, որ ունեն դեպի մեքենական արհեստները: Գլխավոր վաճառականները հայերն են, ինչպես և բոլոր մեծ սեղանավորները, և դուք կարող եք համոզված լինել, որ կգտնեք նրանց ամեն մի ձեռնարկության և գործի պարագլուխ, որ մասնագիտական պատրաստություն է պահանջում:

Նրանք ունեն տաճիկի հաստատամտությունը՝ առանց նրանց անշարժության, նրանք ունեն հույնի նուրբ և թափանցիկ միտքը՝ առանց նրանց թեթևամտության. միով բանիվ՝ նրանք Արևելքի անգլոսաքսոնացիներն են:

*ԴՎԱՅԹ, XIX դ.*
*ամերիկացի միսիոներ Թուրքիայում*

Հայերը նեղացկոտ են և տաքարյուն, բայց անքեն են և շատ խաղաղասեր, վեհանձն են, ագրեսիվ չեն, օժտված են համառությամբ, երբեմն էլ կամակոր են:

*ՍԵՐԳԵՅ ԳԼԻՆԿԱ (1775_1847)*
*ռուս պատմաբան*

Հայաստանը մարդկային քաղաքակրթության հնագույն հայրենիքն է:

*ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՈՒՄԲՈԼԴՏ (1769_1859)*
*գերմանացի գիտնական, ճանապարհորդ*

Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն: Դրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը:

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելու: Երախտագիտությամբ եմ ընդունում ձեր ազնիվ ձոնը և շնորհակալություն եմ հայտնում:

*ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ (1802_1885)*
*ֆրանսիացի գրող*

Հայերը քրիստոնեական քաղաքակրթության հնագույն ժողովուրդներից են և երկրագնդի վրա ամենախաղաղ, ձեռներեց և բանական ազգերից մեկը:

*ԻՎԱՆ ՇՈՊԵՆ (1798_1870)*
*ռուս պատմաբան, ազգագրագետ*

Հայաստանում թուրքական անիրավությունների ամենահուզիչ և սրտաճմլիկ նկարագրությունը շատ ավելի թույլ է սարսափելի իրականությունից: Փաստերը հաճախ այնպիսի զայրացնող բնավորություն ունեն, որ միայն փափուկ զգացմունքները վիրավորելու կամ ընթերցողների կասկածը հարուցանելու վախն է, որ արգելում է նրանց հրապարակ հանել:

*ԷՄԻԼ ԴԻԼՈՆ (1854_1933)*
*իռլանդացի գիտնական, լրագրող*

Հայերը, պարզ է, դավանում են քրիստոնեություն: Նրանց տները մեծ են, մաքուր, ընդարձակ... Որոշ ջահել հայուհիներ (ես կասեի նրանցից շատերը) անչափ գեղեցիկ են: Թող ինձ ներվի հակահայրենասիրական զովեստի համար, նրանք որպես կանոն մի քիչ գեղեցիկ են ամերիկուհիներից:

*ՄԱՐԿ ՏՎԵՆ (1835_1910)*
*ամերիկացի գրող*

Եվ սակայն եթե Գերմանական կայսրության և Թուրքիայի միջև եղող սերտ հարաբերությունները չլինեին, ամենամեծ պաշտոնական ոճիրը, որ դարերով գործվել է, չէր կատարվի: Այս պատճառով Գերմանիայի մեջ նախ և առաջ պետք է ստեղծել հայանպաստ կարծիք:

Հին իռլանդական հռչակավոր մի առասպելի մեջ մի կին իր սպանված ամուսնու արնաթաթախ վերարկուն նետում է մի ազգականի ուսերի վրա, որ չէր կամենում պաշտպանել իր դատը, որպեսզի այդպիսով վրիժառության դրդի նրան:

Մեզանից ոչ ոք է մտադրվում վրիժառու լինել: Սակայն, եթե կարելի լիներ հայկական զոհերի արյունոտ վերարկուն ձգել գերմանացի



ժողովրդի ուսերի վրա, որպեսզի նա ստիպի իր կառավարությանը ձեռք բերելու այս փառավոր ազգի ողջ մնացածների ապահովությունը և ազատությունը, դա կլիներ հրաշալի գործ:

...Հայ ժողովուրդը մշտապես և ամենուր հանդիսացել է օգտակար, բեղուն և ստեղծագործող տարր:

*ԳԵՈՐԳ ԲՐԱՆԴԵՍ (1842_1924)*
*դանիացի գրաքննադատ*

Հայ ժողովուրդը կազմում է այն մեծ հարցի միջուկը, որ կոչվում է Արևելյան հարց և որ նորից պիտի զբաղեցնի քաղաքակիրթ ժողովուրդներին, պիտի խռովի արևմտյան ազգերի խաղաղությունը, գժտություն պիտի գցի նրանց մեջ և այսպես պիտի ուշացնի քաղաքակրթության առաջընթացը:

*ԷԴՈՒԱՐԴ ԲԵՌՆՇՏԱՅՆ (1850_1932)*
*գերմանացի քաղաքական գործիչ*

Այս ժողովրդի մշտապես գեղեցիկ ու ողբերգական տարեգրությանց մեջ ոչ մեկն այնքան կենդանի շահագրգռություն կներկայացնե, որքան խաչակրաց արշավանքներու շրջանին հայ ազգի գործունեությունը: Այդ շրջանին էր, որ հայ քաջարի վեհապետները, Սուրբ Երկրի ֆրանկ իշխանների քով քովի պայքարեցան ի նպաստ անդրծովյա քրիստոնեության ընդհանուր շահերու:

*ԳՈՒՍՏԱՎ ՇԼՅՈՒՄԲԵՐԺԵ (1844_1929)*
*ֆրանսիացի արևելագետ*

Ես տեսա, որ բոլոր մասնագիտությունների մեջ, լինի առևտուր, արհեստ, պետական ծառայություն, հայերը մրցակից չունեն:

*ՀԵՆՐԻ ԼԻՆՉ (1862_1913)*
*անգլիացի աշխարհագրագետ*

Հայը ճարտարագործ, չարքաշ և հարատևող մի ցեղ է, գիտություններ ուսումնասիրելու և կիրառելու ընդունակ, ինչպես նաև գրական ու եռանդուն կարողություններով օժտված. իբրև սեղանավոր ու վարչական ճառական, մրցում է բուռն կերպով: Լեռնոտ գավառների մեջ բնակվող հայերը ունեն կտրիճ ու կարգապահ զինվորներ լինելու ընդունակություն: Նրանք բյուզանդական բանակների մեջ պատվավոր տեղ կգրավեին իրենց ռազմիկներով և զորավարներով. Նույնիսկ հայ կայսրեր են բազմել Կ.Պոլսի գահի վրա: Մեր օրերին, 1895-ին, Զեյթունի մեջ և ջարդերից հետո մի քանի գյուղերում հայերը դյուցազնաբար պաշտպանել են իրենք իրենց և ավելին պիտի անեին, եթե թուրքերը նախապես որևէ պատրվակով հավաքած չլինեին նրանց զենքերը:

*ԼՅՈՒԴՈՎԻԿ ԴԸ ԿՈՆՏԱՆՍՈՆ, XX դ.*
*ֆրանսիացի գիտնական*

Երկունքի դարերի ընթացքում ո՞րն է եղել հայերի դիրքը: Եղել է արժանավոր և դյուցազնական: Արժանավոր, որովհետև հայ ժողովուրդը՝ հա-

կառակ իր ծով դժբախտություններին, ամքորեն կառչած է մնացել իր
հավատքին, իր լեզվին, իր սովորություններին և իր ազգային ավան-
դություններին: Դյուցազնական, որովհետև Հայաստանը չի գոհացել
արցունք թափելով, այլ բազմաթիվ պարագաներում վիրավորված զգա-
լով իր ամենաթանկագին զգացումների մեջ, զենք է վերցրել և արյան
գնով հատուցել է իր հոգվույն ըմբոստությունը:

*ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆ (1857_1924)*
*ֆրանսիացի պատմաբան, հնագետ*

Օրերս ես խորհրդային թերթերից մեկում կարդացի առարկություն թուրք
«սոցիալիստ» Բալինին, որի հայկական հարցի մասին հոդվածները բա-
ցահայտ կոչ են հայկական կոտորածների: Այդպիսին է արևելյան այդ
սոցիալիզմը նույնիսկ եվրոպական Թուրքիայում: Վերջապես Դուք
կցանկանա՞ք պարզ պատկերացում կազմել մզկիթների հրապարակ-
ներում այդ առանձնահատուկ արևելյան հանրահավաքների մասին,
որտեղ թափառող դերվիշները ծունկի եկած ունկնդիրներին կոչ են ա-
նում սրբազան պատերազմ ընդդեմ եվրոպացիների և միաժամանակ
ողջունում են ռուսական խորհրդային հանրապետությունը, այդ դեպ-
քում հազիվ թե ասեք, որ խոսքը վերաբերում է Մարքսի և Էնգելսի պատ-
կերացրած առաջընթացին... *(հատված 1920 թ. Լունաչարսկուն հասցեա-
գրված նամակից):*

*ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՐՈԼԵՆԿՈ (1853_1921)*
*ռուս գրող*

Ռուս ընթերցողի համար հայ պոեզիան, ի մի վերցրած, մի նոր աշխարհ
է, որտեղ ուղևորը կգտնի իրեն անհայտ ծաղիկներ ու ծառեր, անհայտ
թռչուններ ու կենդանիներ, առաջին անգամ նկատած սովորություն-
ներ ու արարողություններ: Այսպես էր հայ պոեզիան ինձ համար, և ես
հույս ունեմ, որ համանման տպավորություն կստանան նաև մյուս ռո-
լոր ընթերցողները: Բայց ավելի կարևոր է այն, որ հայ պոեզիան հենց
գեղեցկության աշխարհ է, որ նա նոր գանձերով հարստացնում է պոե-
զիայի այն պանթեոնը, որն ամեն մի կուլտուրական մարդ կերտում է իր
սրտում՝ բոլոր երկրների ու դարերի բանաստեղծների սքանչելի կերտ-
վածքներն այնտեղ պահելու համար:

*ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ (1873_1924)*
*ռուս գրող*

Երբ կազմավորվել է հայ գրականությունը, ժամանակակից Եվրոպայի
մեծ ազգերից ոչ մեկը չկար. դեռևս ոչ Ֆրանսիայի մասին խոսք կար, ոչ
էլ Անգլիայի: Հայ ազգային գրական հեղինակություններն այնպիսի հնու-
թյուն ունեն, որ շատ դարերով գերազանցում են եվրոպական ազգերի
մեծամասնության հեղինակություններին: Այն ժամանակ, երբ Ֆրան-
սիա անունը գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատ-
մության մեջ, այն ժամանակներում, երբ ֆրանսերենը դեռևս չէր տար-



բերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականու-
թյուն:

*ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ (1866_1936)*
*ֆրանսիացի լեզվաբան, հայագետ*

Իտալական Վերածննդի մեծ ճարտարապետները լարեցին իրենց ու-
ժերը՝ ձգտելով կառուցել գմբեթը այնպես, ինչպես Հայաստանում, որ-
պես տարածության միավորը պսակող գագաթ: Այս նպատակին հա-
մապատասխան զարգացավ Արևմուտքի ճարտարապետությունը հա-
ջորդ դարերում և հարատևում է մինչև մեր օրերը:

*ԺՈԶԵՖ ՍՏՐԺԻԳՈՎՍԿԻ (1862_1941)*
*ավստրիացի արվեստի պատմաբան*

Հայ ժողովուրդը աչքի է ընկնում կենսասիրությամբ, դիմացկունությամբ,
խիզախությամբ, իր ճշմարտության հանդեպ վստահությամբ: Հենց այդ
որակների շնորհիվ նա մշտապես հաղթող է դուրս եկել տարբեր փոր-
ձություններից:

*ԷՄԻԼ ՎԵՐՀԱՌՆ (1855_1916)*
*բելգիացի բանաստեղծ, դրամատուրգ*

Գտնվելով մշտապես հալածանքների տակ, որոնց, սարսափի տեսա-
կետից, չի կարելի մի այլ տեղ հանդիպել, նրանք հայտնի համառու-
թյամբ չեն ուրանում սակայն իրենց հավատքը: 1500 տարուց ի վեր,
ապրելով իրենց հայրենիքում, հայերը ստեղծել են քրիստոնյաների մի
կղզյակ՝ շրջապատված չորս կողմից հետադեմ ցեղերով ու կրոնքով, և
պատմության այս երկար շրջանը լիքն է իրար հաջորդող սերունդների
մարտիրոսագրությամբ: Այս խաղաղասեր երկիրն է դարերով հանդի-
սացել Եվրոպան ու Ասիան միացնող գիծը, որտեղով արշավել են սա-
րակինոսները, թաթարները, մոնղոլները, քրդերը և թուրքերը՝ թողնե-
լով արյուն ու ավեր:

Հայաստանը դարերով Արևելքի Բելգիան է եղել: Հայերը ասիացի
չեն համարել իրենց, այլ՝ եվրոպացի: Լեզուն հնդեվրոպական ճյուղին է
պատկանում, և ազգաբանորեն ենթադրվում է, որ պատկանում են ա-
րիական ցեղին, և այն հանգամանքը, որ նրանց կրոնը Եվրոպայի կրոնն
է, նրանց միշտ մղել է իրենց հայացքը դարձնելու դեպի արևմուտք
հուսալով, թե նրանցից մի օր պիտի գա օգնություն և իրենց ազատագ-
րի չարչարողներից:

*ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ (1856_1946)*
*ամերիկյան դիվանագետ*

Սարսափի երկիրը: Ով էլ որ այժմ անցնում է ամայացած Հայաստա-
նով, չի կարող չցնցվել, այնքան արտառոց շատ բան են ասում ավե-
րակների ու մահվան այդ անվերջ հեռաստանները: Չկա մի ծառ, մի
ժայռ, մի կտոր մամուռ, որ վկա չլինի մարդու կոտորածի, որ պղծված

չլինի հեղված արյան վտակներով: Չկա մի առվակ, գետ կամ գետակ, որ դեպի հավիտենական մոռացության քշած-տարած չլինի հարյուրավոր, հազարավոր մեռյալ մարմիններ: Չկա մի անդունդ, մի կիրճ, որոնք չլինեին գերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքում սպիտակին չտային կմախքների բաց կույտեր, քանի որ գրեթե ոչ մի տեղ մարդախողխողները ոչ ժամանակ ունեին, ոչ էլ նեղություն էին քաշում թաղելու իրենց զոհերին:

Այդ ընդարձակ մարզերում, որտեղ մի ժամանակ հայկական աշխույժ, ծաղկուն շեներ էին, այսօր թագավորում են ավերածությունն ու անմարդաբնակությունը:

Տակավին թուրքական մնացող մարզերում հայ բնակչության բնաջնջումը, թվում է, էլ ավելի կատարյալ է եղել և իրագործվել է ավելի սիստեմատիկաբար, քան կովկասյան սահմանին հարող շրջաններում. այնտեղ դահիճները ժամանակ ունեին ազատ գործելու:

*ԱՆՐԻ ԲԱՐԲԻ, XX դ.*
*ֆրանսիացի լրագրող*

Մենք հասկացանք, որ երկարամյա անհավասար պայքարը թուրք կեղեքիչի և հայի միջև՝ դեսպոտիզմի, բարբարոսության պայքարն է ընդդեմ արդարացիության և ազատության ոգու: Եվ երբ մենք տեսանք Թուրքիայի այդ զոհին՝ մեզ հասած մարող աչքերով, որոնցում առկայծում էր հույսի շողը, ի վերջո հասկացանք, որ մեր այդ քույրը մահանում է հենց նրա համար, որ նա մեր քույրն է, և նրա մեղքն այն է, որ բաժանում է մեր զգացմունքները, սիրում է այն, ինչ մենք ենք սիրում, հավատում է նրան, ինչին մենք ենք հավատում, և մեզ նման գնահատում է իմաստությունը, արդարությունը, պոեզիան և արվեստը:

Այս է նրա անքավելի հանցանքը...

*ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ (1884_1924)*
*ֆրանսիացի գրող*

Անատոլիայի և Եվրոպական Թուրքիայի հիանալի մզկիթները և գեղարվեստական արհեստագործությունը կրում են հայ գեղարվեստական մտքի կնիքը: Մեծ մասն այն ամենի, ինչ այդ ծույլ հասարակարգում ստեղծվել է արվեստի ու հոգևր մշակույթի ասպարեզում, հայերի գործերն են: Նրանք են եղել թուրքական թատրոնի դերասաններն ու կատակերգուները, նրանք են Թուրքիայում հանդես եկել որպես երգիչներ ու երաժիշտներ, որոշ իմաստով նրանք են թուրքական երաժշտության ստեղծողները:

Վա՜յ հայ ժողովրդին, որ հայտնվել էր եվրոպական քաղաքականության ոստայնի մեջ: Շատ ավելի լավ կլիներ, որ նրա անունը երբեք և ոչ մի եվրոպացի դիվանագետ չհիշատակեր: Այնուամենայնիվ, հայ ժողովուրդը չէր կարող հույսը կորցնել: Աշխատանքի լծված նա սպասում ու սպասում էր: Նա այժմ էլ դեռ սպասում է:

*ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ (1861_1930)*
*նորվեգացի բևեռախույզ*



Ազգագրական, տնտեսական ու լեզվական առումով լինելով միասնա-
կան Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան
քևը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է ներկայումս և այդ-
պիսին կլինի ընդմիշտ, քանի որ առանց Ղարաբաղի տերը լինելու, ան-
կարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը: Պատ-
մության ընթացքում բազմիցս են հարձակման ալիքները զարնվել ու
փշրվել Ղարաբաղի ամրությանը՝ թափանցելով սոսկ գետահովիտնե-
րը, բայց այդտեղ էլ երկար չեն մնացել: Սյունիքի (այդպես էր կոչվում
Ղարաբաղը) իշխանության մելիքությունները հին ժամանակներում
բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից քշել թշնամուն: Պատ-
մությունը կրկնվում է, և վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի
առաջ:

Բնությունը և պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ ար-
տահայտված տիպ: Աշխարհով մեկ սփռված ղարաբաղցիներին հեշտ
է ճանաչել ամենուր: Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջու-
թյուն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահու-
թյուն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամտություն, նա-
հապետական պարզ կենցաղավարություն՝ ահա ղարաբաղցուն բնո-
րոշ այն առինքնող հատկանիշները, որոնք ասես խտացնում են հայի
հինավուրց առաքինությունները, որոնք այլուրեք դժգունել են պատ-
մության արհավիրքներից, բայց անաղարտ վիճակում պահպանվել են
Ղարաբաղում: Բարձրահասակ, պնդակազմ ժողովուրդը, կյանքը փրկե-
լու համար բարձրանալով լեռները, ամրապնդվեց լեռնային օդի ազդե-
ցությամբ և իրեն զերծ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկ-
նում հովիտների բնակիչներին:

*ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ (1884_1967)*
*ռուս գրող*

Այս ժողովուրդն ունի չափազանց հին քաղաքակրթություն... Արարա-
տը թվում է մի անսահմանորեն հին իմաստուն, և ակամա մտաբերում
ես, որ նրա ոտքերի տակ է սկզբնավորվել մարդկային քաղաքակրթու-
թյունն ամենահին ժամանակներից ի վեր, մեկը մարդկային առաջնա-
կարգ քաղաքակրթություններից, որպիսին երբևիցե գոյություն է ունե-
ցել երկրագնդի վրա:

*ԱՆԱՏՈԼԻ ԼՈՒՆԱՉԱՐՍԿԻ (1875_1933)*
*ռուս պետական գործիչ, արվեստաբան:*

Հայերը ոչ միայն առաջինը, այլև միակն են եղել արևելյան ազգերից,
որ Եվրոպայի մշակույթի յուրացմանը նպաստելու նպատակով գիտա-
կան հաստատություններ են հիմնել Եվրոպայում: Հիշեցնեմ Մխիթար-
յանների գործը, նկատելով հանդերձ, որ այն շրջանում եկեղեցին է ե-
ղել միակ ազգային շահերը մարմնացնող հասարակական կազմակեր-
պությունը: Հարյուր տարի վերջ էլի հայերն էին Լազարյան ճեմարանի
հիմնադիրները:

Ի՞նչ ասել է խաչքար հայոց ճարտարապետության մեջ. ամենազգային ժողովրդի բոլոր խավերի, վերին շերտերից մինչև ստորինը, մտերմագույն հիշատակարանը, որի վրա անդրադառնում է ազգային քանդակագործության զարգացման ամեն քայլափոխ և հաճախ զուգված երևան են գալիս հայ ճարտարապետության երկու հոսանքը՝ եկեղեցական և աշխարհական: Եվ դարձյալ ի՞նչ ասել է խաչքար. հայկական գեղարվեստը բացառիկ կերպով բնորոշող մի «հուշիկ հայրենյաց»:

*ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ (1865_1934)*
*ռուս լեզվաբան, հայագետ*

Հայաստանը քաղաքակրթության բնօրրան է, հին աշխարհի ամենաառաջավոր և զարգացած երկրներից մեկը: Հայերը խաղաղասեր ժողովուրդ են՝ տաղանդով, մտքով և հոգով օժտված:

*ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ (1890_1945)*
*ավստրիացի գրող*

Ոռնացող քարերի պետություն.
Հայաստա՜ն, Հայաստա՜ն:

* * *

Ոչ մի բան ավելի ուսանելի և բերկրալի չէ, քան այն, երբ ընկղմվում ես միանգամայն այլազգի մարդկանց հասարակության մեջ, որին հարգում ես, որին համակրում ես, որով, օտար լինելով հանդերձ, հպարտանում ես: Հայերի կենսական լիցքը, նրանց կոպիտ քնքշությունը, նրանց աշխատանքային ազնիվ ոսկորը, նրանց անբացատրելի զզվանքն ամեն տեսակի մետաֆիզիկայից և հիանալի մտերմությունը իրական առարկաների աշխարհի հետ, այս ամենը ինձ ասում է՝ դու արթուն ես, մի վախենա քո ժամանակից, խորամանկություն մի արա:

Այդ նրանից չէ՞ր, արդյոք, որ ես գտնվում էի իր եռուն գործունեությամբ փառաբանված ժողովրդի մեջ, որը սակայն ապրում է ոչ թե կայարանի կամ հիմնարկի, այլ արևի ժամացույցով, որպիսին ես տեսել եմ քարի փլատակների վրա:

*ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ (1891_1938)*
*ռուս բանաստեղծ*

Հայ ժողովուրդը մեծ պատմություն ունի իր թիկունքի հետևում: Ամեն մի մարդ ունենում է վիշտ, վիշտն էլ է հաճախ զարդարում մարդուն. ճիշտ չէ, որ միայն ուրախությունն է մարդուն զարդարում: Այն ժողովուրդը, որը շատ փորձություն է տեսել, հոգեպես ավելի ուժեղ է, նա հոգեկան հմայք ունի: Սա մեծ ժողովուրդ է:

Հայաստանի պատմությունը պատմություն է որքան վաղնջական, նույնքան եղերական: Դարերն այստեղ չես հաշվի մանկական թվաբանությամբ:

Այստեղ են խաչաձևվել հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը:

Հայերի հայրենասիրությունը սրված է, երբեմն դա կարող է մոլուցք



թվալ, բայց ոչ ոք չի շփոթի ուրիշի կուլտուրան ժխտող շովինիզմի հետ և ոչ ոք չի անվանի գավառականություն: Հայերի մեջ ինտերնացիոնալիզմի գաղափարներին խորթ մարդկանց ես կարծես թե չհանդիպեցի:

*ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳ (1891_1967)*
*ռուս գրող*

Բավական է ասել, որ ցեղասպանության առաջին ոճիրն իր երկրում ապրող մի ժողովրդի դեմ գործվեց 20-րդ դարի սկզբին, 1914_1918 թվականների պատերազմների ընթացքում: Եվ այդ ոճիրը բոլորովին չդատվեց և չդատապարտվեց: Այդ իսկ պատճառով հայերն ամենից ավելի են գնահատում խաղաղությունը չկարողանալով մոռանալ այն իրողությունը, որը սոսկ հիշատակություն չէ, այլ պատմական մի թվական, որը կարող էր վերջ դնել ամբողջ մի ժողովրդի գոյությանը: Հայերը չեն կարող մոռանալ արյան գետերը, տառապանքները, տարագրությունը դեպի անապատ, դեպի անողոք մահ՝ սովի, համաճարակների և ամեն տեսակի տանջանքների միջով: Նրանք չեն կարող մոռանալ այն մեկ ու կես միլիոն նահատակներին:

Ֆրանսիացի մտավորականները քիչ թանաք չեն գործադրել հայ ժողովրդի տառապանքները նկարագրելու համար: Բայց հայ ժողովուրդը հանուն Ֆրանսիայի ազատության, թանաքի տեղ իր արյունը տվեց: Երբեք չենք մոռանա պատերազմի ժամանակ Ֆրանսիայի բոլոր անկյուններում պատերի վրա փակցված ծանուցումները՝ նվիրված քսաներեք պարտիզաններին: Նրանց հրամանատար Մանուշյանը հայ էր:

*ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ (1897_1982)*
*ֆրանսիացի գրող*

Մերձավոր Արևելքի հնագույն ժողովուրդներից է Հայ ժողովուրդը: Իր պետությունը հիշատակված է ամենահին աշխարհագրական քարտեզի վրա, որը այսօր պահպանվում է Բրիտանական թանգարանում: Այդ քարտեզը պատրաստվել է Բաբելոնում քսանհինգ դար առաջ:

Այս ժողովուրդը, որը գտնվում է Արևելքի և Արևմուտքի խաչմերուկի տարածքում, ստիպված եղավ իր ազգային ոգին պաշտպանելու համար դարավոր պատերազմներ մղել Բաբելոնի, Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, Բյուզանդիայի, վերջապես թուրք-մոնղոլների դեմ:

Եթե պատերազմները մի կողմից տկարացրել, կոտորել են հայ ժողովուրդը, այլ առումով առաջացրել են նրա մեջ համառ սեր հանդեպ հայրենիքը, կրոնն ու ազգային յուրահատկությունները:

Արիական մշակույթին, քաղաքակրթությանը մատուցած հայ ազգի ծառայությունների ավանդների մասին հարկ պիտի լիներ մեծաթիվ հատորների շարք գրել: Հիասքանչ հայերեն լեզուն, զարմանալի գործիք դասական բոլոր մատյանների թարգմանությունների, հիանալիորեն մշակված, արտահայտիչն է հայու մեծաշունչ ոգուն, նման իր ճարտարապետությանը, եզակի ու այնքան հարուստ, որ Լեոնարդոյից խլեց հիացմունքի բացականչություններ, երկրի վճիտ և լուսավոր բնության

միջավայրում արտահայտեց տանջված մեծ մի ժողովրդի խորիմաց իմաստությունը:

*ԼՈՒՐՈ ՄԱՐՆԱՐԴԻ, XX դ.*
*իտալացի հայագետ*

Հսկայական պատմություն է ապրել հայ ժողովուրդը՝ հազարամյակներ շարունակ պայքարելով իր անկախության համար, ձյունափառ Արարատով պսակված իր հայրենի հողի համար: Հնագույն քաղաքակրթությունները՝ խեթական, ասորա-բաբելական, պարսկական թագավորությունները, Հունաստանն ու Հռոմը, միջինասիական թագավորությունները, սկյութները, հոները, ալանները և VII դարից սկսած արաբները, այնուհետև թուրքերը շփվել են հայ ժողովրդի հետ, և այդ շփումը միշտ սկսվել կամ վերջացել է սրերի շաչյունով, անկախության պայքարով:

*ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ (1882_1945)*
*ռուս գրող*

Հողի մկանները պատառոտող ամրակուռ ոսկորների բեկորներն այստեղ դուրս են պրծել ու խորտակելու են լեռնազանգվածները: Նրանց ստորոտում կռվել են հռոմեացիները, և Միհրդատը խայտառակված փախել է Հայոց ձորերով, և Պոմպեոսը անցարաններ է ձգել մինչև հինավուրց Ֆազիսը: Ողջը անհանգիստ է. այստեղ ազգային և հողային մոլեգնումների ցնցող կենտրոնն է:

*ԱՆԴՐԵՅ ԲԵԼԻ (1880_1934)*
*ռուս գրող*

Հայաստանը հրաշքների երկիր է:

*ՌՈՔՈՒԷԼ ՔԵՆՏ (1882_1971)*
*ամերիկացի նկարիչ*

Ստամբուլն այն ժամանակ դեռևս հայկական և հունական մշակույթի համաշխարհային կենտրոն էր ոչ պակաս, քան թուրքական մշակույթի: Ըստ էության դա երեք ժողովուրդների քաղաք էր, ըստ որում՝ հայկական մշակութային միջավայրը գերազանցում էր մնացածներին երկու հարկով:

*ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ (1905_1978)*
*լեհ գրող, պատմաբան*

Հայաստանի պատմությունը ասք է անդյուրամշակ հողի վրա հազարամյա համառ խաղաղ աշխատանքի, դաշտերի վերածված քարերի, քանի որ քարը դարձել է բերքատու ծառ, ջլապինդ վազ, բոսորագույն վարդ:

Արդյոք կա՞ այլ երկիր, որտեղ այդքան արյուն է հեղվել:

Արդյոք կա՞ այլ ժողովուրդ, որ հյուսել է այդքան երգեր բարեկամության և սիրո մասին:

Եվ այդ ամբողջ երկրի մեջ, թշնամու վրա ոստյունի պատրաստ հզոր,



սև առյուծի պես սապատաձև, բարձրանում է Արարատը: Ամբողջ ժողովրդին, ամբողջ երկրին երևում է հին բիբլիական Արարատը, սրբազան Մասիսը՝ փոքրինչ ծածկված ձյունով և ամպերով:

*ՍԵՐԳԵՅ ԲՈՐՈԴԻՆ (1902_1974)*
*ռուս գրող*

Հայաստանը բազմաչարչար երկիր է, բայց միաժամանակ նա բախտավոր է իր նշանակությամբ:

*ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ (ծնվ. 1906 թ.)*
*ռուս գրականագետ*

Եթե Հայաստանը ոչինչ անգամ չունենար մեծն Նարեկացուց բացի, այդ էլ բավական էր ընդունելու համար նրա վիթխարի ավանդը համամարդկային մշակույթի ասպարեզում: Բայց Նարեկացուց բացի Հայաստանն իր փառապանծ անցյալում այնքան մեծեր է ունեցել, որ դժվար է կշռել և հաշվարկել նրա ավանդը համաշխարհային մշակույթում: Ես կարծում եմ, իսկական դժբախտություն է եղել այն, որ ժամանակին բոլոր հաշվարկները մշակույթի բնագավառում առաջ են եկել հունա-լատինական եվրոպեիզմի իդեալականացումից:

*ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ (ծնվ. 1919 թ.)*
*լիտվացի բանաստեղծ*

Հիմա մեզ մոտ շատ բան մոռացել են: Մոռացել են և այն, որ ռուսական թագավորները բազմել են 1660 թվականին հայերի նվիրած գահի վրա, որը շռայլորեն զարդարված է ալմաստներով, հակինթներով, արևելյան փիրուզով ու արծնապակով: Մոռացել են այն, որ, ոչ առանց ռուսական քաղաքականության օգնության, 1722 թվականին հայերը Ղարաբաղը հռչակեցին հայկական անկախ մելիքություն: Չեմ կարող լռության մատնել նաև իմ խորագույն հարգանքը հայ հնադարյան եկեղեցու հանդեպ, որի կաթողիկոսներն Էջմիածնում մարմնավորել են ասես հայ ժողովրդի ամենաբարի և ամենապայծառ երազանքների հավաքական խորհրդանիշը:

*ՎԱԼԵՆՏԻՆ ՊԻԿՈՒԼ (1928_1991)*
*ռուս գրող*

Որքան ավելի ենք մոտենում մեր օրերին, այնքան ավելի կենդանի, ժամանակակից, մեզ լավ ծանոթ ժողովուրդներ են ելնում պատմական ասպարեզ: Ու ամեն անգամ նրանց թվում մենք տեսնում ենք հայերին: Եվ հաճախ մենք մոռանում ենք, որ հայերի ժամանակակիցների մեծ մասը հեռավոր դարաշրջաններում հեռացել են համաշխարհային թատերաբեմից, և նույնիսկ անհետ կորել: Ո՞ւր են հին բաբելացիները, ասորիները: Ո՞ւր են սկյութները, որոնք միանձնյա տիրապետում էին մերձսևծովյան լայնություններին ու ներխուժել էին նույնիսկ Անդրկովկաս: Ո՞ւր են նրանց փոխարինած սարմատները: Ո՞ւր են հոները: Ո՞ւր

են խազարները և նրանց իսկայական թագավորությունը, որ փռված էր Վոլգայի գետաբերանից մինչև Սև ծով: Ո՞ւր են բազմատենչ թրակիացիները, որ զավթել էին Բալկանյան թերակղզին: Եվ մի՞թե միայն սկյութներն ու թրակիացիներն են, որոնց մենք գիտենք սոսկ անունով և չենք կարող հաստատապես մատնանշել՝ ահա նրանց սերունդները:

*ԿԻՄ ԲԱԿՇԻ (ծնվ. 1935 թ.)*
*ռուս գրող*

Հայոց գրերը ստեղծել է հայրենիքի զարմանալի զգացողությամբ օժտված մի հանճարեղ այր, ստեղծել է մեկընդմիշտ, հայոց գրերը կատարյալ են: Այդ այրը նման է եղել աստծուն՝ արարչագործության օրերին: Ստեղծելով տառերը՝ նա գրել է առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», և տեսել է, որ մի տառը չի հերիքում: Ստեղծել է նաև այդ տառը: Եվ այդ պահից ի վեր մնում են հայոց գրերը:

Ինձ համար այս պատմությունից ավելի հմոզիչ բան լինել չի կարող: Կարելի է հնարել մարդուն և կարելի է հնարել տառը, բայց չի կարելի հնարել՝ թե մարդուն չի հերիքել մի տառը: Դա կարող էր լինել միայն: Ուրեմն, եղել է և այդ մարդը: Եղել է հանճարեղ այրը: Նա լեգենդ չէ: Նրա գոյության փաստը նույնքան հավաստի է, որքան ահա այս այբուբենը: Եվ Մեսրոպ Մաշտոց է անունը նրա:

*ԱՆԴՐԵՅ ԲԻՏՈՎ (ծնվ. 1937 թ.)*
*ռուս գրող*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Կազմողների կողմից* . . . 3
Հայաստան . . . 6
Լեռնային Ղարաբաղ . . . 14
Ադրբեջան . . . 18
Ալբանիա . . . 20
Ամերիկայի Միացյալ Նահանգներ . . . 21
Ավստրալիա . . . 25
Ավստրիա . . . 26
Արաբական Միացյալ էմիրություններ . . . 27
Արգենտինա . . . 28
Աֆղանստան . . . 29
Բելառուս . . . 30
Բելգիա . . . 31
Բիրմա . . . 32
Բրազիլիա . . . 33
Բուլղարիա . . . 34
Գերմանիա . . . 37
Դանիա . . . 38
Եգիպտոս . . . 39
Եթովպիա . . . 41
Էստոնիա . . . 43
Թուրքիա . . . 44
Թուրքմենստան . . . 46
Ինդոնեզիա . . . 48
Իսպանիա . . . 49
Իսրայել . . . 50
Իտալիա . . . 51
Իրան . . . 53
Իրաք . . . 56
Լատվիա . . . 56
Լեհաստան . . . 57
Լիբանան . . . 59
Լիտվա . . . 61
Կանադա . . . 61
Կիպրոս . . . 63
Կուբա . . . 64
Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն . . . 65
Հարավսլավիա . . . 65
Հնդկաստան . . . 66
Հորդանան . . . 68
Հունաստան . . . 69
Հունգարիա . . . 71
Ղազախստան . . . 72
Ղրղըզստան . . . 72
Մեծ Բրիտանիա . . . 73
Մեքսիկա . . . 74
Մոլդովա . . . 75
Նիդերլանդներ . . . 76
Նոր Զելանդիա . . . 77
Շվեդիա . . . 77
Շվեյցարիա . . . 78
Չիլի . . . 80
Չինաստան . . . 80
Պորտուգալիա . . . 81
Ռումինիա . . . 82
Ռուսաստան . . . 84
Սինգապուր . . . 90
Սիրիա . . . 90
Սուդան . . . 92
Վենեսուելա . . . 93
Վրաստան . . . 93
Տաջիկստան . . . 102
Ուզբեկստան . . . 103
Ուկրաինա . . . 104
Ուրուգվայ . . . 108
Քենիա . . . 109
Քուվեյթ . . . 109
Ֆիլիպիններ . . . 110
Ֆրանսիա . . . 110
Համահայկական կազմակերպություններ . . . 113
Հավելված
*Օտարները հայերի և Հայաստանի մասին* . . . 116

ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ
Հանրագիտական համառոտ բառարան

Կազմողներ՝ Ամալյա ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ալբերտ ԻՍՈՅԱՆ,
Կոստանդին ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Քարտեզը և
շապիկը՝ Ա. Մ. Թադևոսյանի
Սրբագրիչներ՝ Ա. Ա. Ինճիկյան,
Օ. Դ. Միքայելյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Խ. Գևորգյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Հ. Մովսիսյան

Համակարգչային շարվածքը՝ «Հանրագիտարան-Արմենիկա» ՍՊԸ համակարգչային կենտրոնի: Տպագրական 8.5 մամուլ: Գրաչափը՝ 84×108 1/32: Տպաքանակը՝ 5000: Գինը՝ պայմանագրային: «Հայագիտակ» հրատ., Երևան, Մարշալ Բաղրամյան 24: Տպագրված է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տպարանում: Երևան, Հարավ-Արևմտյան զանգված, Բ-1 թաղամաս, Րաֆֆու փող, թիվ 4:

«ՀԱՅԱԳԻՏԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
1995_96-ին լույս կընծայի

1. ՀԱՅԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ: Հանրագիտական համառոտ բառարան. հայերեն, ռուսերեն, անգլերեն:
2. ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ: Հնագույն շրջանից մինչև մեր օրերը: Հանրագիտական համառոտ բառարան. հայերեն:
3. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ: Հանրագիտական համառոտ բառարան. հայերեն, ռուսերեն:
4. Ա. Ալպոյաճյան: ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Վերահրատարակություն (առաջին տպագր. Կահիրե, 1950 թ.):
5. Ֆ. Մ. Դոստոևսկի: ԱՐՆԵԼՅԱՆ ՀԱՐՑ. ժողովածու, ռուսերեն: